



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material



Улітѣ

859

5  
18





2011

1000  
1000

ԱՆՈՒՄ

859

ՓԵՌՆԵՆԳ ԳՈՐԳԷՅՑ

պի

Կ Ա Մ

ՄԵՔՍԻԿՈՅԻ ԸՌՆՈՒԻԼԸ

ԻՐԵՒ ԶԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՎՐԻՍԵՓ ԿՈՂՈՄԻՏԻ

ԱԶԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԿԳՆՄԸՅ ՍԻՊԻԼԵՆ

ՄԽԻԹ ՈՒԽՏԷՆ

453



Վ Ի Է Ն Ն Ը

ՊԱՇՏՊԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

1851 ՌՅ.



859-2011

кн. 853

9/ 3733  
41 |





## ՆԱԽԱՀԱԻԳ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

ՆՈՐ Աշխարհքին գիւտին եւ աշխարհակալութեան պատմութեան մէջ՝ Կոլումբոսի գործքերէն վերջը՝ անշուշտ ամենէն երեւելին է Գորղէղին ձեռքը Մեքսիկոյի կայսերութեան գտնուիլն ու Սպանիացւոց իշխանութեան տակ մտնելը։ Անոր համար Ամերիկա գտնողին պատմութենէն ետեւ՝ պատշաճ սեպեցիկը աս Մեքսիկոյի առնուելուն պատմութիւնը հրատարակել, որն որ միանգամայն առջինին իբրեւ շարունակութիւն մըն է եւ անոր չափ հետաքրքրական, մանաւանդ թէ զանազան նկատմամբ՝ անկից աւելի զարմանալի։ Բայց բուն պատմութիւնը չսկսած՝ հարկ է որ Մեքսիկացւոց վրայ համառօտ տեղեկութիւն մը տանք։

Առաջին պատմիչներուն քննութեան համաձայն՝ Անահուազի (Նոր Սպանիայի) Գորղէգ ըստած պատերազմասէր ու վայրենի ազգը՝ Բրիստոսի 667 թուականին՝ հիմակուան Մեքսիկոյի կողմերը կարգաւորեալ բնակութիւն ու հասարակութիւն մը հաստատեց։ Աս հասարակութիւնը կամաց կամաց թաղաւորական կերպ մը ստացաւ, որն որ չորս դար տեւելէն ետեւ՝ ուրիշ զորաւոր ցեղի մը տեղի տուաւ, ան ալ վերջապէս Մեքսիկացւոց յարձակմամբը վռնտուեցաւ եւ երկիրն անոնց ձեռքը թող տալու ստիպուեցաւ, որոնք Գեզեւգոյի լծին քով հաստատուեցան ու Մեքսիկոյ հռչակաւոր քաղաքը հիմնեցին։ Տեղացւոց աւանդութիւններէն կ'երեւայ որ աս վերջիններուն զաղթականութիւնը հազիւ երեք դար հնութիւն ունէր, եւ Մանդեզուամ՝ որն որ Սպանիացւոց հոն մտած ժամանակը կը տիրէր, իններորդ թաղաւորնին էր։

Հին պատմիչներն աս աշխարհակալութեան դժուարութիւններն ու արդիւնքը բարձրացրնելու համար՝ Մեքսիկացւոց քաղաքականութեան աստիճանը չափազանց եղանակաւ մը նկարագրեցին եւ անոնց կառավարութեան ու օրինաց կերպը խիստ զարմանալի երեւցուցին։ Բայց անկարելի կ'երեւայ որ այնչափ քիչ ատենուան մէջ՝ նոյն պատմիչներուն ըսածին չափ յառաջադիմութիւն ունեցած ըլլան։ Թէպէտ աս ալ խոստովանելու է որ Ամերիկայի ժողովրդոց մէջ Մեքսիկացիք ամենէն աւելի յառաջացած

ու ծաղկած էին: Սեպհական ընչից եւ ստացուածոց իրաւունքը՝ որն որ ուրիշ վայրենի ազգաց մէջ անձանօթ էր, Մեքսիկացւոց մէջ ճշդիւ կը ճանչցուէր ու կը յարգուէր. նոյնպէս վաճառականութիւնը ծանօթ ու յարգի էր: Քաղաքներուն ու շէնքերուն բազմութիւնն ու չափաւոր գեղեցկութիւնն աս ըսածներնուս յայտնի վկայութիւն կու տան եւ Մեքսիկացւոց քաղաքականութեան վրայ բաւական գաղափար կ'ընծայեն:

Իրենց կրօնին անդթութիւնը մարդը սաստիկ կը սոսկացրնէ: Մարդագոհի յաճախութիւնն ու անոր զանազան արարողութիւններն իրենց անդթութեանցը յայտնի ազատցոյց են: Իրենց գլխաւոր կուռքը Պատերազմի անագորոյն աստուածն էր, որն որ իրենց հետ հաշտ բռնելու համար՝ իրենք զիրենք անլուր տանջանքներու տակ կը ձգէին. բայց մարդազոհն ան ամէն տանջանքները կը գերազանցէր, ինչու որ երբեմն տաճարները մարդու արիւնէ կը լողար: Տարւէ տարի զոհուած մարդիկներուն ճիշդ համրանքը գիտնալն անկարելի է. սակայն ամենէն նուազ դնողներն ալ 20,000 հոգիէն պակաս չեն դներ: Իսկ սպաններու եղանակը՝ տօներուն ու դերիներու աստիճանին համեմատ էր: Երբեմն ջրի մէջ կը խղդէին, երբեմն անօթութեամբ կը մեռցնէին, երբեմն ալ իրարու հետ կռուելու կը հանէին, Հռոմայեցւոց սուսերամարտիկներուն նման: Աս վերջին տեսակ մահն ամենէն պատուաւորը կը սեպուէր եւ յաղթողն ըստ մեծի մասին կ'ազատէր: Բայց հասարակօրէն գործածուած եղանակը՝ տաճարի սեղանին վրայ մորթելով սպաննելն էր:

Զոհ մատուցողները վեց հոգի էին. ասոնք խեղճ զոհը մերկացրնելէն ետքը՝ դէպ ի սեղան կը քաշէին. մէջերնէն չորս հոգի ձեռուրներն ու ստուրները մէկն ալ գլուխը հաստատուն կը բռնէր, իսկ իրենց մեծը քարէ դանակով մը կուրծքին զարնելով ու ճեղքելով՝ սիրտը դուրս կը հանէր ու կուռքին կ'ընծայէր, կարծելով որ անով կը կերակրի: Զոհին արիւնէն կուռքին շրթուներն ու տաճարին դռները կը ներկէին: Եթէ զոհուողը պատերազմի մէջ բռնուած գերի մ'ըլլար, աս նուէրը լմբնալուն պէս՝ գլուխը կը կտրուէր ու մարմինը՝ գերի բռնողին կը տրուէր, որն որ խաշելով իր ընտանեաց ու բարեկամներուն հետ կ'ուտէր, որոնք անհամբերութեամբ աս խնջոյքին մասնակից ըլլալու կը բաղձային: Օրովեանք՝ որ նոյն կողմերուն ամե-

նէն կտտաղի ցեղն էին, զոհուածին միտը կտոր կտոր կ'ընէին ու ծախու կը հանէին:

Ստորին աստուածներուն պաշտօնն ալ նոյնպէս էր. ասոնց պատկերները միշտ ահաւոր ու սոսկալի կերպարանք մը կ'ունենար: Ուստի եւ Մեքսիկացւոց պաշտօնն իրենց վախէն շարժեալ ըլլալով՝ նոյնպիսի արիւնարբու սպասներով անանկ անգութ աստուածներուն բարկութիւնն իջեցընելու կը ջանային: Աս բանս շատ արգելք կ'ըլլար թէ՛ քաղաքականութեան մէջ յառաջանալու եւ թէ՛ ընկերական յարաբերութեանց ընդարձակուելուն: Նոր Աշխարհքին ամենէն աւելի ծաղկեալ ազգն՝ ամենէն աւելի վայրենի ու անգութ էր, եւ իրեն կրօնի պաշտամունքն ամենէն վայրենի ազգաց մէջն ալ քիչ կը գտնուէր:

Թէպէտ պատմիչները Մեքսիկացւոց քաղաքականութեան վրայ խիստ առաւելաբանութեամբ խօսած են, ի վերայ այսր ամենայնի բոլոր պատմութեան ընթացքէն ալ կ'երեւայ որ բաւական կարգաւորեալ կառավարութիւն ու վարչութիւն մ'ունէին: Ուստիկանութեան պաշտօնն ըստ բաւականին կարգաւորեալ էր: Սուրհանդակները կայսեր հրամանները տէրութեան մէկ կողմանէ մէկալ կողմը սատիկ արագութեամբ կը հասցընէին, նոյնպէս ամէն լրերը շուտ մը մայրաքաղաք հասցընելու միջոցները կարգի դրուած էին: Չանազան պաշտօնակալներ քաղքին հանդարտութեան միտ կը դնէին ու ժողովրդեան դատաւորութիւն կ'ընէին: Ստացուածոց տուրքերն արդարութեամբ բաժնուած էր, նոյնպէս վաճառատեղիները դրուած ապրանքներու հարկերը կարգով կանոնով կը ժողվէին: Ամէն մարդ գիտնալով որ հասարակաց մուտքն աւելցընելն իր պարտքն է, առանց դժուարութեան հարկերը կը վճարէր: Աս տուրքերը թէ՛ երկիրն բերքերէն ու թէ՛ զանազան ձեռագործներէն էր, որոնք տէրութեան համբարանոցները ժողվելով՝ կայսրն անոնցմով իր պալատին ծախքը եւ պատերազմի ու խաղաղութեան ժամանակ զինուորաց հագուստն ու ապրուստը կը ճարէր:

Կառավարութեան կերպը միապետական էր, բայց իշխանութիւնը միշտ մի եւ նոյն չէր: Յառաջագոյն շատ չափաւորուած էր եւ աւելի նահապետական ձեւ մ'ունէր. բայց քանի որ երկիրն ընդարձակեցաւ, տէրութեան գանձն աւելցաւ եւ քաղաքականութիւնն յառաջացաւ, իշխանութիւնն ալ աւելի զօրացաւ, մինչեւ վերջապէս ինքնիշխան

ու բացարձակ եղաւ, ինչպէս որ Սպանիացւոց հոն մտած ժամանակն էր: Մոնղեղու մային աշխարհակալութիւններն ու ձիւրքերը տէրութիւնն ընդարձակեցին եւ սահմանակից պզտիկ հասարակութեանց ու իշխաններու անկախութիւնն երթալով ընկճեցաւ, որոնք վերջապէս իրեն հարկատու ըլլալու ստիպուեցան:

Մեքսիկոյի թագաւորութիւնն ընտրութեամբ էր. իսկ ընտրողները վեց հոգի էին, որոնք թէ՛ ազնուականութեամբ ու թէ՛ իրենց ձրիցը համար նշանաւոր անձինք կ'ըլլային: Գեղեւզոյի ու Գազուպայի ցեղապետները միշտ ընտրողներուն մէջ մտնելու իրաւունք ունէին. իսկ մէկալ չորսերն ընտրութեամբ կ'որոշուէին: Ընտրողները գրեթէ միշտ մեռնող թագաւորին ցեղէն մէկը կ'ընտրէին, բայց առանց ծննդեան կարգին նայելու՝ աւելի յարմար ու յաջողակ երեւցածը կ'ընտրէին: Թագաւորին ընտրութեան հետ շատ հանդէսներ ու սովորութիւններ կապուած էին, որոնցմէ ամենէն նշանաւորն ան էր՝ որ նոր թագաւորը պատերազմ մը պիտ'որ ընէր, որպէս զի գերիներ բռնէ ու պատերազմի աստուածին զոհէ:

Մոնղեղու մա անթիւ անհամար սպասաւորներ ունէր, որոնք մեծ հոգաբարձութեամբ իրեն կը ծառայէին, այնպէս որ Նոր Աշխարհքին մէջ աս տեսակ աբբունական կարգաւորութիւն ուրիշ տեղ չէր տեսնուեր: Ինք երեք ժողովք ունէր, որոնք տէրութեան օգտին ու յառաջադիմութեան վրայ իրեն խորհուրդ կու տային: Տէրութեան դանձապետը մէկալ պաշտօնատէրներէն աւելի մեծ պատիւ ու յարգ ունէր եւ թագաւորին ու տէրութեան բոլոր հարստութիւնն անոր ձեռքն աւանդուած կ'ըլլար:

Գեսպանութիւնն ալ իրենց մէջ մեծ պաշտօններէն մէկն էր, եւ միշտ երեւելի մարդիկ կ'ընտրուէին: Գեսպանաց անձն անբռնաբարելի էր, ամէն անցած տեղերնին մեծ պատիւ ու փառաւոր ընդունելութիւն կը դանկէին եւ ճշդիւ թագաւորին անձը կը ներկայացնէին:

Մէջերնին պատուոյ աստիճաններ ալ կային, որոնցմէ իրենց յառաջադիմութիւնը կ'երեւայ: Վայրենեաց մէջ միայն անձնական քաջութեան ու զօրութեան համար պատիւ ու յարգ կը ստացուի. բայց երբ որ հասարակութիւն մը կարգաւորելու եւ յառաջ երթալու կը սկսի, բարոյական զօրութիւնը բնական զօրութենէ աւելի յարգ կ'ունենայ ու աստիճանի զանազանութիւն կը խթէ:

Մեքսիկոյի մէջ աս կարգերուն ու զանազանութիւններուն մեծ մտադրութիւն կ'ըլլար. նոյն իսկ ազնուականները զանազան կարգ բաժնուած էին, զորոնք Սպանիացիները շատ անգամ կը շփոթէին՝ ընդհանուր անուամբ մը ցեղապետ (cacique) կոչելով: Ազնուականութեան ամենէն բարձր աստիճանին հասնելու բաղձացողը՝ թէ՛ նշանաւոր ու երեւելի ցեղէ մը սերած պիտ'որ ըլլար եւ թէ՛ մեծ արդիւնք ու արժանաւորութիւն պիտի ցուցնէր: Ամբողջ տարի մը կը փորձուէր իր առաքինութիւնը, որպէս զի հաստատութիւնն ու քաջարտութիւնը ցուցուի:

Տէրութեան երկիրները երեք մաս բաժնուած էին, թագաւորին, ազնուականաց ու հասարակ ժողովրդեան մէջ: Թագաւորն իր երկիրներուն եկամտէն տաճարներն ու քրմերը կը պահպանէր: Որպէս զի ամէն հասարակութեանց երկիրներուն սահմաններն աղէկ որոշուի ու վրան վէճ չելլէ, տաճարներուն մէջ ամէն մէկուն սեպհական երկրին պատկերները զանազան գոյներով քաշուած կը պահուէր: Ազնուականաց կալուածները ժառանգութեամբ որդւոց որդի կ'անցնէր: Նոյն կալուածներն ընտանեաց անդրանկին կ'անցնէին, բայց եթէ հայրը զանդրանիկն անյարմար կը դատէր, կրնար կրտսեր որդիքներէն ամենէն յաջողակն ընտրել ու իրեն ժառանգ ընել, ան պարտաւորութեամբ՝ որ իր մէկալ եղբարց պատուաւոր ապրուստը հոգայ:

Մեքսիկացւոց օրէնքները պարզ էին, բայց սաստիկ խիստ. շատ յանցանքներ՝ որոնց Եւրոպայի մէջ հազիւ թեթեւ պատիժ մը կը տրուի, հոս մահուամբ կը պատժուէին. եթէ մէկն իր սեռին սովորական եղած ձեւը փոխէր՝ կը կախուէր: Նոյնպէս բարոյից դէմ՝ եղած անկարգութեանց պատիժը մահ էր: Չինուորաց կանոններն ալ խիստ էին:

Մեքսիկացւոց արուեստներուն աստիճանին վրայ վէճ կայ: Իրենց նկարած պատկերները՝ որոնց վրայ Սպանիացիք այնչափ կը զարմանային, հանդարտութեամբ ու մտադրութեամբ քննողի մը զարմանքը շատ չեն շարժեր. իրենց ոսկիէ ու արծրթէ զարդերը, նմանապէս մարդու եւ կենդանեաց նկարները՝ բնականին հետ քիչ նմանութիւն ունին: Բայց աս ալ ստոյգ է թէ որչափ ալ խոշոր ու անարուեստ ըլլային, Սպանիացւոց զարմանքն ի հարկէ կը շարժէին, որովհետեւ Ամերիկայի ուրիշ կողմերն ամենեւին անոնց չափ արուեստ տեսած չէին: Բայց ամենէն աւելի

անոնց զարմանքը գրգռեց՝ Մեքսիկոյի պաշարման ատեն իրենց պաշտպանութեան համար ցուցուցած գործունէութիւննին, զանազան ամբուութիւններ կանգնելնին ու բանեցուցած պատերազմական հնարքնին, որոնցմէ բաւական կ'իմացուի թէ որչափ սրատեսութիւն ու ժրութիւն ունէին, որն սր վայրենի ազգաց մէջ չիտեսնուիր :

Համառօտ ընելու համար՝ յայտնի է որ Մեքսիկացիք քաղաքական յառաջադիմութեան ճամբան բռնած էին ու երթարթ կը յառաջանային . սակայն նոյն ատենուան Էւրոպայի ազգաց եւ ոչ ամենէն ետ մնացողներուն հետ կրնային բաղդատուիլ : Մեքսիկոյի առնուելու ժամանակն աս ժողովուրդը պատերազմասէր էր, եւ երկրագործութեան, վաճառականութեան, օրէնսդրութեան ու արուեստից սկզբնական ծանօթութիւններն ունէր . բայց միանգամայն այնպիսի տգիտութեան մէջ ընկղմած էր եւ անանկ բարբարոսական սովորութիւններ ունէր, որ կատարեալ քաղաքականացեալ ազգաց կարգն անցընելն անկարելի է :

Առջեւի պատմութիւննիս աւելի դիւրմբռնելի ընելու համար աս նախաշաւիղ ծանօթութիւնները տալէն ետեւ՝ կը սկսինք ան երեւելի մարդուն վարքն ու քաջութիւնները պատմել, որոնք անշուշտ մեծ զարմացման արժանի են, եւ որոնցմէ ամէն մարդ բաւական խրատ ու օգտակար խորհրդածութիւններ ընելու նիւթ կը գտնէ :


Աս գրուածքին մէջ մեզի առաջնորդ առած ենք Հենրիկոս Լըպրէօնին նոյն նիւթին վրայ գրած պատմութիւնը, որն սր ըստ մեծի մասին թարգմանած ենք, բայց բոլորն ուրիշ երեւելի մատենագիրներու՝ մանաւանդ Սոլիսին ու Ռոպերդսնին հետ բաղդատելով, տեղ տեղ համառօտցրնելով կամ ընդարձակելով, տեղ տեղ աւելորդ սեպած կտորնիս մէկդի ձգելով եւ ուրիշ տեղեր ալ պակաս սեպածնիս աւելցրնելով :



# Փ Ե Ռ Կ Ն Ե Ն Գ Գ Ո Ր Դ Է . Զ

Կ Ա Մ

## Մ Ե Ք Ս Ի Կ Ո Յ Ի Ը Ռ Կ Ն Ո Ւ Ի Լ Ը



Ը .

Փեռնանք Գորդեւին թնանելը, կրնանին ու երբորսոր-  
դանինինը:

Ընծւանօթ երկիրներ գտնելու եւ աշխարհակա-  
լութիւններ ընելու եռանդը՝ հնդեատասաներորդ ու  
վեշտասաներորդ դարու մարդիկներուն սեպհական  
նկարագիրն եղաւ: Քրիստափոր Կոլումբոս իր մտաց  
սրութեամբն ու հնարագիտութեամբը Նոր Աշխարհ-  
քը գտնելէն ետքը, Սպանիացւոց եռանդուն ոգին  
նոր կենդանութիւն մը ստացաւ ու ամենուն սրտին  
մէջ նոր երկիրներ գտնելու եւ հարստութեան նոր  
աղբիւրներ բանալու յոյսը գրգռեցաւ: Ամենէն ստու-  
րին աստիճանի եւ ողորմելի ու ձիւք չունեցող մար-  
դիկ ալ յանդգնական գործքերու ձեռք կը զար-  
նէին, եւ շատ անգամ իրենց յուսացածէն աւելի  
կը յաջողցնէին: Խաչակրաց պատերազմներուն ու  
Ասպետաց հռչակաւոր դարերուն՝ այսպիսի առան-  
ձնական զինուորական արշաւանքներ յաջորդեցին:

Նոր Աշխարհքն իբրեւ մեծ թատր մը կրնանք  
մտածել, ուր որ պատերազմական ձիւք ունեցողներն  
իրենց յաջողակութեան փորձը կը ցուցնէին: Աս  
տեսակ յաջողութիւն եւ փառք փնտռելու երած  
բազմութեան մէջէն շատ զօրապետներ՝ պատմու-  
թեան մէջ իրենց անունն անմահացուցին. բայց ա-

սոնց մէջ՝ կողմընոսէն ետքը՝ առաջին տեղն իրաւամբ կրնանք Փետրուարի Գորդէզին նուիրել :

Փետրուարի Գորդէզ, 1485ին Էտրէմստուրայի Մէտէլին քաղաքը, ազնուական բայց աղքատ ծնողքներէ աշխարհք եկաւ : Տոն Մարդին իր հայրը պզտիկութենէ տղուն ցուցուցած նշաններէն իմանալով որ մեծ ձիրք ունի, եւ եթէ աղէկ կրթութիւն ստանալու ըլլայ՝ անուանի եւ հարուստ մարդ կրնայ ըլլալ, միտքը դրաւ որ անոր կրթութեան հոգ տանի. եւ նոյն ատենէն՝ զինքը փաստաբանութեան աւելի համաձայն սեպեց : Ստուգիւ ալ տղան մեծ աշխուժութիւն ու մտաց սրութիւն ունէր. վրան ազատ ու համարձակ խօսակցութիւն եւ խոհեմութիւն մը կը տեսնուէր եւ այնպէս կը կարծուէր որ եթէ օրինաց գիտութիւն սորվի՝ երեւելի անձ մը կրնայ ըլլալ :

Աս վախճանաւ հայրը զինքը Սալամանգայի հռչակաւոր համալսարանը խրկեց. Գորդէզ նոյն ատեն տասնուչորս տարւան էր : Թէպէտեւ շուտով յառաջ երթալու ամէն պահանջուած ձիրքն ունէր, ի վերայ այոր ամենայնի այնչափ փոյթ չտարաւ. իր կրակոտ բնութիւնը՝ դպրոցական ճշգրութիւններուն ու նստողական կեանքի յարմար չէին : Երկու տարի հոն կեցաւ ու բաւական յառաջ ալ դնաց. բայց աս տեսակ կեանքն իրեն խառնուածին անտանելի գալով՝ ալ չկրցաւ երկայն ատեն համբերել, ուստի դպրոցը թող տալով իր հօրը քովը դառնալու պարտաւորեցաւ : Հոն իր յօժարութեան համաձայն՝ զէնք գործածել, սուր խաղցրնել, ձի հեծնալ սորվեցաւ. իր ախորժած զբաղմունքը՝ պատերազմական խաղերն էին : Մարմնոյն կազմուածքն այնպէս զօրաւոր էր, որ ամէն խիստ ու աշխատաւոր գործքերու կը դիմանար : Իր քաղցր վարմունքն ու ճարտարխօս լեզուն՝ ամենուն սիրտը կը յափշտակէր :



Գորդէզ իր երիտասարդական հասակին մէջ՝ պատերազմներու մէջ քաջութիւն ընելէն եւ փառք ու պատիւ ստանալէն ուրիշ մտածմունք ու բաղձանք մը չունէր: Հայրն իսկզբան բոլոր զօրութեամբ անոր աս բաղձանքին դէմ զինեցաւ. բայց քաղաքական պաշտօնի մը դնելու յոյսը բոլորովին ոչընչանալէն ետքը՝ վերջապէս զինուորական արուեստի մէջ մանելու հաւանութիւն տուաւ: Պարագաներն ալ անանկ յարմար եկան որ քիչ ժամանակուան մէջ զինուորական մեծ պաշտօնի եւ բախտի կրնար հասնիլ: Ամենուն ուշադրութիւնն Խտալիայի պատերազմներուն վրայ էր, ուր որ Աոնզալվ Գորտովլացւոյն անունն ամենուն բերանն էր: Գորդէզ՝ Խտալիայի մերձաւորութիւնը եւ Աոնզալվին փառքը տեսնելով՝ միտքը դրաւ որ անոր դրօշին տակ պատերազմի. բայց նոր կազմուած բանակի մը հետ ճամբայ ելլելու Խտալիա երթալու ժամանակը մօտիկցած ատեն՝ ինք ծանր հիւանդանալով՝ միտքը դրածը չկրցաւ յառաջ տանիլ:

Աս միջոցիս Տոն Նիգօլա տէ Օվանտոյ Սպանիոլայի կառավար դրուեցաւ. ասով Գորդէզին հայրն իր որդւոյն ապագայ վիճակին վրայ մեծ յոյս ստացաւ. որովհետեւ Օվանտոյ իր ազգականն ըլլալով՝ կը յուսար որ անոր պաշտպանութեամբն ու խնամքովը՝ Գորդէզ մեծ պաշտօնի մը կրնայ հասնիլ եւ իր մեծ ձիրքերը յայտնելու շատ առիթներ կը գտնէ: Աս մտածութիւններն իր որդւոյն յայտնեց, որն որ ամենայն եռանդեամբ ու սիրով ընդունեցաւ եւ անհամբերութեամբ Նոր Աշխարհք երթալու ժամանակին կը սպասէր: Շուտ մը Օվանտոյին ժողված բախտախնդիրներուն ցանկին մէջ գրուեցաւ. բայց ճամբայ ելլելէն քանի մ'օր յառաջ գլուխը դժբախտութիւն մը գալով՝ դարձեալ իր ընտանեացը քով մնալու ստիպուեցաւ:

Երկու տարի ետքը նոր արշաւանք մ'ալ պա-

տրաստուած ըլլալով՝ նոյն յարմար առթով Գորդէզ 1504ին տասնուինը տարւան Ս. Գովինիկոս կղզին հասաւ: Օվանտոյ զինքը շատ սիրով ընդունեցաւ եւ իր որդւոյն պէս վրան հոգ տարաւ ու ամէն առթի մէջ անոր վրայ ունեցած սէրը կը յայտնէր. իրեն շատ երեւելի եւ շահաւէտ գործքեր ու պաշտօններ ալ յանձնեց: Աս մեծ շնորհքներն, որոնք շատ մարդիկ գոհ ընելու բաւական էին, Գորդէզին փառասիրութիւնը չէին կրնար յագեցընել: Խեղքը միտքը՝ վտանգաւոր եւ արտաքոյ կարգի արշաւանքներու, զինուորական նահատակութիւններով անուն ստանալու ետեւէ էր. եւ որովհետեւ գաղթականութեան ներկայ վիճակը՝ Գորդէզին զինուորական ախորժակին եւ յօժարութեանցը յարմար չէր, անոր համար միշտ տրտում տխուր կը կենար եւ իր վիճակն իրեն ծանր կու գար:

Քիչ մը ետքը՝ Օյետա ու Նիգուեզա՝ ցամաքի վրայ նոր երկիրներ գտնելու եւ գաղթականութիւններ հաստատելու յուսով արշաւանք մ'ընելու ձեռք զարնելով՝ Ս. Գովինիկոս կամ Սպանիոլա կղզին գտնուող բազմաթիւ բախտախնդիրներուն փառասիրութիւնն ու եռանդը սաստիկ բորբոքեցաւ: Գորդէզ ալ՝ որ իր պաշտպանը Օվանտոն կորսընցուցած էր, անտարակոյս աս արշաւանքին կ'ընկերանար, եթէ ծանր հիւանդութենէ մը արգելուելով՝ տեղը մնալու չստիպուէր: Աս երրորդ անգամն էր որ աւջեւն եկած յարմար առիթը կը ստիպուէր մէկդի թող տալու. բայց իր պատուական կեանքն աւելի մեծ, աւելի բարձր բախտի մը սահմանուած է եղեր:

( ) Օյետային ըրած արշաւանքը յաջող վախճան մը չունեցաւ. իր ընկերաց զրեթէ ամէնքն ալ մէկ տարւան միջոցին մէջ մեռան եւ իրենց քաջութեան ու անտանելի աշխատութեանց պտուղը չկրցան վայելել. միայն Տարիենի ծովածոցին մէջ փոքր եւ

տկար գաղթականութիւն մը հաստատեցին: Գորղէզ Աստուծոյ շնորհակալ եղաւ որ այսպէս յայտնի մահունէ զինքն ազատեց. ի վերայ այսր ամենայնի իր երիտասարդութեան գեղեցիկ օրերն, իր ազնիւ տարիները՝ խաղաղութեամբ ու պարապ տեղ անցընելուն վրայ մեծապէս կը ցաւէր ու կը տրամէր: Հարստութիւն ունէր, որովհետեւ ընդարձակ երկրի եւ բազմաթիւ գերիներու տէր էր. Բայց ի՞նչ պիտի ընէմ, կ'ըսէր, աս հարստութիւնը. որովհետեւ փառաց կը ցանկար, քաջութիւններ գործելով անունն անմահացընել կ'ուզէր:

Երբ որ 1511ին՝ Տիեկոյ կողմօս՝ որն որ Օվանտոյին յաջորդն եղած էր, Գուպա կղզոյն տիրելու առաջարկութիւնն ըրաւ. Գորղէզ՝ ասանկ գեղեցիկ ու պատուական առիթ մը ձեռքէ չփախցընելու համար՝ ամէն միջոց ի գործ դրաւ: Իրօք ալ Տիեկոյ վելասկուէզին, որն որ ան արշաւանաց գլխաւորն էր, ատենադպրի պաշտօնը ձեռք ձգեց:

Վելասկուէզ Սպանիոյա կղզին բնակած ատեն՝ իր խոհեմ ու արդար ընթացքովն եւ պատուական բնութեամբը մեծ համարում ստացած էր: Ասանկ գլխու մը առաջնորդութեամբը Գորղէզին բնական ձիրքերն աւելի կատարելագործուեցան, եւ իր կենաց արտաքոյ կարգի դէպքերուն մէջ՝ իրեն մեծապէս օգնեցին:

Գուպա իզլուոյն առնալիւ: — Գորդեզ՝ նոր երկիրներ գտնելու  
արշաւանաց հրահանարար ի՛նչորոտի:

Սպանիացիք բոլոր նոր Աշխարհքին մէջ՝ Գուպա կղզիէն աւելի գիւրին աշխարհակալութիւն ըրած չեն: Ստուգիւ զարմանալու բան է որ 2000 մղոնէն աւելի տարածութիւն ունեցող բաղմամարդ կղզւոյ մը տիրելու համար՝ Աելրասկուէզ 300 հոգւով բանակ մը բաւական սեպած ըլլայ, որն որ իրօք ալ կրցաւ աս գործքը գլուխ հանել: Բայց աս ալ ստոյգ է որ կղզւոյն բնակիչքը պատերազմասէր չէին եւ միանգամայն Սպանիացւոց յարձակման դէմ դնելու համար ամենեւին պատրաստութիւն չունէին. միայն կղզւոյն արեւելեան ծայրերը քիչ մը դիմադարձութիւն գտան: Աղզւոյն աս մասին վրայ Հադուէյ աւնունով ցեղապետ մը կը տիրէր, որն որ Սպանիացւոց անգթութիւններէն նեղուելով՝ Սպանիոյ կղզիէն փախած հոս եկած էր, եւ երբ որ անոնց Գուպա հասնիլը լսեց, ցամաք ելլելնին արգելելու ջանաց. բայց իր ջանքն անօգուտ եղաւ, որովհետեւ շուտ մը իր գունդը ցրուեցաւ եւ ինքն ալ գերի ինկաւ: Աս փոքր կռուէն ետքը ամբողջ կղզւոյն տիրեցին եւ անմիջապէս Սուրբ Յակոբ անուամբ գաղթականութիւն մը հաստատեցին:

Քիչ մը ետքը ճամախագ կղզւոյն վրայ ալ յարձակում մ'ըրին, որուն յաջողելուն՝ շատ օգնութիւն ըրաւ Գորդէզ ալ՝ որ բանակին երկրորդ հրամանատարն էր: Գորդէզին քաղցր վարմունքն ու յաջողակութիւնը զինքը Աելրասկուէզին սիրելի կ'ընէին. մանաւանդ իրեն եւանդն ու քաջասրտութիւնն երիտասարդական հասակին հետ միացեալ ըլլալով՝ աւելի եւս Աելրասկուէզին հաճելի կ'ըլլար: Գորդէզ՝ իր վիճակին առաւելութիւնները յայտնի կը տեսներ

Եւ անկից օգուտ հանելու կը ջանար: Ամենէն աւելի՛ Անդրէաս Տուերոյին հետ սրտակից բարեկամ ըլլալու ջանաց, որն որ իրեն պէս՝ Կառավարին քարտուղարն էր: Բայց շատ անգամ իր բնութեան ու խառնուածքին սաստկութիւնն՝ իր դժբախտութեան պատճառ կ'ըլլար. դիպուած մը պատահեցաւ, որուն մէջ իր անսանձ բնութեամբը՝ քիչ մնաց որ բոլոր իր աշխատութեանցը պտուղը պիտի կորսնցընէր: Սուրբ Յակոբի գաղթականներէն շատերը՝ Աելասկուէզին վրայ տժգոհութիւն ունենալով՝ իրենց գանգատը Տիեկոյ Աղոմբոսին հասցընել կ'ուզէին: Ամէնքը Գորդէզին համարձակութիւնն ու յաջողակութիւնը ճանչնալով, զինքն աս արտաքոյ կարգի վտանգաւոր ճամբորդութեան գլխաւոր ընտրեցին. Սպանիոյա երթալու համար՝ միայն տկար ու խախուտ ծառակուր մ'ունէին: Կառավարն աս ծածուկ խորհուրդն իմացաւ եւ Գորդէզին ապերախտութեան վրայ սաստիկ բարկանալով՝ զինքը մահուան դատապարտեց. բայց Գորդէզ բանը ժամանակին իմանալով՝ զինքը բռնելու եկողներուն ձեռքէն եկեղեցի փախաւ, եւ հոն պիտի մնար մինչուկ որ Անդրէաս Տուերոյ եւ իրեն ուրիշ բարեկամները կառավարին բարկութիւնն անցընէին: Գիպուածը բերած էր որ ազնուական ցեղէ Կատարինէ Սուարեզ աղջկան տունն ալ՝ որուն հետ ինք կարգուելու միտք ունէր, աս եկեղեցւոյն մօտերը կ'իյնար: Գիշեր մը Գորդէզ անոր այցելութեան երթալ ուզեց, բայց հոն գտնուող աղեղնաւոր պահապանները զինքը բռնեցին բանտ տարին: Ան ատեն իր սխալման մեծութիւնն իմացաւ, եւ այնպէս անկեղծութեամբ զղջում ըրաւ, որ Կառավարը զինքն ազատեց եւ հրաման ալ տուաւ որ կարգուի, եւ ետքը մեծարտութեամբ անոր անդրանիկ որդւոյն կնքահայրն ալ եղաւ: Անանկով Գորդէզին դէմ ունեցած ատելութիւնը բոլորովին

Թողուց եւ սկսաւ անոր հետ շատ սիրով վարուիլ . բայց նորէն իր առջի ատենադպրութեան պաշտօնին մէջ առնել չուզեց : Գորդէզ աս ատենէն սկսեալ մեծ սրատեսութեամբ ու խորունկ հնարագիտութեամբ կը վարուէր . ինք զինքը սաստիկ խոնարհամիտ կը ցուցնէր . ամենայն ջանքով ու փութով ամէն գործքի մէջ կը մտնէր կ'աշխատէր , ուսկից կը գուշակէր որ իր տիրոջն օգուտ մը կրնայ ըլլալ . վերջապէս ինք զինքը հարկաւոր , օգտակար ու սիրելի բնելու աշխատեցաւ , յուսալով որ աս փոփոխութեան միտ կը դրուի եւ իրեն օգտակար ալ կ'ըլլայ :

Կառավարը 1515ին Հեռնանտէզ Գորտովացւոյն հրաման տուաւ որ ինքնակամ զօրաց բանակ մը կազմէ ու նոր երկիրներ գտնելու երթայ : Աս արշաւանքին գացողներուն թիւը 110 հոգի էր , որոնք Եուզագանի թերակղզին գտան : Սպանիացիք ցամաք ելան , բայց անմիջապէս իմացուեցաւ որ աս տեղաց ժողովուրդն՝ իրենց մինչեւ նոյն ժամանակը ճանչցած ժողովուրդեան պէս վատ չէին . Հեռնանտէզ իր զօրաց մեծ մասը կորսընցրնելէն ետեւ՝ Գուպա կղզին դառնալու ստիպուեցաւ եւ հոն հասնելէն քիչ մը ետքը մեռաւ : Թէպէտ աս արշաւանքն այսպէս դժբախտ եղաւ , բայց Վելասկուէզ ան դաւառին հարստութեանց լուրն առնելով , Յովհաննէս Արիժալուան չորս նաւով ու 240 հոգւով նորէն խրկեց , յուսալով որ վերջապէս յաջող վախճան մը կ'ունենայ : Սպանիացիք նախ Գոզումէլ կղզին գտան եւ Եուզագանի ծովեզերքը պարտեցան , ուր որ բնակչաց զանազան խաղալիքներ տալով՝ մեծ քանակութեամբ ոսկի ժողվեցին : Արիժալուա անկից Սուրբ Յովհաննէս Ուլլոայի կղզին մօտիկցաւ , որն որ Մեքսիկոյի իշխանութեան տակն էր : Բնակիչք օտարականները տեսնելով՝ սաստիկ զարմացան . անոնց ե-

բեւոյթը, դէմքը, զգեստներն ու շէնքերն իրենց համար բոլորովին նոր բան էր. աս նոր տեսարանէն խռոված ու վախցած՝ անմիջապէս գալուստներն իրենց թագաւորին իմացուցին: Սպանիացիք հոս երկայն ատեն չկեցան, ի վերայ այսր ամենայնի առատ ոսկի ժողովեցին: Արիժալուա հոն համոզուեցաւ որ անկղզւոյն մօտիկ եղած երկիրն ընդարձակ ցամաք երկիր մըն է: Աս գիւտը յառաջ տանելու խիստ կը բաղձար. բայց ի գործ դնելու միջոց չունենալով՝ աւելի ազէկ սեպեց Գուպա կղզին մարդ խրկել եւ օգնութիւն ուզել. միտքը դրած էր որ անկից օգնութիւն չեկած՝ ճամբայ չելէ: Իր ընկերներն ալ ասոր համաձայն խորհուրդ կու սային, որովհետեւ գիտէին որ իրենք քիչուոր ըլլալով՝ ո՛չ գաղթականութիւն կրնան հաստատել ո՛չ ալ երկայն ատեն նոյն երկիրներուն մէջ կրնան դիմանալ: Անոր համար Արիժալուա իր պաշտօնակալներէն Ալուարատոյ անունով մէկը Գուպա խրկեց, որ ժամանակին հասնելով՝ Ալեյասկուէզին կասկածներն ու մտմտուքը փարատեց: Որովհետեւ Ալեյասկուէզ մինչեւ նոյն ժամանակն ամենեւին անոնց վրայ լուր մ'առած չըլլալով՝ մասնաւոր նաւ մը խրկած էր. բայց նոյն նաւն ալ ալէկոծութեան պատահելով՝ կայմը կորսընցուցած ու Սուրբ Յակոբ քաջուելու ստիպուած էր, առանց ամենեւին լուր մը բերելու: Ուստի հոգն ու մտմտուքը սաստկանալու ժամանակ՝ Ալուարատոյ հասնելով՝ զինքը շատ ուրախացուց:

Այնող պաշտօնակալը նոր գտնուած երկիրներուն վրայ շատ գովեստով խօսեցաւ. իրեն հետ մէկտեղ բերած ոսկին՝ իր խօսքերուն ճշմարտութեանը վկայ էր: Կառավարը զինքն այսպէս յաջողակ լուր բերելուն համար շատ սիրով ընդունեցաւ, միանգամայն իր արթնութեանն ու արժանեացը համաձայն մեծ պատիւ ըրաւ: Ալուարատոյին պատմածները՝ Գուպա

կղզւոյն մէջ մնացողներուն շուտ մը տարածուելով, անոնց եռանդը գրգռեց. բայց մէջերնէն ոչ ոք Գորդէզին զգած մունքներն ունեցաւ, որն որ իր ճրիցն արժանի թէստրոնի մը բացուիլը կը տեսնէր. որովհետեւ իբրեւ հաստատուն միտքը դրած էր որ ըլլալու արշաւանաց մէջ ինքն ալ մաս պիտ'որ ունենայ. մանաւանդ թէ կարծես որ իրեն ներքին ազգեցութիւն մը կ'ըլլար թէ ինք աս արշաւանաց գլխաւորը պիտ'որ ըլլայ:

Վելասկուէզ առանց ժամանակ կորսընցընելու, Եւրոպա մարդ խրկեց եւ աս մեծ գիւտն իմացուց. իր կողմանէ ալ շուտ մը նոր գտնուած ցամաք երկրին աշխարհակալութեան համար նոր բանակ մը պատրաստեց. եւ վախնալով որ չըլլայ թէ ասանկ փառաւոր գործքի մը պտուղն ուրիշ կառավարի յանձնուի, Սպանիայէն մարդ չեկած՝ բանակը ճամբայ հանել ուզեց:

Պատրաստութիւնները սաստիկ արագութեամբ ի գործ կը դրուէին. բախտախնդիրները բազմութեամբ կը ժողվէին: Բանը կը մնար գլուխ մը ընտրելու վրայ: Վելասկուէզ բոլոր իր ճիգն աս ընտրութիւնն աղէկ ընելու վրայ թափեց, որովհետեւ ասանկ գործքերուն յաջողութիւնը՝ հրամանատարին յաջողակութենէն ու քաջասրտութենէն կախուած ըլլալն՝ աղէկ գիտէր. իր նախանձոտ բնութիւնն ալ իրեն մտմտուք կու տար, վասն զի յայտնի կը տեսնէր որ ասանկ հեռու տեղ եղողն՝ անմիջապէս իրեն իշխանութենէն անկախ պիտ'որ գործէ եւ իրեն հրամաններուն պիտի չանսայ: Շատերն աս պաշտօնը ձեռք ձգելու կը ջանային եւ ամէնն ալ՝ իրենց անձնական մեծ անունէն զաւ՝ նշանաւոր տեղերէ ալ պաշտպանութիւն ունէին, որմէ Վելասկուէզին մշտմտուքն աւելի եւս կը շատնար: Բայց Գորդէզին ապագայ վիճակն որոշող վայրկեանն հասած էր:



Ինք շատոնցուքնէ Անդրէաս տէ Տուերոյին եւ Ամատոր տէ Լարէզ Թագաւորական դանձապետին հետ բարեկամացած էր: Գիտէր որ ասոնց երկուքն ալ Ալեքսիսկուէզին առջեւը մեծ համարում ունին, եւ առանց իրենց խորհուրդ հարցընելու, գործքի մը ձեռք չիզարնէր: Գորդէզ ասոնց հետ խօսեցաւ եւ շատ ստակ խոստացաւ՝ թէ որ իրենց միջնորդութեամբն ու ձեռք բռնելովը՝ բանակին գլխաւոր հրամանատարութիւնն ընդունի: Աս երկու բարեկամները՝ զԳորդէզ մասնաւոր եղանակաւ Ալեքսիսկուէզին յանձնեցին: Աստուծոյն աս ընտրութեան հաւանեցաւ. եւ իրեն անանկ երեւցաւ որ շատոնցուքնէ փնտռած յաջող մարդը գտաւ: Գորդէզին աստիճանին նայելով՝ անանկ կը կարծէր որ չիկրնար անկախութեան բաղձալ. եւ անանկ միտքը դրած էր որ իրենց մէջն եղած երկպառակութիւնը դիւրաւ մոռնալուն ու թողութիւն տալուն համար՝ Գորդէզին սէրն ու հաւատարմութիւնը բոլորովին վատրկած է: Ալեքսիսկուէզ աս ալ կը մտածէր որ մէկէն ի մէկ ասանկ մեծ իշխանութեան մ'ալ հասցընելով, որն որ Գորդէզ ամենեւին չէր կրնար յուսալ, բոլոր անոր սէրը կրնայ յամիշտակել, եւ մինչեւ վերջն իրեն հաւատարիմ ու հպատակ մնալու կը ստիպէ:

Թէպէտ մինչեւ նոյն ժամանակ Գորդէզ գործքի մը գլխաւոր եղած չէր, ի վերայ այսր ամենայնի իր ցուցուցած ձիրքերն ամենուն մեծ յոյս կու տային, որովհետեւ ամենուն առջեւը՝ մեծ բաներու յաջողակ անձ մը ճանչցուած էր: Իր երիտասարդութեան անչափ աշխոյժը՝ իրեն բնութեան համաձայն գործքերու մէջ մտնելով, բաւական հանդարտած եւ անխոնջ գործունէութեան մը փոխադրուած էր: Իր անսանձ բնութիւնն՝ իր հասակակիցներուն հետ վարուելով ու զինուորական կրթութեանց տակ վարժուելով, զինուորի մը վայելուչ այրական համարձա-

կութեան դարձած էր: Աս ձիրքերուն հետ մէկտեղ ունէր նաեւ որոշում մ'ընելու ատեն մեծ խոհեմութեամբ վրան մտածել, գործադրութեան ժամանակ սաստիկ զօրութեամբ յառաջ տանիլ. միանգամայն հպատակելոց վստահութիւնն ստանալու եւ զանոնք կառավարելու ալ մեծ ձիրք ունէր, որն որ երեւելի մարդկան սեպհական նկարագիրը սեպուած է: Այսպէսով իր բնութեան ձիրքերը հասակին ու փորձառութեան օգնելովն աւելի եւս հասունացած էին:

Գորդէզ աս իրեն յանձնուած պաշտօնը՝ վերասկուէզին մեծ յարգութեան ու հպատակութեան նշաններ ցուցնելով ընդունեցաւ: Անմիջապէս ասնը դրան առջեւն իր դրօշը բացաւ. եւ ընդունած նոր պաշտօնին ամէն նշաններովն ու զարդարանքովն երեւան ելաւ: Ամենայն գործունէութեամբ ետեւէ կ'իյնար որ իր բարեկամներէն շատերն իրեն հետեւելու հաւանեցրնէ ու ճամբորդութեան պատրաստութիւնները շուտով լմնցրնէ: Ունեցած ստրկովը եւ գերիներն ու երկիրները գրաւ գնելով՝ ժողոված գումարով շուտ մը պատերազմի ու ճամբու պաշարները հոգաց. նոյնպէս իրեն հետ գալու պաշտօնակալներէն ոմանց կարօտութիւնն ալ լեցուց, սրպէս զի իրենց աստիճանին վայելուչ պատրաստութեամբ կարող ըլլան իրեն ընկերանալ:

Գորդէզին աս ընթացքն ու փոյթը շատ գովելի էր, ի վերայ այսր ամենայնի իրեն աստիճանին նախանձաւոր ըլլողներն՝ աս գործքերուն ծուռ մեկնութիւններ տալով՝ կառավարին միտքը պղտորեցին: Իր զօրացը վրայ բացարձակ իշխանութիւն ունենալու կը ջանայ, եւ անոնց սէրը վաստրկելու համար՝ առատաձեռնութիւն կը բանեցրնէ, կ'ըսէին: Միանգամայն ժամանակաւ մէջերնին եղած հակառակութիւնն յիշեցրնելով՝ Այնպիսի մարդուն ձեռքը հիմակ աս աստիճանի իշխանութիւն տալն ու հեռու

երկիր խրկելը՝ խոհեմութիւն չէ, կ'ըսէին, եւ կը հաստատէին որ Գորգէզ առ իշխանութիւնն աւելի իրմէ վրէժ խնդրելու պիտ'որ բանեցընէ, քան թէ առ մեծ բարերարութեան համար իրեն շնորհակալ ըլլալու:

Աս նենգաւոր խօսակցութիւնները՝ Աելասկուէզին կասկածոտ բնութեան վրայ ան աստիճանի խորունկ տպաւորութիւն ըրին, որ Գորգէզ անոր վարմունքէն ու խօսուածքին կերպերէն անմիջապէս իր վրայ ունեցած կասկածներն ու անվստահութիւնն իմացաւ. եւ Տուերոյ ու Ղարէզ բարեկամներուն խորհուրդ տալովը՝ շուտով ճամբայ ելլելու աճապարեց, որ չըլլայ թէ Աաւավարին միտքը բողբոլին փոխուի եւ ուրիշ կարգադրութիւն մ'ընէ: Պատրաստութիւնները շուտ մը լմնացուց, եւ 1518ին Նոյեմբերի 18ին առագաստ բացաւ ու ճամբայ ելաւ: Աելասկուէզ՝ հեռը ծովեզերքը գնաց ու մեծ վստահութիւն եւ բարեկամութիւն ձեւացընելով՝ հրաժարական բարեւը տուաւ. Գորգէզ ալ իր կողմանէ զինքը նորէն նորէն իր երախտագիտութեան ու հպատակութեան վրայ ապահովցուց:

## Գ.

Նոր Սպանիայի որչա՛տնայ հոմբոյ ելելու:

Գորգէզին արտօրնօք ճամբայ ելլելը՝ Աելասկուէզին կասկածներն ու վախերն աւելցուց: Անոր թշնամիներուն խօսքերէն յորդորուելով, ճամբայ ելլելու վերջին օրերը՝ զՏիեկոյ աէ Օրտազ Գորգէզին իբրեւ աեղակալ դրաւ, իրեն յարմար օգնական մը տալու պատճառանօք. բայց գաղտուկ անոր տպսպրած էր որ Գորգէզին ընթացքին վրայ հսկէ եւ անոր գործողութեանց ու խօսակցութեանց լուրն իրեն հասցընէ: Բայց հազիւ թէ ցամաքէն հեռացած էին, Աելասկուէզ իր կասկածոտ բնութեամբը, նոյն իսկ

իր գործակալին հաւատարմութեան վրայ ալ տարակուսելու սկսաւ, կը վախնար որ իրեն յանձնուած պաշտօնն աղէկ չիկատարեր: Մէկ կողմննէ ալ շարխօսութիւնները կը սաստկանային. ամէն մարդ իրբեւ ստոյգ կը հաստատէր թէ Գորդէզ առիթ մը գտնելուն պէս՝ անկախ ըլլալու ետեւէ պիտ'որ իյնայ: Նոյն քսու մարդիկները տեսնելով որ Աելասկուէզ առ խօսքերով ինք զինքը հակառակ կողմը չ'որոշեր, աւելորդապաշտութիւններ ալ բանեցընելու սկսան: Յովհաննէս Միլիիան անունով մէկը՝ որ զինքն աստեղագիտութեան գաղտնիքներուն ծանօթ կը ձեւացընէր, կառավարին միտքը փոխելու գործիք մ'եղաւ. իրեն ըրած ձախորդ գուշակութիւնները Աելասկուէզին ոգւոյն վրայ ան աստիճանի տպաւորութիւն ըրին, որ միտքն որոշեց զԳորդէզ իր պաշտօնէն ձգելու:

Արշաւանքը Գրինիդա ըսուած տեղը հանդիպած էր, անոր համար Աելասկուէզ շուտ մը հոնտեղի կառավար՝ Փրանկիսկոս Աերտուկոյին հրաման խրկեց որ զԳորդէզ իշխանութենէն վար առնէ եւ տեղն իրեն որոշած մարդը հաստատէ: Աելասկուէզ նոյն լուրը Տիեկոյ Օրտազին եւ Մորլային ալ հասցուց, որոնց վրայ ինք վստահութիւն ունէր: Բայց արդէն Գորդէզին՝ Լարէզ ու Տուերոյ արթուն բարեկամները՝ Աելասկուէզին ամէն ընթացքն ու շարժմունքը շարունակ կը դիտէին: Ուստի եւ ասոնց ձեռքովը Գորդէզ իրեն համար նիւթուած շարեաց լուրը՝ մեկաներէն շուտ խմանալով՝ զանոնք իր կողմը վաստակելու ջանաց. իր ունեցած մեծամեծ յոյսերն Օրտազին առջեւ անանկ ճարտասանութեամբ մը նկարեց, որ վերջապէս կրցաւ զանիկա իրեն շահիլ:

Օրտազ Աերտուկոյին գնաց եւ Գուպայէն եկած հրամանը կատարելուն վտանգներն ու դժուարութիւններն անոր առջեւը գրաւ: Իրօք ալ այնպէս

էր, որովհետեւ Գորգէզ արդէն իր երեւելի ձիրքերուն համար զօրաց առջեւը մեծ վստահութիւն ու համարում ստացած էր. եւ բոլոր արշաւանքին յաջողելուն յոյսը միայն անոր ճարպիկութեանն ու քաջասրտութեանը վրայ հիմնած էին: Աւերաուկոյ վախնալով, գուցէ ալ ծածուկ կաշառուելով, իրեն խորհուած հրամանն ի գործ չդրաւ: Գորգէզ ալ նորէն Աւերաուկոյին նամակ գրելէն ու անոր հնազանդ մնալու խոստումներ ընելէն ետքը՝ շուտ մը դէպ ի Հաւանա ճամբայ ելաւ:

Իր միտքն ան էր որ նոյն գաղթականութենէն ալ զօրք ժողվէ եւ իր նաւատորմին հարկաւոր եղած պաշարները կատարեալ հոգայ: Հոն շատ պաշտօնակալներ գտաւ, որոնք իրեն պէս յաջողակ մարդու մը դրօշին տակ մեծ քաջութիւններ ընելու եւ անուն ստանալու կը բաղձային: Ասոնցմէ երեւելիներն էին Կոնզալոյ տէ Սանտովալ, Փրանկիսկոս տէ Մոնդէյոյ եւ Տիեկոյ տէ Սոլոյ, որոնք խօսք առին միանգամայն արշաւանքին ուրիշ ամէն հարկաւոր եղածները հոգալու:

Աւերաուկոյ իր հրամանին չկատարուիլը տեսնելով՝ նորէն փորձ փորձել ուզեց եւ զԳորգէզ իր իշխանութենէն վար առնելու ջանաց: Նախ Աւերաուկոյին երկչոտութիւնը յանդիմանեց, մանաւանդ թէ Գորգէզին նաւատորմիլը դուրս ելլելու թող տալուն համար՝ վրան մատնութեան կասկած ունեցաւ: Շուտ մը դէպ ի Հաւանա հաւատարիմ մարդ մը խրկեց ու նոյն գաղթականութեան մեծը Պետրոս Պարպային իմացուց որ անմիջապէս զԳորգէզ բռնէ ու քովը պահպաններ դնելով՝ իրեն խրկէ, արշաւանաց չուն ալ քիչ մը ատեն ի կախ թողու: Նոյնպէս ուրիշ զլխաւոր պաշտօնակալաց ալ գրեց որ Պարպային խրկուած հրամանները կատարելուն օգնական ըլլան: Բայց Աւերաուկոյին խրկած մարդը

դեռ չհասած՝ Գորդէզ բանն խմանալով՝ առջեւն առնելու ժամանակ ունեցաւ. իր պաշտօնակալաց մէջ միայն երկու հոգւոյ վրայ կասկած ունէր, այս ինքն Աելասկուէզ տէ Լէոնին վրայ՝ որն որ Ասուավարին ազգականն էր, ու Տիեկոյ Օրտազին վրայ: Աս վերջինին մէկ քանի խօսքերէն անանկ կ'իմանար Գորդէզ որ առջի կարծիքը փոխուած է եւ դուցէ իր տեղն անցնելու յոյսեր ալ ունի: Գորդէզ իրեն նաւ մը տուաւ ու մօտ տեղէ մը պաշար բերելու պատրուակով քովէն քիչ մը ժամանակ հեռացուց, առանց վրան կասկած ունենալն իմացընելու: Իսկ զԱելասկուէզ տէ Լէոն՝ որն որ համարձակ ու վառվառն բնութիւն ունեցող երիտասարդ մըն էր, իր կողմը վաստրկիլը դիւրաւ յաջողեցաւ, վասն զի համոզիչ եղանակաւ ու պատճառներով ցուցուց թէ աս արշաւանքէն իրենց սրչափ օգուտ եւ սրչափ փառք կրնայ ըլլալ, եւ թէ դանդաղութեամբ քիչ մը ուշանալն սրչափ արգելքներ կրնայ պատճառել: Գորդէզ անանկ վարպետութեամբ ու եռանդեամբ անոր երեւակայութիւնը վառեց ու սրտին տիրեց, որ նոյն բոպէէն սկսեալ՝ իրեն սաստիկ հաւատարիմ՝ պաշտօնակալներէն մէկն եղաւ: Պետրոս Պարպա՝ Աերտուկոյին պէս՝ իրեն խաւրուած հրամանը կատարելու դանդաղեցաւ եւ վերջապէս Աելասկուէզին գրեց որ Չէի կրնար հրամաններդ՝ առանց մեծամեծ վտանգներու կատարել, որովհետեւ ժողովրդեան իմ իշխանութենէս ապստամբելու շարժմունքներ կը տեսնէի:

Օրտազ պաշար փնտռելու համար ճամբայ ելածին պէս՝ Գորդէզ բոլոր զինուորները ժողվեց եւ իրեն բնական ճարտասանութեամբն անոնց առջեւը նկարագրեց Աելասկուէզին նախանձոտ ընթացքը, եւ զինքն աս պաշտօնէն վար ձգելու համար ըրած փորձերը: Գլխաւորաբար Աելասկուէզին անիրաւութեան դէմ տրտունջ կ'ընէր, որն որ բաներն ու

չացրնելով՝ քաջերուն եռանդն ու ջանքը կը պա-  
 ղեցրնէր: Պաշտօնակալ, զինուոր, մեծ ու պզտիկ  
 աս պարագաները լսելով՝ սաստիկ նեղացան. ան-  
 յամբերութեամբ կը սպասէին իրենց փառք ու  
 հարստութիւն պատճառելու ասանկ արշաւանքին  
 շուտով ձեռք զարնելու. արդէն իրենց ունեցածը  
 չունեցածը տուած էին, որպէս զի աս արշաւանքին  
 յաջողութեան օգնեն, պատրաստութիւնները ճա-  
 րեն. անոր համար փոքր մէկ արգելքն ալ՝ իրենց  
 աչքին մեծամեծ բարիքներէ զրկում կ'երեւար:  
 Միանգամայն բոլոր իրենց վստահութիւնը դրած  
 էին Գորգէզին վրայ, որուն քաջասրտութեան ու  
 յաջողակութեան վրայ մեծ համարում ունէին:  
 Ուստի ամէնքը մէկ բերան աղաչեցին որ իր պաշ-  
 տօնը թող չտայ, որուն այնչափ իրաւունք ունէր,  
 խոստանալով անոր թէ ուր որ իրենց առաջնորդէ  
 նէ՛ պատրաստ են հետեւելու, եւ իրենց արիւնն  
 ալ թափելու՝ որպէս զի իր իշխանութիւնն ապա-  
 հովցրնեն եւ պաշտօնին մէջ հաստատեն:

Գորգէզ ասոնց եռանդն ու հաստատութիւնը  
 տեսնելով՝ շատ ուրախացաւ. իր զօրացը խօսք  
 առաւ որ զիրենք անմիջապէս ան հարուստ երկիրը  
 կը ամանի, որուն այնչափ ժամանակէ ի վեր կը բաղ-  
 ձային. երգում ալ ըրաւ որ իրեն աս աստիճանի  
 մեծ սէր ու յարում ցուցրնող մարդիկներն ամե-  
 նեւին թող չհտար: Աս խոստումը մեծ ուրախու-  
 թեան նշաններով ընդունեցան, եւ ամէնքը մէկ  
 բերան՝ Աեցցէ պողոտային: Թէպէտեւ Գորգէզ աս  
 կերպով իր զօրաց հաւատարմութեան վրայ ալ  
 կատարեալ ապահովութիւն ունեցաւ, ի վերայ այսր  
 ամենայնի վեւրասկուէզին նորէն նամակ մը գրեց եւ  
 իր կատարեալ հնազանդութեան վրայ զանիկա ապա-  
 հովցրնելու ջանաց: Նամակը կը լմընցրնէր ըսելով  
 որ վաղուան օրը ճամբայ ելլելու միտք ունիմ: Իբրք

859-2011

3733/41



ալ պատրաստութիւնները ըմբոստեցած ըլլալով՝ առանց արգելքի ճամբայ ելաւ:

Բայց աս բանակին զօրութիւնը՝ ասանկ մէկ գործքի մը դժուարութեանց ու մեծութեան համաձայն չէր: Թէպէտեւ Գուպայի Սպանիացիք բոլոր իրենց ճիգը թափած էին, թէպէտեւ բոլոր գաղթականքը կրցածնուն չափ մարդ ու պաշար հոգացած էին, Ալեքսանդրէզ ալ շատ ստակ ծախք ըրած էր, միանգամայն բախտախնդիրք թէ իրենց ստրկոյն եւ թէ պարտքով աս բանակին հարկաւորութիւնները հոգացած էին, ի վերայ այսր ամենայնի մարդ կը զարմանայ երբ որ նոյն բանակին տկարութիւնը կը բաղդատէ ան նշանաւոր գործքին հետ՝ զորն որ գլուխ հանեց: Նաւատորմիլը տասնումէկ նաւէ բաղկացած էր, որոնցմէ ամենէն մեծը՝ հարիւր տակաւաչափ կ'առնէր, երեք հարը՝ ութսուն տակաւաչափ, իսկ մէկալ եօթը հարը՝ առանց յարկի միջակ նաւակներ էին: Ասոնց ամենուն մէջը 109 նաւազ կար, 508 ալ զինուոր, որոնք նաւերուն թուոյն համաձայն տասնու մէկ խումբ բաժնուած էին: Իրենց թուէն աւելի՛ զէնքերնուն եւ ուրիշ կարեւոր կազմածներու նուազութիւնը շատ մեծ էր. ամենը մէկանց 16 ձի ունէին, 45 զանազան հրազէններ եւ 6 փոքր ու թեթեւ թնդանօթ: Հասարակ զինուորներուն զէնքն էր նիզակ ու սուր. իսկ պաշտպանողական ծանր զէնքերու տեղ, որոնք ան աքք գաւառներու մէջ կրելը դժուարին էր, բամբակով հիւսուած զրահ մը հագած էին, որ Ամերիկացւոց նետերուն դէմ դնելու բաւական էր:

Ահաւասիկ աս տկար կազմութեամբ Գորդէզ ճամբայ ելաւ, անանկ մէկ թագաւորութեան մը վրայ երթալու եւ հետը պատերազմ բանալու, որուն երկիրներուն ընդարձակութիւնը Սպանիայի թագաւորին բոլոր տիրած երկիրներէն շատ աւելի ընդարձակ էր:



Պատմութեան մէջ ասանկ յանդուգն գործքի մը օրինակ քիչ կը գտնուի. եւ մարդուն միտքը չիհասնիր թէ ինչ յաջողութեան յոյս կրնային ունենալ ասի մը բախտախնդիրներ՝ ասանկ դժուարին գործքի մը ձեռք զարնելով, որն որ աւելի առասպելներու մէջ պատմուող այլանդակութեան տեղ կրնար դրուիլ քան թէ զինուորական արշաւանքի: Բայց Սպանիացիները քաջալերող կիրքն՝ ընչից ու փառաց ցանկութիւնն ըլլալով, աչքերնուն բան մը դժուարին չէր երեւար: Ամէն մէկ զինուոր ինք զինքը դիւցազնի մը տեղ կը դնէր. ամէն մարդ իր հաշուին համար ու իր վտանգն աչքն առնելով՝ համարձակ կ'արշաւէր, միտքը դնելով որ անտարակոյս իր քաջութեամբն՝ ըրած յանդուգն աշխատութիւնը պիտի պտակուի: Թէպէտեւ Գորդէզ անոնց առջեւն այնչափ համարում ունէր, որչափ հարկաւոր էր զինուորական կարգ կանոնը պահել տալու եւ ընդհանուր օգուտը մտածելու, բայց զինքը միանգամայն իբրեւ իրենց ընկերը կը սեպէին. ուստի բացարձակ իշխանութիւն ունեցող գլխոյ մը տեղ չէին դնէր, որ տուած ամէն հրամաններն իբրեւ աննահանջելի պատգամ ըլլայ: Գորդէզ ալ աս գաղափարները ջնջելու ետեւէ չէր իյնար. մեծանձն բնութիւն մ'ունենալով, ո՛չ նախանձ ո՛չ ալ սնափառութիւն ունէր. աղէկ գիտէր որ քաղցրութեամբ ու զիջում ցուցնելով՝ զինուորաց վրայ աւելի ընդարձակ իշխանութիւն կրնայ բանեցնել, քան թէ խստութիւն գործածելով ու վախցնելով: Հրամանատարին ու զինուորաց եւ ուրիշ մեծերուն մէջ աս փոփոխակի սէրը՝ կարծես թէ Ամերիկայի մէջ՝ ուրիշ տեղերէն աւելի հարկաւոր էր:

Աս բախտախնդիրները կրօնական ոգւով մ'ալ զօրացած ըլլալով՝ ամենադժուարին պարագայից մէջ ալ իրենց քաջասրտութիւնն ու յարատեւութիւնը չկորսընցուցին. զիրենք քրիստոնէական կրօնից առաջ

քեալներու եւ քարոզիչներու տեղ կը դնէին. եւ ճշմարիտ հաւատոյ լոյսը տարածելու գործիք բլաւնին՝ իրենց մեծ եռանդ մը կու տար: Ամենէն աւելի Գորդէզ աս փառաւոր առաքելութեան գործիք բլաւուն վրայ կը պարծէր. բաց ի ան խոստումներէն՝ որոնք զինուորաց կ'ընէր թէ քիչ մը ետքը պիտի հարստնան, իրենց աչքին առջեւը կը դնէր նաեւ ան նուիրական առաքելութեան պաշտօնը՝ որն որ ամէն զինուոր յանձն առած է, կ'ըսէր: Իրենց վրայ աւելի տիրելու, իր հրամաններուն աւելի հնազանդ պահելու համար, ոսկի վերջաւորներով մետաքսէ փառաւոր դրօշ մը շինել տուաւ, մէջտեղը թագաւորական զինանշանը բանուած, որուն վրայ լայն խաչ մը քաշուած էր, չորս կողմն ալ Լատիներէն խօսք մը, աս իմաստով որ «Դսաչին ետեւէն երթանք, որովհետեւ աս նշանով պիտի յաղթենք»: Ասով Կոստանդիանոսին հրաշագործ դրօշին յիշատակը կ'ուզէր մտքերնին բերել:

Գորդէզ աս կերպով իր բանակը Բրիտանոսի պաշտպանութեան յանձնելէն ետքը՝ իր տասնումէկ դասակ զօրքին վրայ մէյմէկ երեւելի պաշտօնակալներ ընտրեց ու գլուխ դրաւ. ասոնց անուններն են՝ Վելասկուէզ տէ Լէօն, Բեարոյ Ալուարատոյ, Հեռնանտէզ Բորդոյ-Գարրէրոյ, Փրանկիսկոս տէ Մոնդեյոյ, Քրիստօփալ տէ Օլիտ, Յովհաննէս տէ Էսգալէնդէ, Փրանկիսկոս տէ Մորլա, Փրանկիսկոս Սալսետոյ, Յովհաննէս Էսգոպար եւ Կնիէզ Նորդէզ: Նաւատորմիչն գլխաւոր հրամանաւարութիւնն իրեն պահեց. քաջն Ալամինոս նաւատորմիչն գլխաւոր նաւուղիչն էր. իսկ թնդանօթներու հրամանատար՝ Օրորդոյ Տմուտ պաշտօնակալը դրուեցաւ:

Գ.

Գողումէլ կռէն իւ Խնան : — Գաղասօօյ իւ հասնին :

Գորդէզ 1819ին Փետրուարի 10ին ճամբայ ելաւ եւ անմիջապէս Գողումէլ կղզւոյն առջեւ երկաթնետեց : Նոյն քաղաքը բոլորովին ամայի անմարդաբնակ տեսնելով՝ շատ զարմացաւ . քաղքին բնակիչները նաւատորմիին մօտիկնալը տեսնելով՝ սարսափած կղզւոյն ներքին կողմերը քաշուած էին : Առջեւ անգամ Ալուարատոյին դունդը ցամաք ելաւ . բայց իրենց անկարգ ընթացքը՝ բնակչաց կասկածն ու վախն աւելի եւս գրգռեց : Զինուորները մտքերնին անանկ դրած ըլլալով որ ձեռքերնին ինկածն իրենց սեպհական ստացուածքն է, մէկէն սաճարներու մէջ ու կուոց վրայ եղած ոսկի զարդերը կողոպտելու սկսան : Անոր հակառակ՝ Գորդէզ, որն որ բնակչաց վտասհուծիւնը վաստըկիլ եւ անոնց հետ կուուելու առիթներէն փախչիլ կ'ուզէր, աս եղածին վրայ սաստիկ բարկացաւ, եւ տեղացւոց սէրը շահելու համար՝ Ալուարատոյի գնդին ազահուծիւնն երեսնին զարնելէն ետեւ՝ հրաման տուաւ որ առած բոլոր աւարնին ետ դարձնեն : Ասով Գորդէզ իր բաղձացած նպատակին հասաւ . բնակչաց վախը փարատեցաւ եւ օտարականաց հետ հաղորդութիւն ունենալու սկսան :

Չարմանալի դէպքով մը Գորդէզին հոստեզս կենայն իրեն օգտակար եղաւ : Միտ գնելով որ տեղւոյն բնակիչքը շատ անգամ Գասդիլան բաւը կը կրկնեն, մտածեց որ գուցէ կղզւոյն մէջ իրենց հայրենակիցներէն քանի մը հոգի գտնուին : Աս բանիս վրայ տեղեկութիւններ տուաւ, եւ վերջապէս Սպանիացի մը գնեց, որուն հոն գտնուիլը զամէնքն ապշեցուց : Ասիկա գրեթէ բոլորովին մերկ էր, միայն ուսին վրայ պատուած լաթի կտոր մը նետած էր .

ձեռքն աղեղ մը բռնած, կռնակն ալ կապոց մը զարկած էր, որուն մէջ ուտելիք եւ Սուրբ Աստուածածնայ ժամագիրքը դրած էր, որն որ միշտ յարգութեամբ կը պահէր ու կ'ըսէր թէ անիկայ զինքն ազատած է: Անունը Հերոնիմոս ա'Ակուիլար էր, Անտալուզիայի Էսիյա քաղաքը ծնած, ու սուրբ աստիճաններ ալ առած էր: Թէպէտեւ խորունկ գիտութիւն չունէր, բայց ճարակութիւնն ու ճարտարամտութիւնը ձեռք կու տար: Ան տեղի բնակչաց մէջ երկայն ատեն ապրած ըլլալով՝ անոնց լեզուն սորված էր եւ անկէ ետեւ Գորդէզին քով թարգման ըլլալով՝ շատ օգտակար եղաւ: Ութը տարի յառաջ՝ պղտիկ նաւով մը Տարիենէն Սպանիոյ երթալու ատեն՝ նաւակոծութեամբ ան կղզին ինկած էր. իր դժբախտ ընկերները, պղտիկ ծառակրով մը ազատելու ջանացած էին, բայց հովը զիրենք դէպ ի ցամաք քշելով ու տեղացիներէն բռնուելով՝ շատերը կուռքերուն զոհ մատուցուած, մնացածներն ալ զանազան թշուառութիւններ ու նեղութիւններ քաշելէն ետքը մեռած էին: Ակուիլար միայն կրցեր էր փախչիլ եւ ուրիշ աւելի գթած ցեղապետի մը ապաստանիլ, որն որ իր կեանքը շնորհած էր:

Մարտի Կին դէպ ի Գապասոցոյ ճամբայ ելան. Գորդէզ կը յուսար որ Արիժալուային պէս բարեկամական ընդունելութիւն կը գտնէ եւ անոր պէս ալ շատ ոսկի ձեռք կը ձգէ. բայց յոյսը պարապ էլաւ. հաղիւ թէ երկաթ նետած էր, տեսաւ որ բնակչաց տրամադրութիւնը փոխուած էր. սիրով ընդունելութիւն ընելու տեղ՝ նաւէն դուրս ելլելին արգելելու համար պատրաստութիւններ կը տեսնէին: Ակուիլար՝ որն որ քանի մը հոգևով գացած էր խաղաղութիւն ընելու մտքով, դարձաւ Գորդէզին յայտնեց որ բնակիչները շատուոր են եւ ամենեւին իր խօսքերը մտիկ ընել չուզեցին: Գորդէզ թէպէտեւ իր աշ-

խարհակալութիւնն աս դաւառէն սկսիլ չէր ուզեր, բայց հիմա հարկաւոր սեպեց որ կռուի, որպէս զի իր զօրացը ցուցընէ որ առջեւն ելած առջի վտանգէն վախնալով ետ կենալ չ'ուզեր: Ուստի գիշերը թնդանօթներն ու հրազէնները կարգի դնելէն ետեւ՝ առտուան մօտ նաւերը լուսնածեւ շարել տուաւ: Գետը լայն ըլլալով, առանց կարգն աւրելու, կամաց կամաց յառաջ գացին: Բնակիչները խաղաղութեան ստիպելու համար՝ Ակուիլար նորէն խրկուեցաւ. բայց անոնց պատասխանը՝ իրենց դէմ յարձակիլն եղաւ: Ջրոյն վազելուն օգնութեամբ՝ դէպ ի վար յարձակեցան, եւ մօտիկնալով՝ մէկէն ի մէկ ան աստիճանի բազմութեամբ նետ արձակեցին, որ Սպանիացիք հազիւ անոնց դէմ իրենք զիրենք կրցան պաշտպանել: Բայց իրենք ալ իրենց հրազէններն այնպիսի սաստկութեամբ մը թշնամեաց վրայ պարպեցին, որ անոնց անսովոր ձայնէն սարսափելով եւ իրենց ընկերներուն մէջէն շատերուն մէկտեղ իյնալ մեռնիլը տեսնելով, ծառակուրնին թող առւած՝ ջրին մէջ ցատքեցին սկսան փախչիլ: Ան ատեն նաւերն առանց արգելքի մինչեւ եզերք մօտիկցան եւ ցամաք ելան: Հոս հարկ եղաւ նորէն պատերազմ մ'ալ ընել, ինչու որ թշնամեաց մէկ մասն անտառներուն մէջ դարանի մտած ըլլալով ու գետը նետուելով փախչողներն ալ ետ դառնալով՝ սաստիկ յարձակում ընելու սկսան: Նետուած նետերն ու քարերը Սպանիացիները շատ անհանգիստ կ'ընէին: Գորդէզ հարիւր հօգի ընարեց, որ անտառին մէկալ կողմն անցնելով՝ Գապասօզոյ քաղաքը զարնեն, ասով թշնամիք աներեւոյթ եղան ու վազեցին քաղաքը պաշտպանելու գացին: Քաղաքը հաստ ծառերու կոճղներէ ցցապատնիշի ձեւով շինուած պատով մը ամրացած էր, որուն մէջ ասդին անդին ծակեր կային նետ նետելու համար: Գորդէզ՝ իր խրկած

Հարիւր հոգւոյ գումարտակէն յառաջ հասաւ, որովհետեւ անոնց ընթացքը ճախիններու պատճառաւ ուշացած էր: Երկու գունդն ալ միանալով՝ առանց թշնամւոյն ժամանակ թող տալու՝ մինչեւ պարսպին տակը յառաջացան եւ պատին ծակերէն սկսան իրենց թնդանօթներն ու հրազէնները դէպ ի ներս արձակել: Թշնամիներն աւ սաստիկ յարձակման չկրնալով դիմանալ՝ քաղաքը թող տուին փախան: Գորդէզ իր զօրքերուն՝ զանոնք հալածելն արդէլեց. ուստի եւ քաղաք մտան ու նոյն գիշեր տաճարներու մէջ անցուցին, որոնց դիրքը յանկարծական յարձակումէն զերենք կ'ապահովընէր:

Աս յարձակման լուրը շրջակայ տեղերը շուտ մը տարածուեցաւ. եւ տեղացիք իրենց առջի անգամ յաղթուելէն չվհատելով՝ մեծ ու ահեղ պատրաստութիւն մը տեսան, իրենց վրայ յարձակողները վռնտելու համար: Գորդէզ ալ ինք զինքը պաշտպանելու ամէն զգուշութիւններն ի դօրձ գրաւ. ձիերը նաւէն դուրս հանել տուաւ եւ ամենէն քաջ ձիաւորներուն բաժնեց: Աս տասուիրեք հոգիէ բաղկացեալ ձիաւորաց զնդին ինք անձամբ կը հրամայէր. իսկ հետեւակ զօրքը՝ Տիեկոյ Օրտազին հրամանատարութեան, հրազէններն ալ Մեսային յանձնուած էր: Գորդէզ պատարագ տեսնելէն ետեւ՝ մեծ վտահազութեամբ դէպ ի Գապասոզացոց բանակը յառաջացաւ: Անթիւ բազմութիւն մը դաշտին երեսը ծածկած էր եւ անոնց երաժշտութեան ձայնն ողբ կը թնդացընէր: Իրենց տեսքն ու արտաքին շարժումները՝ արտաքոյ կարգի վայրենի էր. գլուխնին փետուրներով զարդարած, մարմիննին լայն վահաններով ծածկած էին. ձեռքերնին նիզակ, երկսայրի սուր, բիր, նետ ու աղեղ կար. աւելի ահաւոր տեսք ունենալու համար՝ դէմքերնին կարմիր ու սեւ ներկերով ներկած էին:

Գորգէղ իր ձիաւորներովը՝ դաշտին քովի պըղտիկ անտառին մէջ պահուրտեցաւ. ուսկից հարկաւոր եղած ատեն թշնամեաց վրայ կրնար խնալ, եւ եթէ անոնք փախչելու երես բռնէին՝ կրնար արգելել: Աս միջոցին հետեւակ զօրքը մեծ քաջաորտութեամբ թշնամեոյն առաջին յարձակմանը դէմ կը դնէր. բայց նոյն յարձակումն Սպանիացոց շատ վնասակար եղաւ, որովհետեւ 70 հոգի վիրաւորեցաւ, մէկ հոգի մ'ալ մեռաւ: Ասոր վրայ տեղացիք սիրտ առնելով՝ արտաքոյ կարգի քաջութեամբ ու աներկիւղութեամբ յարձակեցան, առանց հրազէններուն իրենց մէջ բրած սաստիկ կոտորածին միտ դնելու: Նոյն դժուար միջոցին Գորգէղին ձիաւորները մէկէն երեւան ելլելով՝ աս պատերազմին վիճակը շուտ մ'որոշեցին. թշնամիները ճակատնին կեցած զօրաց հետ պատերազմելու զբաղած ըլլալով, իսկզբան չկրցան իմանալ թէ կռնրկի կողմանէ ալ սաստիկութեամբ յարձակողներ կան. դաշտին շակութիւնը ձիերուն ընթացքին դիւրութիւն կու տար. մինչեւ որ իրենք անոնց գալուստն իմացան նէ՝ ձիաւորներն անոնցմէ շատ մարդ ջարդեցին: Աս յանկարծական յարձակումը զիրենք շատ այլայլեց. իրենց աչքին առջեւը հեծեալն ու ձին՝ մէկտեղ ահագին ու անյաղթելի հրէշ մը կ'երեւար, որուն հազիւ նայելու կը համարձակէին: Շուտ մը ամէն կողմ ցրուելու սկսան, եւ անտառներու մէջ ու ճախճախուտ տեղեր պահուրտեցան: Թշնամիներէն 800 հոգի մեռան, իսկ Սպանիացիք՝ միայն երկու հոգի կորսնցուցին:

Ասկից ետքն ալ քանի մը փոքր կռիւներ եղան եւ միշտ տեղացիք յաղթուեցան. վերջապէս ամենէն քաջասիրտներն ալ վհատեցան ու խաղաղութիւն խնդրելու ստիպուեցան: Մէջերնէն տասնուհինգ հոգի՝ ի նշան սգոյ՝ երեսնին սեւցուցած եւ երկրին զանազան բերքերէն պարգեւ բերելով՝ եկան Գորգէղին

ուղքն ինկան : Հրամանատարը զիրենք շատ քայցրու-  
թեամբ ընդունեցաւ : Աս բարեկամական ընդունե-  
լութենէն քաջալերուելով՝ երկրորդ օրն ուրիշ 30  
հոգի ալ եկան, մեռելները վերջընելու հրաման խըն-  
դրեցին. խնդիրքնին շուտ մը շնորհուեցաւ : Ալ  
անկէ ետեւ բարեկամական հաղորդակցութիւններն  
սկսան. բայց Գորդէզ վայրենեաց բնական անհաս-  
տատութենէն շատ կը տարակուսէր ու կը զգուշա-  
նար. կը վախնար որ չըլլայ թէ վախերնին ու սար-  
սափնին անցնելէն ետքը՝ նորէն նոյն դիւրութեամբ  
դէնքերնին ձեռք առնուն ինչ դիւրութեամբ որ  
թողուցին : Անոր համար միտքը դրաւ անոնց հպա-  
տակութեան ժամանակը՝ վախերնին ու սարսափնին  
նորոգել : Անոնց գլխաւորները չորս կողմը ժողվեց  
եւ սաստիկ ու խիստ ձայնով մը՝ մատնութիւն կամ  
ապստամբութիւն նիւթած առննին՝ ընելու վրէժ-  
խնդրութիւնն անոնց առջեւ դրաւ. եւ ըսածները  
հաստատելու համար՝ թնդանութ մը նետել տուաւ :  
Թնդանութին որոտումն ու զնդակին՝ անտառին  
մէջ բրած սաստիկ կոտորածը տեսնելով, զարմացած  
ու սարսափած մնացին : Իրենց երեւակայութիւնն  
աս կործանիչ գործիքէն արտաքոյ կարգի զարհու-  
րեցաւ, որուն որ պատերազմի ժամանակ վրէժխըն-  
դրութեան կրիւք բորբոքած ըլլալով՝ այնչափ միտ  
դրած չէին : Աւելի եւս զանոնք վախցընելու համար՝  
ձիաւորք շատ պատերազմական շարժումներ բրին.  
հետեւակ զօրքն ալ ամենէն դժուարին ընթացքներն  
ու շարժումները ձեւացուցին : Աս գործողութիւննե-  
րով Գորդէզ իր վախճանին հասաւ. վայրենիները  
Սպանիացիներէն մեծ վախ ունեցան ու յարգութիւն-  
նին աւելի մեծցաւ : Աերջապէս Վաստիլիայի թա-  
գաւորն իրենց տէր ճանչցան :

Բարեկամական հաղորդակցութիւնները կատա-  
րեալ հաստատուեցան. իրարու փոփոխ պարզեւներ



տունն եւ երկու կողմանք սկսան իրարու հետ սիրով վարուիլ: Գորդէզին արուած պարգեւներուն մէջ շատ բաներ կային, որոնց արուեստը բաւական ճարտարութիւն կը ցուցնէր: Ասկից զատ 20 հոգի ալ գերի աղախին պարգեւեցին, որոնց մէջն էր նաեւ Տոնա Մարինա, որն որ Մեքսիկոյի աշխարհակալութեան վրայ շատ ազդեցութիւն ունեցաւ: Ասիկայ անմիջապէս Հայր Օլմետոյին ձեռօքը մկրտուեցաւ ու վերը յիշուած անունն ընդունեցաւ: Աս կնոջ՝ բոլոր արշաւանաց ժամանակ՝ Գորդէզին ըրած մեծամեծ ծառայութեանցը համար կը վայլէ որ իրեն զարմանալի վարուց վրայ յիշատակութիւն մ'ընենք:

Տոնա Մարինա ազնուական ցեղէ էր. իր վարմունքէն կ'իմացուէր որ հրամայելու վարժած է. իր վառվառն ու սուր խելքը, իր առողջ ու շոյտ դատաստանները՝ իր ընկերներուն մէջ ձրից առաւելութիւն մ'ունենալը կը ցուցնէր. քաջասրտութիւնն ալ շատ զարմանալի էր: Նոյնպէս արտաքին կերպարանքն ալ իր հոգւոյն ձիրքերուն համեմատ էին, եւ արտաքոյ կարգի ընթացք մ'ունենալու համար ծնած ըլլալը կը յայտնէին: Իր նախընթաց կեանքն ըսածներնուս հաստատութիւն կրնան ըլլալ: Ասիկա Մեքսիկոյի կայսրութեան հարկատու ցեղապետի մը աղջիկն էր: Պզտիկ հասակին մէջ հայրը կորսնցուց, մայրը՝ որ երկրորդ անգամ կարգուելով ուրիշ որդի մ'ունեցած էր, Մարինային ծուռ աչքով կը նայէր եւ անոր ժառանգութիւնը տղուն տալու համար՝ զինքը վաճառականներու ծախսեց, որոնք Գապագոյի գլխաւորներէն մէկուն տունն, որով վերջապէս Գորդէզին ձեռքն անցաւ: Շուտ մը իր նոր աիրոջը սրտանց ու անկեղծ սէր մը կապեց. ինք զինքը բուրովին աիրոջը օգտին նուիրելով՝ ամէն վտանգներու մէջ անոր հաւատարիմ ընկեր եղաւ եւ մեծ ծառայութիւններ ըրաւ: Քիչ ատենուան մէջ Կաստի-

լիացւոց լեզուն սորվելով՝ անոր ձեռքով Գորդէզին ու Մեքսիկացւոց մէջ եղած հաղորդակցութիւնները շատ դիւրին եւ ապահով եղաւ: Բայց ըրած օգուանները պարզ թարգմանութեամբ չէր, հապա Մեքսիկացւոց բնութիւնը, սովորութիւններն ու պակտութիւնները աղէկ ճանչնալով՝ շատ անգամ դժուարին պարագաներու մէջ դաշնադրութեանց ու դեսպանութեան գործքերու գործածուեցաւ. շատ հեղ Սպանիացւոց դէմ նիւթուած դաւաճանութիւններն յայտնեց ու ազատելու ճամբան ցուցուց: Գորդէզ ալ վրան մեծ վստահութիւն ունեցաւ:

Գորդէզ քանի մ'օր Գապասգոյ կեցաւ, որպէս զի թէ հիւանդներն ու վիրաւորները դարմանէ եւ թէ վայրենիներն՝ իրենց նոր տիրոջը հպատակութեան մէջ հաստատէ: Վայրենիներն իրենց խոստումն անկեղծութեան նշաններ ցուցնելով նորոգեցին, եւ օտարականաց ամէն ուղածը տալով՝ իրենց հաւատարմութիւնը հաստատեցին: Գորդէզ պատերազմի դաշտին վրայ մեծ խաչ մը կանդնել տուաւ: Ծաղկազարդին օրն ամբողջ բանակը թափօրով աս նուիրական խաչին առջեւը դնաց, ուր որ շատ տեղացիք ալ մկրտուեցան: Անկից ետեւ՝ Գորդէզ տեղացիներուն վերջին բարեւր տուաւ ու երկաթ վերցուց ճամբայ ելաւ: Տեղացիք մինչեւ նաւերուն տեղը հետերնին եկան:

## Ե.

Գորդէզ Մեքսիկայէ խայտի դեսպաններուն հետ ին դիմատ: Թ

Սպանիացիք ճամբանին դէպ ի արեւմուտք շարունակեցին, ցամաքն աչքէ չկորսընցընելով, որպէս զի ծովեզերքը կարող ըլլան քննել, բայց Ս. Յովհաննէս տ'Ուլլայէն յառաջ՝ ցամաք ելլելու յարմար տեղ մը չհանդիպեցան: Օգոստոսի 21ին՝ նաւահանգիստ

մաներու ատեն՝ Ամերիկացիներով լեցուն մեծ ծառա-  
 կուր մը տեսան . մէջը երկու հոգի գլխաւոր կ'ե-  
 րեւային , որոնք բարեկամութեան նշաններ ցուցնե-  
 լով՝ Գորդէզին նաւուն մօտիկնալու սկսան : Համար-  
 ձակութեամբ ու վստահութեամբ նաւուն վրայ ե-  
 լան եւ յարգութեան ու բարեկամութեան ցոյցերով  
 ճառ մը խօսեցան , որն որ Ակուիլար չկրցաւ հասկընալ ,  
 բայց Մարինա հասկընալով , Մեքսիկացւոց լեզուա-  
 ըսուածք՝ Մակայի լեզուին թարգմանեց եւ Ակուի-  
 լարին հասկըցուց : Գորդէզ իմացաւ որ աս երկու  
 հոգին՝ ան դաւառին կառավարէն խրկուած էին , որն  
 որ Մոնդեզուճա անունով մեծ ու հզօր թագաւորի  
 մը հպատակ էր : Ասոնց գալուն պատճառն ան էր  
 որ Գորդէզին ինչ մտօք նոյն կողմերը գալն իմանան ,  
 եւ եթէ բանի մը հարկաւորութիւն ունի նէ՛ տան :  
 Գորդէզ պատասխանեց որ իրենց պատրաստականու-  
 թեան վրայ շատ ուրախ է , եւ ղերենք ապահովը-  
 նելով որ խաղաղութեան ու բարեկամութեան հա-  
 մար եկած է , ըսաւ թէ Մեզի յանձնուած է որ ձեր  
 թագաւորին ներկայանանք եւ իրեն ու իր ժողովը-  
 դեան օգտակար առաջարկութիւններ ընենք : Ասոնք  
 ըսելէն ետեւ՝ եկողներուն ապակի եւ ուրիշ շնչին  
 պարգեւներ տալով՝ ետ դարձուց : Գեսպաններն աս  
 ընդունելութեան վրայ ուրախանալով՝ իրենց կառա-  
 վարին յաջող ու նպաստաւոր ծանօթութիւններ  
 տուին , որն որ օտարականաց ցամաք ելլելուն արգելք  
 չդրաւ . մանաւանդ թէ երբ որ տեղացիք անոնց ցա-  
 մաք ելլելը տեսան , կրցածնուն չափ օգնեցին . եւ  
 անոնց օգնելովը՝ Գորդէզ քիչ ժամանակուան մէջ  
 իր ձիերը , թնդանօթներն եւ ուրիշ կազմածները  
 կրցաւ ցամաքի վրայ հասնել եւ ուղածին պէս տե-  
 ղաւորել : Ամէն բանէն առաջ փոյթ տարաւ վրաններ  
 հաստատելու եւ չորս կողմանէ ամրացրնելու : Տեղա-  
 ցիներն ալ աս դործքերուս օգնեցին . մէջերնէն ու-

մանք պաշար, զանազան թռչուններ ու պտուղներ ալ կը բերէին:

Քիչ մը ատեն վերջը սպարապետին խմացուցին որ կառավարն իրեն այցելութեան կու գայ, որուն վրայ Գորդէզ շատ ուրախացաւ: Երկրորդ օրը կառավարը՝ որուն անունը Գեւդիլէ էր, իր զօրացը սպարապետին հետ բանակն եկաւ, ետեւէն ալ շատ մարդկար: Գորդէզ անոր աստիճանին վայլած մեծարանքով ընդունեցաւ եւ շեղապետներէն աւելի պատիւ ցուցուց, անոր ըսել տուաւ թէ իբրեւ դեսպան եկած է Կարողս Կաստիլիայի թագաւորին կողմանէ՝ որն որ երկրիս վրայի ամենէն հզօր թագաւորն է: Եւ անանկ երեւելի առաջարկութիւններ պիտի ընէ, որ կայսերմէ զատ ուրիշ մարդու չիկրնար յայտնել. անոր համար կը խնդրէր որ առանց ժամանակ կորսընցընելու՝ անոր առջեւը հանուի:

Աս խնդիրքը Մեքսիկացիները տարակուսի ու ահաճութեան մէջ ձգեց: Գեւդիլէ համարձակութեամբ իր ահաճութիւնն ու կարծիքը յայտնեց: Ուրիշ մտածմունք մ'ալ իր վախը կը սաստկացընէր. մէկ կողմանէ գիտէր որ Մոնդեզուճա, Մեքսիկացուց կայսրն, ամենեւին չ'ուզեր հաղորդութիւն ունենալ օտարականաց հետ, որոնց առջի անգամուան երեւնալը զինքը վախի ու կասկածի մէջ ձգած էր. մեկալ կողմանէ ալ՝ կը մտածէր Գեւդիլէ որ Գորդէզին խնդիրքը մերժելով՝ գուցէ անոր բարկանալուն պատճառ կ'ըլլայ: Աս վարանքին մէջ իրեն աւելի խոհեմութիւն երեւցաւ, որ զանիկայ իր միտքը դրածէն ետ դարձընելու ջանալէն յառաջ՝ բարեկամութիւնը վաստրկի. անոր համար ուզեց Մոնդեզուճային անուամբը զանազան պարգեւներ տալ: Գեւդիլէ սա պարգեւներն անանկ մեծ հանդիսութեամբ ներկայացուց որ Գորդէզ շատ զարմացաւ: Պարգեւներն էին բամբակէ գեղեցիկ կերպասներ, զանազան

դոյներով փետուրներ, ոսկիէ ու արծաթէ ծանրագին զարդեր: Բայց աս հարստութիւնները՝ Մեքսիկացւոց միտքը դրածէն շատ տարբեր հետեւութիւն ունեցան. վասն զի չէ թէ միայն Սպանիացւոց ազահութիւնը չյազեցուցին, հապա աւելի եւս դրզուցին ու անոնց սրտին մէջ՝ այսպիսի ազնիւ բերքեր ունեցող հարուստ երկրին աիրելու սաստիկ բաղձանք ու եռանդ ձգեցին: Գորդէզ աս ընդունածներուն փոխարէն՝ քանի մը պարզեւներ տուաւ, որոնք էին շինծու ադամանդներ, փառաւոր քանդակով աթոռ մը ու Ս. Յակովբին պղնձէ պատկերազրովը զարդարուած գլխարկ մը: Աս պարզեւները Մոնդեզումային պիտի խրկուէին, ի նշանակ բարեկամութեան Աստաիլիայի թագաւորին: Ասկից ետքը Գորդէզ նորէն իր խնդիրքն ըրաւ, անանկ կերպով մը՝ որ Գեւդիլէ չկրնալով դէմ դնել, խոստացաւ որ շուտով մը զինքը մայրաքաղաք տանել կու տայ:

Աս խօսակցութեան ժամանակը՝ Մեքսիկացի դեսպանաց հետ եկած նկարիչները, ձերմակ բամբակէ լայն կերպասներու վրայ, իրենց զարմացման նիւթ եղած առարկաներուն պատկերը նկարելու զբաղած էին: Չէ թէ միայն Գորդէզին պատկերը ճիշդ նկարած էին, հապա նաեւ նաւերը, ձիերն ու թնդանօթներն ալ նոյն պատկերներուն մէջ իրենց սեպհական տեղն ունէին: Երբ որ իմացուեցաւ որ աս գործքը Մոնդեզումային հրամանովն է, որպէս զի ան օտարականներուն վրայ ճիշդ դաղափար ունենայ, Գորդէզ աս առթով ուղեց թէ եկողներուն եւ թէ թագաւորին՝ իր զօրութեանն ու կարողութեան մեծութիւնը ցուցնել: Շուտ մը զօրքերը ժողվելու նշան տալով՝ մէկէն դնդերը պատերազմի կարգ մտան. հետեւակիներն ու ձիաւորները զանազան արագ շարժումներ ըրին եւ իրենց հրազէններն ալ գործածեցին. վերջապէս թնդանօթներն ալ խիտ անտառի մը

վրայ պարպուելով՝ շատ ծառեր գետինը պառկեցուցին : Մեքսիկացիք զինուորական կրթութիւններուն զարմացմամբ ու լուծեամբ կը նայէին . բայց երբ որ թնդանօթներուն որոտման ձայնն առին՝ ու մանք փախան , ոմանք վախերնէն գետինն ինկան եւ ամէնքն առհասարակ անանկ սարսափեցան՝ որ օտարականաց զօրութիւնն աստուածներու զօրութեան նմանցուցին . Գորդէզ հազիւ կրցաւ զիրենք քաջալերելով վախերնին փարատել : Պատկերհանները բոլոր իրենց արուեստը բանեցուցին , առ տեսած արտաքոյ կարգի բաներնին որչափ կարելի է ճիշդ նկարելու :

Աս կրթութեանց ժամանակ Գեւորիէ սաղաւարտ մը տեսաւ , որն որ իրենց պատերազմի աստուածոյն գլխարկին կը նմանէր եւ Գորդէզէն խնդրեց , որ առնէ կայսեր պարգեւ խրիկ : Գորդէզ շուտ մը խնդիրը կատարեց : Աերջապէս դեսպանները հրաժարական բարեւը տուին , հաստատելով որ քիչ օրէն Մոնդեզումայէն պատասխան կ'ընդունին : Իրօք ալ խօսքերնին կրնային կատարել , որովհետեւ Մեքսիկոյէն՝ ամէն կողմ մասնաւոր քաջընթաց թրղթաբեր մարդիկ որոշուած էին , որոնք իրարմէ քիչ հեռաւորութեամբ կենալով՝ լուր մը եկածին պէս՝ ամէն մէկը վազելով կ'երթար իրեն մերձաւոր թրղթատարին կը հազորդէր եւ ինք տեղը կը դառնար : Այսպէսով ամենէն հեռու գաւառներն ալ մայրաքաղքին հետ շուտ հազորդակցութիւն մը կ'ունենային : Անոր համար թէպէտ Ս. Յովհաննէս տ'Ուլլա Մեքսիկոյէն 40 գերմանական մղոնէն աւելի հեռու էր , ի վերայ այսր ամենայնի այնչափ անհամբերութեամբ սպասած պատասխաննին եօթն օրուան մէջ կրցան ընդունիլ :

Մոնդեզումա իրեն եկած պատկերները քննելով՝ շատ զարմացաւ . օտարականաց տուած պարգեւներն իր հետաքրքրութիւնը կ'աւելցընէին : Իսկ Գեւ

գիլէին խրկած սաղաւարտը սրտին մէջ կրօնական վախ մը ձգեց . աս խորհրդաւոր նշանն՝ իր թագաւորութեան վերջանալուն դուշակ կը սեպէր, որովհետեւ բոլոր նոյն երկրին մէջ աւելորդապաշտական կարծիք մը կար, թէ օդին աստուածը շատոնցունէ աս երկրէն աներեւոյթ եղած էր, խօստանալով որ քանի մը ատենէ ետքը նորէն կը դառնայ ու Մեքսիկոյի թագաւորութիւնը ձեռք առնելով՝ ժողովուրդը խաղաղութեամբ ու հանդարտութեամբ կը կառավարէ եւ երջանիկ կ'ընէ: Ժողովուրդն ալ աս հին աւանդութիւնն օտարականաց դալուն հետ մէկտեղ բերելով՝ որոնց տեսքն օդի աստուածին սեպհականուած տեսքին շատ նմանութիւն ունէր, կարծեցին որ իրենց թագաւորութեան վախճանը հասած է եւ աստուածները կառավարութեան սանձը ձեռքերնին պիտ'որ առնեն: Ժողովրդեան աս կարծիքն ու խօսուածները Մոնդեզուաման կը վշտացրնէին, իր վախը կ'աւելցրնէին. բայց ամենէն աւելի Գորդեզին այնչափ ստիպմամբ ուղած խօսակցութիւնը զինքը տարակուսանքի մէջ կը ձգէր:

Արդ իր պատասխանը նպատաւոր չէր: Բայց վախնալով որ չլլայ թէ պարզ ժխտելովը Սպանիացւոց բարկութիւնը գրգռէ, Գեւգիլէին հրաման տուաւ որ քանի մ'ամիս յառաջ Արիժալուային պատրաստուած փառաւոր պարգեւները Գորդեզին տրուի: Հազիւ առջի խօսակցութեան վրայ շաբաթ մ'անցած էր, մէյ մ'ալ Գեւգիլէ Մոնդեզուամային պարգեւներովը բանակն եկաւ. պարգեւները բերողները 100 հօգի կային: Ասոնք Գորդեզին առջեւն ելելով՝ մեծարանքով մը զինքը բարեւեցին, ետքը պարգեւները դեռինը տարածեցին: Բայց աս հարուստ պարգեւներով՝ օտարականաց միտքը դարձրնելու տեղ աւելի եւս երեւակայութիւննին տաքցուցին ու բաղձանքնին գրգռեցին: Պարգեւներուն զեղեցիլութեան

ու հարստութեան վրայ վերջին աստիճանի զարմացան. բայց զիրենք ամենէն աւելի յափշտակողն եղան երկու կլոր ձեւով թափծու մեծ ափսեաներ, որոնցմէ մէկը ոսկի էր եւ արեւը կը ներկայացընէր, իսկ մէկալն՝ արծըթէ էր եւ լուսինը կը ներկայացընէր: Տիազ տէ Գասաղիլոյ կ'ըսէ թէ միայն աս վերջինը հարիւր հազար Քրանգէն աւելի կ'արժէր: Ասոնցմէ զատ՝ ուրիշ շատ ոսկիէ ու արծաթէ զարդեր, ազնիւ քարեր, վերջապէս իրենց ազահու թիւնը գրգռելու շատ հազուագիւտ նիւթեր կային: Գորդէզ աս պարգեւները մեծ շնորհակալութեամբ ընդունեցաւ եւ մեծ յարգութիւն ալ ցուցուց թագաւորին, որ ասանկ փառաւոր ընծաներով իր սէրը կը ցուցընէր:

Ասկից քաջալերուելով՝ դեսպաններն իրենց պաշտօնին երկրորդ մասն ալ կատարեցին, որն որ շատ դժուարին էր. զանազան դարձուածներով եւ քաղցր ու հաշտեցուցիչ խօսքերով յայտնեցին որ կայսրը զօտարականներն ընդունելու չիհաճիր. զանազան պատճառներով ալ աս գործքին դժուարութիւնը ցուցընել ուզեցին: Մեքսիկոյի ճամբան եղած անապատները նկարագրեցին. Չանազան ցեղերու հետ պիտի պատերազմիք, ըսին, որոնք՝ միայն ձեր նաւէն դուրս ելլելը լսելով՝ սաստիկ գրգռուած են: Թարգմանն աս խօսքերը թարգմանելու ժամանակ՝ Գորդէզ իմացաւ որ աւելի հաստատուն եղանակաւ մը իր կարծիքն յայտնելու է. ուստի եւ ամուր ու սպառնական ձայնով մ'ըսաւ. Անկարելի է որ իմ երկիրս դառնամ, առանց իմ տիրոջմէս ինծի յանձնուած պաշտօնը կատարելու: Վերջապէս ստիպեց որ զինքը Մոնղեղու մային տանին:

Գորդէզին մտաց հաստատութիւնը՝ Մեքսիկացիները մեծ տարակուսանքի մէջ ձգեց: Իրենց տիրոջն ուզածն ան էր որ անոր խնդիրքը բոլորովին



մերժեն. բայց իրենց տիրոջմէն վախցածնուն չափ՝  
Սպանիացի մեծէն ալ կը վախնային. ուստի միջին  
ճամբայ մը բռնեցին, այս ինքն՝ Գորդէզին խնդիրքն  
առանց յայտնի մերժելու, Մոնղեզումային ժամանակ  
տալ ուղեցին՝ որ անոր դէպ ի մայրաքաղաք յար-  
ձակիին արգելէ. անոր համար որոշեցին որ նորէն  
Մոնղեզումային դեսպան խրկեն ու նոր հրամանի  
սպասեն. եւ Գորդէզին խօսք առին որ դեսպաննե-  
րը ետ չդարձած՝ իր կեցած տեղէն յառաջ չերթայ:

Մոնղեզումա Գորդէզին հաստատուն կենալը  
լսելով՝ շատ այլայլեցաւ. ալ յոյս չկար զանիկայ իր  
կարծիքէն շարժելու. ալ իրեն ուրիշ միջոց չէր մնար՝  
բայց եթէ զինքը կամ դեսպանի մը վայլած պա-  
տուով ընդունիլ, կամ իբրեւ թշնամի՝ անոր յար-  
ձակմանը դէմ դնել. եւ ինք երկուքն ալ չէր ու-  
ղեր: Սակայն աս տատամսութիւնն իր տկարութե-  
նէն յառաջ չէր դար, որովհետեւ իր տէրութեան  
ընդարձակութիւնը, հարստութիւնն ու զօրութիւնը  
շատ մեծ էր. իր հպատակները պատերազմող ու քաջ  
էին. անթիւ անհամար զօրք կրնար հանել. իր իշ-  
խանութիւնն ալ կատարեալ բացարձակ ու ինքնիշ-  
խան էր: Այնպէս որ եթէ իր բոլոր զօրութեամբն  
անմիջապէս Սպանիացւոց վրայ յարձակելու ըլլար,  
որոնք վատառողջ ու անբեր երկրի մը վրայ բանա-  
կած էին, պաշար, դաշնակից ու օգնական եւ միան-  
գամայն ետ քաշուելու տեղ չունէին, ստուգիւ չէին  
կրնար երկայն ատեն դիմանալ: Թէպէտ Սպանիա-  
ցիք զէնքի եւ կրթութեան կողմանէ մեծ առաւե-  
լութիւն ունէին, բայց անով ալ չէին կրնար դի-  
մանալ. հապա կամ կամաց կամաց կը ջարդուէին կը  
լմրնային, կամ իրենց յանդուզն արշաւանքէն ետ  
կը կենային: Մոնղեզումա ասանկ դորժք մը յառաջ  
տանելու յարմարութիւն ու ձիրք ունէր: Բոլոր թըր-  
նամիքն իրմէ կը դողային ու հպատակները կը վախ-

նային . իրեն խիտա ու անդուծ բնութեամբն ամենն ալ նուաճած էր եւ սչ ոք իր կամբին դէմ բան մը կրնար դործել՝ առանց պատիժը կրելու : Ըրած յաղթութիւններովը՝ զինուորաց վատահութիւնը վաստակած եւ ամենուն սրտին մէջ իր անուան սարսափը տիրած էր : Ի վերայ այսր ամենայնի հիմա խումբ մը օտարականներուն մտիկնալէն վախնալով՝ շիտած ու խռոված էր : Առջի անգամուն՝ որ ասոնք իր երկրին վրայ երեւցան , տարակուսանքն ու վախկոտութիւնն իր վրայ տիրեցին . փոխանակ պարագայից պահանջածին համեմատ՝ զօրաւոր միջոցներ բանեցրնելու , տատամսութեամբ մը իր ժողովրդեան վնասին եւ իր իննալուն ալ պատճառ եղաւ : Աս տկարութիւնն ու տատամսութիւնը՝ միայն աւելորդապաշտութեան զօրութեամբը կրնայ մեկնուիլ : Ան կողմերը կարծիք մը տիրած էր թէ ուրիշ զօրաւոր ցեղի մը ձեռքով իրենց գլուխը շատ չարիքներ պիտի գան : Ժողովրդեան աս վախերն՝ իրենց տիրոջը վրայ աւելի մեծ ապաւորութիւն կ'ընէին :

Արբ որ Մոնղեզու մա Գորդէզին յամառութիւնը տեսաւ , աս օտարականաց հպարտութեանը վրայ սիրաբը նեղացաւ , որ յանդգնութեամբ իր երկրին մէջ իրեն դէմ կը զինէին . իր թմրած կիրքերն արթնցան եւ բնական կատաղութեամբն երդում բրաւ որ բոլոր ան հպարտ մարդիկն իր աստուածներուն զոհ ընէ : Բայց աս բարկութիւնը՝ բաղձացուած գործքը յառաջ չբերաւ . փոխանակ զօրութիւնը ժողովելու եւ թշնամւոյն վրայ յարձակելու , Մոնղեզու մա՝ խորհուրդ ընելն ու իր պալատականներուն կարծիքն իմանալը բաւական սեպեց : Սակայն երկայն բարակ խորհուրդ ընելու , մտածելու ժամանակն անցած էր . անօդուտ խօսակցութեանց ծախուած ամեն մէկ ժամը՝ թշնամւոյն ուժը կ'աւելցրնէր : Ժողովքին հետեւութիւնն ան եղաւ որ Սպանիացւոց

որոշ հրամանն իրկեցին՝ Մեքսիկոյի երկիրներէն դուրս  
 ելլելու. բայց աս հրամանն իրեն նորէն իրկած հա-  
 բուստ ընծաներովը կ'ոչընչանար, ինչու որ ինչպէս  
 յառաջ ըսինք, ասոնցմով Սպանիացւոց եռանդն  
 աւելի կը բորբոքէր եւ մտքերնուն մէջ աւելի եւս  
 կը հասաատուէին:



Գորդէկն որտ' որտնանայ հոգին իւ զօրմայ. բայց անոր հնար-  
 անէ խղճուցոյն իննները իւ թանան: — Նոր Սպանիոյի մէջ ու-  
 թաղին տնգոմ գող խախտանսինան իւ հասարարին:

Սննդեղումս իր կասկածոտութեամբն անգործ  
 կեցած ատեն՝ Գորդէկ ալ յաջող վիճակի մը մէջ  
 չէր: Սպանիացւոց մէջ տժգոհութեան ու անմիա-  
 բանութեան խմբում մը մտած էր, եւ շատ դժ-  
 բախտ հետեւութիւններու վախ կու տար: Գորդէկ  
 իր վիճակին ամէն դժուարութիւնները կը տեսնէր,  
 թէպէտ իր ձիրքերովն, իր անկողմնասէր բնութեամբն  
 ու քաջութեամբը՝ զինուորաց վստահութիւնը բոլոր-  
 ովին վաստակած էր, բայց Աելլասկուէզին կողմնա-  
 կիցները միշտ վրան կը նախանձէին եւ մտքերնին  
 գաղտուկ պահելու զգուշութիւն ալ չէին ըներ: Ճամ-  
 բայ ելլելէն վեր՝ բոլոր ձեռքէն եկած հսկողութիւնն  
 ու հնարքներն ի գործ դրած էր, որպէս զի ներքին  
 վտանգները նուազընէ: Եւ թէպէտ շատերն իրեն  
 հետ հաւատարմութեամբ կապուած էին, ի վերայ  
 այսր ամենայնի հակառակորդները բոլորովին արհա-  
 մարհելու կամ բանի տեղ չընելու չափ զօրութիւն  
 ալ չունէր: Ասոնք զինքը միշտ իբրեւ Աելլասկուէզին  
 պարզ փոխանորդը կը ճանչնային, եւ աս կարծիքը  
 զԳորդէկ շատ անհանդիստ կ'ընէր ու խորունկ մտած-  
 մանց մէջ կը ձգէր: Ինք շատոնցու ընէ ինքնիշխան  
 ըլլալու խորհուրդ ունէր, իր վառվռուն բնութիւնն,  
 իր ձրիքը վրայ ունեցած համարումը՝ անանկ մէկ տկար

մեծ մը ունենալն իրեն ծանր կ'երեւցընէր. մանաւանդ որ յայտնի կը տեսնէր թէ կառավարին նախանձովը կրնայ ան գործողութեան պատուը կորսընցընել, ուրուն մէջ այնչափ յառաջագիմութիւն կ'ընէր: Աս մտածմունքները զինքը ստիպեցին իր բնութեան հակմանցը հետեւելու եւ շատոնցուընէ միտքը դրած խորհուրդը գործքով կատարելու:

Բայց ասոր գործադրութիւնն ալ շատ դժուարութեանց տակ կ'իյնար. կրնար վախցուիլ որ եթէ աճապարելու չըլլայ, մինչեւ նոյն ժամանակն ըրածներուն պատուը մէկ բոպէի մէջ կորսընցընէ: Արդէն տեսանք որ ինչպէս երկու անգամ Աելասկուէզին նախանձէն՝ իր բախտովն ու խոհեմութեամբն ազատեցաւ. արդ հիմակ ալ նոյն վտանգները կրնային նորոգուիլ ու զինուորներն իր կողմը վաստըկելու համար մինչեւ նոյն ատեն ըրած ջանքն ալ պարապի հանել. որովհետեւ զՏիեկոյ տ'Օրտազ, զԷսգուպար եւ Աելասկուէզին ուրիշ քանի մը կողմնակիցներն իր կողմը չէր կրցած վաստըկիլ, որոնք իրենց կարծիքները զինուորներէն շատերուն ալ հազարդած ու համոզուցած էին: Տժգոհները յարմար առթի մը կը սպասէին՝ սպարապետին ընթացքին վրայ ունեցած տհաճութիւննին ցուցընելու: Տեսան որ Գուլումէլ կղզին առնելու ժամանակ՝ Աելասկուէզին աւնունը չյիշուեցաւ. Գորդէզ բոլոր տուած հրամաններուն մէջ անանկ կը ցուցընէր որ կարծես թէ իր պաշտօնն ու յանձնարարութիւններն ուղղակի թագաւորին ձեռքէն ընդունած էր, չէ թէ Գուպայի կառավարէն: Աս ձեւերու եւ կանոններու զանցառութիւնը զՕրտազ եւ իր կողմնակիցները շատ վշտացուց, որովհետեւ անով՝ Գորդէզին գաղտնի խորհուրդները կը տեսնէին. բայց իրենց տժգոհութիւնն երեւան հանելու՝ յարմար առթի մը կը սպասէին: Սպասածնին շուտով հասաւ. բերած պատճառնին ալ

իրենց տժգոհութիւնն արդարացընելու բաւական կ'երեւար :

Օ ինուորները խել մը ատենէ վեր խեղճ վիճակի մը մէջ էին : Ճախիհներէ պաշարուած աւազուտ տեղ մը բանակած էին . հազարներով մտղուկներ աս խեղճերուն վրայ յարձակելով՝ բոպէ մը հանգիստ չէին թողուր . շատերը նոյն օդաբաժնին հիւանդութիւններէն բռնուած էին , ոմանք ալ հոնտեղաց տարութենէն պատճառած վէրքերնին չէին կրնար բժշկել . առհասարակ ամէնքն ալ ծանր աշխատանքներու մէջ կը գտնուէին : Պաշարները պակսելու սկսած էին , պաքցամասն ու աղած միսն աւրուած էր . ամենուն միտքը սովու վախով նախապաշարած էր : Ուստի մէկ որոշ գործքի մը ձեռք զարնելն անհրաժեշտ հարկաւոր կ'երեւար : Աս պարագայից մէջ Գորգէզ առաջարկեց որ Քիահուիցլա քաղաքն առնեն ու հոն ամրանան : Նոյն որոշումը Աելասկուէզին կողմնակիցները գրգռեց ու օտք հանեց . ասոնք կը պնդէին որ այսպիսի անձանօթ երկրի մէջ ալ աւելի յառաջ երթալը յանդգնութիւն ու խենդութիւն է : Աս մեր սակաւաթիւ բանակը , կ'ըսէին , որ հիւանդութիւններով սաստիկ տկարացած է , անտարակոյս առանց բան մը վաստրկելու՝ շատ կորուստներ պիտի ունենայ : Նոյն միջոցին Գեւգիլէ հասաւ , որն որ Մոնղեղումային կողմանէ բացարձակ հրաման կը բերէր որ օտարականք շուտ մը իր երկիրներէն ելլեն երթան : Գորգէզ իր պատասխանը պատրաստելու ժամանակ՝ լսեց որ բանակին մէջտեղը շինուած մատրան զանգակը կը զարնէր : Անմիջապէս ծնկան վրայ եկաւ , քովիններուն ալ հրամայեց որ ծունը իջնան : Մէկէն բոլոր բանակին մէջ խոր լուութիւն մը տիրեց , որն որ դեսպանին վրայ մեծ ազդեցութիւն ըրաւ : Ան ատեն Մարինա իրեն զուցեց թէ Սպանիացիք մէկ ճշմարիտ Աստուծոյ երկրպագութիւն կ'ընեն , որն

որ կռապաշաները կ'ատէ ու կուռքերը կործանելու կարողութիւն ունի: Արդ հիմակ իրեն կ'ազազէն որ, բռաւ, Մոնղեզու մային խնայէ, որուն դէմ իրենց Աստուածը բարկացած կ'երեւայ: Ետքէն Գորդէզ վեհ ու ազդու ձայնով մ'ըսաւ. Իմ թագաւորիս՝ Մեքսիկոյի կայսեր հետ բարեկամութեան դաշինք դնել ուզելուն զլխաւոր պատճառն ան է, որ քրիստոնեայ ժողովուրդները՝ կռապաշտութեան մոլորութիւններուն դէմ դնելու մեծ պարտաւորութիւն ունին: Ուստի եւ իմ բաղձանքս ալ ան ըլլալով որ ճշմարտութեան հարկաւոր եղած ծանօթութիւններն իրեն հաղորդեմ, չեմ կրնար իրեն առջեւն ելլելու խնդիրքէս ետ կենալ: Ես խաղաղութեան մտքով եկած եմ, որուն յայտնի նշան է քոյս միայն այսչափ քիչ հոգի ունենալս: Աս խօսակցութիւնը Գեւդիլէն անհամբերութեամբ մը մտիկ ընելէն ետքը, Գորդէզ խօսքը լմնցընելուն պէս՝ ձեւերովն ու շարժմունքներովն իր տհաճութիւնն ու զարմանքը յայտնելով՝ բանակէն դուրս ելաւ գնաց:

Արկորդ օրը տեղացիներէն ոչ ոք երեւցաւ, որոնք հասարակօրէն իրենց պաշար կը բերէին. երթեւեկութիւնն ու տուրեւառիկ փոփոխութիւնը դադրեցաւ, եւ Գորդէզ ամէն բողբէ թշնամութեանց սկսելուն կը սպասէր: Աս դէպքը Սպանիացոց վրայ մեծ վհատութիւն ու սարսափ ձգեց. Աելակուէզին կողմնակիցները չէ թէ միայն տրանջել եւ սպարապետին դէմ նենդութիւններ նիւթել յանդգնեցան, հապա մէջերնէն մէկուն ալ յանձնեցին որ երթայ Գորդէզին անխոհեմութիւնն երեսը զարնէ եւ ստիպէ որ նաւ մանեն Գուպա կղզին դառնան, որպէս զի նաւապորովը նորոգէ ու բանակը զօրացընէ: Աս պաշտօնը Տիեկոյ ա'Օրտազին ինկաւ, որն որ համարձակ ու բիրտ եղանակաւ մը խօսեցաւ եւ հաստատեց թէ բոլոր բանակին բաղձանքն ալ ան է: Գորդէզ

Հանդարտութեամբ մը մտիկ ըրաւ . արդէն աս բանս յառաջուրնէ իմացած եւ առջեւն առնելու պատրաստուած էր, որովհետեւ իր կողմնակիցներն ամէն բան կը դիտէին եւ իրեն կ'իմացընէին : Բորդոյ Գարբերոյ, Սանտովալ, Ալուարատոյ, Էսգալենդէ, Օլիա եւ Լուկոյ իրենց սպարապետին հետ հաւատարմութեան ու բարեկամութեան կապով մը սերտ կապուած ըլլալով՝ ամէն բանի մէջ անոր պաշտպան կը կենային : Ասոնք հասարակ զինուորներէն շատերն ալ իրենց կողմը վաստակած էին, որոնք արդէն Գորդէզին քաղցր բնութեամբն ու առատածեռնութեամբն անոր հետ կապուած էին : Աս բարեկամները շատ հեղ զաղանի խօսակցութեանց մէջ՝ Գորդէզին իշխանութիւնն աւելի եւս բարձրացընելու եւ Աելրասիուէզէն բոլորովին անկախ ընելուն վրայ կը խօսէին ու կը ջանային որ զինուորներուն հաւանութիւնն ալ առնեն :

Գորդէզ նոյն մտածութիւններն իմանալով եւ զինուորաց յօժարութեան տեղեակ ըլլալով՝ աս պարագային մէջ նուրբ վարպետութիւն մը բանեցուց : Ամենայն սիրով յանդուգն Օրտազին խօսքերը մտիկ ըրաւ եւ հասարակաց օգտին համար հարկաւոր եղած կարգադրութեանց ինք զինքը պատրաստ ցուցընելով՝ զինուորներուն հրաման տուաւ որ երկրորդ օրը նաւ մտնելու պատրաստուին : Աս նոր հրամանը տարածուելուն պէս՝ բախտախնդիրները տեսնելով որ իրենց յոյսը պիտի ոչընչանայ, սկսան դանգատել ու սպառնալ . զօրաց մէջի խմորումը շատցաւ, ամէնն ալ մէկ բերան սպարապետը տեսնել ուզեցին : Գորդէզ շատ չուշացաւ, դուրս ելաւ . զօրքը զինքը տեսնելուն պէս՝ սկսան ետ դառնալու հրամանին վրայ ունեցած զարմանքնին ու տօգոհութիւննին յայտնել : Կաստիլիացւոց ամօթ ու նախատինք է, կ'ըսէին, որ առջի տեսնուած վտանգէն վախնան, ու դեռ թշնամին չերեւցած՝ թող տան փախչին : Մենք չենք եր-

Թար, կ'ուզենք յառաջ ասանիլ սկսած արշաւանք-  
նիս, որն որ մինչեւ հիմակ յաջողեցաւ: Քու հրա-  
մաններուդ հաւատարմութեամբ հնազանդելով՝ ամէն  
վտանգներու մէջ քեզի ընկեր ըլլալ կ'ուզենք եւ  
երբեք զքեզ թող չենք տար: Քայց եթէ կ'ուզես  
Գուպա դառնալ եւ փառքդ ու ակնկալութիւն-  
ներդ նախանձոտի մը ձեռքը թողուլ, մենք ուրիշ  
զօրապետ մը կ'ընտրենք, որ ան փառաց ճամբուն  
մէջ մեզի առաջնորդէ:

Գորդէզ զինուորաց աս մեծ եռանդին վրայ  
սաստիկ ուրախացաւ, եւ անոնց համարձակութեան  
վրայ ամենեւին չնեղացաւ, ինչու որ ան հողին ու  
եռանդն ազդել տուողն ինքն էր: Ի վերայ այսր ա-  
մենայնի իրենց աս խօսքերուն վրայ զարմանալ մը  
ձեւացուց, անոնց իմացուց որ ինք հասարակաց կար-  
ծիքն այնպէս կարծելով՝ իր կամաց ու կարծեաց  
հակառակ նաւ մտնելու հրաման տուաւ: Իսկ իմ  
կարծիքս ան է որ, ըսաւ, հոն ծովին քով բնակու-  
թիւն մը հաստատենք եւ անկից՝ երկրին ներքին կող-  
մերը քալենք: Աս այսպէս ըլլալով՝ զիս խաբած էին  
ուրեմն, համոզեցնելով որ զօրքն իմ կարծեացս հա-  
մաձայն չէ: Քայց հիմա, ըսաւ, զձեզ ասանկ քաջա-  
սիրտ տեսնելով շատ ուրախացայ. ուստի եւ նոր ե-  
ռանդով դարձեալ իմ պաշտօնս կը սկսիմ եւ զձեզ  
կ'ապահովցընեմ որ յաղթութեանց ու բախտի հաս-  
նելու համար ձեզի կ'առաջնորդեմ: Աս յայտարա-  
րութեան՝ ամէնն ալ ուրախութեան ու հաճութեան  
աղաղակներով պատասխանեցին. զինքը գաղտնի բամ-  
բասողներն ու չհաւնողներն ալ մեծագոյն մասին  
հետ միանալու ստիպուեցան, թէ՛ իրենց հակառա-  
կութիւնը ծածկելու եւ թէ՛ ընկերներնէն իբրեւ վառ  
չնախատուելու համար:

Գորդէզ՝ զինուորներուն քննութիւններ ու խոր-  
հրդածութիւններ ընելու ժամանակ թող չտալով՝



շուտ մը գաղթականութիւն մը հաստատելու պատա-  
 ղեցաւ, որուն անունը Ալիլա Ռիֆա տէ լա Աւերա  
 Գրուզ դրաւ, կրօնի եւ հարստութեան յոյսերը մէկ-  
 տեղ միացընելով: Աւագ ուրբաթն օրը քաղաքը  
 կրօնական մեծ հանդիսութեամբ նուիրեցաւ: Հազիւ  
 թէ պատերն ունաչափ մը գետնէն բարձրացած էին,  
 Գորդէզ քաղքին կառավարութեան կերպին վրայ  
 սկսաւ մտածել: Պաշտօնակալները ժողովեց որ գաղ-  
 թականութեան կառավարներ ընտրեն. բայց ամէն  
 բան այնպէս կարգի դրաւ որ ընտրութիւնները՝ միայն  
 իր կողմնակիցներուն վրայ ընկաւ. Բորդոյ Գարբերոյ,  
 Ալուարատոյ եւ Օլիտ, որոնց հաւատարմութիւնն եր-  
 բեք արատաւորած չէր, կառավարութեան գլխաւոր  
 անդամներն եղան: Աս ընտրութեան ու ժողովքին  
 գործքերը թագաւորին անուամբն եղան. իսկ Աւ-  
 լասկուէզին եւ սչ անունը յիշուեցաւ: Գորդէզ իր  
 պաշտօնակալաց վրայ աղէկ վստահ ըլլալով եւ նոր  
 ժողովքին իշխանութիւնը հաստատել ուզելով՝  
 անանկ ընթացք մը բռնեց որ առջի բերան յան-  
 դուզն կ'երեւայ, բայց մարդ մտածելով՝ ունեցած  
 դիտաւորութիւնը կը տեսնէ. այս ինքն՝ իր իշխա-  
 նութիւնն ընտրուած կառավարներուն ձեռքը յան-  
 ձնեց, որպէս զի անոնց հպատակութիւն ցուցընելու  
 առաջին օրինակն ինք սկսելով՝ անոնց կառավարու-  
 թիւնը զօրացընէ: Գարձեալ գիտէր որ իր հրամա-  
 նատարութիւնը տկար ու խախուտ բան մըն է, եւ  
 թէպէտ կառավարութեան դրուելուն կերպն ալ օ-  
 րինաւոր չէր կրնար ըսուիլ, ի վերայ այսր ամենայնի  
 եթէ ինք ան կառավարութեան ձեռքովը նոր պաշ-  
 տօն մ'ընդունելու ըլլար, կը յուսար որ զինուոր-  
 ներն աւելի եւս զիւրութեամբ մը իրեն կը հնազան-  
 գէին, որովհետեւ իրենք ալ իր ընտրութեան եղա-  
 նակաւ մը մասնակից եղած կ'ըլլային: Աս մտած-  
 մունքներով՝ կառավարութեան ժողովքն առաջին

անգամ ժողովուրդուն պէս՝ Գորդէզ հրաման խնդրեց որ ներկայանայ, եւ մեծարանքով մը ներս մտնելով՝ գեղեցիկ ճառ մը զրուցեց. կրցածին չափ շողքորթիչ բառերով՝ ընտրուողներուն իշխանութիւնը բարձրացուց եւ զինքն անոնց ամէն որոշմանց հպատակ ցուցուց: Յայտնեց որ իր իշխանութիւնը յառաջագոյն Գուպայի կառավարէն առած էր, բայց անիկա աս իշխանութիւնը ետ առնելուն համար՝ հիմակ իր իշխանութեան օրինաւոր ըլլալուն վրայ կրնար տարակոյս ծնանիլ. ուստի եւ ինք ասանկ անհաստատ հիմ ունեցող իշխանութիւն մը բանեցրնելու չհամարձակելով՝ պաշտօնէն կը հրաժարի. եւ պատրաստ է մինչեւ նոյն ատեն ցուցուցած եռանդեամբ՝ իբրեւ հասարակ պաշտօնակալ մը իր ծառայութիւնները կատարել. եւ կ'ուզէ ցուցրնել որ թէպէտ հրամայելու վարժած է, բայց հնազանդիլ ալ դիտէ: Ետքէն Աելրասիուէզէն առած պաշտօնի նշանը սեղանին վրայ դնելով՝ իր հրամանատարութեան գաւազանը պագաւ ու գահերէցին ձեռքը յանձնելով՝ ետ քաշուեցաւ:

Գորդէզ իր աս հնարագիտութեան պտուղը շուտով վայելեց. ժողովքը չէ թէ միայն զօրքին հրամանատարութիւնը նորէն իրեն յանձնեց, հապա զինքը գաղթականութեան առաջին կառավարն անուանեց, որով թէ զինուորական թէ քաղաքական գլուխ եղաւ: Բայց որպէս զի աս գործքը գաղանի խորհրդակցութենէ յառաջ եկած չերեւայ, ժողովքը հրամայեց որ բոլոր զինուորներն ալ կանչուին եւ ըլլալու որոշման անոնք ալ քուէ տան. միայն թէ ասիկայ հրատարակելէն յառաջ՝ Գորդէզին կողմնակիցներն ամէն կարելի միջոցներով աշխատեցան զինուորաց քուէներն իրենց կողմը վաստակելու: Գորդէզին յաջողակութիւնն ու զինուորական ձիրքերը կը գովէին, անոր մինչեւ նոյն ժամանակն ունեցած ար-

դիւնքներն ու գործած քաջութիւններն առջեւնին  
կը դնէին: Ամէն բան ասանկով աղէկ մը պատրաս-  
տուելէն ետքը՝ Գորգէզին ընտրութիւնն եղաւ, որուն  
ամէնն ալ մեծապէս գոհ եղան, եւ իրենց ուրախու-  
թիւնը սիրոյ նշաններով յայտնեցին ու ժողովքին  
որոշումը հաստատելով՝ սպարապետին հնազանդու-  
թեան երդում ըրին:

Ասանկով Գորգէզ իր բաղձանացը հասաւ. ալ  
իր գործքերուն դէմ դնող արգելքներէն ազատե-  
ցաւ: Աելասկուէզին իշխանութենէն ազատ էր, իր  
իշխանութիւնն ամէնքն ընդունած էին, ալ իր միա-  
քը դրած յատակադիճներն ուղածին պէս յառաջ  
կրնար տանիլ. որովհետեւ ապահով էր որ անկից  
վերջը իր հրամաններուն յամենայնի կը հպատակին:

Բայց ասանկ մեծ գործողութիւն մը՝ Թոգոհ-  
ներուն դժկամակութիւնն առանց գրգռելու չմնաց.  
Թէպէտ Աելասկուէզին կողմնակիցներուն թիւը շատ  
քիչցած էր, բայց մնացողներն իրենց կարծեացը վրայ  
հաստատուն կենալով եւ ժողովքին վճիռներն ան-  
վաւեր ու մատնութեան գործք է, բսելով՝ գաղթա-  
կանութեան մէջ երկպառակութիւնը սասակացրնելու  
ջանացին: Գորգէզ եւ իր կողմնակիցներն աս բաներս  
իմանալով՝ նախ հասարակ զինուորներուն մէջէն ի-  
րենց դէմ բլլողներն սկսան պարզելներով ու խոս-  
տումներով որսալ: Աս ալ կ'ըսէին թէ Գորգէզին  
կողմն արդէն շատուոր է, ուստի իրենց դէմ դառ-  
նալն՝ անոր միտքը դրածները յառաջ տանելու ամե-  
նեին արգելք չիկրնար բլլալ. միայն թէ ետքէն  
իրենք կը զզւան, իրենց համար պատրաստուած բախ-  
տէն զրկուելով: Այսպէսով վերջապէս հասարակ զի-  
նուորներն իրենց կողմը շահեցան: Իսկ Տիեկոյ տ'Օր-  
տազ, Աելասկուէզ աէ Աէոն, Էսգոպար եւ ուրիշ  
քանի մը պաշտօնակալներ տեսնելով որ զինուորք՝  
որոնց վրայ իրենց յոյսը դրած էին, մէկալ կողմն

անցան, վախցան եւ իրենք ալ Գորդէզին կողմն անցան: Բայց սպարապետն ապստամբութեան առջեւն առնելու հարկաւորութիւնը տեսնելով, շուտ մը դանոնք բռնել տուաւ ու ոտքերնին շղթայի զարնելով նաւ խրկեց: Աս խստութիւնն ապստամբութիւնը բուրրովին խաղաղուց, ուստի քանի մը օր ետքը բանտարկեալները նորէն ազատեցան: Գորդէզ անոնց հետ զինուորական համարձակութեամբ ու բարեկամական ընտանութեամբ վարուեցաւ. առաջարկեց միանգամայն որ իր հետը գալ չուզողն ազատ է, կրնայ Գուպա դառնալ: Աս առաջարկութիւնն ոչ ոք ընդունեցաւ եւ հաշտութիւնն ան աստիճանի կատարեալ եղաւ, որ անկէ ետեւ ամենեւին մէկն իրեն դէմ դաւաճանութիւն մը չըրաւ, ամէնքն ալ անոր անձին ու օգտիցը բոլորովին յարեցան ու սիրով միացան:

Աս միջոցիս պաշարի պակասութիւնն սկսաւ զիրենք նեղել: Ալուարատոյ խումբ մը զօրքով երկրին ներսերը պաշար հոգալու գնաց: Քանի մը օր ետքը ետ դառնալով՝ լուր բերաւ թէ դացած ամէն զեղերն առատ պաշար կար, իսկ բնակիչներն իր մօտիկնալը տեսնելուն պէս՝ կը փախչէին: Միանգամայն տաճարի մը մէջ քանի մը մարդիկներու եւ տղոց դիակներ տեսած էր, որոնք կ'երեւար թէ նոր զոհուած էին, որովհետեւ զոհին դանակը թարմ արիւնով ներկուած էր: Գորդէզ պաշար գտնելուն վրայ ապահովութիւն ստանալով՝ բանակը վերցուց եւ սկսաւ դէպ ի երկրին ներսի կողմերը յառաջանալ: Աս գործքիս աւելի յորդորուեցաւ ուրիշ դիպուածէ մ'ալ. Տիագ պատմիչը քիչ մը տեղ հեռացած ըլլալով՝ տեսաւ որ մօտիկ բլրէ մը հինգ անգէն տեղացիք՝ խաղաղութեան նշաններ ցուցնելով՝ իրենց կը մօտենային. ուստի եւ զիրենք առաւ բանակը տարաւ: Ասոնց հազուստէն եւ կերպարանքէն կ'երեւար որ Մեքսիկացիներէն տարբեր ցեղ մըն էին: Մարինա իրենց լե-

զուն դիւրաւ չհասկըցաւ, բայց աս իմացաւ որ Զեմբոալլայի ցեղապետէն խրկուած էին, որ զԳորդէզ իրենց քովը հրաւիրեն, խոստանալով որ անոր հետ բարեկամութեան եւ խաղաղութեան դաշինք կը դնէ:

Աս պատգամաւորութիւնը նենգութեան համար ալ կրնար ըլլալ. կրնար վախցուիլ որ չըլլայ թէ ցեղապետը զիրենք խաբելով իր քովը կանչէ, եւ դաշինք դնելու տեղ՝ զիրենք սպաննէ: Անոր համար Գորդէզ անոնց զանազան հարցումներ ընել տուաւ, յուսալով որ իրենց պատասխաններէն ստոյգը կ'իմանայ: Իմացաւ որ Զեմբոալլա քաղաքը մեծ ու բազմամարդ էր. եւ աս հարկատու ցեղապետը Մոնդեզումային բռնաւորութենէն ձանձրացած ըլլալով՝ կը բաղձար օտարականաց հետ միանալ, յուսալով որ անոր ծանր իշխանութենէն կ'ազատի: Գորդէզ աս առաջարկութեան որչափ օգտակար ու հարկաւոր ըլլայն իմացաւ. տեսաւ որ աս տէրութեան մէջ տժգոհութիւն ու անմիաբանութիւն կայ, ազգին մէկ մասին մէջ ալ կայսեր դէմ ատելութիւն կը տիրէ: Ինք անկից հետեւցուց որ աս տժգոհութիւնը միայն մէկ դաւառի մէջ եղած պիտի չըլլայ, ուրիշ դաւառներու մէջ ալ Մոնդեզումային հպատակութենէ ձանձրացած ու զգուած եւ փոփոխութեան բաղձացող մարդիկ պիտ'որ գտնուին: Անոր համար միտքը դրաւ որ ինք անոնց օգնելու եւ զիրենք ազատելու խօսք տայ նէ՝ անմիջապէս իրեն հետ կը միանան եւ ազատութիւննին գտնելու ջանքով իրեն կ'օգնեն:

Աս գաղափարներով ու նոյն ատենէն՝ մտքին մէջ իր բռնելու ընթացքին յատակագիծը շինելով, Զեմբոալլացիները շատ սիրով ընդունեցաւ եւ անոնց խոստացաւ որ քիչ մը ետքը իրենց ցեղապետին այցելութեան կ'երթայ:

գաւառի մէջ մտնելու աս աստիճանէ՝ ասոց կ'ընթացնէ ինչպէս որ  
 դու աստիճանէ մտնելով տեսնելով ինչպէս որ

Զե/բուսուլայնէրն է— որիչ ասի ՚ն ցեղեր Սպանիացոց իւ հոս-  
րակն ու անոնց հետ դաշինք իւ դեմն :

Վ իւս Ռիգայի դերքը շատ կողմանէ անյարմար  
կ'երեւար, անոր համար Սպանիացիք հարկաւոր սե-  
պեցին որ դաղթականութեան գլխաւոր տեղն ուրիշ  
աւելի յարմար կողմ մը հաստատեն, ուստի եւ Մոն-  
դեյոյ՝ նոյն ծովեզերքը քննելու եւ ապահով ու պատ-  
շաճ տեղ մը գտնելու խրկուեցաւ : Ի դարձին ասի-  
կա պատմեց որ 10 դերմ. մղոն դէպ ի հիւսիս եր-  
թարով՝ Գուխապիսլան գեղին հանդիպեցաւ, որուն  
գետինը բերրի էր եւ նաւահանգիստն ապահով : Գոր-  
դէզ որոշեց որ բանակը հոն փոխադրէ եւ միանգա-  
մայն Չեմբոպլացոց ցեղապետին առաձ խոստումն  
ալ կատարէ, որոնց քաղաքը նոյն ճամբուն վրայ  
կ'իյնար : Երեք օր ճամբայ ընելէն ետքը՝ Չեմբոպլա  
մտաւ եւ իր զօրքերը մինչեւ մեծ հրապարակը յա-  
ռաջ տարաւ : Սպանիացիք աներուն տեսքին զարմա-  
ցան, որոնցմէ կ'երեւար թէ բնակիչքն հարուստ էին.  
բոլոր ճամբաներն ու հրապարակները բազմութեամբ  
լեցուն էր, բայց զէնք կամ ուրիշ կասկածելու նշան  
մը չունէին : Ցեղապետն՝ որ օսասիկ թանձրամարմին  
մէկն էր եւ իր պալատին դրան առջեւը կը կենար,  
իր պաշտօնակալներէն մէկ քանիին թեւերուն վրայ  
յեցած՝ հանդարտ քայլով մը սկսաւ մօտիկնալ.  
վրան ոսկի զարդերով զարդարուած բամբակէ վերար-  
կու մ'առած էր : Գորդէզին մօտ եկաւ նէ՝ քանի մը  
խօսք զրուցեց եւ աղաչեց որ հիմակ երթայ հանդէս,  
Վաղը, ըսաւ, գործքերուն վրայ երկայն բարակ կը  
խօսակցինք :

Սպանիացոց բնակութեան համար պատրաս-  
տուած տեղերը՝ շատ հանգիստ ու ապահով էին, ուր  
որ առանց կասկածի բնակեցան եւ իրենց հարկաւոր

եղած ամէն բանն ալ առատութեամբ պատրաստած  
 դասն: Երկրորդ օրը ցեղապետին այցելութեան լու-  
 ըր՝ պարզեւով մը իմաց տրուեցաւ, որուն վինը 1000  
 լիտր (2000 մարգ) ոսկի կ'արժէր: Գորդէզ բոլոր իր  
 մարդիկներովը ցեղապետին դիմացն ելաւ եւ իր բնա-  
 կութիւնը տարաւ, ուր որ Մարինայէն զատ մարդ-  
 ներս թող չտուաւ: Սպարապետն իր թագաւորին  
 մեծութեան ու կուսպաշտութեան մալրութեանց  
 վրայ քանի մը խօսք խօսելէն ետեւ՝ ըսաւ թէ Մեր  
 հաւատքը վրանիս պարտք կը դնէ որ անիրաւութիւն-  
 ները ջնջենք, հարստահարեալ տկարներուն կողմը  
 բռնենք եւ զանոնք ազատենք: Ասիկայ ցեղապետին  
 դիտաւորութիւններն իմանալու մէկիկ հնարքն էր.  
 ստուգիւ ալ անոր երեսին այլայլութիւնն ու փոփո-  
 խութիւնը ցուցուց որ լսածը սրտին բաղձանքին հա-  
 մաձայն էր: Քանի մը անգամ խորունկ հառաչելէն  
 ետքը՝ ցաւով մը սկսաւ պատմել թէ ինչպէս ամէն  
 ցեղապետներն ալ Մոնղեզու մային բռնաւորութեան  
 ու անդթութեանցը զերի եղած են. զօրութիւն ալ  
 չունին որ աս ամօթալի լուծը խորտակեն եւ ոչ ալ  
 բաւական խելք՝ անոր միջոցներուն վրայ մտածելու:  
 Աս անգութ թագաւորը զմեզ կը ստիպէ որ, ըսաւ,  
 զինքն իբրեւ առտուած պաշտենք եւ իր անիրաւ  
 հրամաններն՝ աստուծոյ պատգամի պէս կուրօրէն ըն-  
 դունինք: Բայց օտարականներէն օգնութիւն ուզելն  
 ալ խելք չէ. ինչու որ Մոնղեզու մային զօրութիւնը  
 շատ մեծ է, եւ օտարականք Չեմբոալլացիներէն ե-  
 րախտիք տեսած չունին՝ որ անոնց կողմն ելլեն:

Գորդէզ աս խօսակցութեան վրայ շատ զար-  
 մացաւ. բայց ցեղապետին իմացուց թէ ինք Մոն-  
 դեզու մային զօրութենէն չխլախնար, որովհետեւ Աս-  
 տուած իր պաշտպանն է: Սակայն հիմակ, ըսաւ, ուրիշ  
 վախճաններու համար Գուխապիտլան երթալս հարկ  
 ըլլալով, հոն կը սպասեմ ձեզի ու անոնց՝ որոնք աս

ծանր լծէն ձանձրացած ըլլալով՝ իմ օգնութեամբս  
ազատելու կը բաղձան: Աս միջոցիս դուն ալ նոյն  
բանին վրայ քու բարեկամներուդ հետ խօսէ եւ ա-  
նոնց խորհուրդ հարցուր: Ապահով եղիր որ Մոն-  
ղեզումային բռնութիւնները կը դադրին եւ ինք ա-  
մօթով կը մնայ՝ երբ որ ես ձեզի օգնելու սկսիմ:  
Աս խօսակցութենէն ետեւ իրարմէ բաժնուեցան,  
եւ Գորդէզ շուտ մը հրաման տուաւ որ դէպ ի  
Գուհապիսլան յառաջ երթան:

Մոնղեյցիին որոշած դիրքն՝ իրեն ան աստիճանի  
համաձայն երեւցաւ, որ շուտ մը քաղքի յատակա-  
դիծ մը շինեց. տներու տեղ հիւղեր կանգնեցին,  
բայց պատնէշները տեղացւոց բանակի մը դէմ  
դնելու չափ բաւական ամուր պիտ'որ ըլլային: Աս  
ամրութիւնները շատ հարկաւոր էին, թէ ետ քա-  
շուելու ժամանակ ապահով տեղ ունենալու, եւ  
թէ ծովին հետ հաղորդակցութիւնը չկտրուելուն  
համար. աս վախճանաւ ամէնքն սկսան ասոր շինու-  
թեանն աշխատիլ. Ամերիկացիք ալ իրենց հետ աշ-  
խատելով՝ շատ օգնեցին եւ քիչ ատենուան մէջ  
բաւական ամուր դիրք մը ձեւացաւ: Գորդէզ շատ ան-  
գամ խօսակցեցաւ Չեմբոալայի ու Գուհապիսլանի  
ցեղապետներուն հետ, որոնք Մոնղեզումային ան-  
գթութիւնները պատմելէն չէին դադրեր:

Աս խօսակցութիւններուն ժամանակը Մոնղե-  
զումային կողմանէ տարեկան հարկերը ժողվելու  
համար՝ վեց պաշտօնակալք եկան: Նոյն պաշտօնա-  
կալները մեծ շքով երեւցան, սաստիկ յանդիմանե-  
ցին բոլոր ան ցեղապետներն՝ որոնք կայսեր բացայայտ  
հրամանին դէմ՝ օտարականներն իրենց երկրին մէջ  
ընդունած էին. մեծամեծ սպառնալիքներ ըրին ու  
խնդրեցին որ իրենց ձեռքը քսան հողի յանձնուի,  
որոնց զոհուելովն իրենց յանցանքը քաւուի: Ցե-  
ղապետներն աս խնդիրքէն սարսափեցան մնացին.



իրենց տիրոջը հրամանին դէմ դնելու մտածութեանէն իսկ կը զարհուրէին . կուրօրէն հնազանդելու սովորութիւնը վրանին ան աստիճանի տիրած էր : Գորդէզ ասոնց սարսափը տեսնելով եւ գիտնալով որ՝ եթէ զիրենք աս վտանգէն ազատէ՝ շատ պիտի ուրախանան, իր մարդիկներուն հրամայեց որ հարկապահանջները բռնեն . տեղացւոց ալ արգելեց որ հարկերը չվճարեն : Աս գործքով ցեղապետներուն աշխոյժն ալ գրգռեցաւ, որոնք վայրենի ժողովրդոց հասարակ եղած սովորութեամբ՝ մէկ ծայրէն մէկալ ծայրն անցան : Հարկապահանջները, որոնց հրամանին չէին համարձակած դէմ դնել՝ կայսեր երեսփոխաններն ըլլալնուն համար, հիմակ իրենց աչքին՝ կայսեր անդթութեանցը կոյր գործիքներու պէս կ'երեւային : Քարկութիւննին ան աստիճանի հասաւ որ զանոնք իրենց աստուածներուն զոհ մատուցանել ուղեցին . արդէն զոհի հարկաւոր եղած բաներն ալ պատրաստած էին, բայց Գորդէզ իրենց խմացուց որ ան բռնուածներն իր զինուորաց պաշտպանութեան տակն են . եւ մեծանճնութեան օրինակ մը տալու համար՝ անոնցմէ երկու հոգի ազատ թողուց :

Յեղապետները տեսնելով որ ալ իրենց սկսած ծամբէն ետ դառնալն անկարելի է, ահու գոյու մէջ ինկան . կը վախնային որ Գորդէզ կայսեր բարկութեան պիտի հանդիպի . որովհետեւ անտարակոյս, կ'ըսէին, իրեն մարդիկներուն եղած նախատինքը լսելուն պէս՝ սաստիկ բազմութեամբ բանակ մը պիտի կազմէ, եւ անոր վրայ քայլելով՝ ահագին կոտորած պիտ'որ ընէ ու վռնտէ : Անկից ետքը իրենց վրայ գալու խեղճ վիճակն ալ կը մտածէին : Գորդէզ զիրենք հանդարտեցընելու եւ իրենց վախը փարատելու աշխատեցաւ, իր պաշտպանութիւնն ու իր օգնութիւնը խոստանալով : Յեղապետներն ալ իրենց կողմանէ խոստացան որ իրենք ալ ամենայն եղանա-

կաւ Սպանիացւոց օգնեն, եւ աս խոստման հաստա-  
տութեանը համար՝ Սպանիայի թագաւորին հպատակ  
ըլլալն ընդունեցան: Գորդէզ իր զօրացը յայտարա-  
րութիւն մը հանեց եւ աս մեծ փոփոխութիւնն ա-  
նոնց յայտնեց: Գորդոնագներն ալ շուտ մը Զեմբոալ-  
լացւոց հետեւեցան. որովհետեւ Մոնդեզումային ան-  
գթութեանց՝ ամենէն աւելի ասոնք զո՛հ եղած էին:  
Իրենց պատերազմասէր բնութեամբն անոր լծէն ժամ  
մը յառաջ ազատելու եւ սաստիկ վրէժ առնելու կը  
սպասէին, ուստի աս ապստամբութեան ամենէն աւելի  
յարուժ ցուցընողներն իրենք եղան, խօսք ալ տուին  
որ Գորդէզին արշաւանաց ընկերանան:

Սպանիացւոց եւ իրենց նոր դաշնակցաց առա-  
ջին գործքն եղաւ՝ Զինգաբասինկայի ժողովրդեան  
վրայ յարձակիլ: Զեմբոալայի ցեղապետն ան քա-  
ղաքն եղող Մեքսիկացի զօրաց՝ իր երկիրներուն մէջ  
ըրած աւարառութեանց ու յափշտակութեանց վրայ  
գանգատած էր: Գորդէզ հետը տեղացիներէն հա-  
զարի մը չափ մարդ առնելով՝ ճամբայ ելաւ: Մօ-  
տիկցած ատենը՝ տեղւոյն գլխաւորներէն ութ հոգի  
դիմացն ելան ու լալով աղաչեցին որ իրենց խնայե-  
քսելով թէ պահապան զօրքերն արդէն գացած են  
եւ Զեմբոալացւոց ատելութեան պատճառն՝ իրենց  
սահմաններուն համար մէջերնին եղած հին վէճն է:  
Գորդէզ՝ դաշնակիցներուն թիւն աւելցրնելն աւելի  
չահաւոր տեսնելով՝ Զեմբոալացւոց վրէժխնդրու-  
թիւնն արդէլեց. եւ իմանալով որ գլխաւոր նպա-  
տակնին աւարառութիւնն է, հրամայեց որ բնակչաց  
ինչքերուն չդպչին: Աերջապէս երկու ցեղապետ-  
ներն իրարու հետ հաշտեցուց: Ինք աւելի անոր միտ  
կը դնէր որ Սպանիացւոց ու դաշնակիցներուն մէջ  
եղած միաբանութիւնն ու սէրն աւելնայ. կը զգու-  
շանար որ իր զօրքերն աւարառութիւն չընեն. յափը-  
տակութիւնը խստիւ կը պատժէր, թէպէտ եւ գող-

ցուած բանին գինն ոչինչ բան ըլլար. երկու ղինուոր կախելու դատապարտեց, միայն անոր համար որ համբ գողցած էին. բայց Ալուարատոյին միջնորդութեամբը պատիժն ի գործ չդրուեցաւ: Գորդէզին աս արդարասիրութիւնն ու անուշ վարմունքը՝ քիչ ատենուան մէջ դաշնակցաց սէրն իրեն յափշտակեց եւ համարումն աւելցուց: Միայն դէպք մը պատահեցաւ, որմէ թշնամութիւն կը վախցուէր. բայց անոր հակառակ Գորդէզին՝ դաշնակցաց վրայ ունեցած իշխանութիւնն աւելցընելու առիթ եղաւ:

Գորդէզ ամէն առթի մէջ իր կրօնական ոգին կը յայտնէր. տեղացւոց՝ իրենց կուռքերուն մատուցած պաշտօնն ու իրենց սուտ աստուածներուն ըրած գարշելի զոհերնին՝ իրեն ան աստիճանի սոսկում կը պատճառէին, որ միտքը դրաւ աս սովորութիւնը ջնջելու: Իր դիտաւորութիւնն ուղիղ, բայց ի գործ դրած միջոցն անխոհեմ եւ անիրաւ էր: Փոխանակ զանոնք համոզցընելով ան սովորութիւններէն ետ կեցընելու ջանալու, բռնութիւն բանեցուց: Շատ անգամ ցեղապետը ստիպած էր որ կուոց պաշտօնը թողու. բայց իր աղաչանքները զանիկա չէին կրցեր հաւանեցընել. կուապաշտը կը կարծէր որ իր իշխանութեան պաշտպաններն իր աստուածներն են, եւ զանոնք թող տալովն՝ անոնց օգնութենէն կը զրկուի: Արդ մեծ տօնի օր մը տեղացիք՝ շատ մարդապոհ ընելու մտօք՝ գաղտուկ տաճարին մէջ ժողվեցան: Քանի մը Սպանիացիք ըստ պատահման աս սոսկալի տեսարանին հանդիպելով՝ աճապարեցին բանն Սպարապետին իմացուցին: Գորդէզ բարկութենէն կրակ կտրեցաւ. սլ դաշնակցաց հետ անուշութեամբ վարուելու դիտաւորութիւնը մէկդի ձգելով՝ շուտ մը զօրքերուն զէնք առնել տուաւ եւ ցեղապետն ու գլխաւոր պաշտօնակալները բռնելէն ետքը՝ անոնց հետ տաճար դնաց: Քրմերը դրան առջեւն

եկան, սկսան պռուալ որ ժողովուրդն աստուածնե-  
րուն օգնութեան դայ: Շուտ մը քանի մը զինեալ  
մարդիկ երեւցան, եւ թուերնին երթալով այնչափ  
շատցաւ, մինչեւ Գորդէզ սկսաւ տարակուսանաց մէջ  
կյնալ: Մարինային ձեռօքը պռուալ տուաւ որ Առջի  
անգամ նեա մը նեաուելուն պէս՝ ցեղապետը կը  
սպաննեմ եւ զինուորներուս հրաման կու տամ որ աս  
յանդգնութիւնը սրով ու կրակով պատժեն: Աս  
սպառնալէքն ամենէն կատաղիներուն աչքը վախցուց  
ու հանդարտեցուց. ցեղապետն ալ դողդոջիւն ձայ-  
նով մը հրամայեց որ զէնքերնին վար ձգեն, զուրս  
ելեն: Հրամանն անմիջապէս կատարուեցաւ:

Գորդէզ՝ միայն իրեններուն հետ մնալով, քրմե-  
րը կանչել տուաւ, Մի՛ վախնաք, ձեզի բան չեմ  
ըներ, ըսաւ, միայն կուռքերը պիտի կործանեմ. եւ  
զիրենք ալ յորդորեց որ իրեն օգնեն, զրուցելով որ  
միայն աս պայմանով իրենց հետ բարեկամ կը մնայ:  
Կուզէր որ իրենք սանդղներով ելլեն, իրենց ձեռօ-  
քը կուռքերնին կործանեն: Անոնք ամէնը մէկ բե-  
րան սկսան պռուալ ու լալ. գետինը փուռեցան եւ  
ըսին որ Աւելի կ'ընտրենք հազար անգամ մեռնիլ,  
քան թէ ձեռքերնիս աստուածոց դէմ վերցընել:  
Ան առեն Գորդէզ իր զօրքերուն հրամայեց որ շու-  
տով կուռքերը կործանեն: Անոնք անմիջապէս գըլ-  
խաւոր կուռքէն սկսելով՝ ամէնն ալ կարգաւ վար  
առին, կտորեցին, սեղաններն ու դործիքներն ալ  
կտոր կտոր ըրին: Քրմերն ու տեղացիք պաղած ու ապ-  
շած մնացին եւ կը սպասէին որ աստուածներն իրենց  
վրէժխնդրութիւնն յայտնեն: Բայց երբ որ տեսան  
թէ օտարականք հանգիստ ու հանդարտ կեցեր են,  
սկսան մտածել որ վրէժխնդրութիւն ընելու կարո-  
ղութիւն չունեցող աստուածներն՝ իրենց երկրպա-  
գութեան արժանի չեն: Յառաջագոյն ՂԱպանիացի-  
ները բարձրագոյն էակներու տեղ կը դնէին. հիմակ

աս գործքէն ետեւ՝ իրենց աստուածներէն աւելի վեր սեպելու սկսան: Գորդէզ աս մեծ գործքիս յաջողութեան վրայ ուրախանալով՝ քրմերուն հրամայեց որ տաճարը մաքրեն: Անոնք աս բանս սաստիկ յօժարութեամբ ու եռանդով կատարեցին, իրենց ձեռքովը կուռքերուն կտորուանքներն այրեցին, պատերը լուացին, մարդու արեան հեռքերը ջնջեցին, որոնք պատերուն գլխաւոր զարդն էին: Հուտ մը նոր սեղան մը կանգնուեցաւ, որուն վրայ Ս. Աստուածածնայ պատկերը դրին եւ առատ ծաղիկներով զարդարեցին: Երկրորդ օրը Հայրն Օլմետոյ կրցածին չափ մեծ հանդիսով սուրբ պատարագի խորհուրդը կատարեց: Աս սեղանը շատ զգուշութեամբ կը պահպանուէր, եւ երբ որ բանակը քաղքէն հեռացաւ, Յովհաննէս տէ Գորդէս անունով ծեր զինուոր մը տեղացւոց մէջ մինակ մնալն յանձն առաւ որ Ս. կուսին ծառայէ, իր կենացը վերջին օրերն աս սուրբ պաշտօնով պսակելով:

Գորդէզին հոր Սպանիայի երկիրը գալն երեք ամիս եղած էր: Զինուորները սկսան տրանջել թէ անգործութեամբ իրենց եռանդը պարապ տեղ կը կորսուի: Վերա-Գրուզին շինութիւնն ալ լմբնալու վրայ ըլլալով՝ ամէնքը Սպարապետին կողաչէին որ զիրենք Մեքսիկոյ տանի: Արդէն սկսած գործքը շուտով յառաջ տանելու ինք ուրիշներէն աւելի կը բաղձար. բայց իբրեւ իմաստուն առաջնորդ՝ չէր ուզեր շատ արտօրալով՝ գործքին յաջողութիւնը վտանգի մէջ ձգել: Մինչեւ նոյն ատեն ունեցած յաջողութիւնները մտքին մէջի կասկածները դեռ չէին ջնջած. Վելասկուէզին պատկերը միշտ աչքին առջեւն էր. կը մտածէր որ Մեքսիկացւոց դէմ պատերազմի չսկսած՝ Գուպայի կառավարին կողմանէ ծագելու ամէն կարելի արգելքներէն ու վտանգներէն ապահով ըլլայ. կուզէր որ թագաւորն իր սպարա-

պետութիւնը հաստատէ : Ասոր համար ժողովքին անդամներն համոզեց Սպանիա մարդ խրկելու , որ իր բռնած ընթացքն արդարացընէ , իր ըրածներն եւ միանգամայն ունեցած գաղափարներն յայտնէ . թագաւորն աւելի եւս յօժարեցընելու համար՝ մինչեւ նոյն ատեն ժողվուած գանձերն ալ մէկտեղ խրկել կ'ուզէր : Օրտազ եւ Մոնղեյոյ ընտրուեցան որ զինուորներն աս որոշման համոզընեն :

Բախտախնդիրներու խումբ մը՝ իրենց աշխատութեանց առաջին պտուղներէն զրկելու եւ այնպիսի թագաւորի մը՝ ուսկից որ ամենեւին ոչ վարձք մ'առած էին եւ ոչ ալ առնելու յոյս ունէին , խրկելու խորհուրդը՝ առջի բերան մեծ անխելքութիւն կ'երեւայ . բայց Նոր աշխարհքին տիրողներուն ամէն ընթացքը հասարակ կարգէ դուրս ըլլալով՝ ասոնց վրայ ուրիշ եղանակաւ մտածելու է : Բոլոր զինուորներն իրենց մեծին խորհուրդը կատարելու հաւանեցան ու մինչեւ նոյն ժամանակը ժողվուած հարստութիւններէն սիրով զրկուեցան . ձեռքերնին եղած հաստատուն ինչքերը թող տուին եւ ետքէն աւելի եւս հարստանալու յուսոյն զոհեցին : Ամենեւին առանց տրտունջի , առանց ցաւելու՝ ամէն մարդ իրեն ինկած աւարները բերաւ տուաւ : Ժողովքին անդամները խրկած գրերնուն մէջ իրենք զիրենք Աելասիուէզին իշխանութենէն անկախ ընելուն պատճառները կը գնէին եւ զԳորդէզ սպարապետ ընտրելին յայտնելով՝ անոր ձիրքերն ու քաջութիւնները մինչեւ երկինք կը բարձրացընէին , մինչուկ նոյն ատեն ըրած աշխարհակալութիւններնին ու անկից ետքն ընելիքներն աղէկ մը կը ստորագրէին : Նոյն երկրին ընդարձակութիւնը , բնակչաց բազմամարդութիւնը , օգին գեղեցիկութիւնը , գեանին բերրիութիւնն ու հարստութիւնը մեծ զարմացմամբ մը կը նկարագրէին : Աերջապէս թագաւորին կ'աղաչէին որ Գորդէզին ըն-

տրութիւնը հաստատէ: Իրենց խնդրոյն աւելի զօրութիւն մը տալու համար՝ պաշտօնակալներն ու գրեւ զխոցող զինուորներն ալ նոյն դրոյն ստորագրեցին: Ասկից զատ Գորգէզ ալ աս նիւթիս վրայ նամակ մը գրեց եւ ընելու աշխարհակալութիւնը գեղեցիկ ստորագրեց: Բորդոյ Գարբերոյ՝ Գորգէզին ամենէն աւելի հաւատարիմ բարեկամներէն մէկը, եւ Մոնգէյոյ՝ աս պաշտօնը կատարելու ընտրուեցան. իրենց հրաման տրուեցաւ որ Գուպա կղզին չհանդիպին:

Ասոնք ճամբայ չելած՝ Վերա-Գրուզ պղտիկ նաւ մը հասաւ, որուն նաւապետն էր Սալսետոյ: Ասիկա Գորգէզին տասը հոգի եւ երկու ձի բերաւ, որն որ ան պարագայից մէջ շատ մեծ օգնութիւն էր: Սալսետոյին գալուն պատճառն որոշ չիզիսացուիր. կ'երեւայ որ ինք եւ իր ընկերները Գորգէզին հետ միանալ ուզող բախտախնդիրներ էին: Ասոնք լուր բերին որ Վելասկուէզ նորէն շատ մեծ պատիւ մ'ընդունած է եւ Գորգէզին դէմ օտակալի սպառնալիքներ կ'ընէ: Աս լուրը Սպանիացոց վրայ շատ ազդեցութիւն ըրաւ եւ որոշեցին որ Եւրոպա երթալու մարդիկները շուտով ճամբայ ելլեն:

## Ը.

Բանալին մէջ ապստամբութեան մը ին ձափի: — Գորգէզ եւ նաւապարտիզը կ'այրի եւ ճամբայ կ'ելլէ:

Գորգէզ իր ապագայ ապահովութիւնը հոգալու ժամանակ՝ մէկէն ուրիշ վտանգ մը վրայ հասաւ: Քանի մը զինուոր մէկ քանի նաւավարի հետ խօսք մէկ ըրած էին որ նաւերէն մէկուն տիրեն ու Գուպա փախչելով ամէն բան Վելասկուէզին իմացընեն, որ Եւրոպա գացողներն ալ կարող ըլլայ արգելել: Աս դաւակցութիւնը շատ գաղտնի մնացած էր եւ հազիւ ի գործ դրուելէն քանի մը ժամ յառաջ իմա-

ցուեցաւ : Խորհրդին մէջ գտնուողներէն Գորիս անու-  
նով մէկը, որ արդէն նաւ մտնելու կ'երթար, կամ  
վախնալով որ իրենք ճամբայ չէլած՝ կ'իմացուի, կամ  
ըրածին վրայ զղջալով՝ պատճառանքով մը իր ըն-  
կերներէն հեռացաւ եւ վազեց բանը Գորդէզին ի-  
մացուց : Ժամանակ կորսընցընելու չէր ի գար . Սպա-  
րապետն անմիջապէս գաղտուկ մարդ խաւրեց, նաւը  
կոխել տուաւ, մէջինները բռնեց, որոնք արդէն  
ճամբայ ելլելու կը պատրաստուէին : Շուտ մը դա-  
տաստաննին կտրուեցաւ . Էսգուտերոյ եւ Սենդենոյ,  
որոնք դաւաւկցութեան գլխաւորներն էին, մահուան  
պատիժ կրեցին . ղեկաւարը ոտքը կտրուելու, նաւազ-  
ներէն երկուքն ալ խարազանով ձաղկուելու դատա-  
պարտուեցան : Մնացածներուն՝ որոնք առջիններուն  
խօսքերէն խաբուած էին, թողութիւն տրուեցաւ :  
Գորդէզին՝ շատերուն թողութիւն տալուն մէկ պատ-  
ճառն ալ ան էր, որ ղինուորներուն թիւը չքիչնայ :  
Բայց խռովարարներուն յանդգնութենէն ու խօսա-  
կցութիւններէն իմացաւ որ երկպառակութեան հո-  
գին բոլորովին դադրած չէ : Աս գաղտնի դաւաճա-  
նութիւնները՝ թէպէտ չէին կրնար իրեն իշխանու-  
թիւնն ոչընչացընել, բայց իր միտքը դրածներուն  
կրնային արդեւէք ըլլաւ ու զօրութիւնը տկարացընել .  
անոր համար ամենայն խոհեմութեամբ ու աշաղջու-  
թեամբ իր զօրաց դաւաճանութիւններէն զգուշա-  
նալու սկսաւ ու յայտնի թշնամիներէն աւելի՝ անոնց-  
մէ կը վախնար : Ստոյգ է Ալեքսակուէզին կողմնակից-  
ները քիչուոր էին, բայց միշտ իրենց միտքը դրածն  
յաջողցընելու կը ջանային . կրնար անանկ մէկ առիթ  
մը պատահիլ, որ անոնց նենգութեամբը՝ բոլոր իր  
յոյսերն ոչընչանան ու իր արշաւանքներուն պտուղէն  
զրկուի : Գորդէզ առ վտանգներուն առջեւն առնե-  
լու ստիպողական հարկը տեսնելով՝ ուզեց անանկ  
միջոց մ'ի գործ դնել, որով իր զօրաց՝ ուզած ժա-



մանակնին իրենց հայրենիքը դառնալն անկարելի  
 ըլլայ: Նոյն մաքով աս արտաքոյ կարգի մարդն՝ իր  
 նաւատորմիդն այրելու եւ ետ դառնալն անկարելի  
 ընելու խորհուրդը յղացաւ: Այսպէսով իր զօրու-  
 թիւնն ալ կ'աւելնար, որովհետեւ նաւերուն մէջի  
 մարդիկը ցամաքի զօրաց հետ կը միացընէր:

Բայց իր սովորական հնարագիտութեամբն ու-  
 զեց որ աս երեւելի խորհուրդը՝ եղանակաւ մը զի-  
 նուորներն իրեն առաջարկեն, որ չերեւայ թէ իրմէ  
 յառաջ եկած է: Իր խորհուրդը նախ շատ ներքին  
 բարեկամներուն հաղորդեց, որոնք իրենց հաւանու-  
 թիւնը տուին եւ զինուորներն ալ աս խորհուրդին  
 հաւանեցընելու պաշտօնն յանձն առին: Նաւաղներն  
 անոնց խօսքերէն ու առատաձեռնութենէն շահուե-  
 լով՝ հրատարակեցին որ նաւերը հին ու անգործա-  
 ծելի եղած են. ցամաքի զինուորներն ալ շատ ու-  
 րախացան, որովհետեւ ասով թուերնին կ'աւելնար:  
 Ուստի ամէնքը միաբանեցան որ նաւերուն ջնջուիլը  
 խնդրեն: Գորդեզ ալ սիրով հրաման տալով՝ նա-  
 ւերը ցամաք քաշեցին ու կոտորեցին. բայց առա-  
 գասաներն, երկաթներն եւ ուրիշ հարկաւոր ըլլա-  
 լու բաները հանեցին ու պահեցին: Արտաքոյ կարգի  
 քաջասրտութեամբ մը՝ որուն նմանը պատմութեանց  
 մէջ չկայ, կ'ըսէ Ռոպէրդան, 500 հոգի ամենայն  
 սիրով ու յօժարութեամբ օտար երկրի մը վրայ մնալ  
 յանձն առին, ուր որ զօրաւոր ու բազմաթիւ թշնա-  
 միներէ պաշարուած էին. եւ փախչելով վտանգէն  
 ազատելու միջոցներէն կամաւ իրենք զիրենք զրկե-  
 ցին. ուրիշ բանի մը չէին ապաւինած, բայց եթէ  
 իրենց քաջութեանն ու յարատեւութեանը:

Գորդեզ Վերա-Գրուզի մէջ ալ գործք մը շու-  
 նենալով՝ դէպ ի Մեքսիկոյ ճամբայ ելաւ: Իր բա-  
 նակը Զեմբոալա ժողովեց եւ հանդիսաւոր պատարա-  
 դէ մը վերջը՝ զօրահանդէս ըրաւ. բոլոր ունեցած-

նին էր 500 ստանաւոր, 15 ձիաւոր ու վեց թնդա-  
նօթ: Տեղացիներէն երկու հարիւր հոգի իրենց կահ  
կարասիքն ու պաշարը պիտի կրէին. զանոնք առող  
ցեղապետը՝ միանգամայն շատ զինուոր ալ տուաւ.  
Բայց Գորգէզ մէջերնէն միայն 400 հոգի ընտրեց:  
Նոյնպէս ուրիշ քառասուն ազնուական ալ հետն ա-  
ռաւ իբրեւ պատանդ, որպէս զի իրենց մեծին հա-  
ւատարմութիւնը հաստատուն ըլլայ: Ասոր հրա-  
մայրուեցաւ որ Էսգալենդէին հնազանդի, որն որ Աե-  
րա-Գրուզ պիտի մնար, 150 հոգի պահապան զօրքով՝  
որոնց տարիքը կամ հիւանդութիւնը՝ զիրենք աշխա-  
տալի գործքերու անյարմար կ'ընէին:

Քիչ մը վերջը Էսգալենդէ Գորգէզին մարդ խաւ-  
րեց իմացուց որ սպանիացի նաւ մ'եկած է, որուն  
հետ դեռ երթեւեկութիւն չեղաւ: Սպարապետն  
իսկզբան մտածեց որ գուցէ Աելասկուէզ զօրք խաւ-  
րած ըլլայ. բանն աղէկ մը իմանալու համար՝ զօրաց  
հոգն Ալուարատոյին ու Սանտովալին յանձնելով՝  
ինք քանի մը ձիաւորով ճամբայ ելաւ: Աերա-Գրուզ  
հասնելով՝ տեսաւ որ նաւը ցամաքէն հեռուկէկ կե-  
ցած էր: Քիչ մը ետքը չորս սպանիացիք եկան, ո-  
րոնցմէ մէկը գրագիր մըն էր, իսկ մէկալները նոյն  
գրագրին՝ իր նաւապետին անուամբը՝ Գորգէզին տա-  
լու յայտարարութեան վկայ ըլլալու համար մէկտեղ  
եկած էին: Յայտարարութիւնն աս էր. Փրանկիսկոս  
տէ Աարայ, Ճամայիգայի կառավարը, երկիր գտնելու  
եւ դաղթականութիւններ հաստատելու թագաւորէն  
հրաման ունենալով՝ Ալոնդոյին եւ Բինետային հրա-  
մանատարութեամբը 260 սպանիացի զինուորով երեք  
նաւ պատրաստած է: Եւ որովհետեւ իրենք ան ծո-  
վեզերքին վրայ հաստատուիլ կ'ուզեն, անոր համար  
իրեն Իզգարարութիւն կ'ընեն ու կը հրամայեն որ  
նոյն կողմերը չտարածուի: Գորգէզ պատասխան տու-  
աւ թէ՛ Նաւապետին հետ խօսակցութիւն ընելու եւ

գաշինք դնելու պատրաստ եմ. բայց յայտարարու-  
թիւնը չեմ ընդունիր: Գրագիրը բիրտ եղանակաւ մը  
դեմ դրաւ: Ան ատեն Գորդէզ վիաներն ու գրագի-  
րը մէկտեղ բռնել տուաւ, եւ ինք բոլոր գիշեր աւա-  
ղակցաններուն ետեւը պահուրտեցաւ ու սպասեց որ  
եթէ Կարային զինուորներն իրենց ընկերները փրն-  
տելու համար նաւէն գուրս կ'ելլեն, մէկէն վրանին  
հասնելով բռնէ եւ համոզէ որ իրեն հետ միանան:  
Աս հնարքը չյաջողելով՝ ուրիշ մը բանեցուց. իր  
զինուորներէն չորս հոգւոյ՝ բռնած մարդիկներուն  
զգեստը հագցուց: Ասոնց նշաններէն նաւուն մար-  
դիկները խաբուելով՝ ծովը մակոյկ մ'իջեցուցին ու  
մէջը 15 հոգի մտած՝ սկսան դէպ ի ցամաք գալ:  
Մէջերնէն միայն երեք հոգի գուրս ելան ու շուտ  
մը բռնուեցան, իսկ մէկալներն ուժով թի քաշելով՝  
նաւերնին դարձան: Գորդէզ ալ Չեմբոպլա դարձաւ՝  
իր ըրած ճամբորդութեան վրայ ուրախանալով, ու-  
րովհետեւ եօթը զինուոր ստացած էր:

() Գոսպտոսի 16ին բանակը ճամբայ ելաւ դէպ ի  
Դլասգալա, որուն բնակիչքը Չեմբոպլացուց հին  
բարեկամներն էին եւ ցեղապետին ըսածին նայելով՝  
Մեքսիկացուց հետ միշտ պատերազմ կ'ընէին: Բա-  
նակը քանի մը գեղերէ անցնելով՝ աղէկ ընդունե-  
լութիւն գտաւ: Ասկից սկսեալ՝ Սպանիացիք իրենց  
կրելու դժուարութեանց ու աշխատութեանց ճաշակն  
առնելու սկսան. երեք օր շարունակ լեռներու մէջ  
գահապէժ վճերով պաշարուած նեղ ճամբաներէ ան-  
ցան. անդադար անձրեւներէն պատճառած ցուրտն  
ալ սաստիկ էր: Չինուորներն ամենեւին ծառ մը  
չգտնելով, որ գիշերները պատասպարուելու համար  
խղեր շինեն, բայ օդի եւ խոնաւ գետնի վրայ պառ-  
կելու կը ստիպուէին: Վերջապէս պաշարի պակասու-  
թիւնն ալ իրենց վիճակին ամենէն սաստիկ տան-  
ջանքն սկսաւ ըլլալ: Բայց երբ որ ան լեռանց գո-

տիներուն կատարը հասան, բնութիւնը բոլորովին փոխուեցաւ. առջեւնին ընդարձակ ու աղէկ մշակած դաշտ մը բացուեցաւ եւ հեռուն ալ գեղեցիկ քաղաք մը: Աս տեսնելով՝ զինուորք բոլոր կրած աշխատութիւննին մոռցան եւ սկսան արտաքոյ կարգի ուրախութիւն մը ցուցնել:

Գորդէզ Զոգողլայի ցեղապետին մարդ խրկեց իր գալուստն իմացուց: Ցեղապետը շուտ մը բազմութեամբ գիմացն ելաւ. բայց իր քաղաքավարական ձեւերուն մէջ՝ կը տեսնուէր որ իր վարմունքը բռնի ու ակամայ է: Գորդէզ զինքը քաղցրութեամբ բայց միանգամայն վեհութեամբ մ'ընդունեցաւ. եւ յուսալով որ գուցէ ան ալ Մոնղեզու մային դէմ ատելութիւն մ'ունենայ, հարցուց թէ արդեօք անոր հպատակն է: Աշխարհքիս վրայ կրնայ մարդ գըտնուիլ, որ անոր կամ հպատակը կամ հարկատուն չլլայ, պատասխանեց ցեղապետը: Գորդէզ ծիծաղելով մ'ըսաւ թէ Զոգողլացիք աշխարհքիս քիչ ծանօթութիւն ունին եղեր. որովհետեւ Սպանիացիք անանկ զօրաւոր թագաւորի մը հպատակ են, որուն հարկատու իշխաններուն մէջ՝ Մոնղեզու մայէն շատ աւելի զօրաւորները կան: Ցեղապետն աւելի ծանրութեամբ մ'ըսաւ. Մեր ճանչցած իշխաններուն մէջ՝ Մոնղեզու ման ամենէն զօրաւորն է. անոր իշխանութեան հնազանդող գաւառներուն անունը մէկ կը չի կրնար միտքը պահել. իր կառավարութեան կենդրոնն՝ անառիկ քաղքի մը մէջ, ջրերէ պաշարուած տեղ մըն է, եւ միայն շարժական կամուրջներով քաղաքը ցամաքին հետ հաղորդութիւն ունի: Աերջապէս իր տիրոջը հարստութիւնները, զօրքն ու ապստամբներուն պատիժը Գորդէզին առջեւը նկարագրեց: Ամէն տարի, ըսաւ, իրեն դէմ ապստամբողներէն ու իր թշնամիներէն քսան հազար հոգուոյ չափ կուռքերուն կը զստին: Գորդէզ բարկութեամբ

մը պատասխանելով՝ ցուցուց որ ինք աս բաներէն ամենեւին չի վախնար . իր զօրաց զօրութիւնը գովեց եւ զրուցեց թէ Ասոնցմէ ամենէն տկարն ամբողջ բանակի դէմ կրնայ դնել : Ես իմ սուրս ամենեւին չեմ գործածեր , ըսաւ , քանի որ մէկն ինծի դէմ չիյարձակիր . բայց երբ որ մէյ մը սուրս քաշելու ըլլամ , առջեւս եկածը կը ջարդեմ կը կործանեմ : Բնութիւնն ինծի օգնելու համար հրէշներ ալ կը ծնանի (մասովը ձիաւորները ցուցուց) . Աստուած ալ որոտումներով ու կայծակներով ինծի օգնական կ'ըլլայ , որովհետեւ իր դատը՝ պիտի պաշտպանեմ ձեր սուտ կրօնին ու մարդ զսէլու գէշ սովորութեան դէմ , որն որ դուն ձեր թագաւորին մեծագործութեանց կարգը կը դնես : Ետքէն եռանդով մը դէպ իր զօրքերուն դառնալով՝ Բարեկամք , ըսաւ անոնց՝ բարձր ու որոշ ձայնով մը , ահաւասիկ մեր փնտռածը . առջեւնիս մեծ վտանգներ ու մեծ հարստութիւններ կան : Հարստութիւնը մեր բախտը կ'ազնուացընէ . վտանգները մեր փառքը կ'աւելցընեն : Աս խօսքերն՝ իր միտքը դրած արդիւնքը կատարեցին . ցեղապետը լուց եւ Սպանիացիներէն սաստիկ վախնալ ու սարսափ մը ցուցուց . իրենց առատ պաշար հողաց : Սպանիացիք հինգ օր քաղքին մէջ մնացին եւ միշտ ընտանութիւն ու բարեկամութիւն գտան , որն որ աւելի տեղացւոց վախէն յառաջ կու գար : Ամէն տեսածնին աչքերնուն նոր ու բնութենէ վեր երեւալով՝ Սպանիացւոց վրայ բարձր դաղափար մը ստացան : Անոնց ահաւոր ու վսեմ դէմքը , ձիերուն ընտանութիւնը , հրացաններու ճայթիւնը , զգեստներն ու ղէնքերը՝ բնակչաց առջին մէյ մէկ զարմանալու եւ վախնալու առարկաներ էին : Ցեղապետն ամենէն աւելի զարմացընողն ու վախցընողն աս էր , որ Սպանիացիք՝ Մոնդեգու մային զօրութեան վրայ իր խօսածներէն չվախնալով , անոր հետ պատե-

րազմելու պատրաստ կ'երեւային . անոր համար անոնք իր աչքին մէջմէկ աստուծոյ պէս կ'երեւային :

Գորդէզ ցեղապետին խորհուրդ հարցուց թէ որ ճամբէն պէտք է երթալ : Ան ալ Գորուլային ճամբան ցուցուց : Նոյն կողման երկիրը հարուստ ու բերրի է , բնակիչքը երկրագործութեան ու վաճառականութեան ղբաղած են եւ զձեզ սիրով կ'ընդունին , բնաւ : Բայց Ձեմբոալացիք հակառակ կարծիք ունէին : Գորուլացիք խաբեբայ են , անոնց մարդ չիկրնար վրատահիլ , կ'ըսէին . իրենց մայրաքաղաքին մէջն ալ Մեքօսիկացի բազմաթիւ պահապան կայ : Աոր հակառակ Գլասգալայի գաւառն աւելի բազմամարդ է , բնակիչքն աւելի աշխոյժ եւ իրօք ալ Մոնդեզումային հետ պատերազմի մէջ են , իսկ մեզի եւ Գորդոնագլիներուն հետ դաշնակից են : Գորդէզ աս տարակուսանաց մէջ՝ աւելի իր դաշնակցաց կարծիքին հետեւելն աղէկ սեպեց . անոր համար իր զօրացը հրաման տուաւ որ Գլասգալա երթալու պատրաստուին :

ԹՎ .

Գլասգալացոց որե՛մ էլ պատերազմին :

Գլասգալայի ընդարձակ ու բազմամարդ գաւառը՝ Սպանիացւոց մինչեւ նոյն ատեն տեսած տեղերէն ամենէն աւելի ծաղկածն էր , արուեստներն ալ աւելի յառաջ դացած էին : Նոյն երկրին մէջ շատ քաղաքներ կային , որոնք առհասարակ լեբանց վրայ շինուած էին , որով թէ թշնամիներէն դիւբաւ կրնային զիրենք պաշտպանել եւ թէ դաշտերու վրայ ալ մշակելու շատ տեղ կ'ունենային : Ի վերայ այսր ամենայնի գլխաւորաբար որսով կ'ապրէին . շարունակ որսի երթալու վարժութիւնն՝ իրենց բնական քաջութիւնն ու ազատասիրութիւնն աւելցուցած ըլլալով՝ Մոնդեզումային հետ միշտ պատերազմի մէջ էին :

Յառաջագոյն թագաւոր ունէին, ետքէն թագաւորութիւնը վերցրնելով՝ դաշնակից հասարակապետութիւն մը հաստատեցին, բոլոր երկիրը զանազան մաս բաժնեցին, որոնց ամէն մէկուն վրայ ժողովրդէն ընտրուած մէյ մէկ կառավար կը կենար. եւ աս կառավարներէն կը կազմուէր Գլխագալայի ծերակոյտը:

Գորդէզ աս ազգին ազատասէր ու պատերազմասէր բնութիւնը տեսնելով, մեծ յոյս ունեցաւ որ Մոնղեզու մային բռնաւորութենէ ազատելու մտօք՝ զինքը սիրով կ'ընդունին եւ իրեն օգտակար կ'ըլլան: Աս բանս գլուխ հանելու համար՝ երեւելի Զեմբուլը ցիններէն չորս հոգի դեսպանի զգեստներով անոնց խրկեց. աջ ձեռքերնին փետուրներով զարդարուած լայն նետ մը բռնած, ձախ ձեռքերնին ալ վահանի ձեւով մեծ խեցի մ'առած էին, վրան նոյնպէս փետուրներով զարդարուած: Փետուրներուն գոյները՝ դեսպանութեան որպիսութիւնը կը յայտնէին. ճերմակ փետուրները՝ խաղաղութեան, իսկ կարմիրները՝ պատերազմի նշանակ էին: Ասոնք ծերակուտին առջեւն ելլելով՝ իրենց դեսպանութեան պատճառը յայտնեցին, որ էր հասարակապետութեան երկիրներէն անցնիլ: Աս առաջարկութիւնը մերժուեցաւ. եւ չէ թէ միայն դեսպաններուն յարգութիւնը չպահեցին, հապա նաեւ բռնեցին ու իրենց աստուածներուն զոհել ուզեցին: Բայց դեսպանները՝ կէս մը խաբելով, կէս մը կաշառքով՝ պահապաններուն ձեռքէն ազատեցան, եւ եկան Գորդէզին իմացուցին թէ Գլխագալայցիք մտքերնին դրած են որ Սպանիացիները ջարդեն, զանոնք ընդունողներն ալ պատժեն. եւ աս վախճանաւ մեծ բանակ մը կը պատրաստեն:

Աս անակնկալ լուրը՝ զԳորդէզ արտաքոյ կարգի զարմացուց. Գլխագալայցւոց աս ընթացքին չէր կրնար մեկնութիւն մը տալ: Ի վերայ այսր ամենայնի առանկ ընելուն բաւական պատճառ ունէին: Աս

ազէա, կասկածոտ եւ իրենց ազրտութեան վրէժ-  
 խնդիր ժողովուրդը կը կարծէր որ Սպանիացիք Մոն-  
 դեզումային հետ գաղտուկ դաշնակից են, թէպէտեւ  
 անոնք հակառակը կը հաստատէին. Սպանիացւոց  
 Մեքսիկոյ երթալու սաստիկ բաղձանքն ու հետեր-  
 նին եղած Մեքսիկացիք՝ զիրենք աս կարծեաց մէջ  
 կը հաստատէին: Գարձեալ կրօններնուն վրայ սաս-  
 տիկ նախանձախնդիր ըլլալով, Սպանիացւոց Ձեմբո-  
 ալլայի կուռքերը կործանելը՝ զիրենք կը վշտացընէր.  
 եւ զանոնք նոյն աստուածոց զոհելով՝ իրենց եղած  
 թշնամանաց վրէժը խնդրելու կը բաղձային: Մէկալ  
 կողմանէ ալ օտարականաց քիչուորութիւնը տեսնե-  
 լով՝ կը կարծէին որ զօրաւոր ու բազմաթիւ բանակով  
 մը զանոնք դիւրաւ ցիրուցան կրնան ընել:

Գորդէզ Օգոստոսի 30ին Դլասգալայի երկիր-  
 ները մտաւ եւ որովհետեւ ամէն բոպէ պատերազ-  
 մելու առթի մէջ կրնար գտնուիլ, անոր համար իր  
 զօրքերը ճակատեցուց: Կաստիլիայի դրօշը պատե-  
 րազմին ճակատը կը ծածանէր. Սպարապետը դրօշը  
 ձեռքն առաւ եւ ամուր ձայնով մը կանչեց. Սպա-  
 նիացիք, համարձակութեամբ սուրբ խաչին դրօշուն  
 հետեւինք, որն որ մեզի յաղթութեան առաջնորդ  
 պիտ'որ ըլլայ: Բոլոր զօրքն ալ կրկնեց. Յառաջ  
 երթանք, Աստուծոյ սուրբ անուան առաջնորդու-  
 թեամբը յառաջ վազենք, որուն վրայ բոլոր մեր  
 վստահութիւնն ու յոյսը դրած ենք: Երկու փարսախս  
 տեղ քալելէն ետքը՝ բանակն ինն ոտնաչափ բար-  
 ձրութեամբ պարսպի մը առջեւ հասաւ, որն որ խոշոր  
 քարերով ու շաղախով հիւսուած էր. մուտքը ծուռ  
 եւ նեղ, բայց ազատ թող արուած էր: Գորդէզ  
 շատ ուրախացաւ որ Դլասգալացիք ան անցքը չէին  
 բռնած. գուցէ ժամանակնին չհասնելով կամ թէ  
 թշնամւոյն հետ արձակ դաշտի վրայ պատերազմիլ  
 ուզելով՝ նոյն դիրքը չէին բռնած, որպէս զի իրենց



բոլոր յոժը կարող ըլլան բանեցընել: Արդ Սպանիացիք աս կիրճէն անցան եւ կարգով կանոնով աւելի ընդարձակ տեղ մը հասան: Յառաջապահ ձիաւորները ձայն տուին ու քանի մը ղինեալ հոգի տեսնելին իմացուցին: Քիչ մը ետքը թեթեւ կռիւ մը սկսաւ, որն որ շուտ մը աւելի կարգաւորեալ պատերազմ մը ձեւացաւ, որովհետեւ երեք հազար հոգի դարանքէ մը դուրս ելլելով՝ վրանին նետերու անձրեւ մը թափեցին: Հետեւակ զօրքն սկսաւ յարձակիլ, որուն թշնամիք սաստիկ քաջութեամբ դէմ դրին. բայց թնդանօթի առաջին հարուածը՝ շատ Գլասգալացի մէկտեղ վիրաւորելով եւ որոտալուն ձայնէն շատերը սարսափած գետինն իյնալով՝ Սպանիացիք անանկ սաստիկութեամբ մը թշնամեաց ետեւէն ինկան, որ անոնք փախչելու ստիպուեցան:

Գորդէղ տեսնելով որ ասոնք իր մինչեւ նոյն ատեն ունեցած թշնամիներէն շատ աւելի քաջ պատերազմող էին, զգուշութիւններն աւելցուց որ չըլլայ թէ չկարծուած ժամանակ մէկէն ի մէկ վրանին յարձակին: Գիշերը խաղաղութեամբ անցուցին, բայց երկրորդ օրը վեց հազար հոգիէ բաղկացած երկու գունդ իրենց մօտեցան եւ շուտ մը կռիւն սկսաւ: Գլասգալացիք իրենց նետերը չհասնելու չափ հեռուէն նետեցին եւ շուտ մը սկսան ետ ետ երթալ: Գորդէղ թէպէտ անոնց միտքն իմացաւ, բայց բանի տեղ չգնելով՝ բոլոր իր զօրքն առած՝ պատերազմի կարգով յառաջ քալեցուց եւ բլրի մը գլուխ ելաւ, ուսկից թշնամեաց ամբողջ բանակն աղէկ կը տեսնուէր: Ար կարծուի որ քառասուն հազարի մօտ զէնքով մարդ կար: Գետնի հողին թուրութիւնը՝ ձիաւորաց շարժմանն արգելք կ'ըլլար, ի վերայ այսր ամենայնի հարկ էր լերան մէկալ կողմանէ վար իջնալ, թէպէտ եւ ամէն դիաց վրանին անձրեւի պէս նետեր ու քարեր կը թափէին: Բայց մէյ մը որ շի-

տակ դաշտի վրայ իջան, ձիերուն ոտքն արձակուեցաւ, թնդանօթներն ալ իրենց ահագին որոտումը սկսան: Պատերազմը մէկ ժամէն աւելի տեւեց, եւ միայն Գորդէզին վարպետութենէն ու աչալըջութենէն եզաւ որ թշնամիք իրենց այնչափ բազմութեամբը չկրցան իրեն բանակը պաշարել: Իր զօրքերը քառակուսի ձեւի խօթեց եւ այնպէսով կրցաւ թշնամեաց դէմ դիմանալ. իսկ ձիաւորները սաստիկ արագութեամբ իրենց բանակին աւելի տկարացած մասերուն օգնութեան կը հասնէին: Մէկէն ի մէկ զարհուրելի աղաղակները դադրեցան. սկսաւ եղջիւրներու ձայներ լսուիլ, որոնք զօրաց ետ դառնալուն նշան կու տային: Ասոր վրայ թշնամին սկսաւ դէպ ի քաղաք քաշուիլ. իսկ Սպանիացիք կամ շատ յոգնած ըլլալով, կամ թշնամիներն հալածելը խոհեմութիւն չտեսնելով՝ յառաջ չգացին: Գլասդալացիք շատ մարդ կորսընցուցին, բայց ճիշդ համրանքը դիտնալն անկարելի էր, որովհետեւ մեռնողներն ու վերաւորողները շուտ մը կը վերցընէին կը տանէին: Սպանիացիք քանի մը դերի բռնեցին, որոնց մէջ երկու գլխաւորք կային. իսկ իրենց կողմանէ տառնուհիւղ հոգի վերաւորեցան եւ մինակ մէկ հոգի մեռաւ. նոյնպէս ձի մ'ալ կորսընցուցին, որուն գլուխը թշնամիք յաղթանակաւ տարին ծերակուտին ընծայեցին:

Պատերազմէն ետքը Գորդէզ նորէն խաղաղութեան առաջարկութիւն ըրաւ: Չէ թէ միայն աս պատերազմներով իր զօրութիւնը պիտի տկարանար, հապա նաեւ կրնար ըլլալ որ Գլասդալացիք ուրիշ ցեղերու հետ դաշնակցութիւն ընելով զօրանային: Եւ եթէ մէկ անգամ մը միայն յաղթուելու ըլլար, ան ատեն թշնամիք տեսնելով որ Սպանիացիք ալ իրենց պէս մարդիկ են, կը սկսէին զանոնք արհամարհել ու իրենց բազմութեամբը կրնային վերջապէս յաղթել: Թէպէտ ինք իր հրագէններովն անոնցմէ

շատ վեր էր, բայց անոնց ալ քաջասրտութիւնն՝ ի-  
 րեններուն հաւասար, իսկ բազմութիւնը շատ աւելի  
 էր: Անոր համար Զանաց Գորդէզ որ խաղաղութիւն  
 ընելով՝ պատերազմի վտանգներէն ազատի. ուստի  
 ան երկու գլխաւոր գերիներն ետ խրկեց որ ծերա-  
 կուտին խաղաղութեան առաջարկութիւն ընեն: Թըշ-  
 նամեաց սպարապետը պատասխան տուաւ թէ խա-  
 զաղութիւն ան առեն կ'ընենք՝ երբ որ օտարականաց  
 սիրան ու արիւնը մեր աստուածներուն զոհ կը մա-  
 տուցանենք եւ իրենց միտք մեր տօներուն կը ծա-  
 ուայէ: Աս սաստիկ պատասխանը Գորդէզին յոյսերն  
 ոչընչացուց. ուստի նոր յարձակման պատրաստուե-  
 ցաւ: Գիշերը զօրքերը խոստովանեցան, սրբութիւն  
 առին եւ պատրաստուեցան որ կամ յաղթեն կամ  
 մեռնին: Սեպտեմբերի 5ին, առաջին պատերազմէն  
 երեք օր վերջը, ամէնքը նոյն իսկ վերաւորք ալ ճա-  
 կատած պատրաստուած էին: Թշնամեաց բանակը  
 հինգ գունդ բաժնուած էր եւ ամէնքը մէկանց՝ որ  
 յիսուն հազարի շափ կ'երեւային, բոլոր դաշտին վրայ  
 տարածուած էին. բանակին կենդրոնը դրօշի տեղ՝  
 ոսկի արծիւ մը կանգնած էին. ասիկայ իրենց նուի-  
 րական նշանն էր որ շատ հարկաւոր եղած ատենները  
 կը գործածէին: Պատերազմն ըստ սովորութեան՝ ան-  
 թիւ անհամար նետեր նետելով սկսաւ. Սպանիացւոց  
 կրակը սաստիկ կտորած կ'ընէր, բայց պարպուած  
 սեղերը շուտ մը նոր գնդերով կը լեցուէին. պատե-  
 րազմը միշտ աւելի կատողութեամբ յառաջ կ'երթար:  
 Աս եղանակաւ կռիւը շատ երկայն տեւեց, երկու  
 կողմանէ ալ հաւասար քաջութեամբ. վերջապէս  
 Գլասգաւրացիք տեսնելով որ ասանկով խիստ շատ  
 մարդ կը կորսընցընեն, ամէնքը մէկանց հեղեղի պէս  
 խառն վազելով ու սոսկալի ձայներ հանելով՝ Սպա-  
 նիացւոց վրայ յարձակեցան, սրնք աս յարձակման  
 սաստիկութեան չկրնալով դիմանալ, կարգերն իրարմէ

բաժնուեցան : Զինուորներուն ցուցրցած քաջութիւնը , պաշտօնակալաց արթնութիւնն ու Գորդէզին ճարտարութիւնը՝ հազիւ կրցան գնդերը նորէն միացնել . մեծ աշխատութեամբ զինուորները կարգի մտան եւ կատաղի ձիաւորներէն ալ մեծապէս օգնութիւն գտնելով՝ աս յուսահատական յարձակման դէմ կրցան իրենք զիրենք բռնել : Մէկ պարագայ մը Սպանիացւոց շատ օգտակար եղաւ . Գլասգալացւոց ամբողջ մէկ գումարտակը պատերազմէն մէկդի քաշուեցաւ . որովհետեւ ան գումարտակին գլխաւորը՝ բանակին հրամանատարէն մեծ թշնամանք մը կրած ըլլալով՝ վրէժ առնելու համար զինքը թողուց : Քիչ մը ետքը պատերազմողներուն եռանդը պաղեցաւ , վախը զիրենք պատեց եւ ետ քաշուելու պարտաւորեցան :

Գորդէզ գարձեալ մինակ մէկ հոգի կորսնցուց , բայց եօթանասուն վիրաւոր ունեցած էր եւ ձիերուն ամէնն ալ ծանր կամ թեթեւ վէրք առած էին : Գլասգալացւոց քարէ զէնքերը , փայտէ նիզակներն ու անոնց նման ուրիշ տկար կազմածները՝ մերկ Ամերիկացւոց դէմ կռուելու համար բաւական կ'ըլլային . բայց պղնձի թելէ հիւսուած զրահներով ամրացեալ Սպանիացւոց ամենեւին չէին ազդեր , եւ հազիւ թէ թեթեւ մը կը վիրաւորէին . ուր Սպանիացիք իրենց զէնքերովն անդադար ջարդ կու տային : Եթէ որ Գլասգալացիք պատերազմելու ատեն՝ ինկողները վերջընելու հոգ չընէին , աւելի օգտիւ կրնային պատերազմիլ . բայց անոնց ալ զբաղելով՝ կարգերնին չէին կրնար բռնել , եւ անոնց իրենց դիակները վերջընելու ժամանակ՝ Սպանիացիք ողջերն ալ կը վիրաւորէին :

Երկրորդ օրը Գորդէզ ծերակուտին նորէն պատգամաւոր խրկեց , եւ իրենց երկրէն անցնելու հրաման ուղեց , սպառնալով միանգամայն որ եթէ խնդիրքը մերժելու ըլլան նէ՝ բոլոր երկիրը կ'ապականէ : Բայց թշնամիք՝ թէպէտ ըրած կորուստներուն

վրայ շատ հոգ ու ցաւ ունէին, սակայն եւ այնպէս իրենց մտացը վրայ յամառեալ ըլլալով՝ ոչինչ եղանակաւ խաղաղութեան առաջարկութիւնն ընդունիլ կ'ուզէին, յուսալով որ բախտն իրենց կողմը կը գտնայ, մանաւանդ թէ որ թշնամեաց զէնքերն անգործածելի ընելու հնարք մը կը գտնեն: Քրմերը փողվեցին ու սկսան հարցընել թէ ինչո՞ւ այնչափ բազմութեամբ՝ չեն կրնար թշնամեաց յաղթել, եւ թէ ի՞նչ եղանակաւ անոնց հետ աւելի յաջողութեամբ կրնան պատերազմիլ: Քրմերը զանազան մարդազոհներ եւ դիւթական արարողութիւններ ընելէն ետեւ՝ ըսին թէ թշնամիք արեւու որդիք ըլլալով՝ ցորեկ ատեն անոնց յաղթելն անկարելի է, որովհետեւ իրենց հօրը աչքին առջեւն ըլլալով՝ անկից պաշտպանութիւն կը գտնեն. բայց գիշերը, արեւ չեղած ատեն, դիւրութեամբ կրնաք զանոնք ջնջել: Աս մեկնութիւնը Գլասգալացիները համոզեց եւ իրենց զինուորական սովորութեան դէմ՝ գիշերուան մթին Սպանիացեոց վրայ յարձակելու պատրաստուեցան: Արեւը մտնելուն պէս՝ պատերազմը պիտի սկսէր: Բայց Գորդէզ արդէն միշտ զգուշութեան մէջ էր. տեսնելուն պէս որ թրշնամիները շարժման մէջ են, զօրքերը զէնքի կանչեց: Շուտ մը ամէնքը զէնքի վազեցին եւ կարգի մտնելով՝ թշնամեոյն դէմ շարուեցան: Ասոնք՝ որ կը կարծէին թէ Սպանիացիները տկար ու անզօր պիտ'որ գրտնեն, անոնց դէմ դնելը տեսնելով՝ շատ զարմացան: Լուսինը քիչ մը ետքը ելլելով՝ աս սաստիկ կոտորածի տեսարանն ազօտ լուսով մը լուսաւորեց. քիչ ատենուան մէջ թշնամիք կատարեալ յաղթուեցան, եւ իրենց մեռելներն ու վիրաւորները հետերնին չկրնալով տանիլ, գաշտին վրայ թող տուին:

Աս յաղթութեամբ պատերազմին վիճակն որոշուեցաւ. Գլասգալացիք խաղաղութիւն խնդրելու ստիպուեցան: Իրենց վերջին փորձովը կատարեալ

Համոզուած էին որ օտարականները դերագոյն էակներ են եւ միանդամայն անյաղժեւի . իրենց քրմերուն բարկացան՝ զիրենք խաբեշուն Համար, եւ մէջերնէն երկուքը զո՛հ մատուցին : Ժողովուրդն ալ աս դժբախտ դէպքերէն վախցած ըլլալով՝ սկսաւ արտարնջել : Ծերակոյտը Գորդէզին հետ խօսակցութիւն ընելու հարկը տեսնելով՝ զօրապետին հրաման խրկեց որ թշնամութիւնները դադարեցնէ . եւ Գորդէզին դեռ պան խաւրեց : Ասոնք եկան խաղաղութիւն առաջարկեցին : Եթէ վայրենի ու անգութ աստուածոց բնութիւնն ունիք նէ, ըսին, ձեզի հինգ գերի կը մատուցանենք, որ անոնց արիւնը խմէք ու միսն ուտէք . եթէ աւելի քաղցր աստուածոց կարգն էք, աս փետուրներու եւ ծխանելիքներու պարգեւն ընդունեցէք . իսկ թէ որ մարդիկ էք, ահաւասիկ ապրելու համար միս ու պտուղ : Քիչ մը ետքը տեղացիներէն շատ մը մարդիկ եկան, որոնց առջեւէն հինգ ծեր կու գար : Ասոնք մեծ խոնարհութեամբ Գորդէզին ոտքն ինկան եւ հրապարակաւ ծանուցին որ անոր համար իրեն դէմ պատերազմեցան՝ որովհետեւ զինքը Մոնղէզումային դաշնակիցը կը կարծէին . բայց հիմակ սխալմունքնին ճանչնալով՝ կ'աղաչեն որ զիրենք իր պաշտպանութեան տակ առնէ : Գորդէզ իրենց պատասխան տուաւ թէ Իմ բաղձանքս միշտ ան էր որ պատերազմելէն դադրիմ եւ հետեւնիդ դաշնակից ու բարեկամ ըլլամ :



Գլխաւորի Բնակաց գրաստանաւիէնն ու պարիշը :

Սպանիացիք Սեպտեմբերի 23ին Գլխագալա քաղաքը մտան՝ նոյն հասարակապետութեան երկիրը մտնելէն 34 օր ետքը : Բնակիչները զիրենք շատ սիրով ընդունեցան : Պատերազմին գաղբիլը Սպանիացւոց խիստ հարկաւոր էր , որովհետեւ շատ խեղճ վիճակի մէջ կը գտնուէին . աւ քիչուոր բանակին՝ այնչափ հաղարաւոր թշնամեաց դէմ դնելու համար կրած աշխատութիւնը չափէն աւելի ծանր էր . աւ մէն իրիկուն զինուորաց կէսը պահպանութիւն կ'ընէր , քնացողներն ալ զինաւորեալ կը պառկէին , որպէս զի նշան մը տրուելուն պէս՝ կարող ըլլան աւուանց ժամանակ կորսընցընելու իրենց կարգը մտնել : Շատերը վիրաւորուած էին . ոմանք՝ որոնց մէջ էր նաեւ Գորդէզ , օգերուն փոփոխութենէն հիւանդացած էին , քանի մը հոգի ալ նոյն հիւանդութիւններով մեռած էին : Երբեմն կերակուրնին կը հատնէր եւ ամենէն հարկաւոր եղած բաներն ալ կը պակսէր . մինչեւ իրենց վէրքերը դարմանելու համար եղ չգտնելով՝ մեռած Ամերիկացւոց եղէն կը գործածէին : Աս սաստիկ նեղութենէն՝ զօրքերը սկսան տրանջալ եւ թշնամեաց բաղմութիւնն ու քաջասրտութիւնը տեսնելով՝ քիչ մնաց որ կը յուսահատէին : Գորդէզ իր բոլոր ճոխութեամբն ու սովորական ճարտարմտութեամբը հազիւ զօրաց վհատութեան առջեւը կրնար առնել ու իրենց թշնամեաց տկարութիւնը ցուցընելով՝ քաջալերել : Աս վհատութեան վրայ զօրքը Գլխագալացւոց հպատակելը լսելով ու քիչ մը ետքը յաղթանակաւ անոնց քաղաքը մտնելով՝ վախերնին բոլորովին ցրուեցաւ . աւ մէն կրած աշխատութիւննին մուցան եւ անանկ աւրիացան , որ մտքերնին դրին թէ անկէ ետեւ ամե-

նեւին Ամերիկայի ազգ մը իրենց զէնքերուն զօրութեան դէմ չիկրնար դնել :

Գորդէզ իր զօրքերուն հանդիստ տալու համար՝ 20 օր Գլասգալա մնաց , նոյն միջոցին միանգամայն իր նպատակին հասնելու հարկաւոր եղած գործքերուն պատաղեցաւ : Քաղքին մեծերուն հետ տեսնուելով՝ Մեքսիկոյի վիճակին ու Մանդեզումային բնութեան վրայ տեղեկութիւններ առաւ : Տեսնելով որ Գլասգալացիք՝ Մեքսիկացւոց արտաքոյ կարգի թշնամութիւն ունին , ուզեց աս բանս իր վախճանին բանեցընել , անոր համար ջանաց որ անոնց վստահութիւնը վաստակի : Ասիկա դիւրաւ ալ յաջողեցաւ , որովհետեւ Գլասգալացիք իրենց բնական թեթեւամտութեամբը , որն որ նաեւ ամէն վայրենի ազգերուն բնական է , արտաքոյ կարգի ատելութենէն՝ մէկէն ի մէկ սաստիկ սիրոյ ու բարեկամութեան փոխուած էին : Ամէն տեսած բաներնին զիրենք կ'ապշեցընէր . եւ մտքերնին դնելով որ օտարականք երկնային էակէ մը յառաջ եկած են , անոնց ամէն բաղձանքն անմիջապէս կը կատարէին : Ուստի ուզեցին որ Գորդէզին արշաւանքին՝ իրենց բոլոր հասարակապետութեան ուժովն օգնեն եւ անոր հետ մէկտեղ Մեքսիկոյ երթան :

Գորդէզ կրօնական պարտաւորութեանց ալ միտ դնել ուզելով՝ իր բնակարանին մէջ մատուռ մը կանգնած էր , ուր ամէն օր պատարագ կը մատուցուէր Գլասգալացւոց դիւաւորներուն առջեւ , որոնք յարգութեամբ եւ զարմացմամբ կը դիտէին ու հետաքրքրութեամբ ամէն արարողութիւններուն միտ կը դնէին եւ անոնց վրայ կը զարմանային : Գորդէզ աս իրենց յարգութիւնն ու զարմանքը տեսնելով՝ ուզեց զիրենք համոզել որ կռոց պաշտօնը թողուն եւ քրիստոնէից Աստուածը պաշտեն : Բայց անոնք իրենց նախնեացը կրօնին մէջ շատ յամառ ըլլալով՝ չէին



կրնար դիւրաւ իրենց կուռքերէն հրաժարիլ. միայն զոհելու համար պատրաստուած գերիներն ազատ թողաուին: Գորդէզ ասով գոհ չեղաւ, ուզեց որ իրենց կուռքերն ալ կործանեն, յուսալով որ Չեմբոսլա եղածին պէս հոս ալ կը յաջողի: Բայց իր ասանկ բռնութեամբ գործելն՝ անխոհեմութիւն ու անկարգ եռանդ էր, եւ եթէ Հայր Օլմետոն զինքը համոզցնելով ետ չկեցընէր, անշուշտ չափը շատ պիտ'որ անցընէր: Նոյն իմաստուն քահանան իրեն ցուցուց որ Չեմբոսլա ըրած բռնութիւնը գովելի բան մը չէր. սրովհետեւ աւետարանին վարդապետութեանցը համաձայն գործելու համար՝ ամէն բան ազատութեամբ ու սիրով, բարի օրինակով եւ համոզցընելով պիտի ըլլայ. Այսպիսի բռնութեամբ կրնաք, կ'ըսէր, կուռքերը կործանել, բայց ան բռնութեան դառն յիշատակը սրտերնուն մէջ կը մնայ ու զիրենք աւելի կը խտացընէ: Գորդէզ աս խօսքերէն համոզուեցաւ եւ ասուած խրատները մտիկ ընելով՝ իր նախանձախնդրութեան սաստկութիւնը չափաւորեց: Նոյն օրէն սկսեալ՝ կը ջանար զիրենք քաղցրութեամբ համոզել ու դարձի բերել. շատ անգամ խօսքի մէջ քրիստոնէական կրօնին աղէկութիւնները՝ կուսպաշտներուն անգութ ու անմտական սովորութիւններուն հետ կը համեմատէր, որպէս զի անոնց անպիտանութիւնը ցուցընէ:

Սպանիացիք Գլասգալա շմտած՝ Մոնդեզումային կողմանէ դեսպաններ եկած Գորդէզին իմացուցած էին որ թաղաւորը յանձն կ'առնէ հետերնին տեսնուիլ եւ իրենց խրատ կու տայ որ Գոլուլա երթան, ուր որ իրեն հրամանացը համեմատ սիրով ընդունելութիւն կը գտնեն: Արդ երբ որ զօրքերը բաւական հանգչեցան ու զօրացան, Գորդէզ Գոլուլա երթալու միտքը յայտնեց: Բայց նոր դաշնակիցներն աս խորհրդին սաստիկ դէմ դրին. Գոլուլացիք, կ'ըսէին,

խաբէբայ ազգ մըն են եւ Մոնղէզու մային հրամաններուն կուրօրէն կը հնազանդին: Սակայն Գորգէզ իր որոշմանը վրայ հաստատուն կեցաւ. մէյ մը՝ դեսպաններուն կամքը հաճելու համար, մէյ մ'ալ՝ իր դաշնակիցներուն ցուցընելու համար, որ անոնց աչքին զօրաւոր երեւցող թշնամիներէն՝ ինք ամենեւին չի վախնար: Ծերակուտէն իրեն տրուած զօրքերուն մէջէն ալ՝ միայն վեց հազար հոգի առաւ: Այսչափ քիչ զօրք առնելուն վախճանն ան էր՝ որ իր ընթացքին արգելք չըլլան. միանգամայն ան ալ կը դիտէր որ եթէ անոնք Գոլուլացւոյ կողմն անցնելու ըլլան նէ, ամենուն դէմ ալ պատերազմելու կարողութիւն ունենայ:

Գոլուլա քաղաքը՝ Գլասոզալայէն հինգ փարսախ հեռու էր եւ բոլոր Մեքսիկացւոյ նուիրական քաղաքն ու աստուածոց գլխաւոր բնակութեան տեղը կը սեպուէր: Հոս գլխաւոր ուխտատեղին էր եւ նոյն տեղը Մեքսիկոյէն աւելի մարդազոհ կ'ըլլար: Գուցէ Մոնղէզու մային՝ օտարականները հոն խրկելուն դիտաւորութիւնն աս ըլլայ որ աւելորդապաշտութեամբ կը կարծէր թէ ան քաղաքը նուիրական եւ աստուածոց սիրելի տեղ մ'ըլլալով՝ աստուածներուն բարկութիւնը գրգռի եւ ան յանդուգն մարդիկներէն իրենց վրէժն առնուն. կամ թէ հոնտեղը աստուածներուն աչքին առջեւ եւ անոնց պաշտպանութեամբն աւելի դիւրութեամբ կարող ըլլայ զանոնք ջարդել ու ջնջել:

Գորգէզ իրիկուան դէմ Գոլուլա մօտիկցաւ ու պզտիկ վտակի մը քով բանակ դրաւ, որովհետեւ քաղաքացւոց դիտաւորութիւնը չիմացած՝ գիշեր ատեն ներս մտնելը խելք չէր: Քիչ մը ետքը քրմերն ու քաղքին գլխաւորներն անոնց գալուստը բարեւելու եկան եւ իրենց քաղաքն ընդունելու յօժարութիւննին ցուցուցին. Բայց դաշնակից զօրքը չէնք

կրնար ներս ընդունիլ, ըսին, որովհետեւ մեր հին թշնամիներն են: Գորգէղ իրենց աս խնդիրքին ամենեւին չնեղացաւ եւ երկրորդ օրը դաշնակցաց զօրքը քաղքին պարսպին մօտ տեղաւորելով՝ ինք իր սեպհական զօրքովը ներս մտաւ: Առջի օրերը շատ խաղաղութեամբ անցուցին, քաղքին մեծերը միշտ կը ջանային որ անոնց պաշարը հոգացուի: Բայց շուտ մը Գորգէղ իր արթնութեամբն սկսաւ քաղաքացւոց ընթացքին մէջ փոփոխութեան նշաններ դիտել, որմէ միտքը տարակոյս ինկաւ որ չըլլայ թէ մատնութիւն մ'ընեն, ինչպէս որ իր դաշնակիցները յառաջագոյն դուշակած էին. կամաց կամաց պաշար բերելն ալ դադրեցուցին, եւ Սպանիացիք իրենց հարկաւոր եղած բաները հազիւ մեծ դժուարութեամբ կրնային հոգալ: Նոյն միջոցին Գլասգալացւոցմէ երկու հօգի ծպտեալ զգեստով քաղաք մտան Գորգէղին իմացուցին որ քաղքին մէջ Սպանիացւոց թաղին մօտիկ փողոցներուն մէջ պատնէշներ ու թեթեւ մը ծածկուած փոսեր տեսան, որոնց տակը ցիցեր հաստատած էին, որ ձիաւորները վրայէն քալելու ժամանակ մէջն իյնան: Միանգամայն ըսին որ ամէն իրիկուն քաղքէն դուրս շատ մը կանայք ու տղաք կը հանեն, եւ տաճարին մէջ վեց տղայ զոհած են, որն որ պատերազմական երեւելի դործողութիւն մը սկսելուն նշան ու պատրաստութիւն է: Աւերջապէս իմացուցին որ տանիքներուն վրայ շատ քար ու նետ կը պատրաստեն, որպէս զի օտարականները բոլորովին ջնջեն:

Աս պատմութիւններէն ու լուրերէն՝ Գորգէղին կասկածներն արդէն մեծցած էր. մէյ մ'ալ Մարինային ձեռքովն ամէն բան սաուզութեամբ իմացաւ: Հոնտեղաց ազնուական պառաւ կին մը՝ Մարինային վրայ սէր կապելով՝ անոր շատ աղաչեց որ Սպանիացիները թող ապ ու իր տունը պահուրտելով ան

օտարականաց պատրաստուած վտանգներէն ազատի : Մարինա անոր խօսքերուն հաւանութիւն տալ ձեւա-  
յրնելով եւ իրեն ցուցուցած սիրոյն շնորհակալ ըլլա-  
լով՝ Գորղէացւոց միտքն աղէկ մ'իմացաւ : Տեղեկա-  
ցաւ որ 20,000 Մեքսիկացիք մօտերը պահոււրտած  
եւ արդէն վեց հազար հոգի քաղաք մտած՝ նշանի  
մը կը սպասեն եղեր որ քաղաքացւոց հետ միանալով՝  
օտարականները ջարդեն ու ջնջեն : Մարինա ասոնք  
իմանալէն ետեւ՝ իր հազուագիւտ ինչքերն ու զար-  
դերն առնելու պատրուակով Գորղէզին եկաւ եւ աս  
լուրերն անոր հաղորդեց : Սպարապետը շուտ մը ան  
պառաւր բռնել տալով՝ աւելի մանրամասն տեղե-  
կութիւն առաւ : Ետքը հրաման տուաւ որ գլխաւոր  
քրմերէն իրեն երեք հոգի բերեն : Գորղէզ անոնց  
նենգութիւնն երեսնին զարկաւ եւ ունեցած դիտաւո-  
րութիւննին յայտնեց : Ասոնք Սպարապետին իրենց  
դաղտնի դաւակցութիւնը դիտնալուն վրայ զարմա-  
նալով ու զանիկա բարձրագոյն էակի մը տեղ դնե-  
լով՝ դաւաճանութիւննին ուրանալու չհամարձակե-  
ցան , ամէն բան հաստատեցին եւ միանգամայն յայ-  
տնեցին որ բոլորը Մոնղեղումային գլխոյն տակէն է :  
Գորղէզ զանոնք ապահով տեղ մը պահել տալէն  
ետքը՝ իր պաշտօնակալները ժողվեց խորհուրդ ըրաւ ,  
եւ անոնց հետ որոշեց որ սաստիկ եղանակաւ մը իր  
վրէժխնդրութիւնը ցուցնէ :

Վաղքին մեծերուն ըսաւ որ ինք երկրորդ օրը  
ճամբայ պիտ'որ ելլէ , ուստի եւ զօրաց համար հար-  
կաւոր եղած պաշար ուղեց , նոյնպէս իր կահ կարա-  
սիքը կրելու մարդիկ եւ երկու հազար ալ զինուոր :  
Անոնք պաշարին ու բեռնակրաց համար դժուարու-  
թիւններ հանեցին . իսկ զինուորները տալը սիրով  
յանձն առին : Գորղէզ դաշնակցաց հրաման տուաւ  
որ գիշերը զէնքերնին առած կենան եւ առտուան  
դէմ պարսպին մօտիկնան , որ առջի հրազէնքի նշանը

լսելուն պէս՝ դան իրենց հետ միանան : Աս ընելէն ետեւ՝ Մեքսիկոյի դեսպանները կանչեց եւ զաղա- նիք մը յայտնելու պէս՝ անոնց զրուցեց որ Գոլու- լացիք մեզի դէմ դաւաճանութիւն կը խորհին , եւ իրենք զիրենք ջատագովելու համար՝ այնպէս կը ձեւացընեն որ աս բանս կայսեր հրամանաւը կ'ընեն , որուն ես չեմ կրնար հաւատալ : Գեսպաններն աս մատ- նութիւնը չգիտնալ ձեւացուցին :

Արկորդ օրը կանուխ բեռնակիրներէն քիչ հոգի եկան ու քիչ պաշար բերին . անոնց ետեւէն ալ զի- նուորներ կու գային : Գորդէզ նոյն զօրքերն իրարմէ բաժնեց եւ Սպանիացւոց մէջ զանազան տեղեր դնե- լով՝ ապօպրեց որ վրանին զգուշութիւն բնեն : Ատքը ձի հեծնելով՝ զանազան պատրուակներով ցեղապեա- ներն իրեն կանչեց եւ Մարինային ձեռօքն իրենց ի- մացուց թէ նիւթած դաւաճանութիւննին իմացած է ու միտքը դրած է որ սաստիկ պատժէ : Հիմա պիտի իմանաք որ , ըսաւ , սրչափ աւելի աղէկ կ'ը- նէիք , թէ որ խաղաղութիւնը հաստատուն պահելու ըլլայիք : Աս խօսքը ըսելուն պէս՝ հրացան մը պար- պուեցաւ . անմիջապէս Սպանիացւոց հետեւակ զօրքն իրենց մէջ բաժնուած Գոլուլացի զօրաց վրայ ինկան , որոնք թէպէտ սաստիկ ջանացին մեկտեղ միանալու , բայց անկարելի ըլլալով՝ չարաչար ջարդուեցան . Սպա- նիացւոց կատաղութենէն՝ միայն քիչ մը մարդիկ պարսպին վրայէն ցատքելով կրցան ազատիլ :

Ատքէն հետեւակ զօրքը քաղքին գլխաւոր փո- շոցը դարձաւ , առաջնորդ ունենալով դաշնակցաց մէջէն զանոնք՝ որոնք դարանները տեսած էին : Պա- տերազմողներուն վայնասունը լսելով՝ դուրսը կեցող Մեքսիկացիներն ալ աճապարած քաղաք մտած էին , որ Գոլուլացւոց օգնեն , եւ եկած հրապարակի մը մէջ կեցած էին , որուն քովերը տաճարներով բոլո- բած էր , ասոնց մէկ մասը տաճարին աշտարակնե-

րուն ու սրահներուն մէջ մասն ամրացան, մէկալ մասն ալ թշնամոյն վրայ յարձակելու պատրաստուեցաւ : Պատերազմը սկսելու ժամանակ՝ Գլասգալացիք իրենք կռնրկի կողմանէ պաշարելով՝ առ յանկարծական յարձակմամբ բոլորովին շփոթցուցին : Ասանկով Սպանիացիք եւ իրենց դաշնակիցները սկսան անխնայ ջարդել թշնամիները, որոնց հազիւ մէկ մասը տաճարներուն մէջ կրցան փախչիլ : Գորդէզ առ տաճարներուն գլխաւորին մօտիկնալով՝ Մարինային ձեռօքն ըսել տուաւ որ եթէ անձնատուր կ'ըլլան նե՛ թողութիւն կու տայ . բայց առ ազդարարութիւնն օգուտ մը չընելով՝ տաճարին կրակ տուաւ եւ ամէնն ալ բոցերուն զոհ եղան : Պատմիչները կ'ըսեն որ միայն մէկ հոգի մը կամօք անձնատուր եղաւ : Արիւնը հեղեղի պէս ճամբաները կը վազէր . մեռնողներուն աղաղակն ու կատուութիւնը ստորագրելու բան չէ : Աւերջապէս պատերազմը դադրեցաւ, որովհետեւ թշնամի չմնաց, կ'ըսէ Սոլիս : Գաշնակիցները քաղքին մէջ տարածուեցան, ուր որ ամէն տեսակ շարիք գործեցին . երկու օր ետքը կոտորածն ու աւարառութիւնները հազիւ դադրեցան : Նոյն սոսկալի կռուին մէջ վեց հազար Գոլուլացիք ու Մեքսիկացիք մեռան . Սպանիացիներէն մեռնող չեղաւ . բայց դաշնակիցներէն բաւական մարդ մեռաւ : Սպանիացիք իրենց տեղերը քաշուեցան, իսկ Գլասգալացիք քաղքին ուրիշ կողմերը կեցան :

Ամէն բան լմրննալէն ետեւ՝ Գորդէզ ցեղապետներն ու պատերազմի մէջ բռնուող գերիներն առջեւը կանչելով՝ իմացուց որ իր վրէժխնդրութիւնը լմրնեցած ըլլալով՝ զանոնք ազատ թող կու տայ եւ ընդհանուր թողութիւն կը շնորհէ, որն որ հանդիսիւ հրատարակուեցաւ : Երկրորդ օրը Գլասգալացւոց կողմանէ քսան հազար հոգի իրեն օգնութիւն հասան, որոնք ծերակոյտը խրկած էր : Գոր-

գէզ անոնց զօրապետին շնորհակալ եղաւ, եւ ալ  
 հարկաւորութիւն չունենալով՝ ետ դարձուց. միայն  
 թէ աս առթով զանոնք Գոլուլացւոց հետ հաշտե-  
 ցուց ու դաշնակից ըրաւ: Աս բանս իրեն ալ օգտա-  
 կար էր, որովհետեւ անով հաղորդակցութիւնները  
 կը դիւրիննար: Գոլուլայի կառավարը սպաննուած  
 ըլլալով՝ տեղը անոր եղբայրը դրաւ: Փախչողները  
 նորէն իրենց տները դարձան, քաղաքը բնակիչներով  
 լեցուեցաւ. եւ Սպանիացւոց իշխանութիւնը վրանին  
 ան աստիճանի զօրացաւ, որ մինչեւ ամենէն ստորին  
 ծառայութիւններն ալ կը կատարէին:

Գորդէզին աս վրէժխնդրութեան գործքին վրայ  
 պատմիչները զանազան կերպով դատաստան կ'ընեն:  
 Սուլիս բոլորովին կ'արդարացընէ, բայց աս հեղինա-  
 կին ամբողջ պատմութիւնը՝ Գորդէզին ամէն գործոցը  
 ներբողեան մըն է, միշտ Սպարապետը ջատագովե-  
 լու եւ պակասութիւնները գոցելու կը ջանայ: Ասոր  
 հակառակ Լաս-Գաղաս կ'ըսէ թէ Ամենեւին աս կու-  
 տորածն ընելու պատճառ մը չկար. Գորդէզին դի-  
 տաւորութիւնը՝ միայն Նոր Սպանիայի ժողովրդեան  
 աչքը վախցընել էր: Իսկ Տիազ կը պատմէ որ  
 Սպանիայի թագաւորին կողմանէ գացող քննիչներն  
 աս գործքս ալ քննեցին եւ ստուգեցին որ իրօք  
 գաւաճանութիւն կայ եղեր եւ Գորդէզին աս նիւ-  
 թիս վրայ գրած ծանօթութիւնները ստոյգ են եղեր:  
 Ռոպերդան կ'ըսէ թէ Գորդէզ Մոնզեզումային սիր-  
 արը միշտ շահելու կը ջանար, ուստի եւ Սպանիացի-  
 ներն անոր բոլորովին առելի ընելու ասանկ ճամբայ  
 մը չէր բռներ՝ եթէ իր անձին ու բանակին պահպա-  
 նութիւնը զինքը չստիպէր: Բայց աս ալ ստոյգ է որ  
 Նոր Աշխարհք գացող Սպանիացիք՝ տեղացիներն  
 անանկ կ'արհամարհէին, որ զանոնք մարդկային բնու-  
 թեան հասարակ իրաւանց ալ արժանի չէին սեպեր.  
 անոր համար շատ անգամ անստոյգ ցոյց մ'ալ զա-

նոնք պատժելու բաւական կը սեպուէր: Իսկ Գորդէզին ըրած վրէժխնդրութիւնը՝ թէպէտ հարկաւոր ու իրաւացի, բայց չափազանց ու անգութ եղանակաւ էր. վասն զի առջի պատերազմն ընելէն ու քիչ մը մարդ ջարդելէն ետքը՝ կրնար դադարեցընել. եւ իր ապահովութեանը համար հարկ չկար որ երկու օր ամէն տեսակ անգթութիւններն ու սպանութիւններն ընելու թող տար:

## ԺԸ.

Գորդէզ էր արւամտեւ յարու իւր քանի: — Մեծիւն, քաղաք իւր քանի:

Ղամբայ ելլելու որոշուած օրը՝ Ջամբուալացւոց մէկ մասը՝ որոնք Գորդէզին հրամանին տակ կը պատերազմէին, եկան աղաչեցին որ իրենց հայրենիքը դառնան. կամ Մեքսիկոյ մտնելու չէին յանդգներ, կամ հայրենեաց սէրն՝ ընելու յաղթութիւններն աւելի աղէկ կը սեպէին: Գորդէզ անոնց խընդիրքն առանց դժուարութեան կատարեց: Նոյն միջոցին Մոնդեզումային կողմանէ նոր դեսպաններ հասան. կայսրը Գոլուլայի դէպքն իմանալով՝ Սպանիացւոց իր վրայ ունեցած կասկածը կ'ուզէր փարատել. իր դեսպաններն ան աստիճանի կեղծաւորութեամբ վարուեցան, մինչեւ Գոլուլայիները պատժելուն վրայ Գորդէզին շնորհակալ եղան եւ ըսին թէ թագաւորն ան խաբեբայ ժողովրդեան վրայ սաստիկ բարկացած է: Աս խօսքերն ըսելով՝ հետեւին բերած պարգեւն ալ ընծայեցին: Բայց քիչ մը ետքն իմացուեցաւ որ աս դեսպանութիւնն ալ նոր հնարք մըն էր, որ Սպանիացիներն ապահովուելով՝ արշաւանքի ժամանակ զգուշութիւն ու հսկողութիւն չընեն եւ Մեքսիկացւոց դարանները չիմանան: Գորդէզ 14 օր Գոլուլա նստելէն ետքը՝ Հոկտեմբերի 29ին ճամբայ ելաւ: Իրեն ըսին որ լեռներէն վար



իջած ժամանակը մեծ վտանգի մը պիտ'որ պատահի. որովհետեւ Մեքսիկացիք քիչ մ'ատենէ վեր Գալիցոյ տանող ճամբան քարերով ու ծառի կոճղներով կը գոցեն, եւ մէկալ կողմանէ ուրիշ մտաւոր ճամբայ մը շտկելու կ'աշխատին: Լերան դադաթը մեծ աշխատութեամբ հասան, որովհետեւ ձիւնն ու կատաղի հովը դէմ կը դնէին: Գորդէզ ան երկու ճամբաները տեսաւ ու նենգութեան ստուգութիւնն իմացաւ. եւ թէպէտ կայսեր աս դաւաճանութեան վրայ շատ նեղացաւ, բայց հանդարտութեամբ մը քովէն դացող դեսպաններուն հարցուց թէ Ռոնչ բանի համար աս երկու ճամբաներուն վրայ փոփոխութիւն եղած է: Անոնք պատասխան տուին թէ Չեր դիւրութեան համար՝ դժուարին ճամբան աւելի գոցել տուինք ու դիւրինն աւելի շտակցուցինք: Գորդէզ առանց այլայլելու՝ Գուք, ըսաւ, ինձի հետ եկող զինուորները չէք ճանչնար. անոնք ձեզի դժուարին երեւցած ճամբէն կ'երթան, եւ միայն անոր համար՝ վասն զի դժուար է. Սպանիացիք միշտ աւելի դժուար գործքերը կը սիրեն: Աս ըսելով՝ դաշնակցաց հրամայեց որ յառաջ անցնին եւ ան գոց ճամբան մաքրեն, բանան, եւ սկսաւ նոյն ճամբան բռնել: Ասոր վրայ դեսպաններն ապշեցան մնացին եւ կարծեցին որ դուշակութեամբ իրենց նենգութիւնն իմացեր է: Մեքսիկացիք լերան ստորտը դարանի մտած էին. բայց երբ որ տեսան թէ Սպանիացիք մէկալ ճամբան շեղեցան, աճապարեցին փախան, եւ Գորդէզ հանդարտութեամբ ու առանց արգելքի դաշտին վրայ իջաւ: Սպանիացիք ամէն տեղ իբրեւ փրկիչ ու ժողովուրդը բռնութենէ ազատելու եկողներ՝ սիրով բնագոնելութիւն դատան: Յեղապետներն ու ժողովրդեան գլխաւորները կու գային Մոնդեզումային բռնաւորութենէն կրածնին եւ իրեն ունեցած ատելութիւննին կը յայտնէին: Գորդէզ երբ որ տե-

սաւ թէ թագաւորը՝ նոյն իսկ իր տէրութեան կենդրոնին մէջ՝ իր հպատակներուն առեւի եղած է, սպահափութեամբ միաբը դրաւ որ աս աստիճանի զօրութիւնը բաժնուած տէրութիւնը շատ դիւրաւ կրնայ կործանել: Ինք աս մտածմունքներով քաջալերութիւն ստացած ատեն՝ զօրքերն ալ առջեւնին բացուած տեսարանէն զօրութիւն կ'առնէին: Քանի որ լեռներէն վար կ'իջնային, Մեքսիկոյի ընդարձակ դաշտն աւելի սրոշ կը տեսնուէր, իրենց աչքին առջեւ կը նկարուէին գեղեցիկ, ընդարձակ, մշակուած արտեր, հեռուն ծովացեալ լիճ մը, չորս կողմը մեծ քաղաքներով բոլորուած: Բայց երբ որ վերջապէս ան լճին մէջ իբրեւ կղզի մը զանազան աշտարակներով, տաճարներով, պալատներով զարդարուած մայրաքաղաքը տեսան նէ, ան աստիճանի ուրախացան եւ երեւակայութիւննին այնպէս շարժեցաւ, որ շատերը երազի տեղ կը դնէին եւ աչքերնուն չէին կրնար հաւատալ: Քանի որ յառաջ կ'երթային՝ աւելի գեղեցիկ կ'երեւար ան հարուստ մայրաքաղաքը. բոլոր կրած աշխատութիւննին մոռցան, եւ այնպէս ուրախացան որ կարծես թէ քաղաքն իրենց էր:

Սպանիացւոց՝ մայրաքաղաքը մօտիկցած ատեն՝ Մոնդեզումային տարտամութիւնը կը սաստկանար: Գոլուլայի դէպքը լսելէն ետեւ՝ իր պալատին տաճարը քաշուեցաւ եւ ութ օր հոն կենալով՝ խիստ ծոմնապահութեամբ իր աստուածներուն օգնութիւնը կը խնդրէր: Աս միայնութեան ատենը նորէն երեւելի մարդիկներէ կազմուած դեսպանութիւն մը խրկեց Գորդէզին, որ զինքը Մեքսիկոյ մտնելէն ետ կեցընեն, խոստանալով որ Սպանիայի թագաւորին տարեկան տուրք վճարէ: Միանգամայն խօսք կու տար որ Սպարապետին չորս բեռ ոսկի ու ամէն մէկ զինուորին ալ մէյ մէկ բեռ ոսկի վճարէ: Այսպէս ահա աս քիչուոր զօրքէն ան աստիճանի սարսափած էր՝ որ վա-

տութեամբ ասանկ անարդական պայմաններ առաջարկելը յանձն կ'առնէր՝ օտարականներն իր երկրէն դուրս հանելու համար, ուր որ իր անհամար զօրքերը ժողովէր, քաջութեամբ դիմացնին ելլէր նէ, շատ հաւանական է որ բազմութեամբը թշնամիները պաշարելով՝ կրնար զանոնք շփոթել եւ եթէ բոլորովին ջնջել ալ չկարենար նէ՝ գոնէ իր երկիրներէն դուրս ելլելու կրնար ստիպել: Գորդէզ թագաւորին ըրած առաջարկութեանցը շնորհակալ եղաւ, եւ ըսաւ որ Զինքը չտեսած չեմ՝ կրնար ետ դառնալ, որովհետեւ հետը հարկաւոր գործքերու վրայ խօսելու համար եկած եմ:

Մոնղեզու մային անձկութիւնն աւելի սաստկացուցին քրմերուն խօսքերը, որոնք շարունակ չար գուշակութիւններ կ'ընէին: Գեոսպաններն ետ չդարձած՝ Մոնղեզու մա իր եղբայրը, եղբորորդին ու տէրութեան ուրիշ մեծամեծները կանչեց եւ սկսան խորհիլ թէ ինչ ճամբայ բռնեն: Այստեղ եղբորը կարծիքն ան էր որ զէնքով օտարականաց դիմացն ելլեն ու վաւրնան. իսկ եղբորորդին անոր հակառակ կողմը կը պաշտպանէր: Մոնղեզու ման ալ՝ որ յառաջ պատերազմելու կողմն էր, մէկէն խաղաղութեան կողմը դարձաւ ու իր եղբորորդին՝ զԳորդէզ դիմաւորելու եւ ողջունելու խրկեց, ապսպրելով միանգամայն որ անոր քաղաք մանելու միտքը դարձնելու ջանայ:

Գորդէզ Ամեմեգա քաղաքը հասած էր, երբ որ կայսեր եղբորորդին Գագումամին իրեն եկաւ. իշխանը ձոյլ ոսկիէ ձողերով փառաւոր պատգարակի մը վրայ նստած էր, որն որ բազմութիւ ծառաներ ուսերնին առած կը տանէին. չորս կողմն ութը մեծ ազնուականներ կային, ետեւէն ալ՝ ուրիշ շատ երեւելի մարդիկ: Գագումամին քսանուհինգ տարեկան զուարթ ու զեղեցիկ երիտասարդ մըն էր: Պատգարակէն վար իջած տտեն՝ Գորդէզ զինքն անոր

աստիճանին վայլող պատուով ընդունեցաւ : Չանազան քաղաքավարութեան խօսքերէն ետքը՝ Սպարապետը տեսնելով որ կ'ուզէ մայրաքաղաքը մշտնելու միտքը փոխել, իրեն իմացուց որ աշխարհք մէկ դի դայ՝ ինք Մեքսիկոյ պետք է որ մաննէ :

Ասոր վրայ Գորդէզ զինուորական հրահանգով ճամբան շարունակեց եւ իր ապահովութեան հարկաւոր եղած զգուշութիւններն ի գործ գնելով՝ Մեքսիկոյի լճին մօտ բերդի մը առջեւ հասաւ : Հոն իր զօրքը կեցուց, հեռուէն եկող երեւելի Մեքսիկացիներն ընդունելու, որոնք բաղմութեամբ զինքը բարեւելու կու գային. ամէնքն ալ առջեւէն անցնելով՝ ձեռքերնին դետինը կը դպցընէին ու ետքէն կը պագնէին : Աս հանգիստութիւնը լմննալէն ետքը՝ Գորդէզ իր ընթացքը նորէն շարունակեց, միշտ տարակուսելով որ արդեօք Մեքսիկացիք զինքն իբրեւ բարեկամ, չէ նէ՝ իբրեւ թշնամի պիտի ընդունին :

Մեքսիկոյի դրան մօտիկցած էր, մէյ մ'ալ Մոնդեզուամային այցելութեան գալուն լուրը տարածուեցաւ եւ անդիէն շուտ մը հանգիստորներու բաղմութիւնն սկսաւ երեւալ : Առջեւէն երեք պաշտօնակալ ձեռքերնին ոսկի դաւազաններ բռնած կու գային, ասիկայ թագաւորին ներկայութիւնը կ'իմացընէր ու ժողովրդեան նշան կու տար որ յարգութեան համար դետինը խօնարհին : Մոնդեզուամա ոսկեով զարդարուած խիտ փառաւոր պատգարակի մը վրայ նստած էր, որն որ իր երեւելի իշխաններն ուսերնին առած էին. ոմանք ալ գլխուն վրան գոյնզգոյն փետուրներով, ազնիւ քարերով ու ոսկի ծոպերով զարդարուած հովանոց մը բռնած էին : Քիչ մը հեռուէն՝ փետուրներով զարդարուած ու վրանին բամբակէ լաթ առած երկու հարիւր ազնուականք ջուխտ ջուխտ կու գային :

Երբ որ կայսրը Գորդէզին մօտիկցաւ, պատգաւ

րակէն վար իջաւ, եւ իր ազդականներէն երկու  
 հոգւոյ թեւերուն կռթրնած՝ շքով ու ծանր քա-  
 լուածքով մը յառաջ կու գար. իր մարդիկն ալ մէկ  
 կողմանէ ճամբուն վրայ բամբակէ լաթեր կը տարա-  
 ծէին որ ստքը գեափնը շղպչի: Մոնղեզու մա քա-  
 ռասուն տարւան մարդ մը կ'երեւար, հասակը միջակ,  
 մարմինը լեցունկեկ, կենդանի նայուածքով, գոյնն  
 ալ՝ Մեքսիկացւոց հասարակ եղածէն աւելի ճեր-  
 մակ: Արան բարակ բամբակէ վերարկու մ'առած էր,  
 որուն շրջանակն ոսկի ծոպերով զարդարուած էին.  
 վրայի ոսկին, մարդարիան ու ազնիւ քարերն աւե-  
 լի բեռան պէս էին, քան թէ զարդարանքի ձեւով  
 կարգաւորեալ շարուած: Գլխու ոսկիէ թագը՝ ե-  
 պիսիօպոսական խոյրի մը կը նմանէր, երկու ճեղ-  
 քուածքով, բայց ետեւի ճեղքուածքն աւելի դէպ  
 ի կռնակը ծռած էր: Ոտքի մամանները նոյնպէս ոս-  
 կիէ զարդերով էին:

Գորդէզ՝ որ արդէն ձիէն վար իջած էր, մեծա-  
 րանքով մօտիկցաւ եւ մեծ յարգութեամբ՝ Եւրո-  
 պացւոց սովորութեան համաձայն անոր բարեւ տուաւ.  
 Իսկ Մոնղեզու մա հոնտեզայ սովորութեան համեմատ՝  
 ձեռքը գեափնը դպցընելով եւ ետքէն բերնին վրայ  
 տանելով՝ զինքը բարեւեց: Սպարապետը թագաւորին  
 պարանոցը ոսկի շղթայ մ'անցուց, որուն մէջ զանա-  
 զան մեծութեամբ ապակեոյ հատեր դրուած էր. աս  
 նուէրը շատ սիրով ընդունուեցաւ: Բայց երբ որ Գոր-  
 դէզ զանիկա ողջագուրելու երես բռնեց, ազնուա-  
 կանները յարգութեամբ մը դէմ դրին, ցուցընել  
 ուզելով որ բրածը չափազանց համարձակութիւն էր:  
 Մոնղեզու մա իր գանձին մէջ ամենէն մեծագին սե-  
 պուած ոսկի մանեակը Գորդէզին պարգեւեց:

Աս արտաքոյ կարգի տեսարանին՝ բոլոր քաղքին  
 ժողովուրդը ներկայ էին. դռները, պատուհաններն  
 ու ճամբաներն ահագին բազմութեամբ լեցուած էր.

ամէնքն աս նորանշան տեսիլքը տեսնել կը բաղձային եւ շէին կրնար աշուրներնուն հաւտալ: Երբ որ ժողովուրդը՝ Մոնղեզումային Սպանիացւոց բրած յարգութիւնը տեսան, հետեւցուցին որ անոնք գերբնական էակներ պիտ'որ ըլլան, որովհետեւ այնպիսի հզօր եւ սէգ կայար մը անոնց այնչափ մեծարանք կ'ընէ: Աս համոզմամբ՝ Սպանիացւոց վրայ մեծ դաշտաբար ունեցան, մանաւանդ երբ որ անոնց զէնքերն ու ձիերը կը տեսնէին: Իսկ Սպանիացիք ալ քիչ չզարմացան՝ ընդարձակ լիճը, քաղքին մեծութիւնը, շէնքերուն գեղեցիկութիւնն ու ամենէն աւելի թագաւորին հարստութիւնը տեսնելով, որոնց վրայ սրբտերնուն մէջ մեծ ուրախութիւն կը զգային:

Ի՞նչոր հանդէսն օտարականաց հետ ներս մտաւ, ու քաղքին մեծ մասն անցնելով՝ անոնց համար պատրաստուած պալատը հասաւ, որն որ քաղքին գրխաւոր տաճարին քովերը կ'իյնար եւ այնչափ ընդարձակ էր՝ որ Սպանիացիներն ու իրենց դաշնակիցները դիւրութեամբ կրցան մէջը տեղ գտնել: Մոնղեզումա Գորդէզին ձեռքէն բռնելով՝ Գուք ու ձեր ընկերները հիմա ձեր բնակարանը կեցէք հանդէցէք, ըսաւ, մինչեւ որ նորէն զձեզ տեսնելու գամ: Գորդէզին առջի փոյթն իր ապահովութիւնը հողալն եղաւ. անոր համար գլխաւոր ճամբաներուն դիմացն իր թընդանօթները շարեց եւ հարկաւոր տեղերը պահապաններ դրաւ. վերջապէս ան ամէն զինուորական զգուշութիւններն ու կարգ կանոնը ճիշդ պահել տուաւ, որն որ հասարակօրէն թշնամեաց բանակի մը դիմացը կը պահուի:

Իրիկունը Մոնղեզուման առաջին անգամուան փառաւորութեամբն իր հիւրերուն այցելութեան եկաւ, եւ թէ զօրապետին թէ զօրքերուն այնպիսի պարգեւներ բերաւ, որոնցմէ իր առատաձեռնութիւնն ու երկրին հարստութիւնը յայտնի կ'երեւար: Գոր-

գէզին հետ երկայն ատեն խօսակցեցաւ եւ Սպանիացւոց վրայ ունեցած կարծիքը մեկնեց: Գիտեմ որ, ըսաւ, դուք աստուածներէն որոշուած էք որ աս տէրութեան վրայ տիրէք. արդէն ձեր դալուստը Մեքսիկոյի օրէնսդիրն յառաջագոյն գուշակած էր, երբ որ աս գաւառս թող տալով՝ հիւսիսային կողմերը գնաց, ուսկից որ իր յաջորդներն օր մը հոս պիտ'որ գառնային:

Գորդէզ՝ կայսեր առատաձեռնութեան ու զիւրենք սիրով ընդունելուն շնորհակալ եղաւ. նոյնպէս ջանաց զինքն իր կարծեաց մէջ հաստատել որ Սպանիացիք երկնային սերունդ են. նոյն կարծիքը Գորդէզին խորհուրդներուն կատարման շատ դիւրութիւն կու տար: Եւթէն խօսքը դարձուց Սպանիայի թագաւորին զօրութեան ու իշխանութեան վրայ, որն որ, ըսաւ, զիս խաւրեց որ ձեզի հետ դաշնագրութիւն ընէ: Նոյնպէս Մոնդեզումային խրատ տուաւ որ տէրութեան քանի մ'օրինաց ու սովորութեանց մէջ փոփոխութիւն ընէ, եւ գլխաւորաբար մարդագոհք բոլորովին վերցընէ: Աս խօսակցութիւնը շատ երկայն տեւեց. վերջապէս երկուքն ալ փոփոխակի բարեկամութեան ու սիրոյ նշաններով բաժնուեցան:

Սպանիացւոց Մեքսիկոյ մտնելը 1519ին Նոյեմբերի 8ին եղաւ, Նոր Սպանիայի երկիրը մտնելէն եօթը ամիս ետքը:

## ԺԲ.

Մեքսիկոյ Ժողովն սպորաֆրոսիւնը:

Երկրորդ օրը Գորդէզ կայսեր առջեւն ելլելու հրաման խնդրեց եւ շուտ մ'ընդունեցաւ. հետը չորս պաշտօնակալ եւ վեց քաջ զինուոր առած էր: Վերին պաշտօնեայք՝ որոնք պալատին դրան առջեւը Սպանիայեալին կը սպասէին, զինքը մեծ պատուով ընդու-

նեցան. եաքը իրենց զգեստները փոխելով՝ պարզ զգեստներ հագան, որովհետեւ փառաւոր զգեստներով կայսեր գիմացն ելելը սովորութեան դէմ էր: Սպանիացիները լուսթեամբ ներս խոթեցին, նստեցուցին եւ խօսակցութիւնն սկսաւ: Տեսութիւնը շատ երկայն տեւեց. Մոնղեզումա Եւրոպացւոց օրէնքներուն, սովորութիւններուն եւ բարուց վրայ շատ հարցումներ ըրաւ, որոնց Գորդէզ կրցածին չափ պատասխանեց: Վերջապէս քաղաքը պառտելու հրաման խնդրեց, որուն շատ հետաքրքիր էր. կայսրն աս խոնդրոյն հաւանութիւն տուաւ, որով խօսակցութիւնն ալ վերջացաւ:

Գորդէզ աս արտաքոյ կարգի եւ յիշատակաց արժանի քաղաքն աղէկ մը աչքէ անցընելու համար երեք օր շարունակ պառտեցաւ, ան քաղաքն՝ որ ինք ի հիմանց պիտի կործանէր: Միայն իր նամակներուն մէջ ըրած ստորագրութիւնն ու Տիագին գրածները՝ ականատես վկայութեան արժանաւորութիւնն ունին. որովհետեւ անկէ ետեւ Մեքսիկոն ան առջի փառաւորութեան մէջ տեսնող չեղաւ: Ասոնց խօսքերուն ճշմարտութիւնն աւելի եւս հաստատեցին ետքէն շատ տեղուանք գտնուած հնութեան ու շէնքերու մնացորդները:

Մեքսիկոյ՝ բազմաթիւ բրդածեւ տաճարներով զարդարուած, թմբերով ու ամբարտակներով պատած մեծ լճի մը գրեթէ կենդրոնը, կանաչազարդ կղզեակներու վրայ շինուած ըլլալով՝ Հոլանտայի կամ Ճենաստանի քանի մը քաղաքներուն կը նմանէր: Քաղաքը երեք գլխաւոր լայն թմբերով ցամաք երկրին հետ միացած էր. աս քարէ թմբերուն մէջտեղերը փայտէ կամուրջներ ձգուած էին, որոնց տակը պարապ ըլլալով՝ լճին ջրերը կ'անցնէին: Նոյն փայտէ կամուրջներուն վրայ հող քաշուած էր, որով քարէ թմբերուն հետ միացած էին: Գեղեցիկ



Ջրմուղներ՝ քաղքին անուշ ջուր կը մատակարարէին :  
 Գլխաւոր փողոցները լայն ու շիտակ էին . ոմանց ալ,  
 Վենետիկ քաղքին պէս, կէսը չոր ճամբայ, կէսն  
 ալ նաւարկելի ջրանցք էր, որոնց վրայ փայտէ լայն  
 ու գեղեցիկ կամուրջներ ձգուած էին, այնպէս որ  
 տասը ձիաւոր քովէ քով վրայէն կրնային անցնիլ :  
 Ցած տներն ըստ մասին փայտէ, ըստ մասին տե-  
 սակ մը կակուղ քարէ շինուած էին : Բոլոր քաղա-  
 քը չորս կանոնաւորեալ քառակուսի բաժնուած էր,  
 որոնք գլխաւոր փողոցներով ու ջրանցքներով իրար-  
 մէ կը զատուէին : Ամէն թաղ իրեն սեպհական տա-  
 ճարներն ունէր :

Գլխաւոր տաճարը՝ պատերազմի չաստուածոյն  
 նուիրուած էր, որն որ Ամերիկայի դանուելէն վեց  
 տարի յառաջ շինուած էր, քաղքին կենդրոնը,  
 ընդարձակութիւնն ալ այնպէս մեծ էր, որ իր քա-  
 ոակուսի պարսպին մէջ՝ հինգհարիւր գերդաստան  
 կրնար ապրիլ : Քարով ու կրով շինուած խիստ թանձր  
 եւ ութ ոտք բարձր պատերուն վրայ օձերու պատ-  
 կերներ փորուած էին : Տաճարը չորս դուռ ունէր,  
 որոնք աշխարհքիս չորս կողմերուն կը համապատաս-  
 խանէին : Աս տաճարին կենդրոնը՝ յիսուն կանգնէն  
 աւելի բարձրութեամբ բուրգ մը կար, որուն յատա-  
 կին լայնութիւնը՝ հարիւր կանգնոց մօտ էր . սան-  
 դըով մը բրդին ծայրն ելլելու ճամբայ ալ կար : Մեծ  
 բրդին մէջ երկու փառաւոր մատուռ կար, առջեւի  
 կողմանէ բաց, որոնց վրայ փայտէ բարձր շէնք մը  
 բարձրացած էր : Մատուռներուն մէջ քարէ հսկայա-  
 ձեւ ու զարհուրելի եւ տգեղ երեւութով երկու  
 կուռքեր կային : Մեծ բրդին կենդրոնն ուրիշ պզտիկ  
 բրդաձեւ կանանչ քար մ'ալ կար, մէկ կանգուն  
 բարձրութեամբ, որուն վրայ զոհերը կը սպաննէին :  
 Տաճարին ծառայութեան համար անթիւ անհամար  
 բաղմուտիւն մ'որոշուած էր, որոնք հոն իրենց յա-

տուկ բնակարանն ալ ունէին : Երեսուներեօթը պըզտիկ տաճարներուն մէջ՝ որոնք գլխաւոր տաճարին մէջ՝ բոլորտիքն ու անոր զարդերն էին, յիշուելու արժանի է Օդոյ շաստուածին բոլորածեւ տաճարը, որուն դուռը՝ օձի բաց կոկորդի մը ձեւն ունէր : Գլխաւոր տաճարին դռնէն ներս մտնուելուն պէս՝ առջեւն ընդարձակ շէնք մը կ'ելլէր, որն որ հսն զսհուած մարդիկներու գլխոյն գանկովը զարդարած էր :

Մոնղեզու մային բնակած գլխաւոր քարաշէն պալատը՝ զանազան ընդարձակ բայց ցած տներէ կը բաղկանար, պալատին չորս փառաւոր ճակատներուն ամէն մէկը հինգ հինգ մեծ դուռ ունէր : Պալատին մէջն երեք ընդարձակ բակ կար, միջին բակին մէջ գեղեցիկ աղբիւր մը կը գտնուէր : Բոլոր շէնքն ընդարձակ սրահներ ու հազարէն աւելի սենեակ ունէր, սրահ մ'ալ կար՝ որ երեք հազար հօգի կ'առնէր : Քանի մը սենեակներու պատերը բարակ ու ազնիւ մարմարիտներով զրուազած, ոմանք ազնիւ քարերով զարդարուած, սիւներն ու յատակները մայրի, նոճոյ եւ ասոնց նման ուրիշ ծառերու փայտէ էին, ամէնքն ալ բարակ փորուած ու բանուած : Մոնղեզու մա ասոնցմէ զատ ուրիշ պալատ մ'ալ ունէր, որուն մէջ իր պաշտօնեաներուն, խորհրդակիաններուն եւ իր տան բազմաթիւ սպասաւորներուն բնակարանը կար :

Բնտանի թռչուններու համար ընդարձակ շէնք մը կար, նոյնպէս ուրիշ մը՝ բազէներու, չորքօտանիներու եւ սողուններու համար : Աս երկու փակարաններն արտաքոյ կարգի գեղեցիկ էին : Առջինը միահատոր մարմարիտնէ սիւներու վրայ հաստատուած բազմաթիւ խցեր ու սրահներ ունէր : Սրահներն ընդարձակ պարտիզի մը վրայ կը նայէին, որուն մէջ ծառերով զարդարուած տասն աւազան կար, ոմանք անուշ ու ոմանք աղի ջրով, որոնց մէջ ծովու եւ ցա-

մաքի թռչուններ կը հանգչէին: Շէնքերուն ուրիշ հողմերն ալ բազմաթիւ ու զանազան թռչնոց համար սրոշուած տեղեր կային: Թռչունները հողալու եւ զանազան եղանակներու մէջ անոնց թափած փետուրները ժողվելու համար՝ երեքհարիւր հողի սրոշուած էին. աս փետուրներով տեսակ մը հռչակաւոր եւ զարմանալի միւսիոններ կը շինէին:

Մէկալ շէնքն՝ որ վայրենի կենդանեաց համար էր, սալայատակած ընդարձակ բակեր ունէր, որոնք զանազան բաժանումներ ունէին: Գլխաւոր բաժանման մէկը զանազան ստորերկրեայ խցերու բաժնուած էր, որոնց մէջ դիշակեր թռչունները կը պահէին. ամէն օր հինգհարիւրի մօտ հնդկահաւ ասոնց սննդէան սրոշուած էր: Նոյն շէնքն ուրիշ շատ ցած սրահներ ալ ունէր, ուր որ փայտէ ամուր վանդակներու մէջ կը պահուէին դայլեր, վայրենի կատուներ եւ ուրիշ զանազան կենդանիներ՝ զորոնք Սպանիացիք առիւծ, վագր... կ'անուանեն. կային նաեւ կոկորդիլոսներ, օձեր, ու փառաւոր աւազաններու մէջ լողացող տեսակ տեսակ ձկեր: Քոլոր աս շէնքերուն բոլորաթիքը մեծ եւ ընդարձակ պարտէզ մը կը պատէր:

Օ ինանոցն ալ ընդարձակ շէնք մըն էր, որուն մէջ հոնտեղը գործածուած ամէն տեսակ զէնքերը կարգաւ շարուած էին. նոյնպէս գրօշներ եւ ուրիշ պատերազմական զարդեր ալ կային: Նոյն շէնքին մէջ բազմաթիւ գործավարներ զէնք եւ ուրիշ հարկաւոր գործիքներ կը շինէին:

Վաճառանոցին բոլորաթիքն ընդարձակ ու վրան գոց սրահ մը կար, որուն տակ ամէն տեսակ վաճառքները կը շարէին: Ամէն մէկ նիւթին զատ զատ տեղ սրոշուած էր, որպէս զի շիտթութիւն չելլէ եւ առուտուրը դիւրութեամբ բլլայ: Մասնաւոր տներ ալ կային՝ որոնց մէջ վարսաւիրաներ ու եւ քարէ շի-

նուած ածելիներով գլուխները կը սափրէին: Գեղա-  
վաճառի խանթի նման տեղեր ալ կային, ուր որ  
պատրաստուած դեղեր ու օժանելէք կը ծախէին:  
Նոյնպէս կերակուր ուտելու խանութներ ալ կար:  
Մեծ հրապարակին կենդրոնը տուն մը կար, որուն  
մէջ միշտ տասուերկու դատաւորք կը նստէին, որ վա-  
ճառահանութեան վերաբերեալ դատաստանները  
կտրեն: Վաճառանոցը շատ մաքուր էր, նոյնպէս  
քաղաքն ալ. ամէն առտու հազար հոգի քաղքին  
ճամբաներն աւելլու եւ շփելու կը պարսպէին:

Վաղքին բնակչաց թիւը ճիշդ չի գիտցուիր, ու-  
րովհետեւ պատմիչները միաբան չեն: Հումայոլդ՝ որ  
ասոր վրայ երկայն քննութիւն ըրաւ, կը կարծէ թէ  
300,000 հոգւոյ կը հասնէր: Այսպէս գնելով՝ կրնանք  
հաստատել որ ասիկա Նոր Աշխարհքին ամենէն բազ-  
մամարդ քաղաքն էր. իսկ նոյն ատենուան Եւրոպային  
հետ համեմատելով՝ կրնանք ըսել որ հազիւ երեք  
չորս քաղաք անոր չափ կամ անկից աւելի բնակիչ  
ունէր:

Գորդէզ քաղաքը պարտելու ատեն՝ Մոնղեղու-  
մա զինքը կռոց տաճար մ'ալ տարաւ. աս այցելու-  
թիւնն ու հոն պատահած դիպուածները Սոլիս պատ-  
մազիրն այսպէս կը պատմէ: Մոնղեղումա փառասի-  
րութեան սգւով մը իր ամենէն մեծ տաճարը Գոր-  
դէզին ու անոր հետ եղողներուն ցուցընել ուզեց:  
Իրենց հրամայեց որ դրան քով քիչ մը կենան, եւ  
ինք յառաջ գնաց որ քրմերուն խորհուրդ հարցընէ  
թէ արդեօք իրենց աստուածներուն երկրպագութիւն  
չընող մարդիկները ներս խոթելու հրաման կու տան,  
թէ չէ: Քրմերն որոշեցին որ կրնան ընդունուիլ. ուս-  
տի շուտ մը երեք չորս քրմերու յանձնուեցաւ որ  
օտարականները ներս խոթեն: Ան ատեն նոյն ըն-  
դարձակ շէնքին ամէն դռները մէկտեղ բացուեցան  
եւ Մոնղեղումա մեծ զգուշութեամբ ամէն խորհրդ-

դականնշաններն ու դիտնալու արժանի բաները սկսաւ մեկնել: Տաճարին ծառայութեանը համար որոշուած տեղերը ցուցուց. գործիքներուն գործածութիւնն ու ամէն մէկ կուռքին նշանակութիւնը մեկնեց, բայց ան աստիճանի յարգութեամբ ու ձեւերով՝ որ Սպանիացիք ծիծաղնին չկրցան բռնել. իսկ թագաւորն անոնց ծիծաղիլը չտեսնել ձեւացուց. միայն դէպ իրենց դարձաւ, որպէս զի իր նայելովն անոնց անյարգութիւնն արգելէ: Գորդէզ իրեն սրտին եւանդէն մղուելով՝ ըսաւ անոր. Հրաման տուր ինձի, տէր արքայ, որ աս սատանայի պատկերներուն դիմացը Յիսուսի Քրիստոսի խաչը տնկեմ. եւ ան ատեն կը տեսնես որ ասոնք արդեօք զարմացման, չէ նէ՛ անարգուելու արժանի են: Աս առաջարկութեան վրայ քրմերը սաստիկ կատղեցան. Մոնղեզուման ալ նեղացաւ ու շփոթեցաւ մնաց. ո՛չ աս անարգանաց կրցաւ համբերել, ո՛չ ալ վրէժն առնելու համարձակեցաւ. ուստի եւ երկու կողմն ալ դո՛հ ընելու համար՝ Արնայիք, ըսաւ, ան յարգութիւնն ընծայել աս տեղւոյս, որն որ իմ անձինս ցուցընելու պարտական էիք: Աս ըսաւ ու տաճարէն դուրս ելաւ, որպէս զի մէկայններն ալ ետեւէն երթան. ինք դրան քովը կանկ առաւ, եւ աւելի հանդարտութեամբ մ' ըսաւ. Բարեկամք, դուք հիմա ձեր բնակարանը դարձէք. իսկ ես հոս կենալ կ'ուզեմ, որպէս զի իմ շափազանց համբերութեանս համար աստուածներէն թողութիւն ուզեմ: Աս խօսքերով յայտնել ուզեց իր անձկութիւնն ու սրանեղութիւնը եւ թէ ինչպէս ծանր էր իրեն՝ ան աստիճանի զիջում ցուցընելը: Ի վերայ այսր ամենայնի Գորդէզ ետքէն հրաման առնելով՝ իր բնակութեան մէկ սրահին մէջ մատուռ մը կանգնեց, եւ Մոնղեզուման ալ շատ հեղ ծանրութեամբ ու յարգութեամբ սուրբ պատարագին ներկայ դանուեցաւ:

Գորգիչ Մոնղոլա՝ ման էլ բռնի էր բնակարանը ինչ որանի է-  
հոն ինչ պահի:

Սպանիացւոյ ամէն բոպէ տեսած նորանոր ա-  
ռարկաները թէպէտ զիրենք կ'ապշեցընէին, բայց  
միշտ իրենց վաանդաւոր վիճակին վրայ ալ մեծ ան-  
հանդատութեան մէջ էին: Զանազան անակնկալ ու  
յաջող դիպուածներ մէկտեղ դալով՝ զիրենք մինչեւ  
ան մեծ տէրութեան կենդրոնը տարին հասցուցին,  
եւ առանց դժուարութեան՝ մայրաքաղաքին մէջ հաս-  
տատուեցան: Բայց Գլասգաւացիք իրենց խորհուրդ  
տուած էին որ Մէքսիկոյի պէս քաղքի մը մէջ չմտնեն,  
որուն դիրքը զիրենք Մոնղեզու մային ձեռքը կրնար  
մատնել, որուն վրայ պէտք չէին հաստատուն վստա-  
հութիւն ունենալ եւ որուն ձեռքէն ուզած ատեն-  
նին դիւրաւ չէին կրնար ազատիլ: Իրենք յառաջա-  
դոյն Գորգէզին ըսած էին որ թագաւորին զիրենք  
ներս ընդունիլը՝ քրմերուն խորհրդովն է, որոնք Սպա-  
նիացիներն առանց վաանգի ու մէկէն ի մէկ ջնջելու՝  
աս միջոցն առաջարկած են: Գորգէզ հիմա յայտնի  
կը տեսնէր որ դաշնակիցներուն վախն ու կասկած-  
ները հիմ ունին եղեր. ինչու որ եթէ ան թմբե-  
րուն մէջտեղերը շինուած զանազան փայտէ կամուրջ-  
ները վերցընելու եւ նոյն թմբերուն մէկ մասը փր-  
ցընելու ըլլային, իր ետ քաշուիլն անկարելի կ'ըլլար,  
որով թշնամեաց քաղքի մը մէջ փակուած կը մնար,  
առանց իր դաշնակիցներէն օգնութիւն գտնելու յոյս  
ունենալու: Ստոյգ է Մոնղեզու մա զիրենք շատ սիրով  
ընդունած էր, բայց շատ տարակոյս կար որ ըրածն  
անկեղծութեամբ ըլլայ. եւ եթէ այնպէս ալ ըլլար,  
նձ կրնար զիրենք ապահովընել որ նոյն բարեկամու-  
թիւնը պիտի շարունակէ: Սպանիացւոյ բախտն ու  
կեանքն այնպիսի թագաւորի մը կամքէն կախում

ունէր, որն որ մէկ հրամանով իրենց վրայ անհամար շարիք կրնար հասցընել եւ ջնջել իսկ:

Աս խորհրդածութիւններն ամէնքն ալ կ'ընէին, բայց աւելի եւս Գորգէյ անոնցմով կը տանջուէր. ինչու որ Մոնղեզու մային անկեղծութեան վրայ տարակուսելու՝ շատ ստոյգ պատճառ մ'ունէր: Աերա-Գրուզի կառավարութենէն իրեն ձախորդ լրեր եկած էին: Նոյն կառավարութեան գրածներուն նայելով, Գուալբոբոգա Մեքսիկացի զօրապետը՝ Մոնղեզու մայէն հրաման ընդունած էր որ Գոգոնագ քաղաքը զարնէ ու հնազանդեցընէ. ուստի անոնց երկրին մէջ մեծ արշաւանք մ'ըրած եւ Գորգէյին հետ դաշնակից ըլլալուն համար՝ անգթութեամբ պատժած էր: Բնակիչները Աերա-Գրուզի կառավարէն զգնութիւն ուղած էին: Էսգալենդէ զանազան միջոցներով թշնամութիւնները դադրեցընելու համար անօգուտ տեղ աշխատելէն ետքը՝ Գուալբոբոգային դէմ ելլելու եւ Նաոգլանի դաշտին վրայ անոր հետ պատերազմելու ստիպուած էր: Իր բոլոր զօրքն երկու հազար տեղացի ու քառասուն սպանիացի էր. եւ միայն երկու ձի ու երկու փոքր թնդանօթ ունէր: Պատերազմը սկսելուն պէս՝ դաշնակցաց զօրքը Մեքսիկացիներէն յաղթուելով՝ ամէն կողմ ցրուեցան փախան: Էսգալենդէ ու իր քաջ ընկերները պատերազմն արտաքոյ կարգի քաջութեամբ շարունակեցին: Իր զինուց զօրութեամբը թշնամիներն ետ քաշուելու ստիպեց. մեծ ուժգնութեամբ զիրենք հալածեց եւ շատ մարդ ալ ջարդեց. վերջապէս յաղթութիւնը Սպանիացւոց կողմը մնաց, բայց իրենց ալ շատի նօսեցաւ: Մէջերնէն եօթը հոգի մեռան, քաջ Էսգալենդէն ալ քանի մ'օր ետքը՝ առած վերքերէն մեռաւ: Մեքսիկացիք վերաւորուած զինուոր մը կրցած էին ողջ բռնել, որն որ շուտ մը մեռաւ. ասոր գլուխը կտրեցին ու Մոնղեզու մային խրկեցին, ճամբան ամէն քաղաք-

ներուն մէջ ալ ցուցընելով, որպէս զի իմացընեն որ այնչափ հռչակուած օտարականներն ո՛չ անմահ եւ ո՛չ ալ անյաղթելի են: Գորդէզին դրած պատմական ծանօթութիւններէն կ'իմացուի որ ինք Գոլուլայէն չելած՝ արդէն նոյն դժբախտ լուրն առած էր, բայց ամենեւին մէկու մը չէր յայտնած, որպէս զի զօրքը չվհատի:

Աս պարագաները գիտնալով՝ իրեն հիմակուան գտնուած վիճակը խիստ վտանգաւոր կ'երեւար. յայտնի կը տեսնէր որ Մեքսիկոյի մէջ ըսպէ մը ապահով չէ. նոյնպէս ետ քաշուիլն ալ շատ դժուարին էր: Ամէն օր ընդունած նոր լրերն ու տեղեկութիւններն իր կասկածները կ'աւելցընէր: Մեքսիկացոց մէկ քանի ազնուականներուն հետ բարեկամանալով եւ անոնց հետ գաղտնի խօսակցութիւններ ընելով՝ իմացաւ որ իրենց դէմ դարան մը կը լարուի: Ռամիկն իր սովորական գործքերուն զբաղելու սկսած էր եւ խաղաղ կ'երեւար. բայց ազնուականաց ու ցեղապետաց ընթացքն յայտնի կը ցուցընէր որ ծանրակշիւ գործքի մը պատաղած են: Ոմանք արդէն յայտնապէս ըսած էին որ թմբերուն կամուրջները պէտք է կործանել: Գորդէզին լրտեսներն իրեն լուր բերին թէ Մոնդեզումա սպանիացի զինուորին գլուխն ընդունած է եւ արտաքոյ կարգի զգուշութիւն կ'ընէ որ աս բանս Սպանիացիներէն գաղտնի մնայ:

Աս լրերը Գորդէզին կասկածները կատարեալ հաստատեցին, եւ վտանգին մեծութեան վրայ համոզուելով՝ միտքը դրաւ որ յանկարծական ու արտաքոյ կարգի միջոցով մը անկից ազատելու ջանայ: Իր խուցը քաշուեցաւ եւ բոլոր գիշեր սաստիկ մտատանջութեամբ չարչարուեցաւ. վերջապէս իր ուշիմութեամբը զանազան միջոցներ մտածելէն եւ իրարու հետ կշռելէն ետեւ՝ որոշեց որ ամենէն յանդուգն ու արտաքոյ կարգի միջոցն ի գործ դնէ:



Աստու ըլլալուն պէս՝ պաշտօնակալներն ու զինուորաց մէջէն աւելի քաջերը, հմուտներն ու իր վրայ աւելի վստահ եղողները խորհրդի կանչեց, իրենց գտնուած ծանր վտանգն աչքերնուն առջեւը դրաւ: Մոնղեզու մային վրայ վստահութիւն չունենալն իմացուց, նոյնպէս անոր նենգաւորութեան վրայ զինքն համոզող պատճառները մեկնեց. դարձեալ Վերագրուզի դժբախտ պատահարը մանրամասն պատմեց եւ Մոնղեզու մային ալ անոր մէջ մատ ունենալն հասկըցուց. միանգամայն Մեքսիկացւոց նիւթած գաղանի գարանները մէջ բերաւ:

Գորդէզ աս ծանօթութիւններուն վրայ տաքութեամբ ու աշխուժով խօսելով՝ ունկնդիրներուն վրայ շատ խորունկ տպաւորութիւն մ'ըրաւ: Բայց ինչ մեծ զարմանք ունեցան, երբ որ ասոնք զրուցելէն ետեւ՝ վրան աւելցուց. Աս վտանգէն ազատելու համար մի միայն միջոց կայ. այս ինքն՝ Մոնղեզու ման բռնել եւ իբրեւ պատանգ իրենց բնակարանը բերել: Ասոր վրայ ունկնդիրներուն միաքը հարցուց: Աարծիքները բաժնուեցան. ոմանք կ'ըսէին թէ աս միջոցը բոլորովին մեր ջնջուելուն պատճառ կ'ըլլայ. ոմանք ալ կ'ըսէին թէ Վերագրուզ քաշուին աւելի խոհեմութիւն է: Բայց քաջասիրտ Վելասկուէզ տէ Ղէոն ու հաւատարիմ Սանտովալ՝ Սպարապետին կարծիքը պաշտպանեցին: Երկայն վիճաբանութենէ մը ետեւ՝ ժողովքին անդամները վերջապէս Գորդէզին առաջարկած խնդրոյն միաբան հաւանութիւն տուին: Հիմայ բանը կը մնար խորհուրդն ի գործ դնելուն վրայ. բայց զօրապետն արդէն ամէն բանի նախատես եղած էր: Իր սաստիկ հնարագիտութեամբը միաքը դրած էր որ բոլոր զօրութեամբը պալատ չերթայ, որովհետեւ աս անսովոր երեւոյթը տեղացւոց կասկածը կրնար զարթուցանել. ուր որ եթէ քիչ հոգւով երթալու ըլլար նէ՛ ամենեւին

կասկած մը չէին ունենար, որովհետեւ Գորդէզին՝ քանի մը հողուով թագաւորին երթալն արդէն շատ անգամ տեսած ու վարժած էին: Գորդէզ մեծերուն մէջէն Ալվարատոյ, Սանտովալ, Ալեյասիուէզ տէ Լէոն ու Լուկոյ Տաւիլա քաջ պաշտօնականներն ընարեց. նոյնպէս հասարակ զօրաց ամենէն քաջերէն հինգ հոգի առ յանդուզն գործողութեան օգնական որոշուեցան. դարձեալ քսանուհինգ քաջ զինուոր զէնքով պալատին կողմերն ասդին անդին յրուած՝ պատրաստ պիտի կենային, որ նշան մը տրուելուն պէս՝ քովէ քով դան ժողովուն: Իսկ Սպանիացւոյ ու դաշնակցաց բոլոր մնացած զօրքը Քրիստովալ տէ Օլիտ ու Տիեկոյ տէ Օրտազ քաջ պաշտօնականներուն հրամանին տակ իրենց բնակարանին մէջ պատրաստ պիտի սպասէին, որ եթէ Մոնդեզուճա ընդդիմութիւն ցուցնելով՝ զօրքի հարկաւորութիւն ըլլայ նէ, անմիջապէս դէպ ի պալատ պատերազմի վազեն:

Ամէն բան կարգի դրուելէն ետեւ՝ Գորդէզ իր ընկերներուն հետ դէպ ի արքունի պալատը ձամբայ ելաւ եւ առանց դժուարութեան թագաւորին ներկայացաւ: Առջի քաղաքավարական խօսքերէն ետքը՝ Սպարապետը մէկէն ի մէկ խիստ ու սպառնալից ձայնով մը՝ Գուալթօրոզային բռնած ձամբուն վրայ դանդատելու սկսաւ: Ար դարմանամ որ, բտաւ, դուն արտաքուստ մեզի այսչափ բարեկամութիւն ցուցնելէն ետեւ՝ հիմայ զմեզ ջնջելու դաղանի հրաման տաս: Գողոնազներուն դէմ եղած պատերազմն ու ջարդը յիշեցուց, եւ զինքը Գոլուլացւոյ դաւաճանութեան դրդուիչ անուանելէն վերջը, բտաւ որ Մինչեւ հիմայ յարգութեան ու խոհեմութեան համար չէի դանդատած. բայց Մեքսիկացւոյ նիւթած նոր դարաններն իմանալով՝ ալ միաքս որոշեցի որ ազգու միջոցներով իմ ու ընկերացս ապահովութեան

Տոգ տանիմ: Երբ որ Մարինա եւ Ալուիլար աս իրեն դէմ եղած ամբաստանութիւնը թարգմանեցին՝ թա-  
 դաւորը շփոթեցաւ, երեսին գոյնը նետեց եւ քիչ  
 մ'ատեն լուռ կեցաւ: Ա'երեւայ որ իր անձին եղած  
 անպատուութեան դէմ սաստիկ վշտացաւ: Ա'երջա-  
 պէս այլայլութիւնը բռնելով՝ նախ Գուալըբոբոգային  
 հրաման տալն ուրացաւ, եւ իր անկեղծութիւնը ցու-  
 ցընելու համար՝ շուտ մը մարդ խրկեց որ նոյն զօրա-  
 պետը Մեքսիկոյ դառնայ: Գորդէզ ասոր վրայ հա-  
 ճիլ ձեւացուց եւ յայտնեց որ ասանկ հզօր թա-  
 դաւորի մը մատնութիւն չընելուն վրայ համոզուե-  
 ցաւ. Բայց պէտք է որ, ըսաւ, Սպանիացուց կասկած-  
 ները փարատես, որոնք կարելի է թէ յուսահատա-  
 կան ու աղետալի գործքերու ձեռք զարնեն. իսկ  
 անկեղծութիւնդ գործքով ալ անոնց ցուցընելու հա-  
 մար՝ աս մէկիկ միջոցը կայ, որ քիչ մը ժամանակ  
 քու պալատդ թողուս եւ մեր մէջը բնակիս: Մոն-  
 դեզումային լեզուն բռնուեցաւ, անշարժ մնաց, գրե-  
 թէ ինք իրմէ ելած էր այսպիսի յանդուգն առաջար-  
 կութիւն մը լսելով: Ա'երջապէս սաստիկ նեղանալով՝  
 գոռոզութեամբ մը պատասխան տուաւ թէ Մեքսի-  
 կոյի թագաւորներն իրենք զիրենք բանտարկելու վար-  
 ժած չեն. եւ եթէ ինք տկարութեամբ ասոր զիջա-  
 նելու ալ ըլլայ, իր հպատակները չեն կրնար իրենց  
 թագաւորին ասանկ մեծ անարգանացը համբերել:

Գորդէզ իրեն բնական ճարտարխօսութեամբը  
 թագաւորը համոզելու ջանաց որ բանտարկութեան  
 մտածութիւնը բոլորովին մէկդի ձգէ: Արդէն, ըսաւ,  
 մեր բնակարանն ալ քու պալատներէդ մէկն է, ուր  
 որ քու նախորդներէդ մէկը բնակած է, որով ժողո-  
 վուրդն ալ ամենեւին չիվշտանար: Եւ դարձեալ ես  
 քու աստիճանիդ ու պատուոյդ պատշաճ յարգու-  
 թիւններն ու ծառայութիւնները կ'ընեմ: Մոնդե-  
 զումա իր մտքին վրայ հաստատուն մնաց: Երեք ժամ

էր որ աս սաստիկ ու ազգու վէճը կը տեսէր. Գորդէզ եւ իրենները խնդրոյն այսչափ երկրննալուն վրայ կը նեղանային ու սրտերնին կը հատնէր, որովհետեւ իրենց դուրսը մեծ թշուառութիւն մը կրնար բերել: Մէյ մ'ալ մէկէն ի մէկ Վելասկուէզ տէ Աէսն կառուցութեամբ պուայ. Ինչո՞ւ փուճ տեղ ժամանակ կը կորսընցընենք. թող բանտարկուելու ալ հաւանի, չէ նէ՛ հիմայ կուրծքը կը ծակեմ: Վելասկուէզին զարհուրելի ձայնէն ու սպառնալից ձեւերէն Մանդեզումա սարսափելով՝ Մարինային հարցուց թէ ան ասանկ կիրքով ըսած խօսքերն ի՞նչ է: Մարինա շուտ մը քովն երթալով քաղցրութեամբ մը, ցած ձայնով, կեղծելով որ ըսածը ծածուկ կը զրուցէ, ըսաւ. Տէր արքայ, ես քու հպատակդ եմ եւ քու ազէկութիւնդ կ'ուզեմ: Բայց աս օտարականաց վտահոթութիւնը վասարկած ըլլալով՝ անոնց բնութիւնն աղէկ ճանչցած եմ: Ուղածնին կատարէ. կը տեսնես որ հետդ ինչպէս պատուով կը վարուին. բայց եթէ դէմ դնելու ըլլաս, ստուգիւ կը մեռցընեն:

Սպանիացւոց հաստատութիւնն ու Մարինային խօսքերը՝ դժբախտ թագաւորը խախտեցին. սուր ելաւ ու ըսաւ. Աճապարենք, շուտով ձեր տեղն երթանք, որովհետեւ աստուածներուն կամքն աս է. ես ձեր պատուոյն վրայ կը վտահիմ: Աս ըսաւ եւ Գորդէզին խորհրդոյն համաձայն՝ շուտ մը իր պաշտօնատէրներն ու պալատականները կանչելով՝ իր որոշումն անոնց յայտնեց: Թէպէտ աս անսովոր որոշման վրայ շատ զարմացան եւ սաստիկ ցաւեցան, բայց ամենեւին ընդդիմութիւն մը ցուցընելու չհամարձակեցան, որովհետեւ իրենց տիրոջը կամքն իբրեւ Աստուծոյ ձայնը կ'ընդունէին: Չինքը պատգարակի մը վրայ գրին ու լութեամբ եւ արցունք թափելով՝ դէպ ի Սպանիացւոց կողմը սկսան տանիլ: Աս լուրը քաղքին մէջ տարածուելուն պէս՝ ժողովուրդն

ուր ելաւ . աս անօրէն յանդգնութիւնն ընող օտարականները ջնջելու սպառնալիքներ կ'ընէր : Նոյն միջոցին Մանգեզուսի զուարթ գէմքով մ'երեւցաւ եւ ձեռօք նշան ընելով՝ ըսաւ թէ իր ազատ կամօքը քիչ մը ժամանակ իր նոր հիւրերուն քովը կ'ուզէ մնալ : Ասոր վրայ խաւովութիւնը դադրեցաւ ու ժողովուրդը հանդարտութեամբ ցրուեցաւ :

Աս գէպքին վրայ Ռուպերդան հետեւեալ խորհրդածութիւնը կ'ընէ : Աս կերպով հզօր թաղաւոր մը , նոյն իսկ իր մայրաքաղքին մէջ , ցորեկ ատեն , խումբ մ'օտարականներէ բռնուեցաւ , առանց ընդգիմութեան եւ առանց պատերազմի գերի տարուեցաւ : Չկայ պատմութեան մէջ գէպք մը՝ որ ասոր հետ կարող ըլլայ բաղդատուիլ . եւ եթէ աս գէպքին ամէն պարագաները ստոյգ ու ամենահաւատարիմ հեղինակներէ հաստատուած չըլլային , ան աստիճանի այլանդակ ու անհաւատալի կ'երեւար , որ առասպելաց մէջ ընդունուելու համար պահանջուած հաւանականութեան աստիճանն ալ չէր ունենար :

## ԺԳ .

Գոտալէոֆոֆային մահատան պարթէր : — Մոնրիլլուսոն յեփն հոտարտաբեան իջ հասնի :

Գորդէզ իր ըրած խոստմանը համաձայն՝ թագաւորը մեծ յարգութեամբ ընդունեցաւ եւ սկսաւ հետը շատ մեծարանօք վարուիլ : Թագաւորին կենաց կերպն ամենեւին չփոխուեցաւ : Սպանիացւոց քով նոյն պատիւները կ'ընդունէր ու նոյն պաշտօնները կը վարէր , որոնք իր սեպհական պալատին մէջ ի գործ կը գնէր . իր պաշտօնեաներն ու պալատականները հետն ազատութեամբ կը տեսնուէին : Նոյնպէս կերակուրն ալ շատ առատութեամբ ու յառաջուան փառաւորութեամբ կը մատակարարուէր . ինք իր մտերիմներուն հետ սեղանի կը նստէր եւ աւել-

ցած կերակուրները զինուորաց բաժնել կու տար: Քիչ ժամանակուան մէջ աս նոր տեսակ կենաց վարժեցաւ, եւ կ'երեւար որ իր պահապանաց ընկերութիւնն իրեն հաճելի էր. ամենէն աւելի Գորդէզ ու Ալվարատոյ իրեն սիրելի եղած էին, իրենց ազնուական վարմանց, մեծամեծ ձրից ու զուարթ բնութեան համար: Երբեմն իրիկունները Գորդէզին հետ խաղով ալ կը զուարճանար: Մոնդեզուժա իր վասարկածը սպանիացի զինուորաց կը բաժնէր, իսկ Գորդէզ Մեքսիկացիներուն կը բաշխէր: Գորդէզ միշտ կը ջանար որ չէ թէ միայն աս վիճակը բանտարկուած թագաւորին նեղացուցիչ չերեւայ, հապանաեւ զուարճալի ու սիրելի ըլլայ: Ասիկա իրօք ալ յաջողեցաւ. այնպէս որ կ'երեւար թէ Մոնդեզուժա զԳորդէզ անկեղծութեամբ կը սիրէր: Աս տեսնելով՝ իրեն քիչ մ'աւելի աղատութիւն տուին. ալ կրնար ուղած ատեն տաճարներու այցելութեան երթալ, նոյնպէս երբեմն որսի ելլել. բայց բազմաթիւ սպանիացի պահապանները երբեք քովէն չէին զատուեր:

Քսան օր ետքը Գուալբոբոգա, իր որդին եւ իր գլխաւոր պաշտօնակալները շղթայի զարնուած Մեքսիկոյ հասան: Գուալբոբոգա յարգութեամբ բայց միանգամայն իր ծառայութեանց մէջ պակսութիւն չընող մարդու մը վստահութեամբ թագաւորին դիմացն ելաւ. սակայն Մոնդեզուժա զինքը պաղութեամբ ու արհամարհանօք ընդունեցաւ եւ անմիջապէս Գորդէզին ձեռքը տուաւ, որ վրան քննութիւն ընէ եւ եթէ յանցաւոր գտնէ նէ՛ պատժէ: Գուալբոբոգա եւ իր պաշտօնակալները քննուելով՝ ակամայ խոստովանեցան որ ամէն բան Մոնդեզուժային հրամանովը գործեցին: Ի վերայ այսր ամենայնի պատերազմի խորհուրդը զիրենք մահուան դատապարտեց: Գորդէզ աս վճիռը թագաւորին հաղորդեց եւ

միանգամայն ըսաւ թէ Յանցաւորները քննուելով՝ խոստովանեցան որ իրենց յանցանացը գլխաւորաբար դուռն պատճառ եղած ես: Անոր համար պէտք է, ըսաւ, որ դուռն ալ անձնական պատիժ մը կրես, որպէս զի աս յանցանքը կարող ըլլաս քաւել: Աս ըսաւ եւ առանց պատասխանի սպասելու՝ զինուորներէն մէկուն հրամայեց որ թաղաւորին ձեռուրները շղթայի զարնէ:

Թաղաւորը՝ որ իր անձն անբռնաբարելի ու նուիրական կը համարէր, ասանկ անօրէն բռնաբարու թիւն մը կրելով եւ աս գործողութիւնը՝ քիչ մը ետքը թաղաւորութենէ իյնալուն ստոյգ նշան սեպելով՝ սխաւ դառն արցունք թափել ու հեծելով ողբալ: Իր պաշտասկանները զարհուրած ու բերաննին կտալուած՝ կայսեր ոտքն ինկան, իրենց արցունքովն ու շղթաները վեր վերցընելով՝ անոր ցաւն ու ծանրութիւնը թեթեւցընելու կը ջանային: Մէկ կողմանէ ալ Սպանիացիք դատապարտուածներուն պատիժը տալու կ'աճապարէին: Պաշտօնին դիմացի հրապարակին մէջ խոշոր փայտակոյտ մը դիզուեցաւ, որուն վրայ զինարանին մէջ դանուած բոլոր զէնքերը դրուեցան, որ մէկտեղ այրին: Գուալբոբոզա եւ իր յանցանաց երէք դործակիցները՝ փայտակոյտին վրայ կապուեցան ու ողջ ողջ այրեցան: Չարհուրած ու ապշած ժողովրդեան բազմութիւնն աս արտաքոյ կարգի տեսարանին ներկայ էին եւ իրենց եղած նախատանաց հանդիսատես կ'ըլլային, սաստիկ ցաւով տեսնելով իրենց կայսեր եղած անարգութիւնը, որուն մէկ զօրապեան օտարականներու ձեռքով չարաչար կը սպաննուէր՝ իր պարտքը հաւատարմութեամբ կատարելուն համար. միանգամայն շատ կը ցաւէին տեսնելով որ իրենց նախնեաց յառաջատուութեամբը՝ հասարակաց ապահովութեան համար ժողովուած զէնքերն ալ բոցերուն զոհ կ'ըլլային:

Աս ցաւալի տեսարանը լմննալէն ետքը՝ Գորդէզ իր ձեռօքը Մոնղեզուման շղթաներէն արձակեց, ըսելով որ Ա՛լ ամէն բան մոռցուած է: Թագաւորը՝ որն որ չափազանց ու պարսաւելի տկարութիւն մը ցուցուցած էր, մէկէն ի մէկ սաստիկ ուրախանալու սկսաւ, եւ վերջին յուսահատութենէն՝ արտաքոյ կարգի ուրախութեան փոխուեցաւ ու նորէն իր ազատիչներուն շնորհակալութեան եւ սիրոյ նշաններ ցուցուց: Գորդէզ իրեն խորունկ հնարագիտութեամբը՝ կայսեր քովի պահապանները վերցուց եւ իրեն յայտնեց որ ա՛լ ազատ է, կրնայ իր պալատը դառնալ: Մոնղեզումա պատասխան տուաւ թէ Իմ երթալս Սպանիացոց վնասակար է, որովհետեւ ազնուականներն ու ժողովուրդը զիս անտարակոյս պիտի ստիպեն որ ձեզի դէմ զէնք առնում: Աս պատասխանն անկեղծ չէր. Գորդէզ Մարինային ձեռօքն անոր ծածուկ դիտաւորութիւնն իմացած էր: Կայսրը մինչեւ Սպանիացոց երթալը անոնց քովէն բաժնուիլն իրեն պատուոյն անարգանք կը սեպէր, մտածելով որ անշուշտ իր հպատակներուն համարումը կը կորսնցընէ, որովհետեւ իր անձնական ազատութիւնն օտարականներուն ձեռքէն ընդունած կ'ըլլայ:

Գուալըօբոգայի մահն ու կայսեր անարգուիլը՝ մէկ քանի քաջ Մեքսիկացոց եռանդը գրգռեցին, որոնք ազգին պատուոյն վրէժը պահանջել եւ տէրութիւնն ինկած տկարութեան աստիճանէն՝ առաջին փառաւորութեան հասցընել կը բաղձային: Գաղումածին կայսեր երբօրորգին՝ Սպանիացոց յանդրգնութեան ու գողոզութեան ա՛լ չկրնալով համբերել, Գեզեւգոյի բոլոր ազնուականները ժողովեց եւ անոնց առաջարկեց որ օտարականաց դէմ պատերազմ հրատարակեն, որուն ամէնքը մէկ բերան հաւանեցան: Աս երեւոյթներէն Գորդէզ խռովելու սկսաւ.



գիտէր թէ վախկոտ ու ընկճած ժողովուրդ մը մէկէն ի մէկ բարոյական գրգռութիւն ու եռանդ ստանալու որ ըլլայ, սաստիկ կատաղի ու յուսահատական գործքերու կրնայ ձեռք զարնել: Նոյն իսկ Մոնղեզումա ալ անհանգիստ էր. որովհետեւ անանկ կը կարծէր որ Գազումաձին իր անթուր պիտի յափըշտակէ, պատճառ բերելով որ թագաւորն ազատ չըլլալով՝ չիկրնար ուղածին պէս կառավարել: Անոր համար իր եղբորորդւոյն բացարձակ հրաման խրկեց որ դիտաւորութիւնը մէկդի թողու եւ պատրաստութիւնները դադարեցնէ: Բայց Գազումաձին անոր հրամանները բանի տեղ չդրաւ. եւ յայտնեց որ ինք իր որոշմանը վրայ հաստատուն է եւ անկէ ետքը Սպանիացիներէն ո՛չ կը վախնայ եւ ո՛չ ալ կը խաբուի: Միանգամայն զանոնք կը ստիպէր որ շուտով Մեքսիկոյէն ելլեն եւ իրենց երկիրը դառնան, եթէ իրենք զիրենք ջնջուելու վտանգի մէջ դնել չեն ուզեր:

Աս աներկիւղ համարձակութենէն Գորդէզ այլայլելով՝ սկսաւ թշնամւոյն վրայ երթալու պատրաստութիւն տեսնել: Բայց Մոնղեզումա դէմ դրաւ, ըսելով որ Գեզեւզոյ տէրութեան երկրորդ ամուր ու մեծ քաղաքն ըլլալով՝ անոր դէմ յարձակած ատեն շատ վտանգներու կրնայ պատահիլ: Ինք բանը կարգի դնելու համար եղբորորդին մայրաքաղաքը կանչեց, որ Գորդէզին հետ խօսակցի, որով իրենց վէճը դիւրաւ կրնար դադրիլ: Թագաւորին՝ օտարականներէն այն աստիճանի անարգուելէն ետքն ալ՝ այնպէս անոնց թեր ելլելուն վրայ Գազումաձին սաստիկ նեղանալով՝ առաջարկութիւնը մերժեց, ըսելով թէ Քիչ մը ետքը Մեքսիկոյ կու գամ, բայց չէ թէ անօգուտ խօսակցութիւններով ժամանակ կորսընցընելու, հապա Սպանիացոց՝ մեր տէրութեան հասցուցած նախատանաց վրէժն առնելու համար:

Մոնղեզու մտածելով որ Գաղութաձինին Սպանիացուոց դէմ ըրածին պատիժն ինք պիտի կրէ, միտքը դրաւ որ անիկայ ձեռք ձգելով՝ մտածած խորհուրդները խափանէ: Աս վախճանաւ անոր շատ պաշտօնակալներն իր կողմը վաստակելով՝ զինքը յանկարծակի բռնել Մեքսիկոյ բերել տուաւ ու Գորդէզին ձեռքը յանձնեց: Սպարապետին առաջին գործքն եղաւ անոր յաջորդ մը դնել տալ, եւ Մոնղեզու մային առաջարկեց որ անոր եղբայրն ընտրուի, որն որ քանի մ'որ յառաջ իր եղբօրը զինքը սպաննելու համար խրկած յեզուզակներուն ձեռքէն ազատած էր: Գաղութաձինին զինքը մեռցընել ուզելուն պատճառն ան էր որ անիկա իրեն հետ չէր միաբանած: Թագաւորը Գորդէզին առաջարկութեանը հաւանութիւն տուաւ, որովհետեւ իշխանին բնական ձիրքերն ստուգիւ զինքն աս բարձր աստիճանին արժանի կ'ընէին, եւ ընտրուողին իմացուց որ Գորդէզին միջնորդութեամբն ան պաշտօնին հասաւ: Իսկ ազնուականները տեսնելով որ գլխաւորին բռնուեցաւ, զօրքը ցրուեցին ու թողութիւն խնդրեցին, որն որ զիւրաւալ շնորհուեցաւ:

Այսպէսով Գորդէզ աս սաստիկ վտանգէն ալ ազատեցաւ, կէս մը իր ճարպկութեամբն ու կէս մը ոլարագայից յարմարութենէն, որով աս ժամանակաւոր մըրիկն իրեն աւելի օգտակար եղաւ, որովհետեւ Մոնղեզու մտածանկ կարծեց որ տէրութեան խաղաղութեան համար Գորդէզին շնորհակալ ըլլալու է. եւ տէրութեան առաջին իշխանն իր միջնորդութեամբն ընտրուելով՝ վրան օէր ստացաւ: Սպարապետն ասով աւելի եւս Մոնղեզու մային հոգւոյն վրայ տիրելով՝ անոր անուամբը բացարձակ իշխանութիւն բանեցընելու սկսաւ. քանի մը Սպանիացի ընտրեց եւ անոնց յանձնեց որ երթան տէրութեան զանազան կողմերը պտրաին: Մոնղեզու մտածանկ իրենց առաջ-

նորդելու եւ պաշտպանելու համար՝ Մեքսիկացիներէն շատ մարդ ընկեր տուաւ : Ասոնք ճամբայ ելան, տէրութեան մեծ մասը պտըտեցան, երկիրն ու բերքերը քննեցին, ոսկի ու արծաթ ելլելու տեղերն աւելի եւս մտադրութեամբ աչքէ անցուցին, գաղթականութիւններ հաստատելու յարմար տեղերը նշանակեցին եւ ջանացին ոգիներն Սպանիացւոց լուծին տակ մտնելու պատրաստել : Մէկալ կողմանէ ալ Գորդէզ մայրաքաղաքին մէջ նստած՝ կառավարելու յարմար ու երեւելի պաշտօնատէրներն, որոնք իր դիտաւորութիւններուն կրնային արգելք ըլլալ, Մոնդեզումային անուամբն իրենց պաշտօններէն վար կը ձգէր, ու անանկ մարդիկներ կ'ընտրէր, որոնք կամ բոլորովին անյարմար էին, կամ ամէն բանի մէջ գլուխ ծռելու պատրաստ կ'երեւային :

Աս ամէն յաջողութիւններէն ու թագաւորին իր կամացը կուրօրէն հնազանդելէն շափազանց համարձակութիւն ստանալով, Գորդէզ զՄոնդեզուման ստիպեց որ ինք զինքը կաստիլիայի թագաւորին հարկատու ճանչնայ, իր թագն անկից ընդունի եւ անոր տարեկան հարկ վճարէ : Մոնդեզումա տկար գտնուելով աս անարգական առաջարկութեան ալ գլուխ ծռեց. իր մեծամեծները խորհրդի կանչեց ու հանդիսաւոր ճառով մը անոնց առջեւը դրաւ իրենց մէջ ծանօթ եղած աւանդութիւնն ու մարգարէութիւնը՝ թէ ատենօք ուրիշ ցեղ մը պիտի դայ ու գլխաւոր իշխանութիւնն իր ձեռքն առնէ : Ես կը կարծեմ որ, ըսաւ, նոյն ցեղն՝ Սպանիացիք են. անոր համար անոնց թագաւորին Մեքսիկոյի տէրութեան վրայ ունեցած իրաւունքը կը ճանչնամ, իմ թագս անոր ոտքը դնել կ'ուզեմ ու ասկէ ետեւ իրեն հարկատու կ'ըլլամ : Աս ճառը խօսելու ժամանակ խեղճն անանկ այլայլած էր, որ հառաչանքէն ու լալէն շատ անգամ խօսքն ընդմիջահատեցաւ :

Աս առաջարկութեան՝ մեծամեծաց վրայ զարմացմամբ խառն արտմութիւն մը տիրեց. բայց շուտ մը կիրքերնին դրդուելով ու կատղելով՝ մէջերնին քրթմնջելու սկսան. կ'երեւար որ բռնութեան գործքի մը ձեռք զարնել կ'ուզէին: Գորդէզ անոնց աս յուզմունքն իմանալով եւ հետեւութեանց առջեւն առնել ուզելով՝ ըսաւ թէ Իմ թագաւորիս միտքը՝ զՄոնղեզումն աթոռէն վար առնուլ չէ, եւ ոչ ալ տէրութեան օրինացը մէջ նորոգութիւն մը խոթել: Աս ապահովութիւնը՝ Սպանիացոց անոնց սրտին մէջ ձգած վախին եւ իրենց թագաւորին հպատակութեան օրինակին հետ միանալով՝ ժողովականք ակամայ եւ բռնի հաճութիւն մը տուին:

Արկրորդ օրը աս դաշանց հաստատուելուն հանդէսը մեծ շքեղութեամբ կատարուեցաւ: Նոյն հանդիսութեան ատեն Մոնղեզումային վրայ սաստիկ արտմութիւն մը կ'երեւար, որմէ նոյն իսկ սպանիացի զօրքերուն սիրտն ալ շարժեցաւ: Գորդէզ ազնուականաց ժողովքին մէջ ըրած խոստումը նորէն կրկնեց, եւ ծանոցց որ չէ թէ միայն Մոնղեզումային ձեռքէն իր իշխանութիւնը պիտի չառնուի, հապանոր հակառակ ասկէ ետքը Սպանիացոց ուրիշ տեղեր տիրած երկիրներովն անոր տէրութեան սահմանները պիտ'որ ընդարձակին:

Աբբ որ Գորդէզ մէյ մը Մոնղեզումային ընդունել տուաւ Սպանիայի թագաւորին վերին իշխանութիւնը, ալ անոր իրօք հարկ վճարելու հաւանեցընելն ալ շատ դժուարութեան տակ չէր իյնար: Պատրաստուած հարկն ու պարգեւները՝ մեծագին ու ազնիւ էին, եւ ազնուականներն ալ իրենց առատութեամբ մասնակից եղան: Սպանիացիք աս պարգեւներն ու զանազան պատճառանքներով ձեռք բերած հարստութիւնները ժողովեցին: Բոլոր ոսկին ու արծաթը հալեցուցին. ամենուն դինը՝ վեց հարիւր հա-

զար Սպանիայի փեղա (գրեթէ 12,000,000 բոլոր) բրաւ. առանց համբելու գոհարներն ու զարդերը՝ որոնց բանուածքին գեղեցկութեանը համար չաւրեցին: Զինուորներն անհամբերութեամբ աս դանձուն բաժնուելուն կը սպասէին, որն որ իրօք ալ քիչ մը ետքը կատարուեցաւ: Բոլորին հինգերորդ մասը կաստիլիայի թագաւորին բաժին հանուեցաւ. հինգերորդ մաս մ'ալ Գորդէզ առաւ իբրեւ առաջին զօրապետ եւ հրամանատար. նոյնպէս յառաջուրնէ սկսեալ՝ բանակին պատրաստութեան համար զանազան անձանց ըրած ծախքերն ալ հանեցին, եւ մնացածը պաշտօնակախներուն ու հասարակ զօրքերուն բաժնեցին, ամէն մէկուն զինուորական աստիճանին եւ ըրած ծառայութեան համեմատ: Ամբողջ գումարն այսչափ մասերու բաժնուելով՝ ամէն մէկ հասարակ զինուորին հազիւ հարիւր փեղա (2000 բոլորի չափ) ինկաւ: Զինուորներն աս գումարն իրենց յուսացածէն այնչափ քիչ գտան, որ մինչեւ ոմանք նեղանալով՝ ընդունիլ չուզեցին: Գորդէզ ասոնց զրգուութիւնն իջեցընելու համար՝ իր մասէն շատ առատաձեռնութիւններ ընելու ստիպուեցաւ:

Մինչեւ նոյն տառն Գորդէզ բախտին յաջողելովը՝ ամէն բանի մէջ ուզածն յառաջ կը տանէր. բայց կարծես թէ քիչ մը ժամանակ բախտը զինքը թողուց: Ազնուականք իրենց անգործութեան վրայ ամբշնալով՝ մտադրութիւննին տէրութեան ողորմելի վիճակին վրայ դարձուցին. կը մտածէին որ թագաւորնին օտարականաց քով բանտարկուած մնացեր է, տէրութեան օգտակար մարդիկ երեսէ ձգուած ու խեղճութեան մէջ են. կը տեսնէին որ իրենց աստուածներն օրէ օր նոր անարգանքներ կ'ընդունին ու տէրութիւնն օտարականաց բռնութեան մատնուեր է: Աս տժգոհութիւնները Գորդէզ իր մէկ անզգուշութեամբն աւելի սաստկացուց ու իրեն դէմ յայտնի

զինելու ստիպեց: Մոնղեզու մային հետ ըրած խօսակցութեանց մէջ շատ անգամ զանիկա կը յորդորէր որ սուա աստուածոց պաշտօնը թողու եւ քրիստոնէութիւնն ընդունի: Տեսնելով որ անիկա իր մնորութեանց մէջ յամառ կը կենայ, իր զօրացը գլուխն անցած՝ մեծ տաճարին կուռքերը կործանելու գնաց: Բայց քրմերը զէնքերնին առին դէմ կեցան. ժողովրդեան բազմութիւնն ալ իրենց աստուածները պաշտպանելու համար ամէն կողմանէ թափեցան ու օտարականները պաշարեցին: Ասուգիւ սաստիկ արիւնալից կռիւ մը կը սկսէր, թէ որ Գորդէզ միտքը դրածէն ետ չկենար. միայն տաճարին մէջ խաչելութեան ու սուրբ Աստուածածնայ պատկեր մը գնել տալով՝ դո՛հ եղաւ:

Վրմերն առ գէպքն իրենց առիթ առնելով՝ ազնուականներն աւելի եւս դրզուեցին: Ասոնք Մոնղեզու մային հետ գաղանի խորհրդակցելով՝ իրենց միտքը դրածն յառաջ տանելու իշխանութիւն ուզեցին: Բայց թագաւորը՝ բռնութիւն բանեցընելու տեղ՝ բանը քաղցրութեամբ լմնցընել ուզեց. անոր համար զԳորդէզ կանչել տալով՝ անոր ըսաւ թէ վեց ամիս է որ Մեքսիկոյ մտած էք. արդ ձեր դեսպանութեան պաշտօնը կատարած ըլլալով՝ ալ հոս կենալու հարկաւորութիւն մը չկայ: Միանգամայն աստուածներուն կամքն ու ժողովրդեան բազմանքն առ է, որ շուտով իմ տէրութենէս դուրս ելլէր. ապա թէ ոչ՝ զձեզ վտանգի մէջ կը ձգէք: Ասանկ հատու եւ որոշ առաջարկութեան մը եղանակէն Գորդէզ իմացաւ թէ Մոնղեզու մային ու ազնուականաց մէջ գաղանի որոշմունք մ'եղեր է. հասկըցաւ որ թագաւորին կամացը զիջանիլ ցուցընէն՝ աւելի ապահով է քան թէ յայտնապէս դէմ գնել ուզելը: Ուստի պատասխան տուաւ թէ Արդէն ես ալ կը մտածեմ որ ետ դառնամ. բայց նաւերս պրած ըլլալով՝ ասեն պէտք է որ նորէն նաւ շինուի: Աս

պատասխանը հաճութեամբ ընդունուեցաւ. Մոն-գեզումա զԳորդէզ սիրով դրկեց եւ անոր հարկաւոր եղած ժամանակը շնորհեց: Աւերա-Գրուզ մեքսիկացի արուեստաւորներ խրկուեցան, որ սպանիացի ատաղ-ձագործներուն վերակացութեամբը նաւու յարմար փայտեր կտրեն ու նաւատորմիդը պատրաստեն: Բայց Գորդէզ ձեռքի տակէն հրաման խաւրած էր որ զանազան գծուարութիւններ հանելով՝ բանը մինչեւ Բորդոյ-Վարրերոյին եւ Մոնդեյոյին դալուստն ուշացնեն. կը յուսար որ անոնք Սպանիայէն նոր զօրք, նոր օգնութիւն կը բերեն: Ութ օր ետքը Մոնդեզումա իրեն ծանոյց որ տեսած պատրաստութիւններն անօգուտ են. իր ազգին նաւերովն ալ կրնայ ետ դառնալ: Աս ըսելով իր սուրհանդակներուն բերած նկարները ցուցուց, որմէ յայտնի կը տեսնուէր որ ծովեզերքը տասնութը նաւով Սպանիացուոց նաւատորմիդ մը մօտիկցեր էր: Սպարապետն աս նոր լուրը սաստիկ ուրախութեամբ ընդունեցաւ. բայց իր ուրախութեան պատճառը՝ Մոնդեզումային ենթադրածէն բոլորովին տարբեր էր:

## ԺԵ.

Բաժնիւյ Եւրօպեական արշաւանք:

Բորդոյ-Վարրերոյին ու Մոնդեյոյին գէպ ի Սպանիա ճամբայ ելլելէն ետեւ ինն ամիս անցած ըլլալով՝ Գորդէզ անոնց ետ գառնալուն կը սպասէր, յուսալով որ թագաւորէն իր իշխանութեան հաստատութիւնը կ'ընդունի, որովհետեւ առանց աս հաւանութեան՝ իր իշխանութիւնը միշտ անհաստատ բան մըն էր: Թէպէտ տէրութեան մինչեւ կենդրոնը մտած էր, ի վերայ այսր ամենայնի ասանկ մեծ կայսրութեան մը աշխարհակալութիւնը՝ իր քովը մնացած քիչ զօրքովը չէր կրնար գլուխ հանել. եւ

Թագաւորէն իր գործած գործքերուն հաւանութիւն չառած՝ Ամերիկայի մէջ եղած գաղթականութիւններէն ամենեւին օգնութեան մը չէր կրնար յուսալ: Երբ որ ինք աս դժնդակ խորհուրդներով կը տանջուէր, եւրոպական նաւեր տեսնուելուն լուրը զինքը շատ ուրախացուց. բայց աս ուրախութիւնն երկայն չտեւեց: Սանտովալ՝ որ Էսպալէնդէին տեղ Աերագրուղի կառավար դրուած էր, սուրհանդակ մը խաւրելով Գորդէզին կ'իմացընէր թէ եկած նաւատորմիցը Գուպայի կառավարէն խաւրուած էր, չէ թէ իրեն օգնելու, հապա իրեն դէմ գործելու համար:

Ինչպէս յայտնի է՝ Ալեյասկուէզ արդէն իսկզբանէ Գորդէզին հաւատարմութեան վրայ տարակոյս ունէր եւ քիչ մը վերջը կասկածներն աւելցան, մանաւանդ երբ որ տեսաւ թէ իրեն լուր չիխրկեր եւ իր արշաւանաց համարը չիտար: Իսկ երբ որ Բորդոյ-Գարրերոյ ու Մոնդէյոյ՝ Սպարապետին յայտնի արգելման դէմ՝ անխոհեմութեամբ, չիդիտցուիր ինչ պատճառաւ, Գուպա կղզին հանդիպեցան, ալ Ալեյասկուէզ իր կարծեացը մէջ բոլորովին հաստատուեցաւ, ու Գորդէզէն խաբուած ըլլալէն զատ՝ իր ստանալու փառքէն ալ զրկուելուն վրայ շատ նեղացաւ. անոր համար ալ զԳորդէզ իր պաշտօնէն վար առնելով ըրած մատնութիւնը պատժել կ'ուզէր: Ան օրերը Սպանիայէն նոր իշխանութիւններ ու պատիւներ ալ առած ըլլալով՝ միտքը դրածն աւելի եւս գիւրաւ կրնար յառաջ տանիլ: Քիչ ատենի մէջ՝ տասն'ութը նաւ, ութսուն ձիաւոր, ութհարիւր հետեւակ ու տասուերկու կտոր թնդանօթ պատրաստել տուաւ. եւ հրամանատարութիւնը Բամֆիլոյ նարվաէզին յանձնելով՝ հրաման տուաւ որ զԳորդէզ եւ անոր զլխաւոր պաշտօնակալները բռնէ, իբրեւ դերի իրեն խրկէ, եւ ետքը իր անուամբը նոյն երկիրներուն աշխարհակալութիւնը գլուխ տանի:



Նարվաէզ յաջող ճամբորդութեամբ մը Ս. Յովհաննէս ա' Ուլլոս զօրքերը ցամաք հանեց: Հոն հանք գտնելու համար Գորդէզէն խրկուած երեք զինուորք իրեն հետ միացան եւ Սպարապետին գտնուած վիճակն իմացուցին, որմէ Նարվաէզ աւելի եւս սիրտ առաւ: Նախ Սանտովալին հետ խօսակցիլ ուզեց որ վերա-Գրուզն իրեն յանձնէ. աս երեւելի գործքը կուէվարա անունով քահանայի մը յանձնեց, որն որ թէպէտ շատ իմաստուն ու տաղանդաւոր, բայց չափէն աւելի ալ կրակոտ ու խիստ մարդ էր: Երբ որ կուէվարա իր գալուն պատճառը Սանտովալին յայտնեց, անիկա հաստատուն կեցաւ ու Գորդէզին կողմը պաշտպանեց: Ասոր վրայ կուէվարա սաստիկ նեղանալով՝ զԳորդէզ եւ անոր կողմն եղողները՝ մտանիչ անուանեց. ամէնքն ալ մեծամեծ պատժոց արժանի են, ըսաւ, որն որ արդէն շատ չ'անցնիր՝ պիտ'որ ընդունին: Սանտովալ տեսնելով որ անոր հետ պատճառով խօսիլ չ'ըլլար, զինքն ու հետն եկողները բռնեց ու Մեքսիկոյ խրկեց:

Գորդէզ գիտնալով որ մարդիկ աւելի անուշութեամբ կը շահուին, քան թէ խստութեամբ ու թշնամութեամբ՝ կուէվարան իբրեւ հայրենակից, իբրեւ բարեկամ ընդունեցաւ. շուտ մը շղթաները քակել տուաւ, Սանտովալին խստութիւնը վար զարկաւ ու խոստացաւ որ անիկա ասանկ յարգելի անձի մը ըրած նախատանաց պատիժը կ'ընդունի: Ասանկ վարուելով եւ միանգամայն զանազան պարգեւներ տալով՝ կուէվարային վստահութիւնը վաստակեցաւ եւ դիւրութեամբ Նարվաէզին զօրութեան ու մտացը վրայ իրեն հարկաւոր եղած ծանօթութիւններն առաւ: Իմացաւ որ Նարվաէզ իր զօրաց առջեւ զինքն ու իրեններն իբրեւ աքսորուած, ապստամբ ու Մեքսիկացւոց դէմ բռնութիւն ընող ստորագրած էր: Աս ալ իմացաւ որ Նարվաէզ Մոնդեզու-

մային գաղտնի իմացուցած է թէ Սպանիայի թագաւորն իրեն դէմ բռնուած ընթացքը հանած չէ, անոր համար ալ զինքը խրկած է որ Վոնդեզուամա ազատէ ու իր առջի իշխանութեան հասցընէ, որմէ անիրաւութեամբ զրկուած էր: Այսօրն ալ աս լուրը վարպետութեամբ մը իր մարդիկներուն ձեռքովը դաւառներուն մէջ Գորդէզէն գաղտնի տարածել տալով՝ ժողովուրդն ոտք ելլելու կը զրդուէր, որոնք զՆարվաէզ իրենց ազատիչը կը սեպէին:

Ապարապեաին քաջասրտութիւնը, հաստատութիւնն ու ճարտարմտութիւնը երբեք աս աստիճանի դժնդակ, անխուսափելի ու դժուար պարագաներու հանդիպած չէր: Բոլոր իր մտաց սրութիւնն ի գործ դնելու էր, ասանկ վտանգաւոր վիճակէ մը յաջողութեամբ պրծելու համար: Եթէ որ Նարվաէզին դալտեան Մեքսիկոյի մէջ սպասէր, անտարակոյս կը կործանէր. որովհետեւ թէ թշնամին իրմէ շատ աւելի զօրութիւն ունէր, թէ Մեքսիկացիք աս յարմար առիթը ձեռք առնելով՝ իրենց վրայ ծանրացած լծէն ազատելու համար վերջին ճիգերնին ի գործ կը դնէին: Ասոր հակառակ թէ որ քաղքէն քաշուէր ու Վոնդեզուաման ազատ թողուր, իր այնչափ ժամանակուան աշխատութեանց ու յաղթութեանց պտուղը մէկ ըսպէի մէջ կը կորսնցընէր: Աերջապէս երբորդ մտածմունք մ'ալ ունեցաւ, որն որ թէպէտ ամենէն աւելի վտանգաւոր էր, բայց միանգամայն ապագային համար աւելի յոյս մը կու տար. մտածեց որ զօրքին մէկ մասը Մեքսիկոյի մէջ թողու որ թագաւորը պահպանեն, որով միանգամայն ցուցընէ որ ամենեւին վախ մը չունի. եւ ինք զօրքին մէկալ մասովը Նարվաէզին վրայ յարձակի: Գորդէզ աս վերջին կերպն ընտրեց ու գործքին յաջողութիւնը բախտին ձեռքը թող տուաւ:

Իայց խնդիրը զէնքով որոշելէն յառաջ՝ աղէկ

սեպեց որ հաշտութեան ու միաբանութեան բանա-  
կցութիւն մ'ընէ, ինչու որ ասանկ փորձ մը չըրած՝  
իր հայրենակիցներուն դէմ պատերազմի ելլելն իրեն  
անպատեհ բան մը կ'երեւար. մէկալ կողմանէ ալ կը  
յուտար որ աս երթեւեկութեամբ Նարվաէզին զօ-  
րաց մէջէն ոմանք իր կողմը կը միտեցընէ, որոնց  
մէջ արդէն բարեկամներ ալ ունէր: Ասանկ երեւելի  
հրեշտակութեան մը համար՝ թէ յաջողակ եւ թէ  
իրեն սաստիկ հաւատարիմ մէկը պէտք էր ընտրել,  
որուն վրայ կարող ըլլար ամէն կողմանէ վստահ  
ըլլալ. ինչու որ գացողը՝ գլխաւորաբար օգտակար  
հաշտութիւն մը փորձելու պիտ'որ ջանար, եւ եթէ  
չյաջողէր, գոնէ զօրքերն իր կողմը շահելու պիտ'որ  
աշխատէր: Գորդէզ հոս ալ իր քաջ ընտրութիւնը  
ցուցուց, իր յարգելի մատրանապետ Հայր Օլմետոյ  
քահանան ընտրելով, որուն եկեղեցական մեծարոյ  
աստիճանին վրայ դեռ պանութեան պաշտօնն ալ  
գալով՝ կը յուտար որ Նարվաէզին առջեւն իբրեւ  
նուիրական անձ մը կրնայ երեւալ: Հայրն Օլմետոյ  
Նարվաէզին հետ բերնէ բերան խօսելու պաշտօնէն  
զատ՝ Գորդէզին հին բարեկամներուն, Ղուկաս Վե-  
լասիուէզին ու Անդրէաս Տուերոյին ալ գաղտնի նա-  
մակներ ունէր: Նոյն նամակներուն մէջ Գորդէզ մեծ  
խոստումներ կ'ընէր եւ մեծագին պարգեւներ ալ  
խրկելով՝ գրածները կը հաստատէր:

Նարվաէզ գոռոզութեամբ մ'ընդունեցաւ Օլմե-  
տոն, եւ ըրած առաջարկութիւններն անարգելով մեր-  
ժեց. իր զօրութեան վրայ ապաւինելով՝ մեծ մեծ  
խօսելու սկսաւ. Գորդէզին դէմ սպառնալիքներ ը-  
րաւ եւ ըսաւ որ Քանի մ'օրէն թէ իրեն եւ թէ  
իր կողմն եզող պաշտօնակալներուն գլուխն առ-  
ջեւս կը տեսնեմ: Օլմետոյ քաղցրութեամբ ու ճարպ-  
կութեամբ մ'ուզեց զինքը համոզընել որ ասանկ  
քաղաքական պատերազմն անվայել ու դարովելի բան

ըլլալէն զատ՝ Սպանիայի շատ վնասակար է: Աւելի աղէկ չ'ըլլար մի, ըսաւ, որ մէջերնիս միաբանինք, եւ իրարու դէմ պատերազմելով տկարանալու տեղ՝ զօրութիւննիս միացնենք, որով բոլոր երկրին դիւրութեամբ կրնանք տիրել: Բայց, աս պատճառներն անօգուտ եղան. Նարվաէզ ասխօսքերուն ամենեւին հաւանիլ չուզեց:

Հայրն Օլմետոյ տեսնելով որ աս կողմանէ իր յոյսը փճացաւ, զօրքերուն սիրտը վաստակելու ջանաց. իր յաջողակութեամբն ու Գորդէզին առատաձեռնութեամբն իրեն բաւական կողմնակից գտաւ: Անդրէաս Տուերոյ, որն որ արդէն Գորդէզին կողմնէր, ընդունած մեծագին ընծայովն ինք զինքը բոլորովին որոշեց: Իր օրինակէն շարժելով՝ ուրիշ շատ պաշտօնակախներ ալ նոյնն ըրին, եւ Նարվաէզ անօգուտ ու հպարտական խօսակցութիւններով ժամանակը կորսընցուցած տտեն՝ անդիէն ճարպիկ հաշտարարն առանց բոպէ մը պարապ տտեն անցընելով՝ զօրաց սիրտը Գորդէզին կողմը կը վաստակէր:

Առէվարային ու իր ընկերներուն ետ դառնալն ալ Սպարապետին կողման շատ օգնեց: Ասոնք Նարվաէզին բանակը դառնալուն պէս՝ Գորդէզին քաղցր բնութիւնն ու առատաձեռնութիւնը գովելու սկըսան. ըսին թէ ինք ամէն տեսակ դաշնադրութեան պատրաստ է եւ խելքը միտքը միայն Սպանիացւոց փառքն ու պարծանքն աւելցընելու վրայ է: Աս խօսակցութեանց վրայ զօրաց մէկ մասին միտքը փոխուեցաւ. յայտնապէս բողոքեցին թէ օտար երկրի մը մէջ քաղաքական պատերազմ ընելը շատ վնասակար ու անիրաւ է, մանաւանդ անանկ զօրապետի մը դէմ՝ որուն տէրութեան ըրած մեծ ծառայութիւնները ոչ ոք կրնայ ուրանալ: Նորվաէզ ասոնց վրայ շատ նեղանալով՝ Առէվարային արգելեց որ անկէ ետեւ ալ ըրած դեսպանութեան վրայ ամենեւին

չխօսի: Բայց ի՛նչ օգուտ, բանը բանէն անցած էր: Գորղէզին խօսքն ամենուն բերանն էր. վտանգն ան աստիճանի հասաւ՝ որ Նարվաէզ յայտարարութիւն մը հանեց, որուն մէջ զԳորղէզ եւ անոր մարդիկնէրը թագաւորէն ապստամբ կը հրատարակէր: Օլմետոն ալ բռնել ուզեց, բայց Տուերոյին աղաչանացը լսելով՝ աս բռնութեան գործքէն ետ կեցաւ, միայն հրամայեց որ շուտով բանակէն դուրս ելլէ:

Գորղէզ իմանալով որ միաբանութիւն ընելու համար Օլմետոյին բոլոր ջանքը պարապ ելեր է, որոշեց որ Նարվաէզին դէմ քալէ. մայրաքաղքին մէջ Ալվարատոյին հրամանին տակ հարիւր յիսուն հօգի թող տուաւ, որոնք անանկ մեծ քաղաքը, բոլոր հոն թող տուած դանձերն ու թագաւորը պիտի պահպանէին: Իր խորագիտութեամբն իրեն ճամբորդութեան բուն պատճառը Մոնդեզումայէն դաղտնի պահելու ջանաց, թագաւորը հաւանեցընել ուզեց որ նոր եկող օտարականներն իրեն բարեկամ են եւ քիչ մը հետերնին տեսնուելէն ետքը՝ ամէնքը մէկտեղ իրենց հայրենիքը պիտ'որ դառնան: Թագաւորը Ապանիացուց բուն միտքը չկրնալով հասկընալ, մէկալ կողմանէ ալ աս խօսքերը Նարվաէզին յայտարարութեանցը հետ չկրնալով միաբանել, միանգամայն Գորղէզին վրայ կասկած ու անվստահութիւն մը ցուցընելու վախնալով, խոստացաւ որ հանդարտ կը կենայ ու Ալվարատոյին հետ ալ նոյնպիսի բարեկամութեամբ կը վարուի, ինչպէս որ մինչեւ նոյն ատեն իրեն հետ վարուած էր: Զօրապետն անոր աս խոստմանը վրայ վստահանալ ձեւացուց, բայց աւելի Ալվարատոյին արթնութեանն ու զգուշաւորութեանը վրայ վստահ էր. վերջապէս 1520ին, Մայիսի առջի օրերը, Մեքսիկոյ մտնելէն վեց ամիս ետքը՝ նոյն քաղքէն ելաւ:

Գորղէզ իր յոյսը դիւսաւորաբար իր երազաշարժութեան վրայ դրած ըլլալով՝ հետը շատ ծանրու-

Թիւն չառաւ, նոյնպէս ալ քիչ Թնդանօթ տարաւ : Բայց Նարվաէզին ձիաւոր զօրքը զինքը շատ կը վախցընէր, որուն դէմ իր հետեւակ զօրքը չէր կրնար կռուիլ . աս տկար կողմն ալ զօրացընելու համար՝ իր զօրացը շատ երկայն ու ամուր տեղեր տուաւ, Գինանդլա գաւառին բնակիչներուն գործածածին նման . ասոնք ձիաւորաց դէմ գործածելու որոշեց, որպէս զի ձիերուն իրենց շատ մօտիկնայն արդելուի : Շուտ մը դէպ ի Զեմբոալլա քալեց, ուր որ Նարվաէզ բանակը դրած էր . քաղքէն երեսուն մղոն հեռու՝ Սանտովալին հետ միացաւ, որն որ Աերա-Գրուզի պահպան զօրքովն իրեն օգնութեան եկած էր : Բոլոր իր զօրաց Թիւն երկուհարիւր յիսունէն աւելի չէր . բայց իրենց քիչուորութենէն ամենեւին վախ չէին ցուցընէր, որովհետեւ արտաքոյ կարգի քաջասրտու Թիւն ու հաստատութիւն մ'ունէին : Պատերազմը չսկսած՝ Գորդէզ Օլմետոն նորէն խրկեց, որ Նարվաէզին հաշտութեան առաջարկութիւն մ'ընէ : Նարվաէզ՝ Խաղաղութեան ան ատեն կը զիջանիմ, ըսաւ, երբ որ Գորդէզ զիս իբրեւ կառավար կը ճանչնայ ու բոլորովին իմ հրամաններուս կը հնազանդի : Ասիկայ առաջարկութիւնը մերժել ըսել էր : Երկու բանակին մէջ եղած հաղորդակցութիւնը՝ Գորդէզին շատ օգտակար եղաւ, որովհետեւ իր կողմնակիցներն աւելի եւս շատցան : Նարվաէզ ալ անուղղակի ասոր օգնեց . կարծելով որ Գուպայի կառավարին եղբորորդին Աելասկուէզ տէ Լէոնը դիւրաւ կրնայ շահիլ, անոր Թուղթ մը գրեց ու Գորդէզին կողմը Թող տալու յորդորեց : Բայց Աելասկուէզ տէ Լէոն՝ քաջ ու մեծանձն զինուորը, որն որ իր արդեանց ու ծառայութեանցը համար Գորդէզին երկրորդը համարուած էր եւ սրտանց ալ անոր յարած էր, ազնուական վարմունք մը ցուցուց . նամակն առնելուն պէս՝ Սպարապետին տարաւ : Գորդէզ աս հաւատարմութեան ցոյցէն

շատ շարժեցաւ, բայց չզարմացաւ, որովհետեւ անոր ու Սանտովալին վրայ կատարեալ վստահութիւն ունէր. անոր համար ալ առանց կասկածելու՝ Նարվաէզին բանակն երթալու հրաման տուաւ, յուսալով որ հոն եղած ժամանակն իրեն բարեկամ պաշտօնակալներէն ոմանք կրնայ շահիլ:

Վլէլասկուէզ տէ Լէոն սաստիկ ուրախութեամբ ընդունուեցաւ եւ մեծ պատիւ ու յարգութիւն գտաւ: Նարվաէզ անոր մեծ խոստումներ բրաւ, այնու թէ ութեամբ որ Գորդէզին կողմը թողու. իրեն խոստացաւ նաեւ որ զինքն իր երկրորդը կ'ընէ: Բայց Վլէլասկուէզ աս ամէն առաջարկութիւնները մերժեց. եւ ոչ մահուան վախն, բտաւ, զիս կրնայ անանկ զօրապետէ մը բաժնել՝ որն որ միակ յարմար մարդն է ասանկ փառաւոր աշխարհակալութիւն մը յաջողութեամբ գլուխ հանելու: Գուպայի կառավարին ազգական երիտասարդ պաշտօնակալ մը խօսքին մէջ նետուելով՝ պոռաց որ Մատնչի մը կողմն անանկ եռանդով պաշտպանողը՝ Վլէլասկուէզի ցեղին արիւնակից չէ եւ ոչ ալ նոյն ցեղին անունը կրելու արժանի: Աս խօսքին՝ Վլէլասկուէզ տէ Լէոն բարկութեամբ սուրբ քաշեց եւ կ'ուզէր իրեն եղած նախատանաց վրէժն առնել. բայց հոն գտնուողներն արգելեցին եւ զՎլէլասկուէզ ու Հայր Օլմետոն ստիպեցին որ բանակէն ելլեն, որպէս զի չըլլայ որ դժբախտ դէպքի մը պատճառ ըլլան: Բայց իրենց այցելութիւնն արդէն ուզած պտուղնին յառաջ բերած էր. զօրքը Վլէլասկուէզին հետ եկող զինուորաց վրայի գեղեցիկ ու մեծագին զարդերէն յափշտակուելով՝ սկսան զՆարվաէզ վար զարնել թէ ինչու յամառութեամբ քաղաքական պատերազմ կը գրգռէ, ուր որ բանը հաշտութեամբ գիւրաւ կրնայ լմրննալ: Աս գանդատներէն Նարվաէզին կատաղի բնութիւնն աւելի գրգռեցաւ ու Գորդէզին զլիտոյն գին կտրեց:

Լսելով միանգամայն որ թշնամին մէկ փարսախս հե-  
ւուն կեցած է, աս համարձակութիւնն իրեն թշնա-  
մանք մը սեպեց, որուն պատիժը տալու համար՝ զօր-  
քը յառաջ քալեցուց, որ պատերազմի սկսի:

Երբ որ Գորդէզ իմացաւ որ թշնամին քաղքէն  
դուրս ընդարձակ դաշտի մը վրայ բանակած է, աղէկ  
սեպեց որ յարմար դիրք մը բռնէ ու ետքը պա-  
տերազմի սկսի, որպէս զի գոնէ մէկ կողմանէ իր զօ-  
րաց քիչուորութեան տեղը լեցնէ: Անանկ բերաւ  
որ Նարվաէզին ու իր մէջը Գանուաս գետն իյնայ,  
ու մտքին մէջ շինած յարձակման յատակագիծն ի  
գործ դնելու յաջող աւթին կը սպասէր: Գարնան  
ատեն ըլլալով՝ սաստկութեամբ անձրեւ կու գար.  
Նարվաէզին զինուորները պատերազմի դժուարին  
աշխատութիւններուն այնչափ վարժած չըլլալով եւ  
իրենց թշնամեաց քիչութիւնն արհամարհելով՝ ա-  
ռանց հարկաւորութեան անձրեւի տակ մնալուն  
վրայ սկսան դանգատել: Պաշտօնակալներէն ոմանք  
ալ Նարվաէզին ըսին թէ Հաւանական չէ որ Գոր-  
դէզ յարձակումն սկսի, ուստի աւելի աղէկ է որ  
յոզնած զինուորներուն հանգիստ տալու համար՝ տե-  
ղերնիս դառնանք: Նարվաէզ հաւանելով՝ հրաման  
տուաւ որ Զեմբոպլա դառնան. գետեզերքը միայն  
երկու հոգի թողուց որ թշնամւոյն վրայ հսկեն: Աս  
միջոցիս Գորդէզին զօրքը՝ հեղեղի պէս եկող ան-  
ձրեւին տակ հաստատութեամբ ու համբերութեամբ  
կեցած՝ պահպանութիւն կ'ընէին: Զօրապետն իր զօ-  
րաց հրահանգին վրայ շատ հաճեցաւ եւ միտքը դրաւ  
որ ասանկ քաջ զօրքով ամէն բան կ'ընայ. ուստի եւ  
որոշեց որ գիշերուան մութն իրեն օգնական առնե-  
լով՝ Նարվաէզին վրայ յարձակի. նախատեսաւ ալ կ'ըլ-  
լար որ թշնամւոյն զօրքը կրած աշխատութենէն ե-  
տեւ անհոգութեամբ հանգչած է, միտքը դնելով որ  
ասանկ դէշ եղանակին՝ վրանին յարձակում չ'ըլլար:



Գորգէղ պատերազմը չսկսած՝ զօրքին առջեր ճառ մը խօսեցաւ, որն որ բառ առ բառ յառաջ կը բերենք, որպէս զի աս հռչակաւոր մարդուն ճարտարխօսութեան գաղափար մը տանք. աս ճառը Տիագ իր ճշդութեամբն այսպէս կ'աւանդէ: «Բարեկամք, աս զիշեր Աստուծոյ մեր ձեռքը տուած յարմար առիթը մեր բաղձացածէն ու երեւակայածէն շատ վեր է: Չեր քաջութեան վրայ ունեցած մեծ վստահութեանս փորձը քիչ մը ետքը պիտ'որ տեսնենք: Քիչ մը յառաջ մեր թշնամիներուն կը սպասէինք եւ յոյս ալ ունէինք որ աս գետին օդնութեամբը կը յաղթէինք. իսկ հիմայ զիրենք իրարմէ բաժնուած ու քնացած պիտի գտնենք, որն որ զմեզ արհամարհելնէն ու անհոգ կենալնէն յառաջ եկած է: Իրենց տկարութենէն՝ որով անձրեւին սաստիկութեան չկրնալով դիմանալ՝ փախան գացին, կրնաք իմանալ թէ ամանկ փափկութեամբ իրենց հանգիստը փնտռող մարդիկներն՝ սրչափ թուլութեամբ ու առանց մէկէ մը կասկած ունենալու հանգստեան ու քնոյ մէջ թաղուած պիտ'որ ըլլան: Նարվաէղ պատերազմի ատեն պահանջուած հսկողութիւնը չի գիտեր. իր անվարժ զօրքերը դեռ առջի անգամ թշնամոյ բանակ մը կը տեսնեն եւ մթան մէջ դիւրաւ կարգի չեն կրնար մտնել: Աս ալ կայ՝ որ շատերն արդէն իրենց մեծին վրայ տեղիս են. ոմանք բոլորովն մեր կողմը միտած են. շատերն ալ կան որ աս հայրենակցաց պատերազմը սաստիկ կ'ատեն, առանց պատճառի ըլլալուն համար. եւ արդէն գիտէք որ զինուորաց թեւերն՝ իրենց կամացը դէմ դօրձեն նէ, ծանր ու թմրած կը շարժին: Թէ ասոնք ու թէ մէկայնորը թշնամոյ տեղ դնելու ենք, մինչեւ որ իրենք զիրենք կատարեալ յայտնեն. որովհետեւ յաղթութիւնը պիտի յուցընէ թէ մատնչի անունը՝ մեզի չէ նէ անոնց կը

վայլէ: Աս ստոյգ է որ իրաւունքը մեր կողմն է, բայց պատերազմի մէջ իրաւունքն անհոգներուն դէմ կ'ըլլայ ու յաղթողին կողմը կ'անցնի: Մեր թշնամիներն ուրիշ բանի չեն բաղձար, բայց եթէ ձեր ազատութեան, ձեր ընչից ու յոյսերուն վրայ տիրել: Ձեր յաղթութիւններովն՝ իրենք պիտի պարծին. ձեր արիւնովը գնած երկիրնիդ ու բոլոր ձեր արշաւանաց պատինն՝ իրենք պիտ'որ յափշտակեն: Բայց աւելի դէշն ան է որ զմեզ իրենց տակն առնելու ջանալով՝ թագաւորին շահուն ու մեր հաւատքին տարածելուն ալ մնաս պիտի հասցընեն: Եւ թէպէտ աս մնասներուն պատճառն իրենք են, բայց յանցանքը որ կողմն ըլլալուն վրայ պիտ'որ տարակոյս ունեցուի: Արդ բոլոր աս չարեաց առջեւն առնելու մէկիկ միջոցն ան է՝ որ հիմակ ալ ձեզի բնական եղած քաջութեամբ պատերազմիք. ասիկայ դուք աւելի գործքով կրնաք ցուցընել քան թէ ես խօսքով հասկըցընել: Չէնք առէք, բարեկամք, յաղթութիւնը միշտ մեր կողմն եղած է. Աստուծոյ ու թագաւորին ունեցած պարտքերնիդ յիշելով՝ սրտերնիդ զօրացուցէք: Ձեր պատինն աչքերնուդ առջեւն ունեցէք ու գիտցէք որ արդար կողմը պաշտպանելու համար կը պատերազմիք: Ես ալ ամենէն վտանգաւոր տեղերը ձեզի ընկեր կ'ըլլամ եւ խօսքով զձեզ քաջալերելէն աւելի՝ իմ օրինակովս զձեզ պիտի համոզեմ,, :

Արդէն շատ անգամ ճառն ընդմիջահատող հաճութեան աղաղակներն օդը թնդացուցած էին. բայց երբ որ Գորդէզ խօսքը լմնցուց, ամէնը մէկ բերան՝ Յաղթել կամ մեռնիլ, պոռացին. մինչեւ ոմանք ըսին որ եթէ ասկէ ետեւ Նարվաէզին հետհաշտութիւն ընել ուզես նէ՝ չենք հնազանդիր: Քաջասիրտ մարդիկներուն աս խօսքերը Գորդէզին անհաճոյ չերեւցան, որովհետեւ եռանդներնուն առաւելութենէն կը խօսէին, չէ թէ ապստամբական ոգւով:

Գորդէզ երեք պղտիկ գնդեր կազմեց. առջի գնդին հրամանատար դրաւ ՂՄանտովալ, որուն պաշտօնը շատ գծուարին էր, որովհետեւ թշնամուցն թնդանօթները գերելու հրաման ունէր: Աս գունդն բնաիր զօրքերէ ու շատ պաշտօնակալներէ կազմուած էր, որոնց մէջն էր նաեւ Բիզարոս՝ որն որ ետքը Բերուի աշխարհակալն եղաւ: Քրիստովալ տէ Օլիտ երկրորդ գնդին գլուխն անցաւ. ասիկա Նարվաէզին բնակած աշտարակին վրայ յարձակելու պատուէր ընդունեցաւ: Իսկ ինք Գորդէզ երրորդ գունդն առաւ, որն որ ամենէն քիչուորն էր ու պահեստի զօրքի տեղ պիտի գործածուէր եւ հարկաւոր եղած կողմն օգնութեան պիտ'որ հասնէր: Նախ եւ յառաջ գետն անցնելու էր, որն որ շատ աշխատութեամբ անցան, ինչու որ անդադար անձրեւներու պատճառաւ խիստ բարձրացած էր. այնպէս որ զինուորները մինչեւ վրերնին ջրին մէջ թաղուած էին: Գիմացի եղբրքն հասնելնուն պէս՝ լուութեամբ յառաջ երթալու սկսան. ամէն մարդ մէյմէկ սուր, մէյմէկ դաշոյն ու մէյմէկ երկայն տեղ ունէր: Յառաջապահ գունդը՝ Նարվաէզին գետին քով դրած մարդիկներէն մէկը գերի բռնեց. բայց մէկալը փախաւ, արտորնօք վազեց ու գոյժ տուաւ: Գորդէզ աս դէպքն իմանալով՝ մեծ կարգով ու սաստիկ լուութեամբ իր ընթացքն աւելի շուտութեամբ յառաջ տարաւ: Նարվաէզ պահապանին ձայնէն արթննալով՝ իր երկչոտութիւնը պարսաւեց եւ ըսաւ թէ երազ տեսած պիտ'որ բլլաս. չէր կրնար կարծել որ Գորդէզ յարձակում ընելու համարձակի:

Ապարապետը կէս գիշերէն քիչ մը ետքը Ձեմբուալի հասաւ, առանց փոքր արգելք մը կրելու: Անմիջապէս Նարվաէզին բնակած տաճարին վրայ վազեց, որն որ թնդանօթներով ամրացած էր. բայց այնպէս երազ եւ ուժով յարձակեցան՝ որ երկու երեք թնդա-

նօթ նետուելէն ետքը՝ Սանտովալ ամբողջ մարտկոցին տիրեց: Նարվաէզ՝ որուն քաջարտութիւնն իր անխոհեմութեան հաւասար էր, յարձակման ճշմարիտ ըլլալն իմանալով՝ արտօրնօք զէնք կ'առնէ ու դէմ զնելու կը պատրաստուի: Իր զինուորները տաճարին աստիճաններուն վրայ շարուելով՝ Սանտովալին յառաջ դալը կ'արդելէն: Նոյն զօրավարը թէպէտ եւ առիւծի պէս կը պատերազմի, բայց բազմութեան դէմ չկրնալով զնել՝ ետ քաշուելու վտանգի մէջ կ'իյնայ. մէյ մ'ալ անդիէն Օլիտ ու իր զօրքն օգնութեան կը հասնին. նոյն իսկ Գորդէզ անձամբ խառնուրդին մէջ կը նետուի: Թշնամին իրենց միացեալ զօրութեան դէմ չկրնալով զնել՝ դէպ ի ներս կը քշուի: Գորդէզին զօրքն ասով աւելի քաջալերուելով՝ շէնքին դուռը կոտրելու կ'աշխատին: Նոյն միջոցին զինուոր մը շէնքին վրայ ծածկած եղէգներուն կրակ տալով՝ Նարվաէզ դուրս ելլելու կը ստիպուի: Առջի յարձակման՝ աչքը տեգով մը կը զարնուի, եւ՝ Վայ մեռայ, պոռալն ու լցնալը մէկ կ'ըլլայ: Թշնամիք զինքը կը բռնեն շղթայի կը զարնեն:

Աս լուրը շուտ մը ամէն կողմ տարածուելով՝ Նարվաէզին ընկերները մեծ վհատութեան մէջ ձգեց եւ թշնամեաց դէմ պատերազմելու եռանդնին թոյլցուց, որոնք՝ Յաղթութիւն, պոռալով՝ աւելի քաջութեամբ կը յարձակէին: Սարսափն ու շփոթութիւնն երկու պզտիկ աշտարակներու մէջ գտնուող զօրքերուն սիրտը պատեց, որոնք տեղերնէն չկրցան շարժիլ. մութն ալ անանկ թանձր էր՝ որ թշնամին ու բարեկամը չէին զանազանուեր: Նարվաէզէն աւանուած թնդանօթներն իր զօրաց դէմ կը գործածուէին, որոնց սրտին մէջ ահ ու դողն երթալով սաստկացաւ: Տիեկոյ Աելասկուէզ բոլոր զօրութեամբ կը ջանար որ զօրքերը քաջալերէ, բայց անօգնաւ. զինքը ստիպեցին որ անձնատուր ըլլայ:

Նարվաէզ եւ ուրիշ բանտարկուած պաշտօնակալները՝ Սալտովալին հսկողութեան յանձնուեցան, որն որ անոնց վէբքերը բժշկելու զբաղեցաւ: Գորդէզ իր նախանձորդն ու ախոյեանը տեսնելու եկաւ. չէր ուզեր ինք զինքը ձանչցրնել տալ, որ չըլլայ թէ անոր արամութիւնը սաստկացրնելու առիթ տայ. բայց զինուորաց իրեն ըրած մեծարանքը զինքը յայտնեց: Նարվաէզ անոր դառնալով՝ ըսաւ. Պէտք է որ շատ մեծ բան սեպէք ան դիպուածն՝ որ զիս ձեր ձեռքը ձգեց: Որուն Գորդէզ պատասխան տուաւ. «Բարեկամ, ամէն բանի համար Աստուծոյ պէտք եմ շնորհակալ ըլլալ. բայց առանց սնապարծութեան՝ կրնամ երդնուլ որ աս յաղթութիւնն ու ձեր բռնուիլը՝ աս երկրին մէջ գործուած երեւելի գործքերուն քով չնչին բան մը կը սեպեմ»,:

Աստու ըլլալուն պէս՝ արդէն թշնամութիւնները դադրած ըլլալով՝ Գորդէզ իր պաշտօնակալներուն հետ՝ յաղթուողներուն զօրահանգէս ըրաւ. եւ որովհետեւ զինուորք իր ձեռքը պագնելու հրաման կ'ուզէին, գլխաւորներուն հետ անկեղծ սիրով պագտուեցաւ: Հրաման ալ տուաւ որ ամէնքն ազատ թողուն, բայ ի Նարվաէզէն: Որպէս զի Գուպայի կառավարն աս պատահած դէպքը չսէ, նաւատորմիկն պաշտօնակալ մը խաւրուեցաւ, որպէս զի մէջինները շահի: Աս յաղթութիւնը՝ Գորդէզին միայն երկու զինուոր արժեց, իսկ Նարվաէզ տասնուհինգ զինուոր ու երկու պաշտօնակալ կորսրնցուց:

Քանի մը ժամ հանգչելէն ետքը՝ Գորդէզ բոլոր յաղթուածները ժողվել տուաւ եւ անոնց ըսաւ. թէ Ձեր կամեցը թող կու տամ, կամ իմ ծառայութեանս մէջ մանելով՝ մեր վտանգներուն ու փառացը մասնակից եղէք, նոյն հաւատար պայմաններով՝ որոնցմով իմ հին զինուորներս յանձն առած են, կամ Գուպա կղզին դարձէք: Նարվաէզին քա-

նի մը սաստիկ կողմնակիցներէն զաս՝ բոլոր պաշտօնակալներն ու զինուորներն առջի առաջարկութիւնը յանձն առին: Գորդէզին ընկերներուն վրայի մեծագինն ոսկի զարդերն անոնց ընչասիրութիւնը կը գրգռէին. մէկալ կողմանէ ալ իրենց նոր զօրապետին մեծանձնութիւնն ու քաղցր կենցաղավարութիւնը, եւ մանաւանդ աս վերջի ասութիւն ցուցրցած քաջութիւնը զիրենք կը համոզէր որ իրմէ աւելի ազէկ հրամանատար մը չեն կրնար գտնել:

Գորդէզ առ յաղթութիւնը 1520ին, Մայիսի 27ին ըրաւ, որն որ իրեն շատ օգտակար եղաւ: Նարվաէզին զօրքերէն ընդունած օգնութեամբ՝ մէկէն ի մէկ 100 ձիաւորի ու բաւական շատաւոր ոտանաւոր զնդի մը տէր եղաւ. վերջապէս պատերազմի պաշարն ալ՝ որ լմննարու վրայ էր, առատութեամբ հոգացուեցաւ: Այսպէսով, կ'ըսէ Ռոպերդան, արտաքոյ կարգի պարագաներ ու դէպքեր քովէ քով գալով՝ կորստեան վտանգէն ազատեցաւ, որն որ անձողպարելի կ'երեւար, եւ ամենեւին չկարծած ժամանակին իր ամէն ակնարկութեանցը հնազանդ 1000 սպանիացի զօրք ստացաւ, որոնք ուզած տեղը կրնար տանիլ: Աս մեծ յաղթութեան ասանկ դիւրաւ յաջողէին եւ Նարվաէզին զօրքերուն գրեթէ ամէնը մէկանց առանց ընդդիմութեան իր դրօշին տակը մտնելէն՝ հաւանականութեամբ կրնայ մարդ հետեւցընել որ աս գործքիս մէջ՝ Գորդէզին գաղտնի հնարքներն ու դարանքները հաւասարապէս գործեցին՝ իր զինուցը զօրութեան հետ. թշնամւոյն քաջութեան չափ՝ Նարվաէզին ընկերներուն մատնութիւնը նոյնին նպաստեց:

Բայց աս գործողութիւնն ինչ եղանակաւ ու ինչ պատճառէ ալ յառաջ եկած ըլլայ, միշտ Գորդէզին ու իր քաջասիրտ ընկերներուն քիչ պատիւ ու քիչ փառք չէ:

Ե.Օ.

Մեծիկացաց օրք էլ էլ էլ :

Գորդէզ չուզելով բարձր իր զօրքովն Մեքսիկոյ դառնալ՝ որպէս զի չըլլայ որ բնակչաց սրտին մէջ վախ մը մտնէ, մէկալ կողմանէ ալ զօրքին մէկ մասը Վերա-Գրուզ թող տալ չուզելով՝ որպէս զի դատարկութեամբ հրահանգնին չկորսընցընեն, որոշեց որ մէկ մասին՝ ուրիշ արշաւանքներ ու աշխարհակալութիւններ ընել տայ, իսկ ինք վեցհարիւր զօրքով Մեքսիկոյ դառնայ: Բայց աս մտածմունքը շուտ մը փոխելու ստիպուեցաւ: Նարվաէզին յաղթուելէն քանի մ'օր ետքը՝ Ալվարատոյէն Մեքսիկոյի վիճակին վրայ ձախորդ լրեր առաւ: Բնակիչները Սպանիացոց վրայ յարձակած ու անոնց կեցած տեղոյն մէջ պաշարած էին. արդէն եօթը հոգի մեռած էին եւ հաւանական էր որ ամէնն ալ նոյնպէս կ'ընկճէին՝ թէ որ շուտով օգնութիւն չհասնէր:

Աս գոյժը Գորդէզին սիրտը խորունկ խոցեց. դիտէր որ Ալվարատոյ՝ կատաղի թշնամեաց յարձակման դէմ երկայն ատեն չի կրնար դիմանալ. դիմանալու ալ ըլլար, պաշարի պակասութենէն՝ շուտ մը յետին նեղութեան մէջ կ'իյնար: Վտանգն անանկ ստիպողական էր՝ որ ո՛չ մտածելու եւ ո՛չ ալ ուշացընելու կու գար. անոր համար զօրաց հրաման տուաւ որ շուտով ճամբայ ելլելու պատրաստուին: Զեմբոալայէն ելած իրիկուննին Մոնդեզումայէն դեսպաններ եկան. թագաւորը Ալվարատոյին դէմ ծանր ամբաստանութիւններ կ'ընէր, ըսելով որ բոլոր պատահած չարիքներուն պատճառն անոր անգութ վարմունքն է: Գորդէզ աս իրարու անհամաձայն լրերն աւնելով ու վրան խորունկ մտածելով՝ իմացաւ թէ աս ապստամբութիւնը մեծ բան մ'եղած պիտ'որ ըլլայ: Իրօք ալ շատ դժբախտ դէպքեր պա-

տաճած էին: Գորգէզ Մեքսիկոյէն ելլելուն պէս՝ քաղաքացիք մտածած էին որ իրենց թագաւորն ու տէրութիւնն օտարականաց բռնութենէն ազատելու ժամանակն եկած է, եւ մտքերնին դրած էին որ անոնց զօրութիւնը բաժնուած ու իրարու դէմ պատերազմի մէջ եղած ատեն՝ իրենք կրնան թէ մէկ մասն ու թէ մէկալ մասը ջնջել: Սպանիացիք իրենց քիչութիւնն ու տկարութիւնը տեսնելով՝ կասկածներով ու վախով կը տանջուէին. Ալվարատոն ալ վտանգը խոհեմութեամբ հեռացընելու տեղ՝ շուտով երեւան ելլելուն օգնած էր:

Ալվարատոն, ինչպէս որ արդէն ըսած ենք, քաջ ու աներկիւղ պաշտօնակալ մըն էր. իր գործունէութեամբը, հաստատութեամբն ու քաջասրտութեամբը Գորգէզին վտահոյթիւնը շահելու արժանի եղած էր. բայց թէպէտ ճարտար ու փորձ զօրապետի մը օգտակար ծառայութիւններ ընելու մեծ ձիրք ունէր, սակայն առանձին հրամայելու յաջողակ չէր: Իր թեւթեւութեամբը՝ Մեքսիկացւոց շատերուն համարումն ու սէրը կորսընցուցած էր: Գորգէզ ժողովրդեան առջեւ մեծ համարում ստացած էր՝ ըստ տեղւոյն վարուիլ դիտնալովն ու իրարու հակառակ երեւցած ձիրքերն ամբողջ ունենալով. իր աներկիւղութիւնն ու խոհեմութիւնը, իր քաղցրութիւնն ու խօսքին վրայ հաստատուն կենալը՝ աւելի մեծ անուն ձգած էր, քան թէ իր յաղթութիւնները. խստութիւն՝ միայն ան ատեն կը բանեցընէր, երբ որ ուրիշ ամէն միջոցներն օգուտ չէին ըներ: Ասոր հակառակ Ալվարատոյ՝ ուրիշներն հպատակութեան մէջ պահելու համար՝ խստութենէ ուրիշ միջոց չէր գիտեր. անոր համար ժողովրդեան ապստամբելու նշանները տեսնելուն պէս՝ ճարակութեամբ զանոնք հանդարտեցընելու ջանալու տեղ՝ անանկ մը վարուեցաւ, որ կարծես թէ շուտով սաք ելլելնին կ'ուզէր:



Այն ասեանները պատահած էր տէրութեան գլխաւոր տօնը, այս ինքն՝ պատերազմի չաստուածին պատուոյն եղած հանդէսը, որն որ մեծ փառաւորութեամբ կը կատարուէր: Ըստ սովորութեան՝ ժողովուրդը մեծ տաճարին բակին մէջ՝ իրենց պաշտպան աստուածին պատուոյն համար կաքաւելու ժողվուած էր: Ազնուականք Ալվարատոյէն խնդրած էին որ Մոնղեզումային աս հանդիսութեան ներկայ գտնուելուն զեջանի. բայց անիկա խնդիրքնին մերժեց, որով ուղիները սաստիկ գրգռեցան: Ի վերայ այսր ամենայնի իրենց տօնը կատարեցին. նուագարաններու ձայնով երգելով ու կաքաւելով՝ իրենց կրօնական պաշտօնն սկսան: Աս միջոցիս՝ Ալվարատոյ գլխաւոր անցքերն ու ճամբու գլուխները բռնեց, եւ ազնուականաց մեծագին զարդերէն գրգռուելով, միանգամայն յոյս ունենալով որ իրենց գէմ՝ դաւակցութիւն ընողները մէկէն կը ջնջէ, իր զօրացը հրամայեց որ աս անգէն ու անպատուար բազմութեան վրայ յարձակին: Յարձակումը փութով ու զարհուրելի եղանակաւ յառաջ գնաց. Մեքսիկացիք չկրնալով իրենք զիրենք պաշտպանել, ըստ մեծի մասին ջարդուեցան. հազիւ քիչ մը մարդիկ տաճարին վրայէն մերձաւոր շէնքերուն յարկերուն վրայ կրցան փախչիլ: Այսպիսի մատնութիւնն ու անգթութիւնը՝ Մեքսիկացիները չափէ դուրս կատղեցուց, եւ ամէն մերձաւոր գաւառներուն բնակիչներն ալ վրէժխնդրութեան գրգռեց: Քէն առնելու բաղձանքով ամէն դիաց կը վազէին կը ժողովուէին, եւ ամենեւին վտանգէ մը չվախնալով՝ սաստիկ զօրութեամբ ու կատաղութեամբ Սպանիացւոյ բնակած տեղւոյն վրայ յարձակեցան, պարբային մէկ մասը կործանեցին ու շտեմարաններն այրեցին: Աս յարձակման վրայ շուտ մը կարգաւորեալ պաշարում մը սկսաւ. ժողովրդեան կատաղի յարձակումները՝ Սպանիացւոյ յուսահատական ու

քաջասիրտ պաշտպանութեան կը հաւատարէր: Ավարատոյ յայտնի կը տեսնէր որ Գորդէզին օգնութեան հասնելէն ուրիշ ազատելու միջոց չկայ:

Արդ Գորդէզ իր զօրաց աս նեղութիւնն իմանալով՝ ամէն ճիգն ի գործ դրաւ որ շուտով Մեքսիկոյ հասնի, եւ աս առթին մէջն ալ նոյն արագաշարժութիւնն ի գործ դրաւ, որով միշտ վտանգներէն ազատած էր: Գլխադալա հասած ատեն՝ երկու հազար տեղացի զինուոր իրեն հետ միացաւ. որով Մեքսիկոյ ելած ապստամբութիւնը զսպելու համար ինք զինքը բաւական զօրաւոր կարծեց: Մեքսիկոյի երկիրը մտնելուն պէս՝ տեսաւ որ ամէն կողմ Սպանիացւոց դէմ սաստիկ ատելութիւն մը տիրած էր: Իր ճամբուն վրայ եղած քաղաքներուն բնակիչներէն շատերը թող տուած փախած էին. զօրաց համար ամենեւին պաշար չէր գտնուեր: Եւ թէպէտ իր ընթացքին արդէլք դնող չկար, բայց ամէն կողմ տիրած խոր լռութիւնն ու օտարականաց հետ ամենեւին մեկու մը հաղորդութիւն ունենալ չուզելը՝ յայտնի կը ցուցնէր որ ապստամբութիւնը՝ միայն զէնքի զօրութեամբ կարող պիտի ըլլայ զսպել, որուն սաստիկութեամբ սկսելուն նշաններն ամէն կողմ կ'երեւային:

Գորդէզ Յունիսի Չֆին Մեքսիկոյ մտաւ: Զինքը զխմաւորելու եկող մը չեղաւ. ամէն կողմ տխուր լռութիւն մը պատած էր: Սպարապետն առջի բերան սարսափեցաւ, բայց վստահութիւնն իր զօրաց վրայ դնելով՝ ունեցած վախը մէկ դի ըրաւ եւ մէկդի ձգելով իր խոհեմական վարմունքն՝ որով իր ընթացից մէջ քաղցրութիւն մը կը խառնէր, Մոնդեղումային պրցելութեան չցնաց. եւ երբ որ թագաւորն իրեն եկաւ եւ բրած յաղթութեան ու դարձին վրայ բարեմաղթութիւններ ըրաւ, ինք անարգելով մը կունակը դարձուց եւ ամենեւին պատասխան տալ չուզեց: Գորդէզին այսպիսի արտաքոյ կարգի

ու իր հասարակօրէն բռնած քաղաքավարական ընթացքէն բոլորովին տարբեր վարուիլը՝ երկու պատճառ ունէր. նախ կը կարծէր թէ Մոնղեզուման իր հպատակացը գիտաւորութեան տեղեակ էր եւ իրենցմէ գաղտուկ պահեց. երկրորդ ալ իր հիմնական զօրութեան վրայ յանձնապաստանութեամբ կը վրատահէր, որովհետեւ Տակիստոսին բաժին պէս՝ Յաջող դէպքերն երեւելի զօրապետները յանդուզն կ'ընեն:

Գորդէզ Ալվարատոն գիմացը բերել սուաւ եւ իր հեռաւորութեան տտեն բռնած ընթացքին ու պատահած դէպքերուն վրայ խստիւ քննութիւն բրաւ: Ալվարատոյ ինք զինք ջատագովելու ջանաց, ըսելով թէ Աերջին հարկաւորութենէ ստիպեալ՝ պնդէս վարուեցայ: Իմացայ որ, ըսաւ, տեղացւոց մէջ սուա լուր տարածուեր է թէ մեր զօրքն յաղթուեր է եւ ասոր վրայ բոլոր Սպանիացիները ջնջելու գաղտնի դաւաճանութիւն մը կազմուեր է: Իսկ տօնի օրը Մեքսիկացոց վրայ յարձակում ընելս անոր համար էր, վասն զի գիտէի որ նիւթած նենգութիւննին ան օրերն իրօք ի գործ դնելու պիտի սկսէին: Աս չարեաց առջեւն առնելու համար՝ ուղեցի մէկէն ապստամբութեան գլխաւորները ջնջել: Գորդէզ անոր աս ջատագովութիւնը չհաւնեցաւ ու բռնած ճամբան վար զարկաւ: Բայց Մեքսիկոյ դառնալէն ետեւ իր բռնած ընթացքն ալ բոլորովին առանց պակասութեան չէր: Մոնղեզումային խարդախական ընթացքին նեղանալով ու պաշարի պակասութեան վրայ կատղելով՝ չափաւորութեան գիմալը մէկդի հանեց, եւ ազնուականաց հետ արհամարհոտ հպարտութեամբ մը վարուելու սկսաւ: Քանի մը Մեքսիկացիք, որոնք քիչ մը սպանեալերէն սորված էին, Գորդէզին խօսքերը լսելով՝ իրենց քաղաքակցացը հաղորդեցին եւ անոնց բարկութիւնն աւելի զրգուեցին: Ամէն ալ արտաքոյ կարգի կատաղութեամբ զէնք առին օտա-

րականաց վրայ յարձակելու, եւ ան ատենէն այնպիսի սաստիկ պատերազմ մը սկսաւ, որն որ ուրիշ կերպով չէր կրնար դադարիլ, բայց եթէ մէկ կողման բոլորովին ջնջուելովը:

Գորգէզ զինուորի մը հրաման տուած էր որ Մոնղեզումային կիներ եւ ուրիշ ազնուական տիկիները Գազուպա տանի ու ցեղապետին պահպանութեան յանձնէ: Աս զինուորը քիչ մը վերջը՝ վերաւորած, հոգին բերանն եկած՝ ետ դարձաւ: Կատաղած տեղացիք թմբերուն վրայ ասոր դէմ յարձակելով՝ բռնած էին. բայց կռոց զոհ մատուցանելու տարած ատեննին ձեռքերնէն պրծած էր: Բոլորն ալ, ըսաւ, զինաւորած են ու ամէն դիաց դէպ ի մեր կողմը կը դիմեն: Գորգէզ անմիջապէս ջոկատ մը հանեց, որն որ հազիւ մեծ հրապարակը կրցաւ հասնիլ եւ հոն կատաղի աղաղակներով ու կարկտի նման նետերով ընդունուեցաւ: Ժողովուրդը՝ հրապարակներն ու տներու տանիքը բռնած էին եւ Սպանիացւոց վրայ շարունակ նետ կը նետէին: Զոկատին գլխաւորը շուտ մը բազմութենէն պաշարուեցաւ. հազիւ մեծ քաջութեամբ ու արապոյ կարգի ճարտարութեամբ կրցաւ աս սաստիկ վտանգէն զերծանիլ եւ իրենց տեղն հասնիլ, խել մը մարդ կորսնցընելէն ետեւ:

Տեղացիք ասոր վրայ համոզուելով որ զիրենք հարստահարողներն անյողթելի չեն, երկրորդ օրը եկան վրանին յարձակեցան: Պաշարուողները՝ եկողներուն բազմութենէն աւելի՝ անոնց զարհուրելի կատաղութենէն սարսափած էին: Թշնամիք կարծես թէ բոլոր կատաղի դազաններու դարձած էին. թէպէտ թնդանօթները դէպ ի ճամբաներուն բերանն ուղղուած ըլլալով, ամէն անգամ պարպուելուն՝ ստակալի բազմութիւն մը գետինը կը ձգէին եւ Սպանիացւոց ամէն մէկ հարուածը՝ մերկ մարդիկներուն մէջ մէկ մահացու վէրք էր, ի վերայ այսր ամենայնի յար-

ձակման ուժգնութիւնն ամենեւին չէր թոյլնար. նոր  
 յարձակողներ՝ մեռնողներուն տեղը լեցընելու համար  
 յառաջ կը նետուէին եւ անոնց պէս ջարդուէին  
 ետեւ՝ իրենց տեղն ալ ուրիշ աւելի քաջասիրտ  
 մարդիկ կը յաջորդէին: Գորդէզ բոլոր իր յաջողա-  
 կութեամբը, քաջութեամբն ու զինուորաց հրահան-  
 դովը դէմ՝ դնելովը՝ հազիւ կրցաւ թշնամեաց ներս  
 մանելն արդէլել:

Մեքսիկացւոց ցուցրցած աս աննուաճելի զօրու-  
 թեան վրայ ամենէն քաջ զինուորները սարսափե-  
 ցան եւ Նարվաէզին ընկերներն ապշեցան մնացին:  
 Մեքսիկացիք շարունակ իրենց կը սպառնային թէ  
 Զձեզ մեր աստուածներուն պիտի զոհենք, ինչպէս  
 որ խոստացած ալ ենք. տաճարներուն մէջ վայրե-  
 նի դազաններ ալ պահած ենք, որպէս զի ձեր մար-  
 մինները սպառեն: Աս խօսքերն՝ անոնց զարհուրելի  
 մարդագոհք տեսնողներն աւելի եւս կը սարսափեցը-  
 նէր: Միակերպ կրած նորանոր յարձակումին, դրա-  
 նուած վտանգնին՝ զինուորաց վրայ դժնդակ ու վնաս-  
 սակար տպաւորութիւն մը կ'ընէր: Նարվաէզին զի-  
 նուորները կարծած էին որ արդէն յաղթուած ու  
 նուաճած երկրի մը կողոպուտը ժողվելու կ'երթան.  
 ուստի եւ մէկէն ի մէկ այսպիսի ծանր ու վտան-  
 գաւոր պատերազմի մը բռնուելուն վրայ մեծապէս  
 կը տրանջէին, եւ Գորդէզին խոստմունքներէն խա-  
 բուէնուն վրայ կը զղջային: Բայց ժամանակ կոր-  
 սընցընելու չէր դար. արտաքոյ կարգի զօրութիւն  
 ու քաջութիւն ցուցընելով՝ պէտք էր որ հասարա-  
 կաց թշնամոյն ձեռքէն եւ ընդհանուր կորստեան  
 մը վտանգէն ազատելու ջանային: Ուստի Գորդէզ՝  
 որ աս ամէն դժբախտութեանց մէջ իր հաստատու-  
 թիւնը պահած էր, ուզեց զօրաց քաջասրտութիւնն  
 արթընցընել. վաթսուն հոգւոյ գլուխն անցնելով՝  
 յարձակում մ'ըրաւ ու թշնամիները վռնտեց:

Մեքսիկացիք իրենց զազանային յամառութեամբը՝ Գորգէզին աշխոյժն ու քաջասրտութիւնը չէին կրնար նուաճել: Ուղելով թշնամեաց ցուցընել որ իրենցմէ ամենեւին չիվախնար, հրաման տուաւ որ երկրորդ յարձակման մը պատրաստուին: Տեսնելով որ առջի յարձակման ատեն՝ պատուհաններէն ու տանիքներէն նետուած նետերէն ու քարերէն՝ զինուորները շատ վնաս կրեցին, աս վտանգին առջեւն ալ առնելու համար՝ անիւներու վըայ հաստատուած չորս աշտարակ շինել տուաւ, որոնց ամէն մէկը երեսուն զինուորի չափ կրնար առնուլ: Աշտարակներուն վըայ հաստ տախտակներով ծածկուած էր, որպէս զի նետուած քարերուն դէմ դնէ. իսկ քովերը ծակեր կային, որոնցմէ կրնային հրացան պարպել: Գորգէզ աս աշտարակներուն մէջ բաւական զօրք խոթելէն ետեւ՝ մնացած զօրքին գլուխն անցաւ, եւ երկու հազար Գլասգալացի ալ մէկտեղ առնելով՝ կէս դիշերուն դուրս ելաւ: Ամէն կողմ՝ խոր լուծութիւն մը տիրած էր. բայց հազիւ թէ յաւաջ երթալու սկսան, մէյ մ'ալ զարհուրելի ազազակներն ու պատերազմական գործիքներու զարնուիլը ցուցուց թէ թշնամիք կը հսկեն եղեր: Մեքսիկացիք թշնամեաց յարձակման չապասելով՝ անոնց դիմացն ելան: Երկու կողմանէ ալ առջի հարուածներն առին տուին, առանց կարգերնին աւրելու: Բայց Մեքսիկացիք շուտ մը իրենց բրած մեծ կորուսար տեսնելով՝ ճամբաներու մէջ շինուած պատնէշներուն ետեւը քաշուեցան եւ հոնկից սաստիկութեամբ կը պատերազմէին. երբ որ թնդանօթները զիրենք կը ցրուէր, ետ ետ կ'երթային ու նորէն կարգի կը մտնէին: Ա'երեւար որ ճարտար գլխաւոր մը իրենց բրած շարժումներուն կ'առաջնորդէր. ամէնը մէկանց ու շատ ցածէն նետ կը նետէին. առանց շփոթութեան իրենց կեցած տեղը կը պաշտպանէին, եւ առանց կարգերնին աւ-

բերու ետ կը քաշուէին : Շարժուն աշտարակներն առջի բերան զիրենք շատ վախցուցին . բայց շուտ մը աճապարեցին տանիքներուն վրայ ահագին ծանրութեամբ քարեր հանեցին, որոնք ճարտարութեամբ աշտարակներուն վրայ նետելով՝ կտոր կտոր ըրին : Պատերազմը բոլոր օրը տեւեց . Մեքսիկացիներէն սաստիկ բազմութիւն մեռաւ ու քաղքին մէկ մասն ալ այրեցաւ . բայց Սպանիացիք իրենց թշնամիները ջարդելէն յոգնելով ու շարունակ նոր եկած զօրքերու յարձակման դէմ դնելու հարկադրած ըլլալով՝ որոնք իյնողներուն տեղը կ'անցնէին եւ աւելի կատաղութեամբ կը պատերազմէին, վերջապէս ետ քաշուելու ստիպուեցան : Աս կռուոյն մէջ Սպանիացիներէն 12 հոգի մեռաւ, 60 հոգի ալ վիրաւորուեցաւ . նոյն իսկ Գորդէզ ձեռքին վրայ վէրք մ'ընդունեցաւ :

Սպարապետն ան տտեն իր սխալմունքն իմացաւ, տեսաւ թէ Մեքսիկացիներն արհամարհէն իրեն սրչափ սուղի նստեցաւ . համոզուեցաւ որ քաղքին բռնութեամբ տիրելն անկարելի է, եւ տեսաւ որ իր ներկայ վիճակին վտանգները՝ պաշարի պակասութենէն ու հետեւապէս սովէն՝ աւելի պիտի սաստկանար : Մէկալ կողմանէ ալ Մեքսիկոյ թողուն իրեն շատ դժուար էր . ասանկ աշխարհակալութենէ մը հրաժարելն՝ որուն վրայ այնչափ աշխատած եւ տարի մը քրահնք ու արիւն թափած էր, իրեն շատ ծանր կու գար : Բայց թէպէտ ետ քաշուիլն ալ շատ վտանգաւոր էր, սակայն մէկիկ ապահով միջոցն էր : Գորդէզ աս մտածմանց մէջ եղած ատեն՝ Մոնդեղումն իրեն խորհուրդ մը տուաւ, որն որ Սպարապետը հաճութեամբ ընդունեցաւ, որովհետեւ անկից յաջողութիւն կրնար յուսալ :

Այսպիսով բարձր աշտարակի մը վրայէն՝ եղած պատերազմը կը զննէր . տեսաւ որ իր եղբայրն ու քանի մը խօբերնին անցնող ցեղապետներ գնդերուն

դուրսն անցած էին . կը տեսներ որ բոլոր քաղաքը  
 սաստիկ կոտորած կ'ըլլայ , կը գուշակեր որ Մեք-  
 սիկոյի կործանմանէն ետքը՝ անտարակոյս իր թագն  
 ու նոյն իսկ իր կեանքն ալ պիտի կորսընցընէ : Իր  
 հպատակներուն սաստիկ վրէժխնդրութեան բաղ-  
 ձանքը տեսնելով եւ Սպանիացւոց մեծ ու արտաքոյ  
 կարգի քաջասրտութիւնը ճանչնալով՝ յայտնի կ'ի-  
 մանար որ թշնամութեանց դադրելուն յոյս չկայ :  
 Վերջապէս կ'իմանար թէ որ կողմն որ յաղթող ըլ-  
 լայ , Մեքսիկոյ պէտք է որ բոլորովին կործանի ու ան-  
 բնակ ըլլայ : Ասոնք մտածելով ուզեց Սպարապետին  
 հետ մէյ մը խօսակցիլ եւ ջանաց զԳորդէզ համն-  
 զել որ խաղաղութեամբ ու հանդարտութեամբ քաղ-  
 քէն ետ քաշուելէն ուրիշ միջոց չկայ : Աս բանս ,  
 ըսաւ , թէ՛ ձեզի եւ թէ՛ ինձի օգտակար է . որով-  
 հետեւ ձեր երթալէն ետեւ՝ ես կրնամ կառավարու-  
 թեան սանձերը ձեռքս առնել եւ իմ թագիս աչք  
 տնկողները նուաճել : Մինչեւ հիմա ձեր պատճա-  
 ռաւը քաշած նեղութիւններս՝ վրանիդ պարտք մը  
 կը դնեն որ աս զոհը յանձն առնուք , որն որ շատ  
 կողմանէ ձեզի ալ օգտակար է : Գորդէզ անմիջապէս  
 տեսնելով որ աս առաջարկութիւնն ինչ կերպով  
 կրնայ իր օգտին դարձընել , խօսք տուաւ որ քաղ-  
 քէն դուրս կ'ելլէ , բայց այնու դաշամբ որ կայսրն  
 արգելէ որ իրենց վնաս ընող մը չըլլայ , որուն համար  
 պէտք է որ , ըսաւ , Մեքսիկացիք զէնքերնին վար  
 ձգեն : Մոնղեզումս աս խնդիրը սիրով յանձն առաւ  
 ու պատրաստուեցաւ բոլոր իր ազգեցութեամբն իր  
 հպատակներուն զրգռած ոգիները հանդարտեցընելու  
 եւ յարձակումնին դադրեցընելու :



## ԺԼ.

Մոնղոլ-գուսային հազը: — Տոմարին մէջ սոսկաւէ պարտերազ:

Աստու եղածին պէս՝ Մեքսիկացիք յարձակումն աւելի սաստկութեամբ նորէն սկսան, առանց ամենեւին թնդանօթներուն կոտորածէն զարհուրելու. իրենց բազմութիւնն ամէն բոպէ շատնալու վրայ էր: Նոյն ատեն Մոնղեզումն պարսպին վրայէն իր վառաւոր թագաւորական զգեստներովը ժողովրդեան երեւցաւ: Երբ որ Մեքսիկացիք տեսան իրենց տէրն ու թագաւորը՝ զորն որ աստուծոյ պէս կը յարգէին ու կը պաշտէին, զէնքերնին վար առին եւ անմիջապէս խոր լուծիւն մը տիրեց. ամէնն ալ գլուխնին ծռեցին, ոմանք գետինը խոնարհեցան: Մոնղեզումն ժողովրդեան ճառ մը խօսեցաւ, որով կը ջանար զանոնք համոզել որ թշնամութիւնները դադրեցընեն: Օտարականք կ'ուզեն քաղքէն հեռանալ, ըսաւ. չեմ ուզեր որ անոնց ետ քաշուելուն արգելք դնէք:

Ազնուականներն՝ որոնք պարսպին աւելի մօտիկացած էին, որ կայսեր խօսածն աղէկ մը լսեն, շուտ մը պատասխան տուին թէ Աստուածներուն օգնութեամբ՝ պատերազմը շուտով կը լմննայ. որովհետեւ երդում ըրած ենք որ բոլոր Սպանիացիները ջնջենք: Մոնղեզումն զանազան պատճառներով զիրենք գթութեան շարժելու կամ սրտերնին վախ ձգելու ջանաց. բայց ոգիներն անանկ գրգռած էին, որ պատճառներու մտիկ ընելու ատենն անցած էր: Ամէն կողմանէ տրտունջն սկսաւ, յարգութիւնը կատաղութեան փոխուեցաւ. ոմանք թագաւորը տկար ու վատ կը կոչէին, ոմանք ալ սպառնալիքներ կ'ընէին ու կը նախատէին: Անաստութեան հոգին ամենուն վրայ տարածուեցաւ. եւ որոնք որ մինչեւ նոյն ատեն կայսրն աստուծոյ տեղ զբած էին, իրեն անէծքներ տալու սկսան, երթալով կատղութիւն.

նին սաստկանալով՝ սկսան նետ ու քարեր նետել՝ ան աստիճանի սաստկութեամբ, որ Սպանիացիք զինքը պաշտպանելու համար վահաններն վեր վերցընելու շնաց՝ դժբախտ թագաւորն երկու նետէ վիրաւորեցաւ ու երեսն ալ քար մը գալով՝ դետինն ինկաւ: Մեքսիկացիք աս տեսնելով՝ անանկ սոսկացին, որ յանկարծակի մէկ ծայրէն մէկալ ծայրն անցան: Խիղճերնին սկսաւ զարնել, գործած ոճիրներնուն վրայ սարսափելով ու կարծելով որ աստուածներն անմիջապէս վրէժխնդիր պիտ'որ ըլլան՝ փախչելու սկսան:

Մոնղեզու մա իր բնակարանը տարուեցաւ, ուր որ Սպարապետը շուտ մը վազեց գնաց եւ զինքը մխիթարելու կը ջանար ու իր դժբախտութեան վրայ շատ մեծ ցաւ կը ցուցնէր: Բայց թագաւորն աս աստիճանի նուաստութեան հասնիլը տեսնելով, որուն պատճառն օտարականք էին, զԳորդէզ բարկութեամբ եւ արհամարհութեամբ մէկդի ըրաւ. բժշկական օգնութիւններն ալ ընդունիլ չուզեց. ասանկ մեծ նախատինք մը կրելէն ետեւ ապրիլ շէր ուզեր, վասն զի թէ Սպանիացեոց գերի ու թէ իր ժողովրդեան ատելի եղած էր: Կատուութենէն՝ վերքերուն վրայ դրուած սպեղանիքը փրցուց հանեց, եւ յամառութեամբ՝ ամենեւին սնունդ առնուլ չէր ուզեր: Գորդէզ ասոր վրայ շատ ցաւեցաւ, եւ միաքը փոխելու շատ ջանալէն ետեւ տեսնելով որ անկարելի է եւ տարաբախտ թագաւորին վախճանը մօտեցեր է, գոնէ զանիկայ քրիստոնէական կրօնքի դարձընելու ջանաց: Հայրն Օլմետոյ իր ճարտասանութեան բոլոր ուժը թափեց թագաւորը համոզընելու որ մկրտուի. բայց աշխատութիւնն անօգուտ եղաւ: Երեք օր հիւանդութիւն քաշելէն ետքը՝ իր բախան ու իր թշնամիները նզովելով եւ Սպանիացեոց ու իր ապստամբ հպատակացը վրայ աստուածներուն վրէժխնդրութիւնը կանչելով՝ մեռաւ:

Ասանկ աղետալի վախճան ունեցաւ Մոնղեղումս Բ: Յիսուսն տարւան մեռաւ, տասն'ութը տարի թաւ գաւորելէն ու եօթն ամիս գերութիւն քաշելէն ետեւ: Սպանիացիք անոր մահուանը վրայ շատ ցաւեցան. իր մեծանձնութեամբն ու ազնուական վարմունքովն անոնց սիրելի եղած էր: Իր բնութեան մէջ իրարու հակառակ առաքինութիւններ ու մոլութիւններ կ'երեւային. վեհանձն ու առատաձեռն էր, բայց շատ հեղ իր հպատակաց վնասովը. արդար եւ իրաւարար էր, բայց շատ անգամ անգթութեան գործքեր կը գործէր: Իր պատերազմական ձիրքերն, որով շատ յաղթութիւններ գլուխ տարած էր, շափաւորութեամբ եւ մարդասիրութեամբ խառն չէին: Թէպէտ իր թագաւորութեան առջի տարիներն իր տէրութեան երկիրներն ընդարձակած էր, բայց կարծես թէ վերջին տարիներն իր բնաւորութիւնը բոլորովին փոխուած էր. ան քաջասիրտ ու աներկիւղ աշխարհակալը՝ Սպանիացիք իր երկիրներուն վրայ երեւալուն պէս՝ տկար ու տարտամ իշխան մ'եղաւ: Բաւական սուր միաք ունէր, երաժշտութիւնը շատ կը սիրէր, պատերազմական կրթութիւններէն կը հաճէր. իր մէկիկ զբօսանքն՝ որսի երթալն էր: Հասակը միջակ, անդամները համեմատ, դէմքը վայելուչ, աչուրներն ազդու էր. իր զգեստին եւ բոլոր մարմնոյն վրայ արտաքոյ կարգի հոգ ու զգուշութիւն կ'ընէր: Թէպէտ իր կառավարութեան մէջ զանազան պակասութիւններ ալ ըրաւ, ի վերայ այսր ամենայնի Մեքսիկոյի ամենէն երեւելի ու հռչակաւոր թագաւորը կրնայ սեպուիլ: Շատ որդիներ ունեցաւ, որոնցմէ երեքը քիչ մը ետքը մեռան. մէկը կենդանի մնալով՝ քրիստոնէութեան դարձաւ ու Տոն Բետրոյ անուամբ նշանաւոր եղաւ: Մոնղեղումս եւ Գուլա անուամբ ճանչցուած սպանիական կոմսերն՝ աս Տոն Բետրոյէն սերած են: Նոյն ընտանիքէն Յովսէփ Վալատարէզ

անունով մէկը 1697ին Մեքսիկոյի փոխարքայ անուանեցաւ :

Մոնղեզու մա վերջին շունչն աւանդելուն պէս՝ Գորդէզ շուտ մը մարդ խրկեց ու թագաւորին մահուան գոյժն անոր յաջորդը Գուեղլաւազային իմացուց . միշտ կայսեր քովը մնացող ազնուականներէն ալ վեց հոգի ընտրեց, որ անոր մարմինը քաղաք տանին : Երբ որ Սպանիացիները պաշարող ժողովուրդն իրենց թագաւորին մեռելը տեսան, շուտ մը բռնած գիրքերնին թող տալով՝ սկսան անոր ետեւէն երթալ : Գիշ մը վերջը թագաւորին մահուան գոյժը քաղքին ամէն կողմը տարածուելով՝ ողբալու եւ կոծելու ձայներ սկսան, եւ ամբողջ գիշերը նոյն եղանակաւ յաւաջ գնաց : Առտու եղածին պէս՝ թագաւորին մարմինը մեծ փառաւորութեամբ ու հանդիսով Գուաբոլդեգա լեռը տարուեցաւ, որուն վրայ էր Մեքսիկոյի թագաւորաց գերեզմանը :

Մոնղեզու մայի մահուամբ՝ հաշտութեան յոյսը բոլորովին ոչնչացած էր . յուզարկաւորութեան ժամանակն ընդմիջահատած պատերազմը՝ նոր կատաղութեամբ մը սկսաւ : Քաղաքացիք մեծ տաճարին մէկ կողմն եղած բարձր աշտարակը հինգհարիւր ընտիր զօրքով ամրացուցին, որն որ Սպանիացւոց վրայ կը նայէր . անանկ որ Սպանիացիներէն ոչ ոք դուրս կրնար ելլել՝ առանց վիրաւորուելու : Գորդէզ տեսաւ որ ան աշտարակին շտիրած՝ իր ետ քաշուիլը չիկրնար յաջողընել . պէտք էր որ զանոնք անկից վաճնտէր, թէպէտ եւ շատ դժուար ըլլար ու մարդ ալ կորսնցընէր : Յովհաննէս Էսգոպար բաղմաթիւ գընդով մը աս յարձակումն ընելու որոշուեցաւ . եւ թէպէտ ինք շատ քաջ էր ու քովի զօրքերն ալ ընտիր էին, բայց երէք անգամ ետ քշուեցան :

Գորդէզ տեսնելով որ իր քաջ ու հաւատարիմ զօրաց աղատութիւնն՝ աս յաղթութենէն կախում

ունի, ուզեց անձամբ կռուոյն մէջ մտնել. վերաւորած թեւին վահան մը կապել տուաւ եւ սուրը ձեռքն առած՝ կռուոյն մէջ նետուեցաւ: Չինուորներն իր քաջասրտութենէն ու օրինակէն քաջալերուելով՝ նորէն յարձակեցան, աշտարակին աստիճաններէն վեր ելլելու սկսան եւ վերջապէս Մեքսիկացոց բռնած պատշգամին վրայ հասան. աս նեղ միջոցին մէջ սրոյ ու մահալի զարհուրելի պատերազմ մը բացուեցաւ: Թշնամիք մեծ քաջութեամբ աս յարձակման դէմ դրին. աւելի կ'ընտրէին կտոր կտոր բլլալ, քան թէ զէնքերնին ձգել. ոմանք իրենք զիրենք աշտարակէն վար կը նետէին, լաւագոյն սեպելով իրենց կամօքը մեռնիլ, քան թէ թշնամեաց սրոյն բերանն երթալ: Տաճարին բոլոր քրմերը՝ սոսկալի աղաղակներով ժողովուրդն աստուածներուն պաշտպանութեան կանչելէն ետքը՝ պատերազմելով մեռան. քառորդուան մը մէջ աշտարակին հինգհարիւր պահապանները բոլորովին ջարդուեցան: Գլխագալացիք աշտարակին կրակ տուին, որն որ շուտ մը այրեցաւ: Բայց պատերազմը դեռ փոշոցներուն բերանը կը շարունակուէր. մանաւանդ Գազուպայի փողոցին վրայ, որ լայն բլլալով՝ Մեքսիկացիք դիւրաւ կրնային թշնամին պաշարել:

Գորդէզ շուտ մը ձի հեծաւ, եւ սանձը վնասած թեւն անցրնելով՝ տէգ մ'առաւ իր զօրաց օդնութեան զնաց, ետեւէն քանի մը ձիաւոր ալ վազեցին եկան: Չիերուն յանկարծ յարձակիլը թըշնամեաց կարգը բաժնեց, ցրուեց. ան թանձր բազմութեան մէջ ամէն մէկ տէգի հարուածը՝ մէյ մէկ թշնամի դետինը կը զարնէր: Գորդէզ անանկ եռանդեամբ կը պատերազմէր որ առանց միտ դնելու իր քովիններէն բաժնուելով՝ քիչ մը վերջը իր զինուորներուն յարձակումէն փախչող թշնամիներու բազմութիւնն ետեւը կտրեցին ու պաշարեցին: Աս մեծ

վտանգին ատենը՝ աճապարեց քովի ճամբան նե-  
տուեցաւ, ուր որ աւելի քիչ բազմութիւն կար.  
բայց հազիւ քիչ մը յառաջ գացեր էր, մէյ մ'ալ  
տեսաւ որ խումբ մը թշնամիք գերի բռնած կը տա-  
նէին ՂԱնդրէաս տէ Տուերոն, որն որ ձիէն կ'ընալով  
թշնամեաց ձեռքն ինկած էր, որոնք զինքը մօտաւոր  
տաճարը կը տանէին, որպէս զի առտուածներուն  
դոհ մատուցանեն: Գորդէզ էրբ որ ասիկայ կը տես-  
նէ՝ շանթի պէս ետեւի կողմանէ վրանին կը հաս-  
նի, իր բարեկամը բռնողները կը ցրուէ եւ անոր  
քովը կը մօտիկնայ: Տուերոյ աս անյուսալի օգնու-  
թենէն սի՛րտ առնելով՝ քովը կախուած սուրը կը  
քաշէ, որն որ թշնամիք անզգուշութեամբ ու շփո-  
թութեամբ վրան թող տուած էին, առջի ուժով  
շատ Մեքսիկացիք գետինը կը զարնէ կը սպաննէ, եւ  
իր նիզակն ու ձին՝ որ մօտերն էին, ձեռք կը բերէ:  
Ան ատեն Գորդէզ եւ Տուերոյ քովէ քով դալով՝ նի-  
զակներով թշնամեոյն մէջէն կը ճղքեն կ'անցնին  
ու Սպանիացւոց գնդին հետ կը միանան, որն որ  
արդէն թշնամիները փախուցած էր: Գորդէզ անմի-  
ջապէս փող զարկաւ, իրենց տեղը քաշուելու հրա-  
մայեց. զօրքերը սպանութենէ ու կոտորածէ յող-  
նած՝ ետ դարձան. ըրած յաղթութիւննին անով  
աւելի ուրախալի եղաւ, որ ամենեւին մարդ չէին  
կորսնցուցած, եւ շատ քիչ վիրաւոր ունեցած էին:

Աս յարձակումը թէ՛ յարձակողներուն համար-  
ձակութեան ու քաջասրտութեան կողմանէ եւ թէ՛  
Մեքսիկացւոց սրտոտութեան ու յամառութեան  
կողմանէ ան աստիճանի նշանաւոր դէպք մը սե-  
պուեցաւ, որ Գլասդալացիք ու Մեքսիկացիք ասոր  
յիշատակն իրենց նկարներովը պահեցին:

## ԺԲ.

Սպանիացիք շատ կորոպով տալէն եր կը տուտին : — Օրոտու  
պոյն պարերուդը :

Թէպէտ աս վերջին յաղթութիւնը շատ աղէկ  
յաջողեցաւ, սակայն Սպանիացուց վիճակը միշտ յու-  
սահատական ու դժբախտ էր : Մոնղեզումն չկար,  
պաշարները նուազելու սկսած էին, վառօդն ալ  
լմրննալու վրայ էր. զինուորներէն շատերը վէրք ու-  
նէին եւ ամէնքը սաստիկ յոգնած էին : Մեքսիկա-  
ցիք ալ աւելի հոգի առնելով՝ բոլոր կամուրջները  
քանդած էին, որպէս զի անոնց ետ քաշուին ար-  
գելէն : Տեսնելով որ յարձակմամբ չեն կրնար յաղ-  
թել, կ'ուզէին անօթութեամբ յաղթել : Կամ սովէ  
մեռնիլ, կամ կռոց զոհ ըլլալ՝ աս երկուքին մէկն  
էր Գորդէզին քաջ զինուորներուն գլուխը գալիքը .  
ուստի Սպարապետը մտքին մէջ որոշեց որ Մեքսի-  
կոյէն ետ քաշուի, ուր որ ալ չէր կրնար կենալ :  
Աս որոշումն ինք իրեն ընելէն ետքը՝ մեծերը խոր-  
հրդի կանչեց, որ անոնց միտքն իմանայ թէ աս  
բանս ինչ կերպով եւ երբ ի գործ դնեն : Ժողովա-  
կանք երկու կողմ բաժնուեցան. ոմանք ցորեկ ատեն  
քաշուիլ կ'ուզէին, որպէս զի վտանգները յայտնի  
տեսնեն, իրենց շարժումները կարգի դնեն եւ հար-  
կաւոր եղած ատեն կարող ըլլան դիւրաւ միանալ  
ու թշնամեաց յարձակմանը դէմ դնել : Ոմանք ալ  
կ'ըսէին թէ դիշերն աւելի ապահով է եւ իրենց  
աւելի շահաւէտ, որովհետեւ յոյս ունէին թէ Մե-  
քսիկացիք իրենց աւերորդապաշտութեամբը գիշեր  
ատեն չեն պատերազմիր : Աս վերջին կարծիքը  
յաղթեց : Գորդէզ ալ նոյնին հաւանեցաւ եւ ամէն  
բան սկսաւ կարգի դնել որ առջեւի դիշերը ճամբայ  
ելլեն : Բոլոր օրը շարժական ու դիւրատար կամուրջ  
մը շինելու աշխատեցան, որպէս զի քանդուած թըմ-

բերուն ու հաղորդութիւնը կտրուած տեղերուն վրայ  
 դնեն եւ լիճն անցնին : Բոլոր թագաւորին երթա-  
 լու դանձն ու իր անձնական հարստութիւնը ժող-  
 վեց , միանգամայն ան անհամար զարդերն՝ որոնք  
 դեռ չէին բաժնուած , մեկտեղ բերել տուաւ . հին-  
 գերորդ մասը թագաւորին հանելէն ետեւ՝ ղինուորաց  
 բաւ թէ ամէն մարդ ուղածին չափ առնէ . բայց  
 զիրենք զգուշացուց որ չըլլայ թէ չափէն աւելի ծան-  
 բանալով՝ իրենք զիրենք վտանգի մէջ դնեն :

Ասոնք ընելէն ետեւ՝ մեծ փութով եւ զգուշա-  
 ւորութեամբ բանակը կարգի դրաւ : Սանտովալ , Օր-  
 աաղ ու Փրանկիսկոս Լուկոյ՝ երկու հարիւր քաջ  
 յառաջապահ ղինուորաց հրամանատար դրուեցան .  
 վերջապահ՝ որուն մէջ էին Սպանիացուց մեծ մասը ,  
 Ալփարատոյին եւ Ալեյասկուէզ տէ Լէոնին հրամա-  
 նատարութեան տակ դրաւ . իսկ ինք բանակին կեն-  
 դրոնին կ'առաջնորդէր , որուն մէջն էին Մոնդեզու-  
 մային ընտանիքը , դերի բռնուող երեւելի մարդիկ ,  
 թնդանութներն ու շարժական կամուրջը . դաշնակցաց  
 զօրքն ալ աս երեք գլխաւոր գնդերուն մէջ բաժ-  
 նուած էին : Այս գիշերէն քիչ մը ետքը , 1830ին ,  
 Յուլիոսի մեկին , յառաջապահ զօրքը շարժելու սկսաւ ,  
 որուն ետեւէն անմիջապէս բոլոր բանակն ալ գնաց :  
 Նոյն գիշերը սաստիկ մութ էր ու հեղեղի պէս ան-  
 ձրեւ կու դար . աս պարագան՝ որ առջի բերան շատ  
 օգտակար երեւցաւ , քիչ մ'ետքը խիստ դժբախտ  
 հետեւութիւն ունեցաւ : Սպանիացիք լռութեամբ  
 յառաջ կ'երթային Գազուպա տանող թմբին վրայ-  
 էն , որովհետեւ ան կողմանէ քաղաքը ցամաք եր-  
 կրին աւելի մօտ էր . միանգամայն նոյն կողմը՝ Գլաու-  
 դալայէն ու դէպ ի ծով տանող ճամբէն աւելի հե-  
 ու ու իյնալով՝ Մեքսիկացիք նոյն տեղերն ուրիշ տե-  
 ղերուն չափ չէին աւրած : Սպանիացիք առանց ար-  
 գելք մը կրելու՝ թմբին առջի կործանած տեղը



հասան ու խաբուելով կարծեցին թէ թշնամին իրենց փախուսան իմացած չէ:

Բայց Մեքսիկացիք թշնամիներէն գաղտուկ աւանց ամէն շարժումները գիտած ու սաստիկ յարձակում մ'ընելու պատրաստուած էին: Սպանիացիք կամուրջը հաստատելու եւ ձիերն ու թնդանօթներն անցընելու զբաղած ժամանակ՝ մէկէն ի մէկ փողերու ձայն ու բաղմութեան աղաղակ մը լսելով՝ շփոթեցան եւ սարսափեցան. քարերն ու նետերն անձրեւի պէս ամէն կողմանէ սկսան վրանին թափիլ: Մեքսիկացիք սոսկալի կատաղութեամբ յառաջ կու գային. շարժական փայտէ կամուրջն ալ թնդանօթներուն ծանրութենէն անանկ մը ջրին մէջ խրեցաւ, որ դուրս հանելն անկարելի եղաւ: Սպանիացիք իրենց վտանգը տեսնելով՝ արտօրնօք երկրորդ խրամատին վրայ գացին, ուր որ թշնամիները զիրենք պաշարեցին: Եւ թէպէտ իրենց բնական քաջասրբութեամբն ու արիութեամբը կը պատերազմէին, բայց սաստիկ նեղ տեղույ մը մէջ փակուած ըլլալով եւ խոր մութն ու անձրեւին սաստկութիւնն իրենց արդեւէք ըլլալով՝ զէնքերնուն առաւելութիւնը մեծ օգուտ մը չէր բներ:

Բոլոր քաղքին բնակիչքն իրենց հարստահարիչները հալածելու ելած էին. անանկ կատաղած էին որ ետեւ մնացողներն առջեւի կեցողները սաստիկ կը հրէին եւ ուժգնութեամբ յառաջ կը մղէին, որ Սպանիացուց աւելի մօտիկնան. ինկողներուն տեղ շարունակ նոր զօրք կը յաջորդէր: Սպանիացիք հեղեղի պէս վրանին վազող զօրքին գէմ դնելէն՝ շատ յոգնելով, ալ տեղի աալու սկսան: Քանի մը բուպէի մէջ բոլոր կարդերն աւրուեցան. ձիաւոր ու ստանաւոր, պաշտօնակալ եւ հասարակ զինուոր, բարեկամ ու թշնամի իրարու խառնուեցան. գիշերուան մութէն՝ զարնուողները չէին իմանար թէ հարուածն

ուսկից կու գայ, թշնամիէ թէ բարեկամէ: Գորդեզ  
 գրեթէ հարիւր հետեւակով ու քանի մը ձիաւորով  
 վերջին երկու խրամատներն ալ անցնելով՝ կրցաւ  
 վերջապէս ոտքը ցամաք երկրի վրայ կոխել: Քանի  
 որ նորէն զինուոր կ'ազատէր ու իրեն հետ կը միա-  
 նար, զիրենք կարգի կը դնէր ճակատ կը կազմէր,  
 որ յարձակման դէմ դնեն. ետքը նորէն ետ դարձաւ  
 խրամատներն անցաւ, որպէս զի ետեւ մնացողներուն  
 օգնութեան հասնի: Ասիկա ուրիշ բան չէր՝ բայց  
 եթէ ինք զինքը նորէն յայտնի մահուան վտանգի մէջ  
 դնել. բայց իր հաւատարիմ ընկերներուն գտնուած  
 ողորմելի ու սղբալի վիճակն՝ աս նշանաւոր մարդուն  
 քաջասրտութիւնը կը կրկնապատկէր եւ իրեն նոր  
 զօրութիւն մը կու տար. հասարակաց ազատութիւնը  
 հոգալու համար իր կենաց վտանգը մոռցած էր:  
 Իր զօրքը կը քաջալերէր որ արիութեամբ դէմ դնեն.  
 անոնց ընթացքին կ'օգնէր, ու ամէն նպաստ կը մա-  
 տուցանէր որ խրամատներն անցնին ցամաք երկիր  
 հասնին: Թէպէտ եւ այսպէս ամէն յայտնի վտանգաց  
 մէջ ու խառնուրդին ամենէն սաստկացած կողմերն  
 աներկիւզ կը մտնէր, բայց ամենեւին եւ ոչ մէկ  
 վէրք մ'ընդունեցաւ. կրնայ բուռիլ որ Աստուած  
 յայտնապէս զինքը կը պաշտպանէր: Սակայն աս  
 քաջութեան գործքերուն մէջ՝ սրտին անձկութիւնն  
 ու վշտերը զինքը սաստիկ շատ կը նեղէին. աչքին  
 առջեւ կը տեսնէր որ իր ընկերներէն շատերը բազ-  
 մութեան դէմ չկրնալով դնել՝ կը մեռնէին կամ  
 գերի կ'իյնային, ոմանք ալ լճին մէջ կը խղզուէին:  
 Ասոնք կը տեսնէր ու չէր կրնար օգնութեան հաս-  
 նիլ. վերաւորողներուն ողբն ու կոծը, եւ ամենէն  
 աւելի կենդանի բռնուելով աստուածներուն զոհ ըլ-  
 լալու համար գերի տարուողներուն ձայնը՝ սիրտը կտոր  
 կտոր կ'ընէին. բայց օգնութեան հասնին անկարելի  
 էր: Վերջապէս վերջապահաց գնդէն ալ ազատողներն

եկան իրեն հետ միացան. վէրքերով լեցուած եւ արեան մէջ թաթխուած՝ ութ Սպանիացի եւ խել մը Գլասգալացիք Ալվարատոյին ետեւէն կու գային, որն որ ծանր վէրքեր առած ըլլալով՝ հաղիւ թէ ստքի վրայ կենալու յոյժ ունէր: Իրեն բոլոր ուրիշ ընկերները, թէ Սպանիացի ու թէ դաշնակից, պաշտօնակալ ու զինուոր, նոյն խակ դժբախտ Ալվասիուէզ աէ Լէոն քաջ երիտասարդը, ամէնն ալ կամ՝ մեռած կամ գերի բռնուած էին: Ալվարատոյ՝ միայն իր երագաշարժութեամբը կրցեր էր ազատիլ, երրորդ խրամատին եզերքը կենալու ստիպուելով եւ տեսնելով որ զինքը հալածող բազմութեան դէմ դնելն անկարելի է, բոլոր յոյժը ժողովելով՝ երկայն նիզակը խրամատին յատակը կոթընցուց, եւ ուժով մը օդը նետուելով ու միայն բազկին զօրութեամբ ինք զինքը բռնելով, մինչեւ խրամատին մէկալ կողմը ցատքէց: Աս զարմանալի գործողութիւնը ետքէն հրաշքի մը պէս սեպուեցաւ. նոյն խակ Ալվարատոյ երբ որ ցատքած խրամատին լայնութիւնը տեսաւ, ապշեցաւ մնաց: Բայց սա բանս այնչափ վիաններով հաստատուած է՝ որ տարակուսելու տեղի չիմնար. Սպանիացիք նոյն տեղւոյն անուեն՝ Ալվարատոյի անց գրին, որպէս զի աս անլուր եզանակաւ ազատող քաջ պաշտօնակալին անուեն անմահացրեն:

Ատու չեղած՝ նոյն զարհուրելի գիշերուան՝ ազետալի կոտորածէն ազատող զօրքերը՝ Գազուպայի քով միացան: Երբ որ արշալոյսը ծագեցաւ եւ Գորդէզ իր զօրաց խեղճ մնացորդը տեսաւ, որն որ կէսէն աւելի նուազած, վհատած ու մեծ մասը վէրքերով ծածկուած էր, անոնց կրածներուն եւ նոյն դժբախտ գիշերը կորսնցուցած քաջ ու հաւատարիմ ընկերներուն յիշատակաւն ան աստիճանի այլայլեցաւ.

<sup>1</sup> Աս դառն գիշերը մինչեւ հիմայ նոր Սպանիայի բնակիչք Noche triste սոց ինքն թշուաւ գիշեր կը կանչեն:

ու այնպէս սաստիկ ցաւ զգաց, որ հարկաւոր կարգադրութիւններն ընելու եւ հրամանները տալու ժամանակ՝ աշուրներէն արցունք կը թափէր ու խորունկ կը հառաչէր: Զինուորները Գորդէզին՝ իրենց ընկերներուն վրայ ցուցրցած դութը տեսնելով՝ վրան աւելի մեծ սէր կապեցին ու քաջալերեցան:

Աս աղետալի դիշերը շատ քաջ պաշտօնակալներ ու վեցհարիւրի մօտ ալ հասարակ զինուոր ինկաւ: Թնդանօթները բոլոր կորսուեցան, նոյնպէս պատերազմի պաշարն ու զինուորաց կարասիները. դրեթէ բոլոր ձիերն ու երկու հազար ալ Ռլասոգալացի ջարդուեցան: Գանձին մէկ փոքր մասը հաղիւ կրցան ազատել: Ինչպէս որ Գորդէզ զուշակած էր՝ զինուորաց կորստեան դիւաւոր պատճառն իրենցմէ եղաւ. վասն զի ան սաստիճանի ոսկւով բեռնաւորած էին, որ ազատ պատերազմէն անկարելի կ'ըլլար: Աերջապէս Մոնդեզումային եղբայրը, որդին ու երկու կանայքն ալ պատերազմին զոհ եղան. իսկ Ակուիլար եւ Մարինա՝ որոնք թարգմանութիւն ընելու համար շատ հարկաւոր էին, բարեբախտութեամբ մահուան վտանգէն ազատեցան. նոյնպէս ազատեցաւ յարգոյ Հայր Օլմետոն, որն որ իր եռանդուն աստուածպաշտութեամբն ու ձիւրքերովը բանակին այնչափ մեծ ծառայութիւններ րրած էր:

Գորդէզին առջի փոյթն՝ իր յոգնած զօրքին ապաստանարան մը հոգալն եղաւ. որովհետեւ զբանուած տեղն անյարմար էր: Մեքսիկացիք ամէն կողմանէ զինքը կը նեղէին ու մօտ տեղերուն բնակիչքն իրենց դէմ զէնք առնելու սկսած էին: Անոր համար Մեքսիկոյէն երկու մղոն հեռու եղած բլուրներուն կողմը քաշուեցաւ, եւ հոն աաճարի մը տիրեց, որն որ հնձոց առատութեան աստուածին նուիրուած էր: Տաճարին շրջապատը բաւական ընդարձակ, ու պարսպով պատած եւ քանի մը աշտարակներով ամ-

բացած էր, որով դիւրաւ պաշտպանուելու կրնար ծառայել. մէջն ալ բաւական պաշար կար: Սպանիացիք առ պատնէշին մէջ քիչ մը շունչ առին, նոյն տկար պատուարն իրենց անառիկ բերդ մ'երեւցաւ. հոն Աստուծոյ իրենց տուած առ նոր ապաստանարանին համար շնորհակալ եղան եւ նոյն պաշտպանութեան յիշատակն անջինջ պահելու համար՝ ետքը պզտիկ միայնարան մը շինեցին, որուն անունը՝ Աստուածամայր օֆնական դրին:

Գորդէզ իր պաշտօնակալներուն հետ խորհուրդ բրաւ թէ ինչ ճամբայ բռնէ եւ որ կողմանէ ետ քաշուի: Իրենք ան ատեն լճին արեւմտեան կողմն էին. իսկ Գլասդալա՝ լճին արեւելեան դին ու Մեքսիկոյէն 20 մղոն հեռու էր: Ստոյգ է այսչափ երկայն ճամբայ պիտի ընէին, բայց միայն ան քաղքին մէջ ընդունելութիւն ու ապաստանարան գտնելու յոյս ունէին: Գլասդալացի մը իրենց առաջնորդ ըլլալու յանձն առնելով՝ բոլոր բանակը ճամբայ ելաւ: Առաջնորդը զիրենք երբեմն ճախճախուտ ու երբեմն լեռնային, անապատ ու չմշակուած երկիրներէն անցուց: Գրեթէ վեց օր անդադար առանց կենալու քաղեցին: Ան վեց օրուան մէջ թշնամիք զիրենք ամենեւին հանդիստ չէին թողուր. ահագին բազմութեամբ Մեքսիկացւոց գնդեր շարունակ վրանին կը յարձակէին. երբեմն հեռուէն նետեր կը նետէին ու երբեմն կը ճակատէին եւ առջեւնին կտրել ուղելով՝ երկու երեք կողմանէ սաստիկ յանդգնութեամբ վրանին կը վազէին: Այսչափ աշխատութիւնն ու այսչափ վտանգները՝ Սպանիացւոց կրած նեղութեանց ամենէն մեծը չէր. անցած երկիրնին անբեր ըլլալով՝ ամենեւին կերակուր չէին կրնար գտնել, այնպէս որ վայրենի խոտ ուտելու ստիպուեցան: Անթուրութիւնը զանոնք կը վհատեցընէր ու զօրութիւննին կը կտրէր. ուր որ անոր հակառակ՝ գտնուած վիճակնին սաս-

սիրտներն ալ բոլորովին յուսահատելու սկսան : Բայց Գորգէզ ժամանակ կորսընցընել չուզեց , վախնալով որ զանազան մտածութիւններով զօրաց վախն աւելի կը սաստկանայ . անոր համար իր տկար բանակը կարգաւորեց ու շուտ մը պատերազմելու պատրաստեց : Մնացած քանի մը ձիերը՝ քաջ հեծեալներու յանձնեց եւ ինք անոնց զլուխն անցաւ , որպէս զի ամենէն աւելի վտանգի մէջ եղող տեղերու օգնութեան հասնելու պատրաստ կենան : Ամէն բան կարգի դնելէն ետեւ՝ Սպարապետն ամուր ձայնով ու մեծ եռանդով կանչեց . Բարեկամք , ահա առիկ կամ յաղթելու կամ բոլորովին ջնջուելու վիճակի մը մէջ ենք . սրտերնիս առ Աստուած համբառնանք , բոլոր յոյսերնիս անոր վրայ դնենք եւ աներկիւղութեամբ յարձակինք : Խառնուրդն ահագին եղաւ . Սպանիացիք մեծ քաջութեամբ ու դրեթէ յուսահատութեամբ կը պատերազմէին . Մեքսիկացիք անոնց առջի յարձակման՝ քաջութեամբ դէմ դրին : Գորգէզին փոքրիկ ու պնդակազմ դունդն ուր որ կը հասնէր , թշնամիները կը ճեղքէր , ամենէն ստուար զնդերն ալ կը ցրուէր կը բաժնէր : Բայց մէկ դունդը ցրուելուն պէս՝ ուրիշ մը անոր տեղը կը յաջորդէր : Չորս ժամ սաստիկ ու կատաղի պատերազմէ մը վերջը՝ Սպանիացիք խիստ յոգնելով՝ ալ դժուարաւ կրնային այնպիսի անհաւասար պատերազմն յառաջ տանիլ : Աս վերջին վտանգին ատենը՝ մէկէն ի մէկ Գորգէզին միտքն ինկաւ որ բոլոր ան կողմերու ազգաց մէջ պատերազմին որոշումը թագաւորական դրօշէն կախում ունի , եւ նոյն դրօշը գերի իյնալուն կամ դրօշակիր զօրապետը մեռնելուն պէս՝ բոլոր զօրքը կը ցրուին ու կը փախչին . ուստի անմիջապէս ետեւէն ինկաւ որ նոյն դրօշը ձեռք ձգէ : Չիհուսալովին՝ Մեքսիկացուց զօրապետը՝ բանակին մէջտեղը բարձր ու փառաւոր պատգարակի մը վրայ նստած՝ նոյն դրօշը

սիրտներն ալ բոլորովին յուսահատելու սկսան : Բայց Գորդէզ ժամանակ կորսընցընել չուզեց , վախնալով որ զանազան մտածութիւններով զօրաց վախն աւելի կը սաստկանայ . անոր համար իր տկար բանակը կարգաւորեց ու շուտ մը պատերազմելու պատրաստեց : Մնացած քանի մը ձիերը՝ քաջ հեծեալներու յանձնեց եւ ինք անոնց գլուխն անցաւ , որպէս զի ամենէն աւելի վտանգի մէջ եղող տեղերու օգնութեան հասնելու պատրաստ կենան : Ամէն բան կարգի դնելէն ետեւ՝ Սպարապետն ամուր ձայնով ու մեծ եռանդով կանչեց . Բարեկամք , ահաւատիկ կամ յաղթելու կամ բոլորովին ջնջուելու վիճակի մը մէջ ենք . սրտերնիս առ Աստուած համբառնանք , բոլոր յոյսերնիս անոր վրայ դնենք եւ աներկիւղութեամբ յարձակինք : Խառնուրդն ահագին եղաւ . Սպանիացիք մեծ քաջութեամբ ու դրեթէ յուսահատութեամբ կը պատերազմէին . Մեքսիկացիք անոնց առջի յարձակման՝ քաջութեամբ դէմ դրին : Գորդէզին փոքրիկ ու պնդակազմ գունդն ուր որ կը հասնէր , թշնամիները կը ձեղքէր , ամենէն ստուար դնդերն ալ կը ցրուէր կը բաժնէր : Բայց մէկ գունդը ցրուելուն պէս՝ ուրիշ մը անոր տեղը կը յաջորդէր : Չորս ժամ սաստիկ ու կատաղի պատերազմէ մը վերջը՝ Սպանիացիք խիստ յոգնելով՝ ալ դժուարաւ կրնային այնպիսի անհաւասար պատերազմն յառաջ տանիլ : Աս վերջին վտանգին ատենը՝ մէկէն ի մէկ Գորդէզին միաքն ինկաւ որ բոլոր ան կողմերու ազգաց մէջ պատերազմին որոշումը թագաւորական դրօշէն կախում ունի , եւ նոյն դրօշը գերի իյնալուն կամ դրօշակիր զօրապետը մեռնելուն պէս՝ բոլոր զօրքը կը ցրուին ու կը փախչին . ուստի անմիջապէս ետեւէն ինկաւ որ նոյն դրօշը ձեռք ձգէ : Չիհուազածին՝ Մեքսիկացւոց զօրապետը՝ բանակին մէջտեղը բարձր ու փառաւոր պատգարակի մը վրայ նստած՝ նոյն դրօշը

կը կրէր, որն որ սակիէ շինուած ու գոյնդգոյն վե-  
տուրներով զարդարուած եւ նիզակի մը ծայրն ան-  
ցուած էր. դրօշը պաշտպանելու համար բազմաթիւ  
ու ընտիր գունդ մ'ալ որոշուած էր:

Գորդէզ անմիջապէս ամենէն քաջ պաշտօնա-  
կանները, Ալվարատոն, Սանտովալը, Օլիար, Տաի-  
լան եւ ուրիշ քանի մը քաջեր՝ որոնք իրենց ձիերն  
անմիաս պահած էին, ժողվեց ու իր միտքն անոնց  
յայտնելով՝ յորդորեց որ իրեն հետեւին: Առանց  
ատեն անցընելու՝ ամէնքը մէկանց ձիերնին վազցու-  
ցին, առջեւնին ելած ամէն արդելքները յազթեցին  
եւ ան ահագին րոպէին մէջ բոլոր իրենց զօրու-  
թիւնն ու քաջութիւնը գործածելով՝ շուտ մը թշնա-  
մեաց ստուար գնդերը ձեղքեցին եւ զօրապետին  
առջեւը հասան: Գորդէզ նիզակի հարուածով մը  
զանիկայ կը վերաւորէ գետինը կը ձգէ. իր ընկերնե-  
րէն՝ Յովհաննէս աէ Սալամանդա անուսով մէկն ալ՝  
ձիէն վար կ'իջնայ, դրօշը դերի կ'առնէ եւ զօրապե-  
տը կը մեռցընէ: Մեքսիկացիք տեսնելով որ նուի-  
րական դրօշնին գերի ինկաւ, զէնքերնին կը նետեն,  
խառն ի խուռն գէպ ի լեռները փախչելու կը սկսին:

Այսպէսով լմնցաւ Սպանիացւոց Նոր աշխարհ-  
քին մէջ բրած ամենէն հռչակաւոր ու երեւելի  
յազթութիւնը: Զօրքը սաստիկ յոգնած բլլալով՝  
Գորդէզ թշնամւոյն ետեւէն իյնալ չուզեց, ուստի  
եւ պատերազմի գաշտին վրայ մնացած աւարը ժող-  
վելու դարձան: Մեքսիկացւոց շատ երեւելի իշխան-  
ներն իրենց մեծազին զարդերովը զարդարուած՝ բա-  
նակ եկած բլլալով, աւարը շատ առատ եղաւ. եւ  
Գորդէզ ու իր ընկերները Մեքսիկոյէն ելած ատեն  
բրած կորուսաներնուն աեղը լեցուցին:

Աս պատերազմին մէջ թէ Սպանիացիք ու թէ  
Գլասոգալացիք մեծ քաջութիւն ցուցուցին. բայց  
Գորդէզին քաջութեան ոչ ոք հաւասարեցաւ: Հե-



տը դանուող պաշտօնականներուն պատմածին նայելով՝ Սպարապետն աս հռչակաւոր օրուան պէս քաջութիւն, արագութիւն ու ժրութիւն՝ ամենեւին ուրիշ աւթի մը մէջ ցուցրցած չէր: Տիազ կ'ըսէ թէ Սանտովլան ալ իր դորձած զարմանալի քաջագործութեանց համար մասնաւոր եղանակաւ յիշուելու արժանի եղաւ: Պատմիչները դովութեամբ կը յիշատակեն նաեւ Մարիա տէ Կողբատէ անունով կին մը, որն որ իր նիզակովը թշնամիներէն շատ մարդուպաննեց ու մեծ քաջութեամբ պատերազմեցաւ: Թշնամեաց կորուստը սաստիկ մեծ եղաւ. ոմանք մեռնողներուն թիւը մինչեւ քսան հազար կը հանեն. Սոլիս աս թիւը սոցոյզ կը կարծէ, որովհետեւ իր հաշուին նայելով՝ Մեքսիկացւոց բանակը երկու հարիւր հազար հոգիէ բազկացած էր: Աս հաշուին մէջ անտարակոյս շատ չափազանցութիւն կայ. բայց ստուգիւ կրնանք ըսել թէ Սպանիացիք երբեք առաստիճանի բազմութիւ զօրաց հետ պատերազմած եւ այսչափ շատ ջարդ ըրած չէին: Իսկ Գորդէզին կողմանէ՝ դաշնակից զօրքերէն շատուոր մաս մը դաշտին վրայ մնաց, նոյնպէս իր զօրքերէն ալ շատ մարդ մեռաւ. մնացածները դրեթէ բոլոր վիրաւորած էին. ինքն ալ քարով մը զարնուեցաւ, անանկ ստոտիկ՝ որ ձիէն վար ինկաւ:

Յաղթութեան երկրորդ օրը, Յուլիսի Տին, Սպանիացիք առանց արգելքի Գլխողալա մտան: Բոլոր զօրաց թիւը չորսհարիւր քառասուն հոգի էր. անոնց ալ մեծ մասը վիրաւորած ու ամէնն ալ սաստիկ յոգնած: Ամիս մը յառաջ նոյն քաղքէն ելլելու ժամանակ ունեցած ուրախութիւննին ու յոյսերնին՝ հիմակուան դանուած վիճակներնէն բոլորովին տարբեր էր: Ան ատեն իրենց դործքին յաջողելուն վրայ տարակոյս չունէին, իսկ հիմա պէտք էր որ ամէն բանէ հրաժարէին ու Գուպա դառնային:

Գորդեղին Գլաօփալ եղած խմանալը պարտհած դեպքերը :

Գլասագալացիք զՍպանիացիները մեծ սիրով ու բարեկամութեամբ ընդունեցան . քաղաք մտնելին շատ հանդիսով եղաւ . ժողովուրդն ուրախութեան աղաղակներով դիմացին ելաւ եւ կ'երեւար որ օտարականաց գլուխն եկած չարիքներուն համեմատութեամբն իր հաւատարմութիւնն ալ կ'աւելնար : Գլխաւոր ցեղապետները զԳորդեղ իրենց տունն ընդունելու համար իրարու հետ կը մըցէին . իրօք ալ Սպարապետն անոնցմէ մէկուն տունը բնակեցաւ , ցուցրնելու համար թէ իրենց վրայ սրչափ վստահութիւն ունի : Սպանիացիք առատութեամբ կերակուր ունեցան , ու վէրքերնին բժշկելու եւ աշխատութիւններնէն հանդչելու համար հարկաւոր եղած ամէն օգնութիւնները գտան : Բայց առ հանդիստն ուրախութեամբ վայելած ատեննին՝ ցաւալի դիպուած մը իրենց ապահովութիւնն ու ազատութիւնը վտանգի մէջ ձգեց : Գորդեղ իր գլուխն ընդունած վէրքին փոյթ չտանելով , եւ մարմնոյ տաժանելի աշխատութիւններն ու մտաց հոգերը զինքն աւելի եւս տկարացրնելով՝ սաստիկ ուղեղի ջերմութիւն ու տենդ մ'ունեցաւ , այնպէս որ կենացը վրայ սկսան վախնալ : Աս հիւանդութեան վրայ տեղացիք շատ ցաւեցան ու շփոթեցան . ազնուականները տխուր ու տրտում դէմքով՝ ամէն ըրպէ հիւանդին որպիսութեան լուրն իմանալու կու դային : Ժողովուրդն անանկ բազմութեամբ դուռը միշտ պաշարած կը կենար , որ հարկ եղաւ ցրուել , որպէս զի անոնց պուռալու եւ ողբալու ձայնը հիւանդին վնաս մը չտայ : Ծերակոյտն երկրին ամենէն քաջ բժիշկները ժողովելով՝ իրենց յանձնեց որ զինքը դարմանեն : Ասոնց բոլոր արուեստը՝ զանազան խոտերու զօրու-

Թիւնը ճանչնալու եւ իրարմէ որոշելու վրայ կը կայանար, զորոնք ըստ տեղւոյն աղէկ կը գործածէին: Իրենց փորձառութեամբը Սպարապետին հիւանդութիւնն անցուցին. իսկզբան տկար ու թեթեւ դեղերով ցաւն ու տենդին տաքութիւնը դադրեցընելու ջանացին, ետքէն աստիճան աստիճան վէրքը գոցելու դեղեր գործածելու սկսան, անանկ զգուշութեամբ ու յաջողութեամբ՝ որ քիչ ժամանակուան մէջ Գորդէզ բոլորովին առողջացաւ:

Երբ որ զօրութիւնն աղէկ տեղն եկաւ ու իր սովորական գործքերուն պատաղելու սկսաւ, տեսաւ որ ընկերացը վրայ տհաճութեան ու գրգռութեան ոգի մը տիրած էր. զօրաց մեծ մասն իրենց դժբախտ վիճակին եւ ակնկալութիւններնուն պարապ ելլելուն վրայ համարձակ կը տրտնջէին: Մանաւանդ Նարվաէզին զինուորացը խօսքն ան էր որ ասանկ վտանգաւոր ու անպտուղ աշխատութիւնները թող տան ու Գուպա կղզին դառնան: Անդրէաս տէ Տուերոյ՝ վերջին սոսկալի դէպքերէն շատ այլայլած ըլլալով եւ նորէն նոյնպիսի վտանգներու մէջ ինչպէն վախնալով՝ շարունակ կը ջանար զԳորդէզ համոզելու որ աշխարհակալութեան դիտաւորութիւնը մէկդի թողու: Աւերջապէս արտնջողներու շատուոր կողմ մը կազմուեցաւ, որոնք Սպարապետին աղերսագիր մը առին եւ հրաման խնդրեցին որ ետ դառնան:

Գորդէզ աս բաներուն վրայ սաստիկ արտմեցաւ, բայց ջանաց որ արտաքուստ չյայտնէ: Ներքուստ իր զօրացը արտունջներուն իրաւունք կու տար եւ չէր կրնար պարսաւել: Ըրած կորուստներնուն ու դանուած խղճալի վիճակներնուն վրայ շատ կը ցաւէր. բայց իր մեծանձնութեամբն ամէն չարեաց դէմ հաստատուն կը կենար: Մեքսիկոյի տիրելու դիտաւորութիւնը երբեք չէր թողուր. վերջին թշուառութիւնները՝ ստոյգ է իր յուսացածներուն

կատարումն ուշացուց, բայց յոյսը չխախտեց: Իր իշխանութեամբը զօրաց տրտունջը խաղաղցրնելու ջանաց, եւ որպէս զի դատարկութեամբ ոգիներն աւելի չգրգռին, բանակը քաղաքէն դուրս հանեց, բայց արդէն կէս մ'ալ ստիպուած էր:

Գեբգազայի ժողովուրդը՝ որ յառաջագոյն Գորդէզին հաւատարմութեան երդում ըրած էին, երբ որ անոնց առջի պարտութիւնները լսեցին եւ իմացան թէ իրենց պէս մարդիկ են, ապստամբեցան ու Զեմբոսլայէն Մեքսիկոյ գացող գնդի մը վրայ յարձակեցան. նոյնպէս Վերա-Գրուզ գացող բաղմաթիւ գունդ մ'ալ զարնուած ու ջարդուած էր: Այսպէս սակաւաթիւ բանակն՝ իր առանկ տկարութեան առտեն՝ նորէն ըրած կորուսաներովը շատ նուազեցաւ: Գորդէզ Գեբգազացուց խաբէութեան ու նենգութեան վրայ սաստիկ նեղանալով՝ միտքը դրաւ որ երթայ զիրենք պատժէ: Նարվաէզին զինուորներն ալ յօժարութեամբ աս արշաւանաց մէջ մտան, վասն զի սպաննուած զինուորներէն շատերն իրենց ընկերներէն ըլլալով՝ կ'ուզէին վրէժ առնել: Բանակը դէպ ի Գեբգազա ճամբայ ելաւ ու քանի մը շաբաթուան մէջ՝ սաստիկ կոտորած ընելով քաղաքին տիրեց: Աս քաղաքը Վերա-Գրուզի ճամբուն վրայ ըլլալով՝ իրենց շատ հարկաւոր էր. դիրքն ալ ամրանալու շատ յարմար ըլլալով՝ քիչ աշխատութեամբ ամուր բերդաքաղաք մը կրնար ձեւանալ: Շրջանակը չափաւոր ամրութեամբ հողէ պատնէշ մը քաշեցին. իսկ քովի բարձր լեռան վրայ աւելի հաստատուն ամրոց մը շինեցին, ուր որ թշնամեաց յարձակմանը դէմ իրենք զիրենք կրնային պաշտպանել: Աս գործքին անանկ եռանդով ու շտապաւ ձեռք զարկին, որ քանի մ'օրէն ամբողջ լմընցաւ: Գորդէզ քանի մը սպանիացի զինուոր թողուց, աս ամրոցը պահպանելու համար, որուն անունը Սեկուրա դրաւ:

Աս վերջին յաջողութիւնը զինուորաց քիչ մը սիրտ տալով՝ ալ Նոր Սպանիան թող տալու խօսքերը դադրեցան: Գորդէզ աս փոփոխութեան վրայ շատ ուրախանալով՝ պատշաճ սեպեց որ ուրիշ նոր արշաւանքներով զօրքը զբաղեցընէ, անոնց եռանդը կամեց կամաց բորբոքէ, որպէս զի ի վախճանի կարող ըլլայ անոնց յաղթական ղէնքերը Մեքսիկոյ քաղքին վրայ դարձընել: Անոր համար քանի մ'ամիս մերձաւոր զաւառները զանազան արշաւանքներ ընելով անցուց, սպասելով որ Սպանիայէն ու Ճամայիգայէն օգնութիւն դայ: Ասան զի յառաջագոյն Նարվաէզին նաւերէն չորս նաւով հաւատարիմ պաշտօնակալ մը խրկած էր, որպէս զի նոր բախտախընդիրներ փնտռէ, ու ձի, վառօդ եւ ուրիշ պատերազմի պաշար դնէ: Գիտնալով միանգամայն թէ մինչեւ որ լճին տէր չ'ըլար, Մեքսիկոյ քաղքին տիրելն ու պահպանելն անկարելի է, տասուերկու թեթեւ նաւի շինութեան համար՝ լերանց վրայէն փայտ կտրել ու պատրաստել տուաւ, որպէս զի կտորները լճին քով տարուին ու հարկաւոր եղած ատեն քովէ քով բերելով նաւեր շինուին:

Բախտն ալ իր ճարտարմտութեան ու հաստատութեան օգնեց: Գուպայի կառավարը մտքին մէջ հաստատուն դրած ըլլալով որ Նարվաէզին արշաւանքն անտարակոյս պիտ'որ յաջողի, անոր ետեւէն երկու նաւով առատ պաշար, ղէնք ու զինուոր խըրկած էր: Ալերա-Գրուզի հրամանատարը նոյն նաւերը ճարպիութեամբ իր նաւահանգիստն որսաց, անոնց տիրեց ու մէջինները դիւրութեամբ համոզեց որ Գորդէզի պէս քաջ ու յաջողակ զօրապետի մը հրամանատարութեան տակ մանեն: Քիչ մը ետքը նոյն նաւահանգիստը ետեւէ ետեւ ուրիշ երեք նաւեր ալ հասան, որոնք Ճամայիգայի կառավարը ճամբայ հանած էր, որ նոր երկիրներ գտնելով ու Գորդէզին

պէս աշխարհակալութիւններ ընելով, ինքն ալ ա-  
 նոր հարստութեանն ու փառացր մասնակից ըլլայ :  
 Իր խրկած մարդիկն երկրին անհմուտ ըլլալով՝ ան-  
 բեր ու աղքատ տեղ մը ցամաք ելած էին, որուն  
 բնակիչքը կատաղի ու պատերազմող ազգ մըն էր :  
 Երկայն ատեն սաստիկ նեղութիւն ու վիշտ քաշե-  
 լէն ետեւ՝ անօթութենէ ստիպուելով, Աերա-Գրուզ  
 ապաւինեցան ու իրենց հայրենակցաց ձեռքը յան-  
 ձնուեցան : Գորդէզին կողմնակիցներն իրենց յուսա-  
 ցուցիչ ու հրապուրիչ խոստումներովը շուտ մը աս  
 զօրաց հաւատարմութիւնը խախտեցին ու դիւրաւ  
 իրենց կողմը շահեցան : Ասոնցմէ զատ ուրիշ ան-  
 ակնկալ օգնութիւն մ'ալ եկաւ : Սեւիլայէն ելլող  
 վաճառականի նաւ մը՝ որ պատերազմի պաշարով  
 լեցուն էր եւ իր ապրանքները ծախելու յուսով ան  
 կողմերն եկած էր, Աերա-Գրուզ հանդիպեցաւ : Գոր-  
 դէզ աս նաւին ապրանքներն ամբողջ գնեց . նաւաս-  
 տիներն ալ ուրիշներուն օրինակին հետեւելով՝ ա-  
 նոր դրօշին տակը մտան : Թէպէտ ետեւէ ետեւ  
 ասանկ օգնութիւններ հասան, ի վերայ այսր ամե-  
 նայնի բոլոր արշաւանաց ժամանակուան համար բա-  
 ւական պատրաստ վառօդ չկար : Բոյց աս կարօ-  
 տութիւնն ալ լեցուեցաւ . առջի անգամ Գլասգալա  
 բնակած ատեննին՝ Օրտազ քաղքին մերձաւոր լե-  
 րանց վրայ հրաբուխ լերան բերան մը տեսած էր,  
 որուն մէջ ազնիւ տեսակ ծծումբ կար : Ուստի հրա-  
 ղէններու վերին հրամանատարը նոյն տեղը գնաց,  
 շատ ծծումբ բերաւ, եւ քիչ մը ետքը սկսուելու  
 արշաւանաց համար հարկաւոր եղածին չափ վառօդ  
 պատրաստեց : Գորդէզին վերջին ատեններն ընդու-  
 նած աս օգնութիւններով՝ իր զօրաց վրայ 180 ոտա-  
 նաւոր ու 20 ալ ձի աւելցաւ : Աս տեսնելով՝ Սպա-  
 րապետն ուղեց Նարվաէզին զօրացը մէջէն ակամայ  
 հոն մնացողներն ետ խրկել . անոր համար հրաման

Հանեց որ թողուլ երթալ ուզողն ազատ է եւ խոստացաւ որ ետ դառնալու համար հարկաւոր եղած նաւերն ինք կը հողայ: Նարվաէզին զօրքին մեծ մասն աս առաջարկութիւնն ընդունեցաւ, որով բանակը տրտընջացող ու տժգոհ զինուորներէն մաքրուեցաւ. իսկ մնացածներն ամէնն ալ ընտիր զօրք էին: Սպարապետն ետ դարձողներուն մէջէն՝ միայն իր բարեկամն Անդրէաս աէ Տուերոյին վրայ շատ ցաւեցաւ:

Ինչպէս իր տեղը պատմեցինք, Գորդէզ առջի տարին Սպանիա պաշտօնակալներ խրկած էր. արդ մինչեւ նոյն ատեն անոնցմէ ամենեւին լուր մը չաւնելով եւ կասկածելով որ գուցէ ճամբորդութեան ատեն դժբախտութեան մը պատահած ըլլան, զՏիեկոյ աէ Օրտազ եւ զԱլոնզոյ աէ Մենտոզա հրեշտակութեամբ նորէն ճամբայ հանեց, իրենց հետ մէկտեղ խրկելով մինչեւ 1520 Հոկտեմբերի 29 պատահած դէպքերուն ամբողջ պատմութիւնը: Նոյն պատմութիւնը՝ որն որ 1522ին տպուեցաւ, Ամերիկայի պատմութեան աս նշանաւոր մասին ամենէն վաւերական գրուածքն է: Ռոպերդոսն ասոր մէջ միայն ան պակասութիւնը կը գտնէ, որ քիչ մը չափազանց պարագաներ կան: Սպարապետն աս անգամն ալ նոյն երկիրներուն գեղեցկութիւնն ու հարստութիւնը, եւ իր ընկերներուն դիւցազնական քաջագործութիւնները կը գովէր. իսկ իր գործքերը շատ չափաւորութեամբ կը պատմէր: Հայր Օլմետոյին օգնական քահանաներ խրկուելու հարկաւորութեան վրայ ալ կը խօսէր, եւ կ'ըսէր թէ արդէն շատ երեւելի մարդիկ մկրտուած են ու շատերուն մտքին մէջ կրօնի վրայ բաւական լուսաւորութիւն մտած է, որմէ օգտակար պտուղներ ընդունելու մեծ յոյս կայ: Վերա-Գրուզի ու Սեկուրայի գաղթականներն ալ մասնաւոր աղերսագիր գրած ու Գորդէզին իշխանութեան հաստատութիւնը լնդրած էին:

Աս նոր ճամբորդներուն յաջողութեան համար հարկաւոր եղած յանձնարարութիւններն ու աշխատութիւնները լմնցընելէն ետքը՝ Գորդէղ ամէն կերպով արշաւանաց պատրաստութիւնները հոգաց, որոնք քանի մ'օրէն կարգի դրաւ լմնցուց : Նաւերու փայտերը պատրաստ էր, պատերազմի կազմածն ու զէնքերը Աերա-Գրուզէն հասած էին, ուստի եւ ճամբայ ելլելու արդեւէք մը չկար : Սպարապետն արշաւանքը չսկսած՝ զօրահանդէս մ'ըրաւ. բոլոր բանակը կը կազմէին՝ 550 ոտանաւոր զօրք, որոնցմէ 80 հոգի հրացան ունէին, եւ 40 ձիաւոր. ինը կտոր ալ թնդանօթ ունէր, որոնք նաւերէն դուրս հանած էին : Զօրահանդէսը տեղացուց խուռն բազմութեան առջեւը կատարուեցաւ ու կարելի եղածին չափ փառաւորութեամբ եղաւ : Գլխագալացուց զօրապետն ալ Գորդէղին հետեւելով՝ իր բազմութիւ գնդերուն հանդէսն ուզեց ընել : Ամենէն յառաջ նուագարանները կ'երթային. ետքէն գնդերու գլխաւորները կարգաւ կու գային փառաւոր ու գոյնզգոյն փետուրներով զարդարուած, ականջներնէն ու պրկունքներնէն ալ ոսկի զարդեր կախուած էր, ձախ թեւերնին իրենց մահակն առած էին. ամէն մէկուն քովէն ալ մէյմէկ վահանակիր ծառայ կ'երթար. վահաններուն վրայ իրենց յաղթութիւններն ու մեծագործութիւնները զանազան պատկերներով նկարուած էր : Ասոնք իրենց երկրին սովորութեան համաձայն՝ երկու մեծ զօրապետները բարեւեցին, ու յառաջ դացին : Անոնց ետեւէն ալ գունդ գունդ զօրքերն անցան, որոնք փետուրներու գոյներով ու դրօշներու տարբերութեամբ իրարմէ կը զանազանուէին. դրօշին՝ նիզակի մը ճօթ անցուած զանազան անասնոց պատկերներ էին : Աս դաշնակցաց բոլոր զօրքը՝ տասը հազար հօգուց կը հասնէր, որոնք Սպանիացուց հետ պատերազմի պիտ'որ երթային :



Ղամբայ ելլելու օրը (1520ին Գեղատեմբերի 28ին) Հայր Օլմեանն պատարագ մատուց, որուն բոլոր Սպանիացիք ներկայ էին. Աստուծմէ յաջողութիւն ու օգնութիւն խնդրելու համար՝ մասնաւոր աղօթք ալ եղաւ: Գորդէզ մատուռէն դուրս ելլելուն պէս՝ դաշնակից զօրաց հրամայեց որ զնդերնին կարգի դնեն. ինքն ալ քիչ մը ետքը Սպանիացւոց առջեւն անցնելով՝ քաղքէն դուրս ելաւ: Միտքն ան էր որ Գեղեղոյ քաղաքն երթայ, որն որ իր պատերազմական գործողութեանց կենդրոնը պիտ'որ բլար: Աս ամուր բերդաքաղաքը լճին եղերքն բլալով՝ իրեն թեթեւ նաւերը ջուրն իջեցընելու յարմար գիրք մ'ունէր. Մեքսիկոյի ալ շատ մօտ բլալով՝ հոնկից յաճախ յարձակում կրնար ընել, թշնամին կրնար հալածել ու աշխատցընել. յաղթուած ատեննին ալ քաղքին մէջ քաշուելով՝ կրնային իրենք զիրենք դիւրութեամբ ու առանց վտանգի պաշտպանել:

## Ի.

Գեղեղոյ քաղաքը իւր հոնին: — Գորդէզ զանազան փոքր արևմտահայերէն լեզուներով:

Աս միջոցին՝ թշնամին ալ ինք զինքը պաշտպանելու կը պատրաստուէր: Գուէղլաւագա՝ Մոնղոլներու մային եղբայրն ու յաջորդը, որն որ Սպանիացւոց անհաշտ թշնամին էր, արդէն ընտրուելուն պէս՝ իր մեծ քաջութիւնը ցուցուցած էր, Մեքսիկացւոց՝ օտարականաց գէմ բրած սաստիկ յարձակմանց անձամբ առաջնորդելով: Գորդէզին ետ քաշուելէն ետքը, անոր նորէն ետ դառնալն արգելելու համար՝ ձեռքէն եկած միջոցներն ի գործ դրաւ: Քաղքին կործանած կողմերը նորոգել ու նոր ամրութիւններով հաստատել տուաւ: Իրենց գործածած սովորական զէնքերով զինանոցները նորէն լեցընելէն ետքը, ձիաւոր-

ներուն դէմ դնելու համար՝ երկայն նիզակներ շինել տուաւ, որոնց ճութերը՝ Սպանիացիներէն առնուած սուրերուն երկաթներէն հաստատել տուաւ: Մեծ յառաջատեսութեամբ աս ամէն բան պատրաստել տուած ժամանակ՝ մէկէն ծաղկի հիւանդութենէն բռնուեցաւ ու մեռաւ: Նոյն ախար յառաջ Նոր Սպանիա չկար, օտարականաց բերած մեծ չարիքներուն մէկն ալ աս եղաւ, որուն շատերը զոհ կ'ըլլային: Մեքսիկացիք մեռնողին տեղ՝ զԿուադիմոնիս Մոնդեզուսային եղբորորդին բնտրեցին:

Գորդէզ դէպ ի Գեղեւզոյ յառաջացաւ ու տալուոյն վերջին օրն, առանց դժուարութեան մը ներս մտաւ: Քաղքին մէջ ախուր լուութիւն մը տիրած էր. բոլոր տղոց ու կանանց քաղքէն հեռացած ըլլալը թշնամութեան յայտնի նշան մըն էր: Բայց բուն պատճառը շուտով իմացուեցաւ. քաղաքացիք մէջերնին կռիւ ունէին: Նոյն ատենուան ցեղապետն իր մեծ եղբայրը մեռցընել տալով՝ իշխանութիւնը յափշտակած էր, եւ անգթութեամբ ու անիրաւութեամբ ժողովուրդը նեղելուն համար՝ ամենուն ատելի եղած էր: Աս ցեղապետը միտքը դրած էր որ Սպանիացիներն արաաքուստ սիրով ընդունի, եւ անոնց վստահութիւնը վստարկելէն ետեւ՝ գիշեր ատեն Մեքսիկացիները քաղաք խոթէ, զիրենք ջարդել տայ. բայց երբ որ Սպարապետին զօրաւոր բանակով մօտիկնալը լսեց, վախցաւ ու վատութեամբ Մեքսիկոյ փախչելով՝ քաղաքն ու իր հպատակները յաղթողին ձեռքը թողուց:

Գորդէզ քաղաք մանելէն քիչ մը ետքը՝ շատ մը աղնուականներ իրեն եկան աղաչեցին որ իր բանակին մէջ մանեն. ասոնց առաջնորդ եղած էր աշխոյժ ու քաջ երիտասարդ մը, որն որ սպանուած ցեղապետին որդին էր: Գորդէզ աս դէպքն իր օգտին դորձածել ուղելով՝ փախչող ցեղապետին անդ՝

ան երիտասարդը դնել ուղեց . բոլոր քաղաքացիք ալ իրենց օրինաւոր ցեղապետին որդւոյն ընտրութեան վրայ շատ ուրախացան , որով թէ ժողովուրդն ու թէ ցեղապետը Սպանիացւոց հետ սիրով կապուեցան : Հայր Օլմետոն աս երիտասարդ ցեղապետին հասուն միտքն ու սուր դատողութիւնը տեսնելով՝ զանիկա քրիստոնէական կրօնի դարձընելու շատ յոյս ունեցաւ . յաճախ անգամ հետը խօսակցելով՝ քիչ օրուան մէջ համոզեց ու մկրտուելու պատրաստեց , որուն արարողութիւնը մեծ հանգիսիւ կատարուեցաւ : Գորդէզ անոր կնքահայրն եղաւ . իշխանն ալ իր ուզելովը Փեռնանդ կոչուեցաւ : Ասով աւելի եւս Սպանիացւոց հետ կապուելով՝ խօսք տուաւ որ Մեքսիկոյի վրայ բլալու յարձակման բոլոր զօրութեամբ օգնէ . իրօք ալ խոստումը ճշդիւ կատարեց :

Սպանիացւոց նաւերը լծին մէջ դիւրաւ իջեցընելու համար՝ Գեզեւգոյի նոր ցեղապետը շատ գործավար սրտեց , որ լծին նոյն կողմն աւելի լայնցընեն ու խորունկցընեն : Բայց Իզդագբալաբայի բնակիչքն իրենց ծառակուրներովը շատ անգամ կու գային ասոնց շինածը կ'աւրէին ու զիրենք անհանգիստ կ'ընէին : Աս տեսնելով՝ Գորդէզ միտքը դրաւ որ երթայ անոնց քաղքին տիրէ . եւ անմիջապէս երեքհարիւր Սպանիացի ու տասը հազար Բլասգալացի հետն առած ճամբայ ելաւ : Բայց նոյն քաղքին մօտիկցած ատեննին՝ ութը հազարով բանակ մը տեսան , որ քաղաքը պաշտպանելու համար իրենց դիմացն ելաւ : Երկու կողմանէ ալ քաջութեամբ զարնուեցան . սակայն քաղքըցիք Սպանիացւոց եւ անոնց դաշնակցաց յարձակման դէմ չկրնալով դնել , դէպի քաղաք քաշուեցան ու դռներն ալ բաց թողուցին : Գորդէզ մեծ զգուշութեամբ ներս մտաւ , մինչեւ հրապարակը գնաց ու իր զօրքերը նոյն կողման տներուն մէջ բաժնեց , որոնցմէ քաղքըցիք քաշուած

էին: Բայց մութը կոխելու ատեն՝ ատեան որ ջրանցքներուն թմբերը վերցուած էին եւ ջուրն ամէն կողմանէ սաստիկութեամբ քաղաքը կ'ողողէր, այնպէս որ արդէն քաղքին ցած կողմերը ջրի տակ թաղուած էին: Սպարապետն առ մեծ վտանգը տեսնելով՝ հրամայեց որ շուտ մը զօրքն ետ քաշուի. քաղքէն դուրս ելլելու ատեն՝ զօրքերը մինչեւ ծնկուրնին ջրին մէջէն կը քալէին: Ետ քաշուելէն ետքը՝ դիշերն անցընելու համար բարձր տեղ մ'ելան, բանակ դրին: Առտուանց կանուխ բանակը դէպ ի Գեղեւզոյ ճամբայ ելաւ, բայց քիչ մը յառաջ երթալուն պէս՝ անհամար բազմութիւն մը տեսան, որոնք կատաղութեամբ վրանին կը վազէին: Սպանիացիք ալ կեցան, ճակատները կարգի դրին ու պատերազմելու սկսան. ձիաւորներն անանկ սաստիկութեամբ յարձակեցան՝ որ անմիջապէս բոլոր թշնամիները վռնտեցին, շատ ալ մարդ ջարդեցին: Գորդէզ իրիկուն չեղած Գեղեւզոյ դառնալ ուզելով՝ թշնամեաց ետեւէն չինկաւ. բայց անոնք նորէն կարգի մտնելով՝ Սպանիացիները հալածելու սկսան: Այսպէսով հարկ եղաւ դրեթէ բոլոր ճամբան պատերազմիլ: Թշնամիները Սպանիացոց գլխաւոր բանակին շատ մօտիկնալու չհամարձակելով՝ Գեղեւզոյի մօտերէն ետ դարձան: Բոլոր սա պատերազմներուն մէջ թշնամիք քանի մը հազար հոգի կորսընցուցին. իսկ Սպանիացիք միայն երկու Գլասգալացի ու մէկ ձի կորսընցուցին:

Գեղեւզոյ դառնալէն քիչ մը ետքը զանազան տեղերէն Գորդէզին պատգամաւորութիւնք եկան, որոնք Մեքսիկացոց դէմ իրեն պաշտպանութիւնը կը խնդրէին. ամէնն ալ սիրով ընդունեցաւ եւ իրենց դաշնակից ըլլալու առաջարկութեան հաւանեցաւ: Գալղոյ ու Գլասմամալգոյ քաղաքներն ալ իրենց շատ հարկաւոր էին, որովհետեւ Գեղեւզոյի ու Գլասգալացի մէջտեղը կ'իյնային. բայց Մեքսիկացիք նոյն

քաղաքները բռնած ըլլալով՝ Սանտովալ գնաց, շուտ մը քաղաքներն առաւ ու Մեքսիկացիները դուրս վճռեց: Քաղքը իբր կուսակցի մոտիկին լծէն աղատելնուն վրայ ուրախանալով՝ Սպանիացւոց հետ դաշնակից եղան: Ասանկով Գեղեզգոյէն մինչեւ Աերա-Գրուզ եղած ճամբան Սպանիացւոց բաց էր, որն որ պաշարման ժամանակը շատ օգտակար կրնար ըլլալ:

Դլասդալայի մէջ նաւերու փայտերն ու ամէն կազմածները պատրաստ ըլլալով՝ դժուարութիւնը զանոնք Գեղեզգոյ փոխադրելուն վրայ կը մնար: Աս դժուարին ու ծանր դործքն ալ Սանտովալին յանձնուեցաւ, որն որ երկու հարիւր ոտանաւոր զօրքով, տասնուվեց ձիաւորով ու երկու թնդանօթով ճամբայ ելաւ: Երթալու ատեն՝ Զոլդեբեզ քաղքին բնակիչներէն վրէժ պիտ'որ առնէին, որոնք Աերա-Գրուզէն Ալվարատոյին օգնութեան գացող քառսուն Սպանիացիներն ու երեքհարիւր Դլասդալայցիները սպանած էին: Երբ որ Սանտովալ քաղքին մօտեցաւ, տեղացիք թող տուին փախան. Սպանիացիք ետեւնէն ինկան ու շատերը գերի բռնեցին: Քաղքին մէջ առջեւնին սոսկալի տեսարան մը բացուեցաւ, որով իրենց վրէժխնդրութեան հողին աւելի եւս գրգռեցաւ. տաճարին պատերն ու կուռքերը գեռ զոհերու արիւնով ներկած էր, երկու մարդու գլուխ իբրեւ յաղթութեան նշան՝ չորս ձիու գլխու մէջտեղը մազերնէն կախուած էր: Տան մը մէջ ամառիկ սա խօսքերը գրուած գտան. Յովհաննէս Զուսգէ եւ իր թշուառ ընկերները հոս փակուեցան: Սանտովալ ասոնք տեսնելով՝ սասաիկ վրէժխնդրութիւն մ'ընելու պատրաստուած էր. բայց բռնուած գերիները Սպանիացւոց կատրութենէն վախնալով ու կարծելով որ զիրենք պիտի զոհեն, իրեն ոտքն ինկան եւ այնչափ խեղճ թափեցին ու լացին, որ սիրտը չգիմանալով թողութիւն տուաւ, աս պայմանով որ ան-

կից ետքը հաւատարիմ ծառայութեամբ՝ գործած յանցանքնին քաւեն :

Սանտովալ ասկից Գլխագալա գնաց, ուր որ՝ ինչպէս ըսինք՝ նաւերուն նիւթերը պատրաստուած էին : Գլխագալացիք 15,000 հոգւով բանակ մը կազմած էին, որ մէկտեղ Գեզեւզոյ երթան : Սանտովալ երեք հազար բեռնակիր առաւ, որոնք նաւերուն բոլոր կազմածները, այս ինքն՝ գերանները, տախտակները, երկաթները, պարանները, առագաստներն եւ ուրիշ նիւթերը կռնակնին առած՝ 15 մղոն տեղ պիտի տանէին : Աս զարմանալի չուն շատ վարպետութեամբ ու յառաջատեսութեամբ կարգի դրուեցաւ : Բեռնակիրները բանակին կենդրոնը դրուեցան. առջեւէն Գլխագալացւոց գունդ մը կ'երթար, նոյնպէս ետեւի կողմանէ ու քովերէն ալ Գլխագալացւոց բազմաթիւ գնդերը պաշարած էին . Սպանիացիք ալ ամէն մէկ գնդին համեմատութեամբ դաս դաս բաժնուած ու անոնց գնդին մէջ մտած էին : Այսպիսի շատուոր ու բեռնաւորեալ բանակ մը՝ ի հարկէ մեծ դժուարութեամբ ու կամաց կը շարժէր, բայց կարգաւորեալ յառաջ կ'երթար, մանաւանդ անտառուտ ու լեռնային տեղերը շատ դժուարութիւն քաշելով : Մեքսիկացիք ճամբուն վրայ եղած բարձր տեղերէն երբեմն կ'երեւային . բայց տեսնելով որ թշնամին միշտ պատրաստութեամբ կը յառաջանայ, ամենեւին յարձակում չըրին : Գեզեւզոյ մօտիկացած ատեննին՝ Գլխագալացւոց զօրապետին աղաչելովը Սանտովալ բանակը կեցընել տուաւ, որպէս զի զօրաց պաշտօնակալները զարդարուելու ժամանակ ունենան : Գորդէզ Գեզեւզոյի ցեղապետն եւ ուրիշ մեծերը հետն առած՝ քաղքէն դուրս ելաւ եւ զիրենք ընդունելու գնաց . մեծ սիրով մեծերուն հետ պագտուելէն ետեւ՝ ամէնքը մէկտեղ յաղթանակով եւ ուրախութեան աղաղակներով ներս մտան :

Մարդին Լորէզ Տիւսանց գլխաւորն, որուն յանձնուած էր նաւերուն շինութիւնը, Գորդէզին յայտնեց թէ հազիւ քսան օրուան մէջ կրնայ նաւերը ջուր իջեցընել: Նոյն միջոցին Սպարապետը զանազան մտաւոր քաղաքներու վրայ արշաւեց, որոնք Աուագիմոճինին հաւատարիմ մնացած էին. նախ Եալդագայիները պատժել ուզեց, որպէս զի ուրիշներուն ալ օրինակ մ'ըլլայ. վասն զի ասոնք՝ խաղաղութիւն առաջարկելու համար խրկուած մարդիկը չարաչար վիրաւորած ու չարչարած էին: Պատարագին ներկայ գտնուելէն ետքը՝ զԱլվարատոյ եւ զՕլիտ մէկտեղ առած՝ ճամբայ ելաւ. հետը 250 սպանիացի, քսան ձիաւոր ու 15,000 դլասգալացի ունէր, 5000 ալ ուրիշ դաշնակիցներէն: Քիչ մը յառաջ երթալուն պէս՝ Մեքսիկացւոց բանակը տեսան, որոնք կ'երեւար թէ դաշտի վրայ պատերազմելու միտք ունէին. բայց հազիւ թէ Սպանիացիք առջի հարուածն ըրին ու ձիերը յարձակեցան, բոլոր բանակը ցրուեցաւ, ոմանք լեռները վախան, ոմանք ալ քաղաքն ապաւինեցան: Քաղքին վրայ յարձակիլն երկրորդ օրուան թուղուցին: Երբ որ առաու եղաւ, տեսան որ քաղքին տիրելը կարծածնուն չափ դիւրին չէ. քաղաքը լծին մէջ շինուած ըլլալով՝ միայն թմբով կամ կամրջով մը ցամաքին հետ կպած էր. թմբին մէկ մասն ալ կործանած ու ջրին յատակը խորունկ փորած էին, այնպէս որ միայն լողալով կրնար դիմաց անցնուիլ: Մեքսիկացիք ալ թմբին մէկալ կողմը կեցած էին, որ անցքը պաշտպանեն: Գորդէզ աս խորունկ տեղը լեցընելու մտածած ժամանակը՝ դաշնակից զօրքերէն մէկն եկաւ ըսաւ որ քիչ մը անդիէն աւելի դիւրաւ կ'անցնուի: Սպարապետը դէպ ի հոն դնաց ու ջուրը փորձել տալէն ետքը՝ հրամայեց որ վաթսուն հոգւոյ չափ դիմաց անցնին ու եզերքը բռնեն: Մեքսիկացիք ասոնց շարժումը տեսնելով՝ դէպ ի հոն

ժողովեցան. եւ թէպէտ շատ մարդ վիրաւորեցին, բայց անոնց անցքը չկրցան արգելել: Սպանիացիք անդիի եղերբը հասնելուն պէս՝ քաղքըցիք ծառակուրներու մէջ մտան ու քաղաքը արտորնօք թող տուին փախան. այնպէս որ Գորգէզ առանց արգելքի ներս մտաւ: Քաղաքն աղէկ մը թալելէն ու դլխաւոր շէնքերն այրելէն ետքը՝ արշաւանքը շարունակեց ու քանի մ'օրէն Գազուպայի մօտիկացաւ:

Աս քաղաքն իր յարմար դիրքովը Մեքսիկոյ մասնելու դուռ կրնար սեպուիլ. անոր համար նոյն քաղքին տիրելը շատ հարկաւոր էր: Գազուպա չհասած՝ դիմացնին բազմաթիւ բանակ մ'ելաւ, որն որ ուժգնութեամբ Սպանիացւոց վրայ յարձակեցաւ, բայց անոնց զէնքերուն սաստիկութեան չկրնալով դէմ դնել՝ ցրուեցաւ: Երկրորդ օրը նորէն յարձակեցան ու չարաչար յաղթուելով՝ դէպ ի քաղաք քշուեցան. Սպանիացիք ալ ետեւնէն իյնալով՝ քաղքին ճամբաներուն մէջ յառաջ դացին: Գորգէզ քիչ մը ժամանակ ալ փողոցներու մէջ պատերազմելէն ետքը, քաղքին մէկ մասը վրէժխնդրութեան համար զինուորաց աւարել տուաւ ու քանի մը տուն ալ այրելէն ետեւ՝ դուրս քաշուեցաւ եւ իր առջի տեղը բռնեց կեցաւ:

Գորգէզ հինգ օր Գազուպային դիմացը մնաց. ամէն օր թշնամիք իրենց վրայ կը յարձակէին ու ետ կը քշուէին: Սպարապետը տեսնելով որ ասանկ յարձակումներով Մեքսիկացիք բաւական տկարացան, միտքը դրաւ որ ինք ալ յարձակում մ'ընէ. յարձակելու համար յառաջ երթալու ժամանակ՝ անդիէն թշնամեաց զօրաւոր բանակ մ'երեւցաւ: Գորգէզ քաղաքը զարնելէն յառաջ՝ օգնութեան եկող զօրքին հետ պատերազմիլ ուզեց. Մեքսիկացիք թմբին վրայ քիչ մը յառաջ եկան, եւ անանկ կեղծելով որ Սպանիացւոց յարձակման չկրցան դիմանալ՝ ետ ետ



քաշուեցան ու ցրուեցան, որպէս զի Սպանիացիները թմբին վրայէն յառաջ գան: Աս հնարքնին յաջուեցաւ. Գորդէզ անոնց ետ քաշուելէն խաբուելով՝ սկսաւ հարձակել, բայց երբ որ բոլոր Սպանիացիք թմբին երկայնութեամբը տարածուած էին, Մեքսիկացիք մէկէն կարգի մտան եւ սաստիկ զօրութեամբ վրանին յարձակեցան: Նոյն միջոցին անհամար բազմութեամբ ծառակուրներ ալ Մեքսիկոյէն դուրս ելան ու թմբին երկու կողմանէ վրանին յարձակեցան: Ասանկով Սպանիացիք երեք դիէն պաշարուելով՝ ետ դառնալու ստիպուեցան: Թումբը նեղ եւ երկայն ըլլալով՝ շարժելու տեղ չունէին. ուստի աս վտանգաւոր դիրքէն ազատելու համար մեծ քաջութեամբ թշնամոյն դէմ զիրենք պաշտպանելու ստիպուած էին: Սպարապետը սուրը ձեռքն՝ ամենէն վտանգաւոր տեղերը պաշտպանելու կ'երթար եւ իր հրամաններովը կրցաւ զինուորներն ազատել ու նորէն հաստատուն երկրի վրայ հասցընել: Թէպէտ ինք ալ քիչ մը զօրք կորսընցուց, բայց թշնամեաց կորուստը շատ սաստիկ եղաւ: Գորդէզ տեսնելով որ Գագու պային առնուիլը երկայն պիտ'որ տեւէ, Գեղեզոյ դարձաւ: Հոն հասածին պէս՝ լճին վրայ եղող քանի մը պզտիկ քաղաքներէն դեսպանութիւն ընդունեցաւ, որոնք իրեն դաշնակից ըլլալու եւ զօրքով օգնելու խօսք տուին:

Գորդէզին աս վերջին արշաւանաց ատենը՝ վերս-Գրուզ չորս նաւ եկած էին, երկու հարիւր զինուորով, ութսուն ձիով, երկու կտոր մեծ թնդանօթով ու առատ զէնքով եւ պաշարով: Աս մեծ օգնութիւնը՝ մանաւանդ իրենց գտնուած պարագաներուն մէջ՝ զինուորաց յոյսն եւ ուրախութիւնն աւելցուց. ամէնքը մէկ բերան կ'աղաչէին որ պաշարումն սկսին: Բայց Գորդէզ՝ աս վտանգաւոր ու աշխատալի պաշարումը չսկսած՝ հաշտութեան փորձ

մ'ալ ընել ուզեց. Գուցէ, կ'ըսէր, թշնամին շատ անգամ յաղթուած ու Սպանիացոց զօրութեան փորձն առած ըլլալով՝ դաշինք մը հաստատելու հաւանի: Չէր ուզեր որ մայրաքաղաքն ամբողջ կործանելու ստիպուի, հապա կը բաղձար որ եթէ կարելի է՝ առանց պատերազմի ան փառաւոր քաղքին տիրէ: Բայց Կուադիմոնին իր առաջարկութիւնները մերժելով՝ հարկ եղաւ որ ղէնքի զօրութեամբ քաղաքը նուաճելու ջանայ:

Նաւերը դեռ բոլորովին լմնցուցած չըլլալով՝ Գորդէզ նորէն իր արշաւանքներուն սկսաւ ու լծին քովերն եզոզ ուրիշ քաղաքներուն վրայ քալեց. քանի մը տեղ պատերազմներ ընելէն ետքը՝ Գուահուահուադ հարուստ ու մարդաշատ քաղքին վրայ գնաց, որուն դիրքը շատ ամուր էր: Մէկ կողմանէ սեպացեալ լեռներով պատած էր, մէկալ կողմանէ ալ լայն ջրանցք մ'ունէր, որուն կամուրջները քահուած ըլլալով՝ յարձակումը շատ կը դժուարեցնէր: Զուրն անցնելու համար ծառերէ շինուած կամուրջներ գնել տուաւ ու զօրքն անցուց, թշնամիները զարկաւ ու լեռները ցրուեց: Անկից ելաւ Խոշիմիլգոց գնաց: Հսն դիմացը մեծ բանակ մ'ելաւ, որն որ Սպանիացոց զօրաւոր յարձակման դէմ չկրնալով գնել, դէպ ի քաղաք քաշուեցաւ: Փախչողները ճամբաներու մէջ շինուած պատնէշներու ետեւ քաշուեցան եւ պատերազմելու սկսան: Գորդէզ զօրքերուն հրաման տուաւ որ պատնէշները փլցընեն. ինքն ալ պատերազմին ամենէն աւելի սաստկացած տեղը նետուեցաւ ու առիւծարար կը պատերազմէր, որով շուտ մը ամէն կողմանէ թշնամիներէն պաշարուեցաւ: Աս վտանգաւոր միջոցին բոլոր ուժը թափելով՝ կը պատերազմէր ու թշնամեաց դէմ կը գնէր. բայց ձին սաստիկ յոգնելով՝ ղինքն յետին վտանգի մէջ ձգեց: Մօտ եզոզ Մեքսիկացիք անմիջապէս

վրան հասան պաշարեցին. Գորգէզ սաստիկ ճնշուե-  
լէն՝ զէնքերը չկրնալով գործածել, յաղթուելու եւ  
անոնց ձեռքն իյնալու վրայ էր. մէյ մ'ալ անդիէն  
Քրիստափոր Օլէա անունով քաջ զինուորն անոր  
վտանգը տեսնելով՝ իր քովը պատերազմող քանի  
մը Գլասգալացիները հետն առած՝ օգնութեան հա-  
սաւ եւ իր ձեռքովը՝ Գորգէզին հետ աւելի մօտանց  
ու սաստիկ պատերազմողներէն հինգ վեց հոգի զար-  
կաւ մեռցուց. այնպէսով կրցաւ իր զօրապետն ա-  
զատել: Գորգէզ առ մեծ վտանգէն երկու թէթեւ  
վէրքով ազատեցաւ. իսկ Օլէա երեք վտանգաւոր  
վէրքերը բնդուներցաւ, որոնց սպիներն իրեն ըրած առ  
քաջութեան պատուաւոր վկայութիւն մ'եղան:

Աս կռուոյն ժամանակը՝ դուրսը դաշտին վրայ  
եղող զօրքերն ալ պարապ կեցած չէին: Մեքսիկա-  
ցիք քաղքին օգնութեան հասնիլ ուզելով՝ դժուա-  
րամատոյց տեղ մը 10,000 զօրք ցամաք հանեցին. բայց  
Օլիտ, Ալվարատոյ ու Գապիա իրենց դնդերով վրա-  
նին այնպէս սաստիկ յարձակում ըրին, որ վերջա-  
պէս Մեքսիկացիները շատ մարդ կորսնցընելէն ե-  
տեւ՝ նորէն նաւերնին դառնալու ստիպուեցան. թէ-  
պէտ Սպանիացոց առ երեք հրամանատարները նոյն-  
պէս Սպանիացի ու Գլասգալացի զօրքերէն շատերն  
ալ վիրաւորեցան: Աս յաղթութիւններով Սպա-  
նիացիք քաղքին ցամաք երկրին վրայ շինուած մա-  
սին տիրեցին:

Գորգէզ Խաչմիլլոյ չորս օր մնաց. բայց զե-  
նուորները միշտ զէնքերնին ձեռուրնին կը կենային,  
որովհետեւ Մեքսիկոյ մօտ ըլլալով՝ թշնամիք շա-  
բունակ վրանին կը յարձակէին: Սպանիացիք թէ-  
պէտ միշտ զիրենք վաբնտեցին, բայց շատ անգամ  
ալ մեծ դժուարութիւններ քաշեցին: Յարձակման  
մը ժամանակ չորս զինուոր կողպտելու համար տուն  
մը մտած ըլլալով թշնամիներէն դերի բռնուեցան,

որոնք ձեռուընին ոտուընին կտրեցին ու յաղժա-  
նակով առին տարին: Կուագիմոճին իր աէրութեան  
ամէն քաղաքներուն մէջ զանոնք պարտցընել տուաւ:  
Գորդէզ աս լսելով սկսաւ մտածել որ իր վիճակն  
ինչ պիտի ըլլար՝ եթէ ասանկ կատաղի մարդիկնե-  
րուն ձեռքն ինկած ըլլար. այսու ամենայնիւ նորէն  
առիթ մը պատահած ատեն՝ աս մտածմունքներն  
իր բնութեան սաստկութիւնը չէին կրնար արգելուլ:  
Իր զօրացը սիրտ տալու համար՝ միշտ ամենէն վտան-  
գաւոր տեղերն ինք անձամբ օգնութեան կ'ուզէր  
հասնիլ: Աւերջապէս ալ ուզեց Գեղեւզոյ դառնալ,  
որպէս զի վիրաւորուածները դարմանուին: Ճամբան  
միշտ թշնամիները զիբենք անհանգիստ կ'ընէին.  
բայց առանց նշանաւոր դէպքի մը կրցան Գեղեւզոյ  
հասնիլ: Բոլոր աս արշաւանքին վրայ Գորդէզ շատ  
գոհ եղաւ, թէպէտեւ տասնի չափ Սպանիացի զի-  
նուոր՝ ալ կորսընցուց:

## ԻՆՆ

Գորդէզին դէմ դատմանութիւն չէ: — Նաւերսն ըսր յգոտ-  
ւէ: — Պաշարսն չէ սիսի:

Վանի կ'երթար Մեքսիկոյի տէրութեան կործա-  
նումը կը մօտիկնար. Գորդէզ իր արշաւանքներովն  
ետեւէ ետեւ չորս կողմի քաղաքներուն կը տիրէր,  
այնպէս որ վերջին ատենները զրեթէ միայն մայրա-  
քաղաքը տեղացուց իշխանութիւն տակ մնացած էր:  
Աս կերպով Սպարապետին դիտաւորութիւնները բո-  
լորովին զլուխ ելլելու վրայ եղած ատեն՝ մէյ մ'ալ  
քիչ մնաց որ սարսափելի եւ անակնկալ դաւաճա-  
նութեամբ մը ամէն բան տակն ու վրայ պիտ'որ ըլ-  
լար: Նարվաէզին զօրքերն երբեք Գորդէզին հին զի-  
նուորներուն պէս հաւատարիմ ու իրեն հետ սրտանց  
միացած չէին, ո՛չ նոյն եռանդը եւ ո՛չ նոյն ջանքը

կը ցուցընէին . ամէն անգամ որ մեծ քաջատու-  
 թիւն ցուցընելու դժուարութիւն մը կը պատահէր ,  
 սրտերնին կը թոյլնար ու կը վհատէին : Ստոյգ է որ  
 Գորդէզին ամենէն հին ընկերներն ու իրեն ամենէն  
 աւելի հաւատարիմ եղողներն ալ՝ Մէքսիկոյի պէս  
 ամուր ու դժուարին դիրք ունեցող եւ բազմաթիւ  
 զօրքով ամրացած քաղքի մը տիրելու դժուարու-  
 թիւններն ու վտանգները մտածելով՝ կը զարհու-  
 րէին : Ասոր վրայ ոմանք սկսան Սպարապետին կար-  
 գադրութեանց մէջ պակասութիւններ գտնել . կամաց  
 կամաց արտունջը շատցաւ , մինչեւ ոմանք յանդըզ-  
 նեցան ըսել թէ Մեր ազատութեան միջոց մը մտա-  
 ծելու ենք , ինչու որ մեր ապահովութիւնը Գորդէ-  
 զին ամենեւին հոգը չէ : Անտոն Ալիլեֆանեա յան-  
 դուզն ու խռովարար զինուորը , որն որ Ալեքսիուէ-  
 զին կողմնակիցներէն էր , աս արտնջման հոգիներն  
 աւելի կը դրդուէր . իր բնական տունը դաւակիցնե-  
 րուն խորհրդի տեղն եղած էր : Ասոնք խորհրդեան  
 մէջ որոշեցին որ Գորդէզին միաքը դրածները խա-  
 փանելու համար՝ զինքը մեռցընեն եւ տեղն ուրիշ  
 զօրապետ ընտրեն , այնու դաշամբ որ Մէքսիկոյի տի-  
 րելու այլանդակ խորհուրդը մէկդի թողու եւ հասա-  
 րակաց ապահովութիւնը հոգալու ազու միջոցներ  
 բանեցընէ : Գաւակիցներն աս խորհուրդը գաղտնի  
 պահելու երդմամբ՝ ընկերակցութեան թղթի մը ստո-  
 րագրած էին . սպաննուելու պաշտօնակալներն ու ա-  
 նոնց տեղն անցնելիքներն ալ բոլոր նշանակուած  
 էին : Գործադրութեան օրն ալ որոշուած էր , բայց  
 Գորդէզին հին զինուորներէն մէկը՝ որն որ դաւաճան-  
 ներէն խաբուած ու անսոնց հետ միացած էր , Սպա-  
 րապետին վրայ սիրտը ցաւելով եւ ասանկ մեծ ե-  
 ղեռնագործութեան մասնակից ըլլալուն վրայ խիղճը  
 զարնելով՝ առջի իրիկունը գաղտուկ գնաց դաւակցու-  
 թիւնը տեղն ի տեղը անոր խնայուց :

Գորդէզ թէպէտ աս լրոյն վրայ շատ պլայլեցաւ, բայց առանց ժամանակ կորսընցընելու իր ընելիքն սրտէց. շուտ մը իրեն հաւատարիմ պաշտօնակալներէն քանի մը հոգի հեան առած՝ Ախլեֆանեային տունը դնաց: Յանցաւորն աս անակնկալ պցելութենէն շփութելով ու այլայլելով՝ առանց երկայն հարցափորձի իր յանցանքը խոստովանելու ստիպուեցաւ: Պաշտօնակալները մատնիչը բռնելու կապելու ատեննին՝ Գորդէզ անոր ծոցէն դաւակցութեան ստորագրութեան թուղթը հանեց ու կարգաց, եւ մէջը՝ ամենեւին չյուսացած քանի մը պաշտօնակալներու անուններ ալ դատաւ, որոնց անհաւատարմութեան վրայ շատ ցաւեցաւ: Բայց այսպիսի պարագայից մէջ խտաիւ քննութիւն ընելն ու խորունկ փնտռելը՝ անխոհեմութիւն եւ վնասակար համարելով՝ միայն Ախլեֆանեան պատժելը հերիք սեպեց: Յանցանքն յայանի ըլլալուն՝ դատաստանն ալ կարճ եղաւ. շուտ մը մահուան դատապարտուելով՝ երկրորդ օրը կախուեցաւ: Գորդէզ ասոր վրայ իր զօրքը ժողվեց եւ եղած յանցանքն ու պատիժն անոնց ծանուցանելով՝ ըսաւ թէ Աս դաւակցութեան մանր պարագաներն ու անդամ՝ եղողները չկրցայ իմանալ, որովհետեւ Ախլեֆանեան բռնուելու ատեն՝ թուղթ մը պատուեց ու կտորուանքը կլկեց եւ ամենեւին բան մը չյայտնեց: Աս կերպով դաւակիցներուն սիրտը հանդարտեցուց, որոնք իրենց ալ ստորագրած ըլլալն իմացուելէն կը վախնային: Բայց աս պատահարը Գորդէզին օգտակար եղաւ, որովհետեւ բուն իրեն թշնամի եղողները ճանչցաւ, որով անոնց ընթացքին ու վարմունքներուն աւելի աղէկ մտադրութիւն կրնար ընել. մէկալ կողմանէ՝ դաւակիցներն ալ ապահովուելով որ Սպարապետն իրենց յանցաւորութիւնն իմացած չէ, աւելի եւս եռանդով ծառայելու կը ջանային, որ վրանին կասկած չտան:

Քանի մ'որ ետքը՝ Գորգէզ իր հաստատութիւնը ցուցընելու ուրիշ առիթ մ'ալ ունեցաւ : Գլասու գալացուոց զօրապետը մէկէն ի մէկ միտքը փոխելով՝ իր քանի մը գնդերովն ետ քաշուիլ ուղեց : Սպարապետը քաղցրութեամբ անոր միտքը փոխելու եւ իրեն հնազանդեցընելու ամէն միջոցներն ի գործ դնելէն ետեւ՝ երբ որ տեսաւ որ օգուտ չ'ըներ, հրաման տուաւ որ զանիկա բռնեն կամ մեռցընեն : Գլասուգալացին մինչեւ վերջին շունչն ինք զինքը քաջութեամբ պաշտպանեց : Բայց իր զինուորներէն աղէկ պաշտպանութիւն չգտնելով՝ սպանուեցաւ : Գլխաւորնին մեռնելէն ետքը՝ ապստամբած գնդերը շուտով նորէն Գորգէզին հնազանդեցան :

Աս ներքին խռովութեանց ատեն՝ Լոբէզ նաւակները լմնեցուց : Գաշնակիցք ալ երկու ամիսէն աւելի էր որ Գեղեւզոյին առջեւէն մեծ լիճը վազող վտակի մը յատակը կը փորէին ու երկայն ջրանցք մը կը ձեւացընէին, աս դժուար աշխատութիւնն ալ լմնեցած ըլլալով՝ նաւակները ջուր իջեցուցին : Ասոր հանդիսութիւնը փառաւորութեամբ Ապրիլի 28ին կատարուեցաւ. Սպանիացիք ու գաշնակիցք ջրանցքին եզերքը շարուած՝ հանդիսատես կ'ըլլային : Հայր Օլմետոն պատարագ մատոյց, Գորգէզ ու իր զօրքն հաղորդուեցան : Ետքէն նաւերն օրհնեցին ու դէպ ի լիճը յառաջ տարին : Երբ որ նաւերն առադաստանին բացին, թնդանօթներու ձայնով աս յաջողութիւնը բարեւեցին. ուրախութեան ձայներն օդը սկսան թնդացընել : Հայր Օլմետոն եւ բոլոր Սպանիացիք ալ մէկտեղ Զգեղ Աստուծոյ երգն երգեցին, որով Աստուծոյ՝ մինչեւ նոյն ատեն Սպանիացիները պաշտպանելուն եւ յաջողութեամբ նոյն օրուան հասցընելուն շնորհակալ եղան :

Գորգէզ ընդհանուր զօրահանդէս մ'ըրաւ : Ութհարիւր քսան ու վեց ստանաւոր, ութսուն ու

վեց ձխաւոր, երեք հաս պաշարման թնդանօթ ու տանսուհինգ կտոր թեթեւ թնդանօթ ունէր. հազար լիտրի չափ վաւօդ կար, նոյնպէս ալ առատ գնդակ: Գաշնակցաց բանակն ալ բազմաթիւ էր. Տիազ պատմագրին խօսքին նայելով՝ 24,000 հոգի էին. իսկ Գորգէզ նոյն գաշնակցաց թիւն արտաքոյ կարդի կ'աւելցընէ, մինչեւ 150,000 հոգի: Թշնամեաց կողմանէ միայն Մեքսիկոյի մէջ, ուր որ գրեթէ բոլոր իրենց ուժը ժողված էին, պատմիչները 200,000 զօրք կը դնեն:

Ապարապետը որոշեց որ պաշարումն երեք դիէն սկսի. արեւելքէն՝ Գեղեւզոյի կողմանէ, արեւմաքէն՝ Գազուպայի գիմնացէն, ու հարաւէն՝ Գույոգանի գիմնացէն: Առջի տեղւոյն յարձակումը Սանտովալին յանձնուած էր, երկրորդինը՝ Ալվարատոյին, իսկ երրորդինը՝ Քրիստօփալ աէ Օլիտին: Սպանիացի զօրքն աս երեք գլխաւոր գնդերուն հաւասար թուով բաժնուած էր. նոյնպէս գաշնակիցներն ալ երեքի բաժնուած էին. ամէն մէկ գնդին ալ երկ'երկու թընդանօթ արուած էր: Նաւակներու հրամանատարութիւնը Գորգէզ իրեն առաւ, որովհետեւ ամենէն վտանգաւոր ու ծանրակշիւ գործողութիւնը նոյն նաւակներով պիտ'որ ըլլար. ամէն մէկ նաւ մէյմէկ թնդանօթ ունէր, քսանուհինգ ալ սպանիացի զօրք:

Մայիսի 10ին Ալվարատոյ եւ Օլիտ Գազուպայի կողմը յառաջ գացին. մաքերնին՝ անկից դէպ ի Մեքսիկոյ վաղող ջրանցքը քակել եւ քաղքին ջուրը կարել էր: Եւ թէպէտ Մեքսիկացիք սաստիկ դէմ կը դնէին, բայց Սպանիացիք գործքերնին քաջութեամբ յառաջ տարին եւ յաջողութեամբ ջրանցքը քակեցին: Աս յաջողութենէն քաջալերուելով՝ Ալվարատոյ եւ Օլիտ աւելի յառաջ երթալ ու Գազուպայի թմբին վրայի առջի կամրջին ալ տիրել ուղեցին: Նոյն տեղւոյն մօտիկնալնուն պէս՝ թշնա-



մեաց ահագին բազմութիւն մը զիրենք դիմաւորեց. լծին վրայ ալ շուտ մը ծառակուրներով լեցուեցաւ: Ամենէն աւելի Սպանիացիներն աշխատեցնողը ծառակուրներու մէջէն նետուած նետերն էին. ինչու որ Մեքսիկացիք փայտէ պատասպարաններու ետեւ աւրացած ըլլալով՝ թշնամեաց զէնքերէն ապահովուած էին: Ալվարատոյ եւ Օլիտ յարձակումն յառաջ տանելով պարապ տեղ վտանգի մէջ իյնալ չուզեցին. կարգերնին առանց աւրելու եւ միայն զիրենք պաշտպանելը բաւական սեպելով՝ կամաց կամաց ետ քաշուեցան: Ալվարատոյ Վազուպայի դիմացը կեցաւ, իսկ Օլիտ դէպ ի Գույոզան դնաց: Վերջապէս Սպարապետին հրամանովը Մայիսի 30ին պաշարման բուն գործողութիւնն սկսաւ:

## ԻՐ.

Մեքսիկոյէ պաշարման պատմութիւնը: — Սպանիացիք յարձակում չէ կ'ընեն ու ինչ յաղթանակն:

Գորդէզ իր նաւակներովն ու բոլոր զօրութեամբք սկսաւ Մեքսիկոյի մօտերն եղած կղզւոյ մը վրայ յարձակիլ, ուր որ բնակչաց շատերն ապաւինած էին: Թշնամիք ասոնց շարժումներն ու դիտաւորութիւնը տեսնելուն պէս՝ բոլոր իրենց նաւական զօրութիւնը հոն ժողվեցին ու անհամար ծառակուրներով աներկիւղութեամբ վրանին յարձակեցան: Սպարապետն իր նաւերը լուսնաձեւ շարեց, որպէս զի աւելի լայն ճակատ մը կազմուի եւ աւելի դիւրութեամբ պատերազմին: Յառաջ ամենեւին հով չըլլալով՝ շարունակ թխավարելու ստիպուած էին, անոր համար ալ կամաց կը շարժէին. բայց ծառակուրներուն մօտիկեցած ատեննին՝ մէկէն յաջող հով մ'եղելով՝ անմիջապէս առաջատաները բացին, եւ ուժգնութեամբ մը տկար թշնամիներնուն վրայ նե-

տուելով՝ ծառակուրներուն շատերն ընկղմեցին. մէկ մասն ալ թնդանօթներն ապականեցին ու խորտակեցին, որով մնացածները մինչեւ Մեքսիկոյ փախչելու ստիպուեցան:

( ) Ըստ Գոյոգանի բարձր տաճարէն պատերազմին սա յաջող կատարածը տեսնելուն պէս՝ զօրքն առած թմբերուն վրայէն յառաջ գնաց, որպէս զի քանի մը խրամատներու տիրելով՝ Մեքսիկացւոց յաղթուելուն ու ջարդուելուն օգնէ: Նոյն միջոցին Գորգէզ ալ Խոլոզ բերդը զարկաւ առաւ, թէպէտ եւ թշնամիք շատ յամառութեամբ դէմ՝ դրին: Աս պատնէշն առնելով՝ քաղաք երթալու երկու դլխաւոր ճամբաներուն կը տիրէր եւ Օլիտին հետ ազատ հաղորդակցութիւն կ'ունենար. անոր համար նոյն տեղն իրեն պատերազմական գործողութեանց կենդրոնն ու բանակատեղն ըրաւ. եւ իրեն երեք դլխաւոր գնդերը՝ ծառակուրներու յարձակումէն ապահովցրնելու համար՝ իր փոքրիկ նաւատորմին երեք մաս բաժնեց. այսպէսով ամէն մէկ գնդին զօրապետն իր գործողութեանց օգնութեան համար չորս նաւակ ունեցաւ:

Ասկից ետքը ետեւէ ետեւ անդադար յարձակմունք, ետ քաշուիլ ու նորէն յարձակումներ եւ զանազան պատերազմական շարժումներ ու կռիւներ պատահեցան: Ամէն առտու Սպանիացիք թմբերուն վրայի պաշտէշներուն վրայ կը յարձակէին, երբեմն խրամատներն եւ ուրիշ արգելքներն ալ անցնելով՝ մինչեւ քաղքին կենդրոնը յառաջանալու կը ճգնէին. եւ երբ որ Մեքսիկացւոց քաջութեանն՝ օրուան աշխատութիւննին փուճը կ'ելլէր, իրենց բանակատեղը կը քաշուէին: Այսպէսով ամէն օր աշխատութիւնն ու վտանգները կը նորոգուէր: Մեքսիկացիք բոլոր գիշեր աշխատելով՝ Սպանիացւոց կործանած տեղերը կը նորոգէին, կը կանգնէին եւ նորէն իրենց քշուած

տեղերնին բռնելով, աւելի քաջութեամբ իրենք զիրենք պաշտպանելու կը պատրաստուէին: Աս դործողութիւններն ալ ամբողջ ամիս մը տեւեցին. Մեքսիկացւոց՝ իրենք զիրենք պաշտպանելու համար ցուցրցած քաջութիւնը՝ Սպանիացւոց կատաղի յարձակումէն ու քաջատրտութենէն վար չէր մնար: Աս երկայն կռիւներուն մէջ Գորդէզ շատ զինուոր կորսնցուց. աւելի շատ բազմութիւն մը վերաւորուած էր եւ զրեթէ ամէնքն ալ նոյն տաժանելի աշխատութենէն յոգնած ու ընկճած էին. մանաւանդ որ իրենց վիճակը յորդ անձրեւներու պատճառաւ աւելի ծանրանալու սկսած էր:

Վաղըքին ջուրը կտրելով՝ բնակիչները նեղը խոթելու յոյսերնին ալ պարապ ելաւ. որովհետեւ Մեքսիկացիք ծառակուրներով ցամաքէն շարունակ ջուր կը կրէին. նոյնպէս աս ճամբով քաղքին ամէն հարկաւոր պաշարներն ալ հոգացուելով՝ զիրենք սովով ընկճելու ալ ամենեւին յոյս չկար: Գորդէզ աս ծառակուրներուն հաղորդակցութիւնը կտրելու համար՝ երկու նաւակ որոշեց որ լծին վրայ հսկեն. բայց հարկաւորութիւնը թշնամիներուն հնարագիտութիւնն արթնցրնելով՝ ծառակուրները զանազան ուղղութեամբ քաղքէն դուրս կը հանէին, եւ այսպէս Սպանիացւոց նաւակներուն ուղղութիւնը կը շփոթէին ու կը խաբէին, եւ թշնամին մէկ մասին ետեւէն ինկած ժամանակ՝ իրենք մէկալ կողմանէ կը փախչէին պաշար հոգալու կ'երթային: Բաց ասկից՝ ուրիշ հնարք մ'ալ մտածեցին. երեսուն հատ մեծ ծառակուր շինել տուին ու եզերքնին հաստ տախտակներ դամելով հաստաւեցին, որոնց ետեւը պահուրտելով՝ թշնամեաց զէնքերէն կ'ապահովուէին: Գիշեր ատեն լծին մէջը զանազան տեղեր շատ ցիցեր դամեցին եւ շատ ծառակուրներով խիտ թփերու ետեւ պահուրտեցան: Առտու եղածին պէս՝ երկու երեք ծառա-

կուր առատ պաշարով լեցրնելով՝ դէպ ի ցցերը սկսան յառաջ երթալ, որպէս զի Սպանիացիներն հրապուրեն ու դարանի մէջ ձգեն: Իրօք ալ Սանտովալի նաւակներն ան կողմերը գացած ըլլալով եւ պաշարքով լեցուն ծառակուրները տեսնելով՝ վրանին յարձակեցան, յուսալով որ առանց դժուարութեան գերի կը բռնեն: Բայց մէկէն ի մէկ ցցերու մէջ խրեցան մնացին, անանկ որ ոչ յառաջ կրնային երթալ, ոչ ալ ետ դառնալ: Նոյն միջոցին մեծ ծառակուրները թփերուն ետեւէն ելլելով՝ սաստկութեամբ վրանին յարձակեցան: Սպանիացիք աս վտանգաւոր դրից մէջ քաջութեամբ պատերազմեցան. իրօք ալ հազիւ արտաքոյ կարգի ճգամբ կրնային պրծանիլ. ջրասոյզները կացիններով ցցերը կտրտելու եւ ճամբայ բանալու կ'աշխատէին: Երբ որ նաւակները քիչ մը ազատ շարժել կրցան, անմիջապէս թնդանօթներն սկսան գործածել, որով ծառակուրներն ետ քաշուելու ստիպուեցան, բայց առանց կորստեան. իսկ Սպանիացիք բաւական մարդ կորսնցուցին. նոյնպէս նաւակներուն առաջնորդող երկու պաշտօնակալներն ինկան մեռան:

Մեքսիկացիք աս յաջողութենէն քաջալերուելով՝ նորէն նոյն հնարքին ձեռք զարկին: Բայց Գորդէզ անոնց շարժումն իմանալով՝ դրած դարանքնին իրենց գլուխը դարձուց: Գիշերուան մթին՝ ետեւէ ետեւ վեց նաւակ խրկեց, որոնք թշնամեաց դարանք մտած տեղէն քիչ մը հեռու ուրիշ խիտ թփերու ետեւ պահուրտեցան: Առտու ըլլալուն պէս՝ նաւակներէն մէկն ելաւ յառաջ գնաց, որպէս թէ ծառակուրներուն ետեւէն իյնալու համար: Աամաց կամաց այնչափ մօտիկցաւ, որ ծառակուրներն որոշ տեսաւ եւ անմիջապէս սկսաւ ետ քաշուիլ: Ծառակուրներն աս փախչող նաւին ետեւէն ինկան եւ իբրեւ արդէն յաղթած ու գերի բռնածի պէս՝ սկսան ուրախու-

Թեան աղալակներ արձակել: Բայց երբ որ մինչեւ չափաւոր տեղ մը յառաջ եկան, Սպանիացւոց մէկալ նաւակները դարանէն ելլելով՝ առջեւնին առին, Թնդանօթներն ալ անանկ ուժգնութեամբ գործածեցին, որ երկրորդ անգամ պարպուելուն՝ եւ ոչ մէկ ծառակուր մնաց:

Բունած գերիներնէն իմացան որ սովը քաղքին վրայ սաստիկ տիրած էր ու սոսկալի կոտորած կ'ընէր. անոր համար Գորդէզ աւելի եւս զգուշութիւններ ըրաւ եւ հրամաններ հանեց որ քաղքին մէջ պաշար խօթելն արգելէ: Ասկից զատ՝ գերիներու գլխաւորներէն երեք հոգի ազատ թող առաւ իրենց ապսպրելով որ կայսեր ըսեն թէ ինք խաղաղութիւն ընելու պատրաստ է, միայն աս դաշինքով որ Սպանիայի թագաւորին գլխաւորութիւնը ճանչնայ: Քանի մ'որ ետքը նորէն բռնուած գերիներէն իմացուեցաւ որ Աուադիմոնին աս առաջարկութիւնը սիրով ընդունելով՝ ցեղապետներու եւ գլխաւորներու ժողովք գումարեր, եւ քաղքին թշուառ վիճակն անոնց առջեւը դնելով՝ խաղաղութիւնն ընդունելու ինք զինքը պատրաստ ցուցրցեր է: Ցեղապետներն առջի բերան իր կարծեացը հաւաներ են, բայց քրմերը մեծ ընդդիմութիւններ հանելով՝ բոլոր ժողովքն իրենց կարծեացը դարձուցեր են. որովհետեւ քրմերուն խօսքն ամէնն ալ կը յարդէին:

Ապարապետն աս որոշումը լսելուն պէս՝ միտքը դրաւ որ արտաքոյ կարգի շօրաւոր յարձակմամբ մը քաղքին տիրէ: Ալվարատոյ եւ Սանտովալ՝ իրենց զնդերովը Գազուպայի ու Գեզեզոյի կողմանէ յարձակելու հրաման ընդունեցան. ինքն ալ Օլիտին հետ Գույոգան կեցող զնդին դլուխն անցաւ: Սպանիացիք Գորդէզին ներկայութեամբը քաջալերուելով ու որոշիչ պատերազմով մը իրենց աշխատութեանց վախճան տալու յուսով՝ այնպէս ուժգնութեամբ

յարձակեցան որ բան մը իրենց ընթացքը չէր կրնար  
 խափանել: Ետեւէ ետեւ բոլոր պատնէշները խոր-  
 տակեցին, փոսերը, խրամատներն ու ջրանցքներն  
 անցան եւ վերջապէս իրենց վերջին ուժը քաղքին  
 կենդրոնն առին: Գորդէզ իր զօրացը սրընթաց յա-  
 ուաջացման վրայ ուրախանալու ատեն՝ ետ քաշուելու  
 համար հարկաւոր եղած զգուշութիւններն ալ ձեռքէ  
 թող տուած չէր: Յուլիանոս Ալտերեդդէին հրա-  
 ման տուաւ որ ջրանցքին ու թմբերուն խրամատուած  
 տեղերը լեցընէ եւ նոյն անցքերը պաշտպանէ: Աս  
 գործքը պաշտօնակալին աչքին անարգ բան մ'երեւ-  
 նալով եւ տեսնելով որ իր ընկերները խառնուրդի  
 մէջ են ու քաջութեամբ պատերազմելով յաղթու-  
 թիւններ կը ստանան, ինքն ալ պատերազմին սաստ-  
 կացած տեղերը նետուեցաւ, եւ իրեն յանձնուած  
 պաշտօնը հոգալու փոյթ չտարաւ: Աս սխալման լու-  
 ըրը Կուադրիմոնդինին տկանջն հասնելով՝ անմիջապէս  
 իրեն օգտին գործածելու ջանաց: Սպանիացւոց դի-  
 մացը պատերազմող գնդերուն հրաման խրկեց որ  
 կամաց կամաց ետ քաշուին, որպէս զի թշնամիք  
 քիչ մ'աւելի յառաջանան: Անդիէն ալ զանազան  
 ճամբաներէն՝ թմբին վրայի ամենէն մեծ խրամատին  
 կողմը՝ բազմաթիւ դունդ մը հասցուց: Նոյն միջոցին  
 քրմերը պատերազմի չաստուածին նուիրեալ մեծ  
 թմբուկը զարնելու սկսան: Մեքսիկացիք աս թրմ-  
 բուկին նուիրական ու սղալի ձայնն առածնուն պէս՝  
 նոր կատաղութեամբ ու վրէժխնդրութեան յուսով  
 մը Սպանիացւոց վրայ յարձակեցան: Ասոնք առջի  
 բերան կամաց կամաց ու կարգով կանոնով ետ քա-  
 շուելու սկսան, բայց երբ որ երթալով թշնամիքե-  
 րէն աւելի եւս մղուեցան ու պաշարուեցան, սար-  
 սափն ու շիթութիւնը կարգերն աւրեց. այնպէս  
 որ թմբին մեծ խրամատին առջեւը հասած ատեն-  
 նին՝ Սպանիացի ու դաշնակից, ձիաւոր ու ոտանաւոր

իրարու խառնուեցան, եւ ամէն կողմանէ վրանին յարձակող թշնամիներէն մըլուելով՝ իրարու վրայ կ'իյնային: Գորդէզ պարապ աեղ իր զօրքերը կարդի խտրելու կը ջանար. անանկ սարսափած էին որ Սպարապետին հրամաններն ու աղաչանքը վրանին ամենեւին ազդեցութիւն չէր ըներ: Աերջապէս աեսնելով որ զօրքերը պատերազմելու յորդորելն անօգուտ է, ջանաց որ գոնէ ջուր ինկողներուն օգնութեան հասնի եւ աղատէ: Բայց այնպիսի եռանդով աս գործքին զբաղեցաւ, որ իր ապահովութիւնը հոգալու ամենեւին փոյթ չէր տաներ: Նոյն միջոցին Մեքսիկացիներէն վեց հոգի վրան յարձակեցան, բրնձեցին եւ առած կը տանէին: Բարեբախտութեամբ քաջն Օլիտ եւ Աերմա կայծակի պէս օգնութեան հասան ու թշնամեաց ձեռքէն աղատեցին. բայց մինչեւ որ վրայ հասան նէ՛ Գորդէզ արդէն շատ կողմանէ վիրաւորուած էր: Աս կռուոյն ատենը՝ Սպարապետոց կողմանէ վաթսուն հոգւոյ շափ մարդ կորսուեցաւ. բայց աւելի խեղճն ան էր որ անանցմէ քառասունը ողջ ողջ թշնամեաց ձեռքն ինկան:

Ալվարատոյին եւ Սանտովալին գնդերն ալ աւելի յաջողութիւն չաւնեցան: Մեքսիկացոց բազմութիւնը Գորդէզին գունդն ետ վռնտելէն ետեւ՝ աւելի քաջալերութեամբ մը դէպ ի Գագուպա Ալվարատոյին վրայ յարձակեցան, եւ զինուորները վախցընելու համար՝ երկու գլուխ ցուցընելով՝ Տեսէք, Գորդէզին եւ Սանտովալին գլուխներն են. քիչ մը ետքը ձերն ալ ասանկ պիտ'որ ըլլայ, կը պոռային: Ալվարատոյ մեկալ գնդերուն հետ հաղորդակցութիւն չունենալով՝ աս լրացներուն ստութիւնը չէր կրնար իմանալ. մեկալ կողմանէ ալ թշնամեաց ետեւէ ետեւ շատնալէն վախնալով՝ ետ քաշուելու հրաման տուաւ. եւ թէպէտ շատ դժուարութեամբ կրցաւ գլուխ հանել, բայց ամենեւին կորուստ չըրաւ:

Իսկ Սանտովալին գունդը սաստիկ ու արագընթաց շարժումով մը յառաջացած էր, արդէն յաղթութիւնը գրեթէ ձեռքն էր, մէյ մ'ալ մէկալ գնդերուն ետ քաշուելովը պատերազմին կերպարանքը փոխուեցաւ: Մեքսիկացիք տեսնելով որ աս գնդէն ուրիշ դիմացնին թշնամի չմնաց, բոլոր զօրութիւննին ասոնց վրայ դարձուցին: Սպանիացիք մեծ քաջութեամբ իրենք զիրենք պաշտպանեցին. բայց վերջապէս բազմութենէն ընկճելով՝ իրենց առջի տեղը քաշուելու ստիպուեցան: Այսպէսով Մեքսիկացիք ամէն կողմ յաղթող գանուեցան:

Այն իրիկունը Սպանիացւոց կրած ցաւն ու զգացած սոսկումը՝ ցորեկուան քաշած վշտերնէն շատ աւելի էր: Մեքսիկացւոց կատարած գազանային սոնախմբութեան եւ յաղթանակի աղաղակներն ու աղմուկը՝ որոշ կը լսէին: Բոլոր քաղաքը լուսաւորուած էր եւ մեծ տաճարն անանկ կը փալիբլար, որ տաճարին չորս կողմը կեցող բազմութեան շարժումներն ու գերի բռնուողներուն մահուան համար՝ քրմերուն ըրած պաարաստութիւնները յայտնի կը տեսնուէին: Ջահերուն լուսաւորութեամբն՝ իրենց ընկերները՝ գոյներնուն ճերմկութենէն կրնային զանազանել, որովհետեւ մերկացուցած ու ան գարշելի կուռքին առջեւ կաքաւելու ստիպած էին, որուն որ քիչ մը վերջը պիտի զոհուէին: Քիչ մը ետքը սպանուող գերիներուն աղիողորմ ձայնն ականջնին կու գար եւ անանկ կը կարծէին որ ամէն մէկ սպանուողն իր ձայնէն կ'որոշէին: Ամենէն քաջասիրտներն ալ արցունքնին չէին կրնար բռնել: Տիագ՝ որն որ Ալվարատոյին գնդին մէջ ըլլալով՝ Գազուպայի թմբին վրայ կը կենար, որուն դիրքը տաճարին ամենէն մօտ կ'իյնար եւ ուսկից ամէն բան կրնար տեսնուիլ, աս տեսարանին իր վրայ ըրած ազդեցութիւնն այսպէս կը ստորագրէ: Քանի որ, կ'ըսէ, այնպէս իմ ընկերներուս



կուրծքը բացուած, իրենց զողզօջուն ու արիւնոտ սրտին հանուիլն ու ան գարշելի կռոց մատուցուիլը տեսած չէի, քանի որ իմ քաջ ընկերացս մարմնոյն՝ մեր անգուլթ թշնամիներէն անյազուլթեամբ ուտուիլը տեսած չէի, չէ թէ միայն առանց վախի, հապա մեծ քաջասրտութեամբ պատերազմի մէջ կը նետուէի: Բայց ան բոպէէն սկսեալ՝ պատերազմելու համար Մեքսիկացւոց չէի կրնար մօտիկնալ՝ առանց ներքին սոսկում մը զգալու. եւ միշտ ընկերներուս սոսկալի մահը յիշելով կը սարսափէի:

Աս աղետալի դէպքը՝ գրեթէ ամենէն աւելի Գորդեզին վիշտ եւ անձկութիւն կը պատճառէր. ինք ան ամէն կիւքերը կը զգար, որն որ զօրապետ մը յաղթուելէն վերջը կը զգայ: Զինուորներուն սիրտ տալու, միսիթարելու եւ անոնց յոյսերը նորոգելու համար՝ մեծ հանդարտութիւն ու հաստատամտութիւն ցուցրնելու հարկաւորութիւն ունէր, բայց ինքն ալ սաստիկ տրտմած ու խռոված ըլլալով՝ ուրիշներուն միսիթարութեանը կարօտ էր:

Մեքսիկացիք իրենց յաղթութեան վրայ ապաւինելով՝ երկրորդ առտու նորէն վրանին յարձակեցան: Զսհուածներուն գլուխները գաւառներու կառավարներուն խրկեցին, հաստատելով որ պատերազմի աստուածն՝ իր սեղանին վրայ թափուած թշնամեաց առատ արիւնէն յագելով՝ խօսք տուած է թէ ութ օրուան մէջ թշնամիք բոլորովին պիտի ջարդուին եւ խաղաղութիւնն ու երջանկութիւնը նորէն բոլոր կայսերութեան մէջ պիտի հաստատուի: Ասանկ վստահութեամբ ու հաստատութեամբ հրատարակուած գուշակութեան՝ աւերարդապաշտ ժողովուրդն առհասարակ հաւտաց ու սիրով ընդունեցաւ: Ասոնք լսելով՝ գաւառներու մէջ Մեքսիկացւոց հաւատարիմ մնացողներն ամէն կողմանէ զինաւորած՝ օգնութեան հասնելու կը փութային. իսկ դաշնակիցները կամաց

կամաց թող կու տային կը հեռանային, այնպէս որ Գորգէզ գրեթէ իր զօրքերովը մինակ մնաց: Նոյն իսկ Գլասգալացիք՝ որոնք ամենէն աւելի իրեն հաւատարիմ էին, ան գուշակութիւններէն վախնալով՝ իրմէ հեռացան: Սպարապետը շատ Զանաց որ դաշնակցաց վախերը փարատէ. բայց երբ որ տեսաւ թէ օգուտ չ'ընեն, հրաման հանեց որ բոլոր պատերազմական զործողութիւնները դադրեցընեն, որպէս զի պատգամէն որոշուած օրերն անցնելով՝ դաշնակիցներն ան խօսքերուն ստութեան վրայ համոզուին եւ նորէն իր քովը ժողվին:

## Ի Գ.

Կատարելին բերի իւր բռնութիւն: — Մեռելիքի արհեստը:

Որոշուած ժամանակն եկաւ անցաւ եւ Սպանիացիք առանց նեղութիւն մը կրելու՝ իրենց դիրքը բռնեցին կեցան. դաշնակիցներն իրենց դիւրահաւանութեան վրայ ամբշնալով՝ նորէն Գորգէզին հետ միացան. ուրիշ քանի մը ցեղեր ալ մտածելով որ Մեքսիկացիները խաբող աստուածներն անոնց ահրութիւնն երեսէ ձգած պիտ'որ ըլլան, եկան Գորգէզին դաշնակից եղան: Ասով Սպանիացւոց բանակը շատ բազմացաւ: Նոյն ատենները Վերա-Գրուզ նաւ մը հասնելով՝ նորէն քանի մը Սպանիացի ու վառօդ բերաւ, որն որ կամաց կամաց պակսելու սկսած էր: Սպարապետն յարձակման կերպը փոխեց. յանկարծ ու սաստիկ յարձակմամբ քաղքին տիրելու տեղ՝ ուղեց որ կամաց կամաց ու աստիճանաբար ամէն մէկ թաղին տիրէ: Գաշնակիցները մէկ կողմանէ թմբերը կը նօրօգէին. եւ ամէն անգամ որ Սպանիացիք թաղի մը կը տիրէին, շուտ մը տները կը փլցընէին ու գետնի հաւասար կ'ընէին: Ասանկով Մեքսիկացւոց ձեռքն եղած տեղը քանի գնաց պզտիկցաւ, եւ ան աստի-

ճանի հասաւ՝ որ ալ չէին կրնար պատերազմական գործողութիւններ ընել: Գորղէզ իր զօրաց նոր տեսակ զէնք մ'ալ տուած էր, այս ինքն՝ Չինանդլանի երկայն նիզակներով զինաւորած էր, որով խիտ առ խիտ կեցած ատեննին ալ՝ կրնային պատերազմիլ, եւ առանց կարգի վրանին նետուող թշնամւոյն կրնային դիւրաւ ու անվտանգ դէմ դնել: Ամէն օր արիւնալից ու կատաղի պատերազմներն երկու կողմանէ ալ կը նորոգուէին, որոնց մէջ Մեքսիկացւոց ըրած կորուստը գրեթէ անթիւ անհամար էր. քաղաքը բուրբովին ապականած անշքացած էր ու սաստիկ սովէն ալ կը տանջուէր: Սպանիացւոց նաւակները բուրբ լիճը բռնած ըլլալով՝ քաղքին մէջ պաշար ու ջուր խոթելը կ'արգելէին: Կուադիմոնթինին յառաջատեսութեամբը հոգացուած ամբարանոցները պարպուեցան. վերջապէս փոխադրական հիւանդութիւններն ալ քաղքին տիրելով՝ բնակիչքը վերջին աստիճանի նեղութեան ու թշուառութեան հասան:

Յարձակման մ'ատեն՝ Ալվարատոյին գունդն իր քաջ զօրապետովը մինչեւ մեծ հրապարակը յառաջ գնաց: Անմիջապէս տաճարին բարձր ձեմելքէն՝ որն որ քրմերն ու ազնուականները բռնած էին, վրանին անձրեւի պէս նետ սկսաւ թափիլ: Քայց աներկիւղ ու քաջասիրտ Ալվարատոն իր բնական արագաշարժութեամբը տաճարին վրայ յարձակելով՝ վերջապէս նուաճեց. կուռքերուն կրակ տուաւ եւ պարբուպին վրայ Կաստիլիայի դրօշը կանգնելով՝ հայրենակիցներուն ճամբայ բացաւ ու իրեն հետեւելու յորդորեց: Գորղէզ աս օրինակէն աւելի եւս քաջալերուեցով՝ ամէն ճիգն ի գործ դրաւ, որով Յունիսի ՁՅին բոլոր բանակը մեծ հրապարակն հասաւ ու հոն բանակեցաւ: Ասով պաշարման զլխաւոր դժուարութիւններն յաղթուեցան. Մեքսիկացւոց ձեռքը հազիւ թէ քաղքին քառորդը մնացած էր, եւ նոյն

ամփոփուած դրից մէջ չէին կրնար ալ իրենք զիրենք պաշտպանել :

Արբեմն երբեմն թշնամեաց կողմանէ քանի մը գլխաւորներ կ'երեւային, որոնք մօտ կու գային եւ Սպանիացիները կը գրգռէին : Օր մը անոնց մէջէն քաջասիրտներէն մէկը բանակատեղը մօտիկցաւ . իր զարդերէն կ'երեւար որ աստիճանաւոր մարդ մըն է . կախած սուրն ու վահանը կը ցուցնէին թէ իր ձեռքովն սպանուած Սպանիացւոյ մը զէնքերն են : Ասիակակ արտաքոյ կարգի գոռոզութեամբ շատ անգամ Սպանիացիները մենամարտութեան կը գրգռէր . այնպէս որ Գորդէզ՝ անոր պոռայէն ու շարժուածներէն ձանձրանալով՝ վահանակիրը ցուցուց եւ ըսել տուաւ որ Եթէ կ'ուզես նէ՝ տասը զինուոր ալ հետդ բեր, որոնց ամենուն դէմ միայն սա Սպանիացի մանուկը կրնայ ելլել, ըսաւ, որն որ հազիւ 17 տարւան պատանի մըն էր : Մեքսիկացին սա արհամարհանաց խօսքը չհասկընալու զարնելով՝ աւելի եւս գոռոզութեամբ դիմացիները կը գրգռէր : Սպարապետին վահանակիրը՝ Ամերիկացւոյն յանդգնութեան վրայ նեղանալով՝ շուտ մը ճարպիկութեամբ, առանց մէկու մ'իմացընելու՝ առջեւն եղած խրամասն անցաւ ու Մեքսիկացւոյն վրայ յարձակեցաւ, որն որ յարմար դրքի մը մէջ իրեն կը սպասէր : Պատանին վահանովը թըշնամւոյն առջի հարուածին դէմ ինք զինքը պաշտպանեց, եւ անմիջապէս աճապարելով անանկ զօրութեամբ մը վրան յարձակեցաւ ու զարկաւ, որ անիկա ոտքին տակը փռուեցաւ մեռաւ : Յաղթականն ոտխին սուրն ու վահանը բերաւ իր տիրոջն ընծայեց : Գորդէզ՝ այսպիսի մատաղ հասակի մէջ անոր ցուցած սա աստիճանի քաջասրտութեան ու զօրութեան վրայ հաճելով՝ շատ անգամ զինքն ողջագութեց եւ առած սուրն իր ձեռքովն անոր մէջքը կախելով՝ ասպետութեան աստիճան տուաւ :

Սպարապետը բանակատեղը մեծ հրապարակին վրայ հաստատեւէն ետեւ՝ նաւատորմիցն հրամանատարութիւնը Սանտովալին ձեռքը յանձնեց, որ լճին կողմանէ քաղքին դեռ թշնամուցն ձեռքն եղող մասին վրայ յարձակի. մէկ կողմանէ ալ ինք վերջին յարձակում մ'ընել կ'ուզէր: Ազնուականներն ասոնց պատրաստութիւններէն վախնալով եւ գոնէ իրենց թագաւորին կեանքն ազատել ուզելով՝ անոր խորհուրդ տուին որ մայրաքաղաքը թողու փախչի, որովհետեւ ալ պաշտպաններն անկարելի էր: Մտքերնին ան էր որ հեռու գաւաւները քաշուին, որոնց ժողովուրդը սուք հանելով՝ կը յուսային թէ աւելի յաջողութեամբ կրնան պատերազմիլ: Աս որոշումը դիւրութեամբ ի գործ դնելու համար՝ ջանացին որ խաղաղութեան դաշինք դնելու առաջարկութիւններով զԳորդէզ զբաղեցրնեն, որպէս զի Աուսադիմոնի նոյն միջոցներուն կարող ըլլայ փախչիլ: Բայց Գորդէզ արդէն իր սուր մտօքն անոնց դիտասարութիւնը մտկաբերելով՝ Սանտովալին հրաման տուած էր որ աւելի զգուշութիւն ընէ: Նոյն արթուն հրամանատարն ալ իր պաշտօնն աղէկ կատարելու փութով՝ ամենայն զգուշութեամբ կը հսկէր: Իրօք ալ քիչ մը ետքը տեսնելով որ Մեքսիկացիներով լեցուած շատ մը ծառակուրներ արտաքոյ կարգի արագութեամբ լիճը պատուելու եւ դիմացի ցամաք երկիրը հասնելու կը ձգնէին, շուտ մը ետեւնէն իյնալու հրաման տուաւ: Արաչիա Հոլկուին՝ որն որ ամենէն թեթեւ նաւակին կը հրամայէր, շուտ մը վրանին հասաւ. եւ արդէն ամենէն աւելի յառաջացած ծառակրին վրայ թնդանօթը պարպելու վրայ էր, մէյ մ'ալ բոլոր մէջինները թիակնին վեր վերցրնելով՝ սկսան անձնատուր ըլլալու նշաններ տալ եւ արցունքով ու ազաղակաւ աղաչել որ վրանին զէնք չպարպեն, որովհետեւ կայսրը մէջերնին էր: Հոլ-

կուին քանի մը մարդիկներով ծառակրին մէջ նե-  
տուեցաւ, Առաքիմոնին ալ անոր առջեւն երթա-  
լով՝ Ես, ըսաւ, ձեր գերին եմ, եւ ուր որ կ'ուզէք  
կ'երթամ. միայն կ'աղաչեմ որ կայսրուհւոյն անձին  
անարգանք մը չհասնի: Աս ըսաւ եւ Սպանիացոց  
նաւն ելլելով՝ ձեռքը կայսրուհւոյն տուաւ ու նաւակն  
ելլելու օգնեց: Շուտ մը աս երեւելի դէպքին լուրը  
Գորդէզին իմացուցին. ան ալ երկու գումարտակ  
խրկեց որ կալանաւորներն զգուշութեամբ բռնեն ի-  
րեն բերեն. Գորդէզին բնակարանը հասած ատեննին՝  
նախ Առաքիմոնին ներս մտաւ, ետեւէն ալ կայս-  
րուհին: Սպարապետը զիրենք շատ քաղաքավարու-  
թեամբ եւ յարգութեամբ ընդունեցաւ: Այսրը մեծ  
հաստատութեամբ ու վեհութեամբ մը կեցաւ եւ ը-  
սաւ. Ես իմ թագաւորական պարտքս կատարեցի.  
Իմ ժողովուրդս մինչեւ վերջին ճիգս պաշտպանեցի.  
ալ ինձի մեռնելէն ուրիշ բան չիմնար: Աս սա սու-  
րը ու կուրծքս խոթէ, որ վերջանայ իմ կեանքս,  
որն որ ալ չիկրնար օգտակար ըլլալ: Աս խօսքերուն  
վրայ սիրան ելլելով՝ հեծեծեւէն ձայնը մարեցաւ.  
կայսրուհին ալ մեկդի քաշուած առատ արցունք կը  
թափէր: Աս խեղճ տեսարանին վրայ Գորդէզին սիր-  
տը կտոր կտոր եղաւ ու հազիւ ինք զինքը կրցաւ  
բռնել. քիչ մը ժամանակ լուռ կեցաւ ու թողուց  
որ թշուառ գերիներուն ցաւոց առջի սաստիկութիւնն  
անցնի. ետքէն զիրենք մխիթարելու սկսաւ, ապա-  
հովցրնելով որ իրենց հետ մեծ յարգութեամբ կը  
վարուի եւ Եթէ, ըսաւ, Սպանիայի թագաւորին վե-  
րին իշխանութիւնը կը ճանչնաք, կրնաք իշխանու-  
թիւննիդ պահել:

Առաքիմոնին 25 տարւան մօտ առոյգ երիտա-  
սարդ մըն էր. հասակը բարձր եւ պնդակազմ, կեր-  
պարանքն ալ ազնիւ ու վեհ: Այսրուհին ալ դրեթէ  
նոյն տարւօք կ'երեւար եւ շարժմունքներովն ու կե-

ցուացքովն իր ազնուութիւնը կը յայտնէր: Երբ որ Գորդէզ իմացաւ որ մեծին Մոնգեղուճայի դուստրն է, ալ անկէ ետեւ իրեն առանձին յարգութիւն մը սկսաւ ցուցընել:

Մեքսիկացիք իրենց թագաւորին բռնութիւն իմանալով՝ թշնամութեան գործողութիւնները բողբոջին դադրեցուցին. եւ Գորդէզ 1521ին Օգոստոսի 13ին քաղքին մնացած մասին ալ տիրեց: Այսպէս սով լմնցաւ աս հռչակաւոր պաշարումը՝ որն որ Նոր Աշխարհքին արշաւանաց մէջ ամենէն երեւելի դէպքը կրնայ համարուիլ. պաշարումը 70 կամ ըստ Սուլիսի 90 օր տեւած էր: Նոյնչափ ժամանակուան մէջ գրեթէ օր մը չէր անցներ առանց մեծ քաջութիւն ու նշանաւոր դէպք մը պատահելու՝ թէ յարձակուաց ու թէ Մեքսիկացւոց կողմանէ:

Քաղքին գտնուած ողորմելի վիճակէն՝ Մեքսիկացւոց ինչ աստիճանի յամառութեամբ իրենք զերենք պաշտպանած ըլլալը կրնայ իմացուիլ. աս հոյակապ քաղքին երեք մասն արդէն բողբոջին կործանած էր. ճամբաներն ու հրապարակները մեռելներու կոյտերով ծածկուած էին: Գիակները տաքէն ու անձրեւներէն շուտ մը փտակելով՝ քաղքին օդն ապականած ու սոսկալի հիւանդութիւն մը պատճառած էին, որն որ վերջին օրերը քաղքին գլխաւոր հարուածն եղած էր. սովն ալ ամենայն սաստկութեամբ վրանին բռնացած էր:

Բայց Սպանիացւոց վիճակն ալ ետքի ատենները ասկից շատ տարբեր մը չէր. իրենց բազմութիւ դաշնակից զօրքերուն ապրուստ ձարելու հոգը՝ շատ անգամ զիրենք մեծ նեղութեան մէջ կը ձգէր. քանի քանի անգամ կերակուրնին պակասած էր: Ամենեւին զէնքերնին չէին կրնար թողուլ եւ ոչ ալ քիչ մը հանգչելու ժամանակ ունէին. ամէնն ալ վերքերով լեցուն էին եւ պաղ ջրէն ուրիշ դարման մը

չէին կրնար մատակարարել: Բայց աս չարիքներն աչքերնուն պնչափ չէր երեւար, եւ սիրով ալ կը տանէին, երբ որ ողջ ողջ ան վայրենի թշնամեաց ձեռքն իյնալու մտածմունքը մտքերնին կու գար:

Վաղքին սոսկալի վիճակն ու ապականած օդը զԳորգէզ ստիպեց որ քիչ մը ժամանակ անկից հեռանայ, մինչեւ որ աղէկ մը մաքրուի: Բոլոր բնակիչքն ալ դուրս հանել տուաւ. արք եւ կանայք ու տղաք երեք օր երեք գիշեր թմբերուն վրայէն դուրս ելան: Իրենց խեղճ վիճակն ու զարհուրելի վատութիւնն իրենց քաջած նեղութեանց վկայ էին եւ յաղթողներուն գութը կը շարժէին:

Սպանիացիք քաղքին առնուելուն վրայ առջի բերան շատ ուրախացան. բայց երբ որ իրենց երեւակայած յոյսերը պարապ ելան, անմիջապէս տրտնջելու սկսան: Մոնղեզումային անբաւ գանձերուն ու տաճարաց ոսկիներուն տեղ՝ հազիւ 600,000 Փրանգի արժողութեամբ բան կրցան ժողվել, որն որ հազիւ թէ արշաւանաց ծախքերուն կը բաւէր: Արդ զարմանալու բան չէր՝ որ զօրքն իր աժգոհութիւնը յայտնէր. առնելու վարձքերնին՝ իրենց քաջած անհամար աշխատութեանց ամենեւին համեմատ չէր: Հայր Օլմետոն գրգռած ոգիները խաղաղընելու համար՝ զԳորգէզ համոզեց որ բոլոր աւարը միայն հասարակ զօրաց բաժնուի. բայց տրտունջներն ասով ալ չգաղբեցան. որովհետեւ շատերը կ'ըսէին թէ Սպարապետն ու մեծերը գանձերուն մեծ մասը գաղտուկ առած պահած պիտ'որ ըլլան: Բայց ետքէն երբ որ իմացուեցաւ թէ Աուազիմոսին իր շարաշար վախճանը տեսնելով՝ բոլոր իր նախորդաց ժողված գանձերն ու մեծագին զարդերը լճին մէջ նետել տուած է, զօրքերը զԳորգէզ սկսան ստիպել որ գերի բռնուած թագաւորը տանջանքով բռնագատէ պահած գանձերուն տեղն յայտնելու:



Գորդեղինն ո՛չ աղաչանքը, ո՛չ խոստումները եւ ո՛չ բերած զանազան պատճառները կրցան զինուորաց զորդուութիւնը զսպել: Պէտք է ըսել որ աս ամէն փորձերն անօգուտ ըլլալէն ետքը՝ զինուորաց տժգոհութիւնն աւելի չզայրացընելու վախը զինքը ստիպած ըլլայ անանկ գործքի մը ձեռք զարնելու, որն որ իր փառքն ու պատիւը շատ նուաստացուց եւ իր պատմութեանը մէջ մեծ բիծ մ'եղաւ: Աուագիւմնձինին աստիճանին չնայելով, ան խեղճ թագաւորին ցուցըցած քաջութիւնները մոռնալով եւ իրեն բերնովը տուած խոստման ուղղակի դէմ գործելով՝ Սպարապետը հրաման տուաւ որ տանջանքի մատուցուի, Գազուպայի ցեղապետին հետ մէկտեղ, որն որ կայսեր շատ սիրելին էր: Աուագիւմնձին զինուորական քաջասրտութեամբ ու արիութեամբ իր անագորոյն դահիճներուն ամէն հնարած տանջանքներուն դէմ անվեհեր դիմացաւ կեցաւ: Բայց իր տանջանաց ընկերը չկրնալով ցաւոց սաստկութեան դիմանալ՝ հրաման խնդրեց իր տիրոջմէն որ իր գիտցած գանձերուն տեղերն յայտնէ: Սակայն քաջասիրտ թագաւորը խիստ ու տժգոհ նայուածքով մը անոր տկարութիւնը զօրացուց, ըսելով՝ Իսկ ես արդեօք ծաղկէ անկողնոյ վրայ պառկեր եմ: Աս յանդիմանութենէն ցեղապետն ամբշնալով՝ ըութեամբ համբերեց եւ տանջանաց մէջ մեռաւ: Գորդեղ վերջապէս աս ըրածին վրայ ամբշնալով՝ զոհն իր դահիճներուն ձեռքէն քաշեց մէկդի առաւ: Արեւայ թէ Սուլիս՝ որ ամէն բանի մէջ Գորդեղինն ներբողիչն է, իր պատմութիւնն անոր համար Սպանիացուց Մեքսիկոյ առնելուն կը դադրեցընէ, որպէս զի Սպարապետին աս անգութ ու ամօթալի գործքը պատմելու չստիպուի:

Պաշարման ժամանակ Սպանիացիք հարիւրէն աւելի մարդ կորսընցուցին. իսկ դաշնակիցներէն հա-

զարաւոր հոգի ինկաւ . բայց Մեքսիկացւոց կորուսան ասոնց հետ չիկրնար համեմատուիլ : Գորդէզ կը կարծէ որ հարիւր հազարէն աւելի մարդ սպանուած , յիսուն հազարէն աւելի ալ սովով կամ հիւանդութեամբ մեռած ըլլայ :

Մեքսիկոյ առնուելէն ետքը՝ բոլոր տէրութիւնն ալ նուաճած ու առնուած ըսել էր . որովհետեւ բոլոր երկրին գլխաւոր զօրութիւնը մայրաքաղաքը պաշտպանելու ժողոված էին : Ասկից զատ Մեքսիկացիք ալ գլուխ չունէին եւ մայրաքաղաքին օրինակը՝ զերենք կը սարսափեցընէր ու անձնատուր ըլլալու կը յորդորէր . որչափ քաջ ու պատերազմող ցեղեր ալ գտնուէին , Սպանիացւոց յաղթական զէնքերուն չէին կրնար դէմ դնել : Իրօք ալ Մեքսիկոյի առնուելովը՝ բոլոր տէրութիւնը նուաճեցաւ : Ստոյգ է Սպանիացւոց աս պաշարման ժամանակ ցուցրցած քաջութիւնն ու յարատեւութիւնը մեծամեծ գովեստներու արժանի է . բայց բոլոր իրենց քաջասրտութեամբն ու արիութեամբը եւ իրենց զինուոց առաւելութեամբը՝ շատ տարակուսական է որ միայն իննհարիւր հոգի կարող ըլլային աս հսկայական գործքը գլուխ տանիլ , եթէ որ իրենց դաշնակից զօրքերէն օգնութիւն ու մեծ օգնութիւն գտած չըլլային : Չանազան գաւառներուն՝ բուն Մեքսիկացւոց դէմ ունեցած ատելութիւնը , մէջերնին եղած անմիաբանութիւնը , եւ Մոնդեզուամային ծանր լծէն ազատելու յոյսը՝ Գորդէզին դիտաւորութեանց գլուխ ելլելուն մեծապէս օգնեցին . բայց աս ալ կայ որ Սպարապեան անոնց սիրտն ու վստահութիւնը կրցաւ վաստակիլ եւ իր միտքը դրածին հասնելու գործածել :

## ԻՊԻ.

Մեթոդիոյ արձանագրութեան երէց պատահած դեպքերը :

Մեթոդիոյ առնուելէն քիչ մը ետքը՝ Գորղէզ իր գլխաւոր պաշտօնականները զանազան կողմեր խորհեց, որպէս զի ամէն դաւառ աչքէ անցընեն, նուաճեն, եւ յարմար տեղեր բնակութիւններ ու գաղթականներ հաստատեն: Ասով թէ նոր երկիրներու տիրեց եւ թէ միանգամայն իր զօրացը նոր զբաղմունք գտնելով՝ տօգոհութիւննին կրցաւ զսպել: Սանտովալ, Օլիա, Օզուզոյ եւ ուրիշները՝ դաւառներ նուաճելով ու երեւելի գործքեր գործելով անուանին անմահացընելու եռանդով՝ զանազան կողմեր արշաւեցին. միանգամայն մայրաքաղաքին մէջ չգտած հարստութիւննին՝ դաւառներուն մէջ գտնելու յոյսը թէ զիրենք եւ թէ իրենց զինուորները կը քաջալերէր: Բայց մէկ կողմանէ Գորղէզ եւ իր քաջ տեղականները Սպանիայի թագաւորութեան նոր երկիրներ գտնելու եւ տէրութեան փառքը պայծառացընելու ատեն՝ մէկալ կողմանէ Արսուս հինգերորդին քովի բանսարկուներն ու Սպարապետին թշնամիները նոյն հռչակաւոր թագաւորն ան աստիճանի գրգռեցին որ զԳորղէզ իր իշխանութենէն ու հրամանատարութենէն վար ձգել ուզեց: Քրիստովալ տէր Գաբիային հրաման արուեցաւ որ երթայ զԳորղէզ իր իշխանութենէն վար առնէ, զինքը բռնէ, ինչքերը գրաւէ եւ մինչեւ նոյն ատեն գործածներուն ճիշդ քննութիւն մ'ընէ, որպէս զի ետքէն Ամերիկայի ժողովքին առջեւը վրան դատաստան ըլլայ: Մեթոդիոյ առնուելէն քանի մը շաբաթ ետքը Գաբիա վերա-Գրուզ հասաւ եւ իր ունեցած հրամաններն ու իշխանութիւնը յայտնեց: Բայց Գաբիա՝ իրեն յանձնուած երեւելի գործքը գլուխ հանելու համար հարկաւոր եղած ձիրքերը չունէր: Սպարապետն արտա-

քուստ [Թագաւորական հրամանին մեծ յարգութիւն ցուցնելով՝ ի ծածուկ անանկ ճամբաներ բռնեց, որ կարող եղաւ Քաբիային հրամաններուն գործադրութիւնն անկարելի ընել: Այնպէս մէջէ մէջ ու խառնաշփոթ բանակցութիւններ սկսաւ ընել, խօսակցութիւններն այնչափ երկընցուց, երբեմն պարգեւներով, երբեմն խոստումներով, երբեմն նաեւ սպառնալիքներով՝ այնպէս հնարագիտութիւններ բանեցուց, որ վերջապէս նոյն տկար մարդը համոզեց [Թող տալու քաշուելու ան երկրէն՝ զորն որ ինք կառավարելու արժանի չէր:

Ապարապետն աս մեծ վտանգէն ալ յաջողութեամբ պրծելէն ետեւ՝ իր բոլոր մտադրութիւնն առած երկիրները շէնցընելու դարձուց: Մեծ գործունէութեամբ աշխատեցաւ որ գլխաւորաբար Մեքսիկոյի աւերակները նորէն կանգնէ, քաղաքը նորոգէ, գեղեցկացնէ. եկեղեցիներ, վանքեր, պալատներ, հրապարակներ շինել տուաւ. վերջապէս ան ամէն բան ըրաւ, որն որ անանկ մեծ տէրութեան մը մայրաքաղքին հարկաւոր կրնար ըլլալ կամ անոր զարդը կ'աւելցընէր: Նարվաէզ իր բռնուելու օրէն մինչեւ նոյն ատեն Վերա-Գրուզ կեցած էր. Գորդէզ՝ ալ իրմէ վախ չունենալով՝ հրաման տուաւ որ Մեքսիկոյ կրնայ գալ: Նարվաէզ իր դիմացն ելլելուն պէս՝ Սպարապետը սիրով պագտուեցաւ եւ բարեկամութիւնը խնդրեց. բայց անիկայ ամենեւին աս սիրոյ եւ բարեկամութեան նշաններէն չչարժեցաւ:

Թէպէտ Գորդէզին քաջութիւններն ու ըրած ծառայութիւններն երեւելի ու հռչակաւոր գործքեր էին, ի վերայ այսր ամենայնի սիրտը միշտ անհանգարտութեան մէջ էր: Արքունեաց մէջ գտնուող իր հին թշնամիներուն դաղտնի դաւակցութիւններն ու բանսարկութիւնները կրնային զինքն իր աշխատութեանցը պտղէն ու վարձքէն զրկել. մանաւանդ որ

ինքն ալ ներքուստ համոզուած էր թէ իր իշխանութիւնն օրինաւոր ճամբով ձեռք ձգած չէ: Աս պատճառներէն ստիպուելով՝ զՏաւիլա եւ զԳուինոնէս Սպանիա խրկեց, որպէս զի իր արշաւանաց ու յաղթութեանց վրայ մանրամասն տեղեկութիւն տան, կայսեր մեծագին պարզեւններ տանին եւ խնդրեն որ աս ծառայութեանց փոխարէն՝ իր եւ ընկերներուն քաջութեամբն առած երկրին կառավարութիւնն իրեն արուի: Աս երրորդ անգամ խրկուողներն ալ յաջող վախճան մը չունեցան, որովհետեւ Գուինոնէս Գերշէյրայի մէջ մենամարտութեամբ մեռաւ, իսկ Տաւիլա՝ Գաղղիացի հէներէն գերի բռնուեցաւ: Ի վերայ այսր ամենայնի աս վերջինն իր բանախն մէջէն Գորդէզին հօրը հետ թղթակցելու ճամբան դատաւ եւ ամէն բան անոր աղէկ մը իմացուց:

Աս կերպով Գորդէզին պաշտպաններն ու իր անհաշտ թշնամիները սկսան ջանալ կայսեր որոշումն իրենց կողմը դարձնելու: Թշնամիներն իրենց սաստիկ ատելութեամբը զՍպարապետն իբրեւ յափշտակիչ եւ մասնիչ ցուցնելու կը ջանային: Նարվաէզ ու Գաբիա ալ աս միջոցներուն Սպանիա հասան եւ սկսան Գորդէզին դէմ ամբաստանութիւններ ընել: Մէկալ կողմանէ Տոն Մարդին Գորդէզ՝ Մեքսիկոյի աշխարհակալին հայրը, Փրանկիսկոս տէ Մանդէյոյ եւ Տիեկոյ տէ Օրտազ, որոնք յառաջագոյն Գորդէզէն խրկուած էին, անոր դատը կը պաշտպանէին: Աս վերջիններուն թեւ թիկունք էին շատ համբաւաւոր մարդիկ, մանաւանդ Պեյարի դուքսը: Իսկ առջիններուն կողմն էր գլխաւորաբար Ամերիկայի Ժողովոյն գահերէցը՝ որն որ Նարվաէզին բարեկամն էր: Ազնուասիրտ ու բանէ հասկըցող մարդիկ՝ Գորդէզին դէմ եղած նենգութիւններուն ու տէրութեան ասանկ մեծ ծառայութիւն ընող զօրապետի մը դէմ ասանկ ճամբայ բռնուելուն վրայ սաստիկ կը ցաւէին: Իրեն վրայ

դրուած յանցանքներն ամէնն ալ կրնային ջատագովուիլ: Ի հարկէ՛ այնպիսի մեծ արշաւանք մը յաջողութեամբ գլուխ հանելու համար՝ պէտք էր որ սաստիկ խտուածիւն բանեցընէր. արշաւանաց գլխաւոր իշխանութիւնն անկարգ եղանակաւ ձեռք ձգելն ալ ըրած մեծագործութեամբը գրեթէ բոլորովին կը մոռցուէր: Սպարապետին բարեկամներուն աս պատճառներուն հետ հասարակաց հաւանութիւնն ալ միացաւ. անոր զարմանալի պատերազմներուն պատմութիւնն ամէն կողմ տարածուելով՝ բոլոր ժողովուրդն իրեն գովեստ խօսելէն չէին դադրեր: Շատ պատուաւոր մարդիկ հասարակաց համարումը կայսեր ահանջն հասցուցին, որն որ վերջապէս իրենց ազաւանացը զիջանելով՝ զԳորգէզ Նոր Սպանիայի ընդհանուր զօրապետ անուանեց, մտածելով որ թագաւորական իշխանութիւնն ու կարգ կանոնը հաստատուն պահելու ամենէն աւելի յարմար անձն ինքն է, որովհետեւ Սպանիացիք արդէն սիրով անոր հպատակած էին, տեղացիք ալ անոր զօրութենէն կը վախնային ու զինքը կը յարգէին:

Աս կերպով իշխանութեան մէջ հաստատուելով՝ սկսաւ աւելի եռանդով իր աշխարհակալութիւններն ու քաղաքակրթութիւնն ամէն կողմ տարածել: Ինք մայրաքաղաքին մէջ իր աշխատութեանցը պարապելու ատեն՝ իր պաշտօնակալները դաւառներուն մէջ կ'արշաւէին, սսկեղ հանքեր գտնելու եւ գաղթականներ հաստատելու համար: Ամէնքն ալ վրան մեծ սէր եւ համարում ունենալով՝ եթէ ստուգիւ փառասիրութիւնն իր ձիրքերուն հաւատար ըլլար, անշուշտ քիչ տտենուան մէջ անկախ իշխանութեան մը կրնար հասնիլ: Բայց իր թագաւորին՝ մեծ հաւատարմութիւն ու հայրենեաց սաստիկ սէր ունենալով՝ կայսեր իրեն տուած իշխանութիւնը բաւական համարեցաւ:

Գրեթէ նոյն ժամանակները Փրանկիսկոս Արայ՝ ճամայիգա կրգւոյն կառավարը՝ զօրաւոր բանակով արշաւանք մ'ըրաւ Բանուզոյի դաւառին տիրելու մտքով: Բայց իմանալով որ արդէն Գորդէզ նոյն դաւառն իր իշխանութեան տակն առած է, անոր դեսպան խրկեց եւ խնդրեց որ Բանուզոյ՝ ճամայիգայի կառավարութեան հետ միանայ. եւ ինք առանց պատասխանի սպասելու՝ ճամբայ ելաւ:

Արայ Բանուզոյ հասած ատեն՝ տեսաւ որ գլխաւոր քաղաքն անապատ դարձած էր. զինուորները ցրուեցան, ոմանք նոյն կողմերն ասպատակելու եւ թալլելու գացին, ոմանք ալ Գորդէզին դրօշին տակ մտան: Արայ գրեթէ առանձին մնալով՝ միաքը դրած արշաւանքէն ետ կենալու ստիպուեցաւ: Բայց ժամանակ վաստրկելու համար սկսաւ իր դասակը զինուորները պահանջել: Շատ խօսակցութիւններէ ետքը վերջապէս Հայր Օլմեստոն մէջ մտնելով՝ խաղաղութեամբ բանը լմնցուց. եւ Գորդէզին աղջիկը Արայի անդրանիկ որդւոյն հետ պսակուելով՝ աս երկու ախոյեաններն իրարու հետ բոլորովին հաշտուեցան:

Բայց Արային արշաւանքը շատ դժբախտ հետեւութիւններ ունեցաւ: Իր զինուորները Գորդէզին հին զինուորներուն կարգաւորութեան ու խիստ հրահանգներուն վարժած չըլլալով՝ պզտիկ խմբեր կազմեցին, սկսան ասդին անդին տեղացիները կողոպտել ու ամէն տեսակ անկարգութիւններ գործել: Բանուզոցիները սաստիկ կատղելով՝ մէջերնին դաշինք դրին ու երդում՝ ըրին որ ասպատակիչները բոլորովին ջնջեն. եւ աս խորհուրդնին այնչափ դաղտուկ պահեցին որ Տիաղին խօսքին նայելով՝ քանի մ'օրուան մէջ Արային զինուորներէն հինգհարիւր հոգւոյ չափ մարդ մեռցուցին ու կերան: Բայց միայն աս յանցաւորները ջնջելով գոհ չեղան. ուղեցին որ բո-

լոր մէկալ Սպանիացիներն ալ ջնջեն. անոր համար Սուրբ Էսդեւանի դաղթականաց վրայ քալեցին, թէպէտ եւ մինչեւ նոյն ատեն անոնց հետ բարեկամ մնացած էին: Ալալեյոյ ու Գորդէզին հոն գտնուող հին զինուորներէն ոմանք առջի կռուոյն մէջ մեռան. նոյնպէս գիշեր մը յանկարծակի յիսուն հոգի ալ սպաննուեցան: Աս սաստիկ ապստամբութիւնն իմացուելուն պէս՝ Սանտովալ բաւական զօրութեամբ ապստամբները զսպելու խրկուեցաւ. հասած ատենը՝ Սուրբ Էսդեւանի դաղթականութեան մնացորդը գրեթէ բոլորովին յաղթուելու եւ ջնջուելու աստիճան հասած էր: Սանտովալ շուտ մը ապստամբները ցրուեց եւ անոնց ցեղապեան ու գլխաւորները գերի բռնեց: Ասկից ետքը անմիջապէս Տիեկոյ տէ Օգամբոյ դատաւոր խրկուեցաւ, որ քննութիւն ընէ ու յանցաւորները պատժէ: Բայց աս դատաւորը փոխանակ քննելու թէ արդեօք Բանուգոցիներուն ապստամբութեան պատճառն ինչ էր, եւ փոխանակ քաղցրութեամբ ոգիները հանդարտեցընելու, սկսաւ զարհուրելի անգթութիւն բանեցընել. վաթսուն ցեղապետ ու չորս հարիւր ազնուական մէկ անգամուն ողջ ողջ պրել տուաւ. եւ աս խեղճ տեսարանին աւելի եւս սոսկալի երեւոյթ մը տալու համար՝ դատապարտուողներուն բոլոր ազգականներն ու տղաքը հոն ժողվել տուաւ, որ անոնց թշուառութեան ակնատես ըլլան: Տեղացիներէն մէկն ամբաստանութիւն ընելով թէ աս ապստամբութիւնը Կուադիմոնիին գլխին տակէն է, Գորդէզ առանց ուրիշ վկայութեան ու առանց դատաստան ընելու, նոյն դժբախտ թագաւորը կախելու դատապարտեց:

Այբ որ խաղաղութիւնը կատարեալ հաստատուեցաւ, Գորդէզ իր գործունեայ բնութեամբը նոր աշխատութիւններ, նոր վտանգներ եւ մանաւանդ նոր հարստութիւններ փնտուելու սկսաւ: Լսած էր որ



Հիկուերասի ու Հոնտուերասի գաւառները սաստիկ առատ ոսկւոյ հանքեր ունին. մինչեւ կ'ըսուէր թէ նոյն կողմերու ձկնորսներն իրենց ուռկանները ծով նետած ատեննին՝ ոսկւով լեցուն վեր կը քաշեն: Գարձեալ կ'ըսուէր որ նոյն գաւառին մօտ Խաղաղական ովկիանոս մտնելու անցք մը կայ: Աս վերջին տեղեկութիւնը շատ ծանրակշիւ բան էր. Գորդէզ միշտ ասանկ անցք մը գտնելու խորհուրդն ունէր. անոր համար միտքը դրաւ որ դէպ ի ան կողմն արշաւանք մ'ընել տայ, չէր դիտեր որ արդէն Մաճելլան իր համանուն նեղուցէն անցնելով՝ Խաղաղական ովկիանոսը մտած էր:

Քրիստովալ տէ Օլիտ՝ վեց նաւով ու երեքհարիւր եօթանասուն զինուորով ճամբայ ելաւ. Գորդէզ իրեն պատուիրած էր որ Հաւանա հանդիպի եւ հարկաւոր եղած պաշարները Աերա-Գրուզէն հոգայ: Իսկ ինք Հաւանա երթալու տեղ՝ Գուպա կղզին գնաց. բայց հոն երթալն իրեն դժբախտութեան պատճառ եղաւ, որովհետեւ Աելասկուէզին թելադրութիւններէն ու խոստմունքներէն խաբուելով՝ Գորդէզին հաւատարիմ չմնաց, եւ աս բանս իրեն մահը պատճառեց, ինչպէս որ քիչ մը ետքը կը տեսնենք:

Գորդէզ ամենայն զօրութեամբ ու իր բոլոր յաջողակութեամբը Կարոլոս կայսեր իշխանութիւնը՝ Նոր Սպանիայի մէջ հաստատելու եւ տարածելու ջանացած ատեն՝ չորս կողմը լրտեսներն առած էին, որոնք իր ամէն գործքերը չարաչար կը մեկնէին եւ Սպանիա խրկած տեղեկութիւններնուն մէջ միշտ Սպարապետին գործքերուն գէշ մեկնութիւն կու տային: Կայսրը զինքը Նոր Սպանիայի կառավար դրած ատեն՝ ելեւմուտքը հոգալու եւ կարգի դնելու համար շատ քաղաքական պաշտօնատէրներ խրկած էր, որոնք Գորդէզին իշխանութենէն անկախ էին:

Աս մարդիկները մեծագործութեանց եւ խորունկ մտածմունքներու անյարմար ըլլալով ու Սպարապետին վրայ նախանձելով՝ անոր ըրածներուն մէջ մէկ քննիչ եղած էին. ինչ որ քիչ մը սովորականէն դուրս կ'երեւար կամ իրենց աղէկ չէր գար, Գորդէզին յանցանքներուն կարգը կ'անցնէր: Նոյնպէս ա՛նոր՝ Սպանիացւոց ու տեղացւոց վրայ բանեցուցած իշխանութիւնն ու անոնցմէ ընդունած մեծարանքն ու յարգութիւնը չէին կրնար տանիլ:

Իր հակառակորդաց մէջ Ռոտրիկուէզ տէ Ալպունէզ անունով մէկն ալ կար, որն որ Գեղեւզոյի ցեղապետին աղջկանը հետ կարգուիլ ուզած եւ Գորդէզին հրաման չընդունելով՝ հետը սաստիկ թշնամացած էր: Ասիկա վրէժ առնուլ ուզելով՝ Սպանիա զանազան ամբաստանութիւններ սկսաւ գրել: Չափազանց հարկ ու տուրք կը ժողվէ եւ իրեն կը սեպահականէ, կ'ըսէր. իր ապահովութեանը համար շատ քաղաքներ կ'ամրացընէ եւ ամէն հարկաւոր պատրաստութիւնները կը աեսնէ, որպէս զի կարող ըլլայ անկախ ըլլալ ու Նոր Սպանիայի թագն իր զլուխը դնել: Թէպէտ աս ամբաստանութիւններն ամենեւին հիմ չունէին, բայց Գորդէզին թշնամիներուն աղէկ առիթ մ'եղան իրենց հին ատելութիւնն անոր վրայ թափելու: Ամերիկայի ժողովոյն գահերէցն ու Նարվաէզ զկայսրն աւելի գրգռեցին եւ զԳորդէզ անոր աչքին կասկածելի ցուցընելու ջանացին. իսկ Պեյարի դուքան ասոնց դէմ Սպարապետին սաստիկ պաշտպան կեցաւ: Այսրն երկու կողմն ալ վշտացընել չուզելով՝ հրաման տուաւ որ Գորդէզին բոլոր գործքերուն վրայ նորէն քննութիւն մ'ըլլայ: Բոնս տէ Լէոն 1525ին լիակատար իշխանութիւն ընդունեցաւ որ երթայ նոյն քննութիւնն ընէ, եւ եթէ հարկաւոր սեպելու ըլլայ, զԳորդէզ բռնէ Սպանիա խրկէ:

## ԻԵ.

Հոնորատոսի որչափսնէր: — Գորդէզ Սպանիո իս քոյ:

Գորդէզին թշնամիները Սպանիայի արքունեաց մէջ իրեն չարիք նիւթելու եւ Սպարապեան իրեն յանձնուած երկիրները կարգաւորելու եւ շէնցընելու զբաղած ատեն՝ ուրիշ երեւելի դէպք մը պատահեցաւ, որն որ շատ գէշ հետեւութիւն կրնար ունենալ: Քրիստովալ տէ Օլիտ Գուպա կղզիէն ելլելէն ետքը՝ Հոնտուրասի եզերքը Յալիսանայ՝ Ճշմարիտ Խաչի անուամբ դաղթականութիւն մը հաստատած եւ ինք զինքն անկախ հրատարակած էր: Գորդէզ աս բանս իմանալուն պէս՝ միտքը դրաւ որ անոր արժանաւոր պատիժը տայ, որովհետեւ կը վախնար որ չըլլայ թէ անիկայ անպատիժ մնալով ուրիշ պաշտօնականներուն չար օրինակ ըլլայ: Փրանկիակոս տէ Լաս-Գազասին յանձնեց որ զՕլիտ հնազանդեցընէ. բայց բանը զիւրաւ չյաջողեցաւ: Իր նաւերը Հոնտուրասի ծովեզերքը խորտակեցան, եւ վտանգէն ազատող զինուորները գերի բռնուեցան: Բայց Լաս-Գազաս ազատ թող տրուելով՝ զօրաց սիրտը շահեցաւ եւ համոզեց որ իրենց օրինաւոր գլխոյն հնազանդին, նոյնպէս հաւանեցուց որ զՕլիտ բռնեն իր ձեռքը տան: Օլիտին դատաստանը կտրուեցաւ եւ իր գլխապարտութեան պատիժը նազոյի մէջ կատարուեցաւ:

Գորդէզ Լաս-Գազասէն լուր չառնելով՝ սկսաւ կասկածի երթալ եւ որոշեց որ ինք դէպ ի ան կողմերն արշաւանք մ'ընէ: Աս արշաւանքը այնպիսի շքով եղաւ, որ նոր Աշխարհքին մէջ նմանը տեսնուած չէր. Սպարապեան հետը շատ ծառաններ եւ դերիններ կը ասնէր, հետը կ'երթային նաեւ իր հին զինուորներէն շատերն ու երեք հազար Մեքսիկացի զօրք՝ Սանտովալին հրամանատարութեան տակ: Սպանիացւոց մինչեւ Կուազապուալա ըրած ընթացքն

աւելի յաղթանակի հանդիսի մը կը նմանէր, քան թէ պատերազմական արշաւանքի: Աս քաղքիս մէջ մեծ յարգութեամբ եւ սիրով ընդունուեցան. Գորդէզ ութ օր հոն կենալէն ետքը ճամբոն յառաջ տարաւ: Քիչ մը ետքը անանկ մեծ ու անտանելի դժուարութիւններու եւ վտանգներու պատահեցան, որ ամենեւին մտքերնէն չէր անցներ: Հազիւ թէ իրենց բնական եղած սաստիկ քաջասրտութեամբն ու արիութեամբը՝ պատահած վտանգներուն դէմ կրնային դիմանալ. գտնուած դաւառնին անհամար վտակներ ու առուներ կային եւ բոլոր ճախճախուտ երկիրը խիտ թփերով ու անտառներով գոցուած էր: Օր մը անանկ տեղ մը հասան՝ ուր որ երեք գետ միացած՝ ծովու մը խորշ կը մտնէին. տաժանելի աշխատութիւններով աս արդելքին յաղթելէն ետքը՝ առջինէն աւելի դժուարաւ անցնելու տեղեր պատահեցան. առջեւնին ընդարձակ անտառ մ'եկաւ, անանկ խիտ ու մացառուտ՝ որ հազիւ կացիններով կրնային ճամբայ բանալ անցնիլ. անոր համար ալ շատ կամաց յառաջ կերթային: Արդէն առաջնորդներէն երկուքը թող տուած փախած էին. մնացածներն ամենեւին նոյն տեղերը չէին ճանչնար: Աւելի գէշն ան էր որ պաշարնին լրնցած էր եւ ան ահագին անտառներուն մէջ կերակուր գտնելու յոյս չկար: Աս դժբախտ վիճակին մէջ գիշերը վրայ հասաւ. մէկ կողմանէ աշխատութենէ ու անօթութենէ տկարացած էին, մէկալ կողմանէ պիծակներու խանելէն կը չարչարուէին ու գազաններու վախէն կը սարսափէին, որոնց մռնչելուն ձայները կը լսէին: Աս քաջասիրտ մարդիկներն ալ չկրցան դիմանալ, յուսահատութեան մէջ ինկան. աւելի անոր կը կատղէին որ այնչափ պատերազմներէն ազատելէն ետեւ՝ իրենց կեանքն ասանկ խեղճ կերպով պիտի կորսուէր:

Գորդէզ իր կենացը մէջ երբեք աս աստիճանի

դառն ու խիստ փորձանքի մը պատահած չէր. իր կեանքն այնչափ աչքին չէր երեւար, որչափ իր հաւատարիմ ընկերներուն վիճակը, որոնցմէ շատերը Գուպա կղզիէն ելլելէն ետեւ ամենեւին իրմէ բաժնուած չէին. Բայց իր վախն ուրիշներուն չյայտնելու ստիպուած էր: Առտու բլլալուն պէս՝ կողմնացոյցն առաւ եւ յայտնեց որ ինք անձամբ կ'ուզէ բանակին առաջնորդ բլլալ՝ Հուի-Ալգալա քաղաքը գտնելու, որուն շատ մօտ կ'երեւային: Գորդէզին ձայնն ամէնքը քաջալերեց, վրան ունեցած վստահութիւննին արթնցաւ, աւելի եւս քաջութեամբ սաստիկ աշխատութեանց դիմանալէն ետքը վերջապէս պզտիկ քաղաք մը հասան, ուր որ պաշար գտան: Բայց որովհետեւ մէջի բնակիչները թող տուած փախած էին, առաջնորդ չկրցան գտնել, որով առջի վտանգները նորէն դիմացնին ելան, նորէն մի եւ նոյն թշուառութեանց մէջ ընկղմեցան. Սպանիացիներէն ոմանք ու դաշնակիցներէն շատերն անօթութենէ մեռան: Գորդէզ իր իշխանութեան զօրութեամբն ու յորդորանքներովը զիբենք կը քաջալերէր, խոստանալով որ քիչ մը ետքը ամէն դժուարութիւններէն կ'ազատին. իրօք ալ այնպէս եղաւ: Քանի մը Ամերիկացիք բռնելով՝ անոնցմէ իմացան որ Հուի-Ալգալա քաղքէն միայն երեք օրուան ճամբայ հեռու էին: Բայց ինչ օգուտ, երեք օր քալել պէտք էր. եւ աս բանս տկարացած բանակին համար գրեթէ անկարելի էր: Գորդէզ դեռ բոլորովին չտկարացած զինուորները Տիագին առաջնորդութեան յանձնելով՝ պաշար գտնելու խրկեց. իսկ բանակին չուն դադրեցուց, որ դացողներուն ետ դառնալուն սպասեն: Նոյն միջոցին իրենք խոտերէ ու արմատներէ ուրիշ կերակուր չունէին: Անօթի զինուորները Տիագին գալուստն իմանալուն պէս՝ պաշարներուն վրան ինկան, ամենայն ինչ կողոպտեցին, այնպէս որ Գորդէզին բան չմնաց.

Սպարապետը կշտացած զինուորի մը աւելցուի կերակրովը զոհ եղաւ :

Աս դժբախտ արշաւանքը՝ որուն վրայ աս վերի դէպքէն ուրիշ՝ պատմելու նշանաւոր բան մը չկայ, երկուք ու կէս ասարի տեսեց : Բոլոր Նոր Սպանիայի աշխարհակալութեան ատեն՝ Սպանիացիք երբեք աս աստիճանի աշխատութիւն ու սով կրած չէին, Գորդէզ ալ երբեք այսչափ քաջասրտութեան ու համբերութեան ցոյց տուած չէր : Աս արշաւանքը բոլորովին անօգուտ ալ եղաւ, որովհետեւ՝ ինչպէս տեսանք՝ Լաս-Գալաս Օլիւին ասպտամբութիւնն արդէն զսպած էր :

Սպարապետը Մեքսիկոյ դարձաւ նէ՛ Բոնս տէ Լէոնին հասնիլն եւ ունեցած հրամանները լսեց, զորոնք չէր կրցեր ի գործ դնել, որովհետեւ նաւէն ելլելէն քանի մ'օր ետքը մահը վրան հասած էր : Թէպէտ Գորդէզին սիրտը կայսեր աս ապերախտութենէն աստիկ խոցեցաւ, ի վերայ այսր ամենայնի իր աիրոջը վատահումութիւնը նորէն վաստակելու աշխատեցաւ : Բայց իր հեռաւորութեան ատեն՝ անոր թշնամիները սուտ ու շինծու պատմութիւններով կայսեր ու պաշտօնէից կասկածն աւելցրնելու ջանացած էին, այնպէս որ նորէն ուրիշ մարդ մը խորհեցին՝ առջի եկողէն աւելի իշխանութեամբ. ամէն բան ալ անանկ կարգի դնելու ջանացին որ Գորդէզ կարող չըլլայ դէմ դնել : Սպարապետն աս ամէն բան իմանալով եւ իր վրայ փրթելու փորթորկին նշանները նշմարելով՝ արտաքոյ կարգի խռովեցաւ ու նեղացաւ որ փոխանակ իրեն երախտագիտութիւն ցուցրնելու՝ հետն ասանկ անարժան եղանակաւ կը վարուէին : Բայց թէպէտ իր բարեկամներէն սմանք իրեն խրատ կու տային որ իր դատին արդարութիւնն անանկ ապերախտ կայսեր դէմ պաշտպանէ, եւ իրեն զբաւէ ան վերին իշխանութիւնը՝ զորն որ թշնա-

միքն՝ ինք յափշտակելու միտք ունի կ'ըսէին. սակայն Գորգէզ աս գրգռիչ խօսքերուն դէմ դրաւ եւ իր հաւատարմութիւնն ամենեւին չխախտեցաւ: Իր յաղթութեանց ու փառքերուն վկայ եղած երկրի մը մէջ դատուելով՝ իր արժանապատուութիւնը վտանգի մէջ չդնելու համար՝ միակ կարելի միջոցին ձեռք զարկաւ. զինքը դատելու համար եկող դատաւորներուն հասնելուն չսպասեց, շուտ մը նաւ մտաւ դէպ ի Սպանիա ճամբայ ելաւ, որպէս զի հոն իր դատն ու իր անձը կայսեր արդարութեան յանձնէ:

Գորգէզ՝ երեւելի թագաւորութիւն մը ձեռք բերող աշխարհակալի մը վայլած շքով իր հայրենիքն երեւցաւ. իր ամենէն քաջ պաշտօնակալներն ու շատ Մեքսիկացի ազնուականներ հետն առած էր: Բերած գանձուց ճօխութիւնը՝ մինչեւ նոյն ատեն տեսնուած բան չէր. Հերրերային խօսքին նայելով՝ հետն ունէր 1500 մարդ գործուած արծաթեղէն, 210,000 փեղա զուտ ոսկի, մեծագին ադամանդներ՝ որոնցմէ մինակ մէկ հատը 200,000 Փրանզ կ'արժէր: Արդէն Գորգէզ իր աղջիկը Կարայի որդւոյն հետ կարգած ատեն՝ 500,000 Փրանզի օժիտ տուած էր: Եթէ որ ասոնք Մոնդեզուսային գանձերը բաժնուելու ժամանակ իրեն ինկած բաժնին հետ համեմատելու ըլլանք, կ'ըսէ վերոյիշեալ հեղինակը, կրնանք համոզուիլ որ թշնամիներն իրաւունք ունէին ըսելու թէ Մեքսիկոյի մեծագին գանձերուն մեծ մասն իրեն առած է: Բայց աս ալ գիտնալու է որ Մեքսիկոյ առնուէն մինչեւ Գորգէզին Սպանիա դառնալը (1528ին), շատ տարի անցած ըլլալով, ուրիշ կողմանէ ալ հարստութիւն կրնար ժողվել:

Գորգէզին ճամբորդութիւնը յաջող եղած էր, բայց Սպանիա հասնելուն պէս՝ Սանտովալին անալիկալ մեռնիլն իրեն արտաքոյ կարգի մեծ ցաւ պատճառեց: Սանտովալ իր ամենէն հռչակաւոր ու քաջ

պաշտօնակալներէն մէկն էր. միանգամայն իր ներքին բարեկամն եւ ամէն գաղտնի խորհուրդներուն խորհրդակից ու տեղեակ: Իր բոլոր հռչակաւոր յաղթութեանց ընթացքն ամենեւին անիրաւութեան կամ անգթութեան կամ ագահութեան բժով մը արատած չէր, որոնք Գորդէղին ուրիշ պաշտօնակալներուն գլխաւոր մնլութիւններն եղան: Սանտովալ 29 տարւան մեռաւ: Ա՛րեւայ որ իր սաստիկ աշխատութիւններն ու առած բազմաթիւ վէրքերն իր մահը փութացուցին. որովհետեւ դժուար գործք մը պատահելուն պէս՝ Գորդէղ զանիկա կ'ընտրէր:

Այսպէս Գորդէղին մեծ սիրով ընդունելութիւն ըրաւ. երբ որ տեսաւ թէ ան երեւելի աշխարհակալն իրեն արդարութեան դիմած ու անոր միայն ապաւինած էր, բոլոր ունեցած կասկածներն ու վախերը փարատեցան, եւ միտքը դրաւ որ գոնէ ներկայ առատաձեռնութեամբ՝ մինչեւ նոյն ատեն եղած սիրոյ եւ երախտագիտութեան պակասութեան տեղը լեցունէ: Գորդէղ Ս. Յակովբայ կարգն ընդունեցաւ, մարդիկ պատուանունն առաւ ու Նոր Սպանիայի մէջ մեծ կալուածներու տէր եղաւ. վերջապէս արքունի ներքին պալատականներու կարգն անցաւ:

Բայց բոլոր աս պատիւներն ու պատուանունները զԳորդէղ չկրցան խաբել. ինք իր բնական սրամտութեամբն իմացաւ որ արքունեաց միտքն անոնցմով զինքն որսալ ու Սպանիայի մէջ պահել էր: Շատ ջանաց որ կայսեր միտքը փոխէ ու դարձեալ Նոր Սպանիայի ընդհանուր զօրապետութեան պաշտօնն ընդունի. բայց Աարոլոս միտքը դրած ըլլալով որ եթէ նորէն կառավարութեան գլուխն անցնի, անկախութեան ետեւէ կ'իյնայ, իր մտացը վրայ հաստատուն կեցաւ: Երկու տարիի մօտ աշխատելէն ետեւ՝ վերջապէս այսչափս ընդունեցաւ որ զօրաց գլխաւորութիւնն ու նոր երկիրներ գտնելու իրաւունք



ունենայ. իսկ քաղաքական կառավարութիւնը մասնաւոր ժողովքի մը արուեցաւ, որն որ Նոր Սպանիայի ժողովք կը կոչուէր:

Այսպէսով Գորղէզ 1530ին իր յոյսերուն փճանալուն վրայ կտարած սրտով նորէն Մեքսիկոյ դարձաւ: Յայտնի կը տեսնէր որ իշխանութեան բաժանումն՝ անվախճան հակառակութիւններու եւ անմիաբանութեանց պատճառ պիտ'որ ըլլայ. եւ քաղաքական տեսուչներուն ու աշխարհակալութեան հին զինուորներուն մէջ երբեք մի եւ նոյն նպատակի ուղղութիւնը պիտի չպահուի: Իրօք ալ ժողովքին անդամներն իրենց ցած նախանձովն ու հպարտութեամբը Գորղէզին ամէն մէկ քայլին ու գործքին գաղտնի լրտեսներն եղան. եւ վախնալով որ Սպարապեան իրեն տրուած իշխանութեան սահմանէն դուրս չելլէ, անանկ գործքերու մէջ ալ կը խառնուէին, որոնք իրօք միայն Գորղէզին իշխանութեան կը վերաբերէին: Ասով անոր ամէն նպատակներուն ու օգտակար առաջարկութիւններուն դէմ անյաղթելի թուով մը կը կազմէին:

### Ի.Օ.

Գորղէզ նոր արշաւանքներ կ'ընէ ու Գալիֆուսիան կը գրնէ: —  
Նորէն Սպանիա կը դառնայ: — Իր մահը:

Գորղէզ տեսնելով որ իր յաղթութեանց ընթացքն արդեւլուեցաւ, միտքը դրաւ իր ունեցած իշխանութեան զօրութեամբն ուրիշ արշաւանքի մը ձեռք զարնել, որով իր զինուց նորէն փառաւոր ընթացք մը սկսի, յուսալով միանգամայն որ հեռու ըլլալով իր թշնամեաց նախանձէն ազատ կ'ըլլայ: Ինք միշտ անանկ կը կարծէր որ Փլորիտայի ծովածոցին մէջ յառաջ երթալով՝ Արեւմտեան ովկիանոս մտնելու անցք մը եւ նոյն կողմերն երկու ովկիանոսին ի-

բարու հաղորդուելու տեղ մը կրնայ գտնուիլ: Բայց իր յոյսն ու աշխատութիւնը պարապ ելաւ. վասն զի թէպէտ խրկած մարդիկները յաջողակ ու քաջ էին, բայց առանց նշանաւոր գործք մը գործելու ետ դարձան: Երբ որ աս փորձը չյաջողեցաւ, ուզեց որ գոնէ Նոր Սպանիային արեւմտեան կողմանէ՝ Հարաւային ծով անցնելու նաւահանգիստներ գտնուելու համար արշաւանքներ ընել տայ. անոր համար զանազան պզտիկ գումարտակներ կազմեց ու այլեւայլ ուզղու-  
թեամբ ճամբայ հանեց: Բայց աս գումարտակներէն ոմանք կորսուեցան, ոմանք ալ առանց նշանաւոր գիւտ մ'ընելու ձեռնունայն ետ դարձան: Գորդէզ՝ որ ամէն ձեռք զարկած գործքին յաջողելուն վարժած էր, աս վերջին արշաւանացը պարապ ելլէն իր մարդիկներուն անյաջողակութեան տալով՝ ինք նորէն գումարտակ մը կազմեց եւ անոր գլուխն անցնելով՝ 1536ին նաւ մտաւ ու ճամբայ ելաւ:

Թէպէտ վեց տարի հանգիստ ու խաղաղ կեանք անցուցած էր, բայց սակայն իր քաջասրտութիւնն ու գործունէութիւնը կորսընցուցած չէր: Անհամար վտանգներ ու աշխատութիւններ կրելէն ետեւ՝ Գալիֆոռնիայի մեծ ցամաքակղզին գտաւ եւ զանիկա Նոր Սպանիայէն բաժնող խորշին մեծ մասը պտրտեցաւ, որն որ մինչեւ հիմայ Գորդէզի ծով կը կոչուի: Աս նոր գաւառին գիւտը՝ Սպանիայի երկիրները շատ ընդարձակեց, եւ եթէ ուրիշ մէկը գտած ըլլար, անունն անմահացընելու բաւական էր. բայց Մեքսիկոյի պէս տէրութեան մը աշխարհակալին փառքը շատ չէր կրնար աւելցընել: Ասով Գորդէզ տհաճելով՝ մէկալ կողմանէ ալ Մեքսիկոյի կառավարներուն շարունակ իրեն դէմ դնելէն սիրաբը վիրաւորելով՝ միտքը դրաւ որ ետ քաշուի: Աւելի անոր կը ցաւէր որ իր տիրած երկրին մէջ, որն որ այնչափ հեղ իր արիւնովն ոռոգած էր, իրեն պատշաճ պատիւ ու

յարգութիւն մը չէին ցուցըներ : Թշնամեացը չարութիւնն եւ իր ահաճութիւնն օրէ օր աւելնալով՝ աս վիճակն սկսաւ իրեն անտանելի ըլլալ, մանաւանդ որ ձիրքերն զբաղեցընելու նշանաւոր գործքեր չգտնելով՝ Թշնամեացը ցածութիւնն աւելի եւս կը զգար : Աերջապէս աս նուաստութեան չկրնալով համբերել՝ 1540ին Սպանիա դարձաւ :

Աս հեղ առջի անգամուան պէս փառաւորութեամբ ու շքով չերեւցաւ եւ ոչ ալ իրեն պարծանաց ընկերները հեան ունէր. հապա բախտէն հալածուած մարդու մը պէս իր հայրենիքը մտաւ : Թէպէտ Թազաւորէն մեծ պատուով ու փառքով ընդունելութիւն գտնելու յոյս չունէր, բայց չէր ալ կարծեր որ իր ծառայութիւնները բոլորովին մոռցուած ըլլան : Ուստի եւ արքունեաց մէջ գտած ցուրտ ընդունելութենէն սիրաբ սաստիկ վիրաւորեցաւ : Բայց Թազաւորին ցուցուցած պաղութենէն աւելի՝ պաշտօնեաներուն ընթացքը զինքը կը վշտացընէր : Աստնք իրեն հետ չէ Թէ միայն անտարբերութեամբ հապա արհամարհանօք ու գոռոզութեամբ կը վարուէին : Աս անձնասէր մարդիկ կը մտածէին որ Գորդէզ արդէն տարիքն առած ըլլալով՝ ալ տէրութեան օգտակար չիկրնար ըլլալ. դարձեալ նոյն ատենները Բիզարրոյ ու Ալմահրոյ Բերուի ոսկերեր երկիրները գտած ըլլալով Մեքսիկոյի գիւտն աչքերնուն ալ մեծ բան մը չէր երեւար : Իսկ ուրիշ նոր գիւտեր ընելու համար երիտասարդ անձինք հարկաւոր էին : Այսպիսի մտածմունքներով զԳորդէզ երեսէ ձգեցին, որով անոր Թշնամիները յաղթանակելով՝ զինքը պաշտօնէն վար առնել տուին :

Գորդէզ իր կենաց վերջին ժամանակները պաշտօնէից ու Ամերիկայի խորհրդեան երկայն ու անօգուտ աղերսագիրներ ու բողոքներ ընելով անցուց. բայց իր գանգատները մտիկ ընող չեղաւ ու իր ան-

ցեալ ծառայութեանց վստահելով ըրած բողոքներուն ոչ ոք ականջ դրաւ: Ամերիկայի դործոց վրայ եզրղ երեւելի պաշտօնատեարք իր արդար խնդիրները միշտ մերժեցին, ուստի եւ չկրցաւ իր ուզած կառավարութիւնը ձեռք բերել եւ տեսաւ որ իր աշխատութեանց պտուղներն ուրիշները յափշտակեցին: Արդէն տարիքն առած ու երիտասարդութեան բոցը մարած էր, շարունակ արամալից մտածութիւններն ալ զինքը հիւժելով՝ կեանքը կարճեցուցին: Ար պատմուի որ օր մը Գորդէզ ժողովուրդը ձեռքելով՝ կայսեր կառքին մօտիկնալ ուղեց, եւ լսեց որ կայսրը զինքը չճանչնալ ձեւացընելով՝ բարձր ձայնով մը քովինին հարցուց թէ Ան մարդն ո՞վ է: Ըսէ կայսեր, պատասխանեց Գորդէզ, որ ան մարդն է, որն որ հայրերէդ ժառանգած քաղաքներէդ աւելի՝ քեզի տէրութիւններ տուաւ: Ասիկայ ստոյգ է շատ յարմար պատասխան էր, բայց կայսեր շնորհաց մէջ մոնելու չէր ծառայեր:

Եթէ տարի ասանկ ողորմելի կեանք մ'անցընէլէն ետեւ՝ ապերախտութիւնն աս ազնուական սիրար ջախջախեց. Գորդէզ 1547ին Գեկտեմբերի 2ին, 62 տարւան մեռաւ: Նախանձը մահուան հետ դադրեցաւ. իրեն մեծ փառաւորութեամբ թաղում ըրին. իսկ մարմինը Մեքսիկոյ տարուեցաւ եւ իր շինել տուած Յիսուսի հիւանդանոցին մատուռը թաղեցաւ:

Գորդէզ երկու անգամ կարգուեցաւ, առջի անգամ Գուպա կղզին. բայց Մեքսիկոյի աւուուելէն քիչ մը վերջը ամուսինը մեռնելով՝ Պեյարի դքսին քոյրն առաւ, որմէ որդի մ'ունեցաւ. սակայն քանի մը սերունդ ետքը արու զաւակ չմնալով՝ Գորդէզ անունը մարեցաւ:

Գորդէզէն յառաջ իր սիրելի ու ներքին բարեկամներուն դրեթէ ամէնքն ալ մեռած էին. Ալլասկուէզ տէ Լէոն, Մորլա եւ Էսքալենդէ՝ Մեքսիկոյ

առնուելէն յառաջ մեռան. Սանտովալին կանխահաս մահը քիչ մը յառաջ պատմեցինք. նոյնպէս Օլիտին իր ապստամբութեան զոհ ըլլալն ալ վերը յիշուեցաւ. քաջն Ալվարատոյ ալ խեղճ վախճան մ'ունեցաւ, ձին զինքը ահագին վիհ մը դահամբիտեց, ուսկից կտոր կտոր եղած մարմինը կրցան հանել:

Գորդէզին վարուց պատմութիւնն ան աստիճանի արտաքոյ կարգի եւ նշանաւոր դէպքերով լեցուն է, որ մարդ կը կարծէ թէ բանաստեղծի մը վառվռուն երեւակայութեան ծնունդն ըլլայ: Աերա-Գրուզի աւջեւ իր նաւատորմիդն այրելը, յանդգնութեամբ Մեքսիկոյ մտնելը, Մոնդեզուման իր մայրաքաղաքին մէջ գերի բռնելը, Նարվաէզին յաղթելն, Օդումպայի պատերազմը եւ Մեքսիկոյի պաշարումը՝ զարմանալի ու տարօրինակ դէպքերու շարք մըն են: Շատ քիչ մարդ կը գտնուի՝ որ անոր պէս կարող ըլլայ միացընել իր վրան դժուարին պարագաներու մէջ իմաստուն խորհուրդներ յղանալը, միտքը դրած բանին հասնելու՝ ճարպկութեամբ միջոցներ բանեցընելը եւ յաջողութեամբ կատարելը: Բանակցութեանց ու դաշնադրութեանց մէջ արտաքոյ կարգի մեծ ճարպկութիւն մ'ունէր եւ դիմացինին տկար կողմն աղէկ դիտելով՝ միշտ իր օգտին եւ իր գործոցը յաջողելուն կը բանեցընէր: Նոր Աշխարհքին բոլոր աշխարհակալներուն մէջ ամենէն աւելի միտքը կրթուած եւ ուսեալ մարդն էր. եւ իր Սպանիա խրկած թղթերուն ոճէն կ'իմացուի որ պզտիկուց ճարտասանութեան արուեստն աղէկ սորված էր եւ համալսարանին մէջ կեցած երկու տարին պարապ անցուցած չէր:

Առանձնական վարմանցը մէջն ալ շատ նշանաւոր էր. բարեկամութիւնը հաստատուն ու անկեղծ, սիրտն ալ ազնուական ու վեհ: Ոմանք զինքն իբրեւ անգութ կը մեղադրեն: Ստոյգ է երբեմն սաստիկ խրատութիւն կը բանեցընէր, բայց իր գտնուած պարա-

գաները մտածողը կրնայ խմանալ թէ շատ հեղ այլ-  
ազգ չէր կրնար ո՛չ իր զինուորաց հրահանգն աղէկ  
պահել եւ ո՛չ ալ զինքը պաշարող կատաղի ու պա-  
տերազմասէր ազգերը զսպել ու վախցընել: Առադի-  
մսծինը տանջանքի տալն ստուգիւ մեղադրելի գործք  
մըն էր եւ ամենեւին ջատագովուելու տեղ մը չունի:  
Բայց ո՞ր երեւելի դիւցազն իր կենացը մէջ բծեր ու  
պակասութիւններ չունի: Նոյնպէս իր առանձնական  
կենաց մէջ ալ շատ դէպքեր կան՝ որոնք քրիստո-  
նէավայել չեն, ինչպէս է առանձինն՝ Մարինային  
հետ ունեցած յարաբերութիւնը:

Փեռնանդ Գորդէզի անունն Ամերիկայի աշխար-  
հակալներուն մէջ միշտ իբրեւ ջահ մը պիտի փայլէ:  
Իր ըրած արտաքոյ կարգի ծառայութիւններն՝ իր  
զլխուն փառաւոր յաղթանակի պսակ են: Եւ սակայն  
այսպիսի մեծ գործոց ու ծառայութեանց համար  
ի՞նչ հատուցում եղաւ իրեն: Ապերախտութիւն ու  
արհամարհութիւն: Կարողոս Ե. անանկ վարուեցաւ  
Գորդէզին հետ, ինչպէս որ Փերդինանդ թագաւորը  
Կոլոմբոսի հետ վարուած էր: Երկուքն ալ մերժուե-  
ցան իրենց ժամանակուան թագաւորներէն՝ որոնք  
փուճ կասկածներով անոնց դտած երկիրներուն կա-  
ռավարութիւնն ասանկ երեւելի մարդիկներու ձեռքը  
տալու չհամարձակեցան, թէպէտ աս դիւցազունք  
ձիրքերնին միայն իրենց հայրենեաց փառաց ու իրենց  
թագաւորին պատուոյն համար գործածած էին:

Գորդէզ իր հայրենակիցներէն արհամարհուե-  
ցաւ. բայց հազիւ թէ գերեզման մտած էր, իրեն  
յարգը ճանչցուեցաւ եւ Սպանիայի պարծանք եզող  
երեւելի մարդկանց մէջ առջի կարգն անցաւ ու միշտ  
ալ իր բարձրութեան մէջ պիտի մնայ:

# Յ Ե Ն Կ

Ա. Փեռնանդ Գորդէզին ծնանիլը, կրթութիւն ու երկ- ասարդութիւնը: . . . . .	1
Բ. Գուպա կղզւոյն առնուիլը: — Գորդէզ Նոր երկիրներ գտնելու արշաւանաց հրամանատար կ'ընտրուի: . . .	6
Գ. Նոր Սպանիայի արշաւանաց ճամբայ ելլելը: . . .	13
Դ. Գողուձէ կղզին կը կենան: — Գապասպոյ կը հասնին: . . .	21
Ե. Գորդէզ Մեքսիկոյի կայսեր դեսպաններուն հետ կը տեսնուի: . . . . .	28
Զ. Գորդէզին դէմ արտոնջանաց հոգին կը զօրանայ. բայց անոր հնարքովը կողմնակցութիւնները կը միանան: — Նոր Սպանիայի մէջ առաջին անգամ դաղթականու- թիւն կը հաստատեն: . . . . .	37
Է. Զեմբուալացիներն եւ ուրիշ քանի մը ցեղեր Սպա- նիացոց կը հպատակին ու անոնց հետ դաշինք կը գնեն: . . . . .	48
Ը. Բանակին մէջ ապստամբութիւն մը կը ծագի: — Գոր- դէզ իր նաւատորմիդը կ'սյրէ եւ ճամբայ կ'ելլէ: . . .	57
Թ. Գլասգալացոց դէմ կը պատերազմին: . . . . .	64
Ժ. Գոլուլայի բնակչաց դաւաճանութիւնն ու պատիժը: . . .	73
ԺԱ. Գորդէզ իր արշաւանքը յառաջ կը տանի: — Մե- քսիկոյ քաղաքը կը մտնէ: . . . . .	82
ԺԲ. Մեքսիկոյ քաղքին ստորագրութիւնը: . . . . .	89
ԺԳ. Գորդէզ Մոնդեզուաման կը բռնէ իր բնակարանը կը տանի եւ հոն կը պահէ: . . . . .	96
ԺԴ. Գուալորոգային մահուան պատիժը: — Մոնդե- զուամա յետին նուաստութեան կը հասնի: . . . . .	103
ԺԵ. Բամֆիլոյ Նարվաէզին արշաւանքը: . . . . .	113
ԺԶ. Մեքսիկացոց ոտք ելլելը: . . . . .	120

ժԷ. Մոնդեղումային մահը: — Տաճարին ձեջ սոսկալի  
 պատերազմ: . . . . . 139  
 ժԸ. Սպանիացիք շատ կորստով քաղաքէն ետ կը քա-  
 շուին: — Օգումուպի պատերազմը: . . . . . 145  
 ժԹ. Գորդէզին Դլասգալա եղած ժամանակը պատահած  
 դէպքերը: . . . . . 156  
 Ի. Գեղեւզոյ քաղաքը կը մտնեն: — Գորդէզ զանա-  
 զան փոքր արշաւանքներ կ'ընէ: . . . . . 163  
 ԻԱ. Գորդէզին դէմ դաւաճանութիւն մը: — Նաւերուն  
 ջուր ձգուիլը: — Պաշարումը կը սկսի: . . . . . 174  
 ԻԲ. Մեքսիկոյի պաշարման պատմութիւնը: — Սպանիա-  
 ցիք յարձակում մը կ'ընեն ու կը յաղթուին: . . . 179  
 ԻԳ. Կուադրիմոնտին դերի կը բռնուի: — Մեքսիկոյի առ-  
 նուիլը: . . . . . 188  
 ԻԴ. Մեքսիկոյ առնուելէն ետքը պատահած դէպքերը: 197  
 ԻԵ. Հոնտուրասի արշաւանքը: — Գորդէզ Սպանիա  
 կու գայ: . . . . . 205  
 ԻԶ. Գորդէզ նոր արշաւանքներ կ'ընէ ու Գալիֆոռնիան  
 կը դանէ: — Նորէն Սպանիա կը դառնայ: — Իր  
 մահը: . . . . . 211











